

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA

ԼՐԱԲԵՐ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ВЕСТНИК
ОБЩЕСТВЕННЫХ
НАУК

HERALD
OF SOCIAL SCIENCES

1(655)
ՀՈՒՆՎԱՐ-ԱՊՐԻԼ
ЯНВАРЬ-АПРЕЛЬ
JANUARY-APRIL

ՔԱՌԱՄՍՅԱ ՀԱՆԴԵՍ, ԼՈՒՅՍ Է ՏԵՄՆՈՒՄ 1940 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻՑ
ЖУРНАЛ ВЫХОДИТ 3 РАЗА В ГОД, ИЗДАЕТСЯ С НОЯБРЯ 1940 ГОДА
JOURNAL IS PUBLISHED 3 TIMES IN A YEAR, SINCE NOVEMBER 1940

Գլխավոր խմբագիր՝ **ՊԱՎԵԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ**
Խմբագրի տեղակալ՝ **ԱՐՍԵՆ ԲՈԲՈԽՅԱՆ**
Պատասխանատու քարտուղար՝ **ԳԱՅԱՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Խմբագրական խորհուրդ

ԱՐԱՐԱՏ ԱՂԱՅԱՆ, ԱՐԾՐՈՒՆ ԱՎԱԳՅԱՆ, ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ, ՎԱՐԴԱՆ
ԴԵՎՐԻԿՅԱՆ, ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ, ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ, ՌՈՒԲԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ,
ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ՎԱԶԵ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ, ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ,
ԳԱԳԻԿ ՂԱԶԻՆՅԱՆ, ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ, ԳԵՎՈՐԳ ՊՈՂՈՍՅԱՆ, ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ,
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ

Главный редактор – **ПАВЕЛ АВЕТИСЯН**
Заместитель редактора – **АРСЕН БОБОХЯН**
Ответственный секретарь – **ГАЯНЭ АРУТЮНЯН**

Редакционная коллегия

АРЦРУН АВАКЯН, АРАРАТ АГАСЯН, ВЛАДИМИР АРУТЮНЯН, ГАМЛЕТ ГЕВОРКЯН, ВАРԴԱՆ
ԴԵՎՐԻԿԻԱՆ, ԳԱԳԻԿ ԿԱԶԻՆԻԱՆ, ՐԱԲԵՆ ԿԱՐԱՊԵՏԻԱՆ, ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼԻԱՆ, ԱՇՈՏ
ՄԵԼԿՈՆԻԱՆ, ՎԱՇԵ ՕՎԱԿԻՄԻԱՆ, ՆԻԿՈԼԱՅ ՕԳԱՆԵՏԻԱՆ, ԳԵՎՈՐԿ ՍՈԳՈՍԻԱՆ,
ՐԱԲԵՆ ՏԱՖՐԱՏԻԱՆ, ՅՐԻԻ ՏՍՎԱՐԻԱՆ, ԱԼԲԵՐՏ ԽԱՐԱՏԻԱՆ

Editor-in-chief **PAVEL AVETISYAN**
Vice-editor **ARSEN BOBOKHYAN**
Responsible secretary **GAYANE HARUTIUNYAN**

Editorial Board

ARARAT AGHASYAN, ARTSRUN AVAGYAN, HAMLET GEVORGYAN, VARDAN DEVRIKYAN, ALBERT
KHARATYAN, VIKTOR KATVALYAN, RUBEN KARAPETYAN, VLADIMIR HARUTIUNYAN, VACHE
HOVAKIMYAN, NIKOLAY HOVHANNISYAN, GAGIK GHAZINYAN, ASHOT MELKONYAN, GEVORG
POGHOSYAN, RUBEN SAFRASYAN, YURI SUVARYAN

© Լրագրի հասարակական գիտությունների
© Вестник общественных наук
© Herald of Social Sciences

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Սարգսյան Ս.Թ. – Վերակազմյալ հնչակյան կուսակցության «Հայկաշեն» պաշտոնաթերթը.....	12
Վարդանյան Ա.Մ. – Քաղաքական իշխանության համար պայքարը Հայաստանում Մամիկոնյանների և Բագրատունիների միջև VIII դ. առաջին կեսին.....	31
Սուքիասյան Ռ.Ա. – Նուբարյան գրադարանի թղթապանակը Սեբաստիայի կոտորածների ու տեղահանությունների վերաբերյալ....	46
Մարուքյան Ա.Յ., Շարաֆյան Ն.Գ. – Դարֆուրի սևամորթ բնակչության ցեղասպանության պատճառներն ու շարժառիթները.....	59
Պետոյան Ս.Հ. – Կովկասի հայոց բարեգործական ընկերության Շուշիի մասնաճյուղի գրադարան-ընթերցարանը (1889-1900 թթ.).....	68
Բաղդասարյան Ս.Ա. – Հայ-բուլղարական տնտեսական փոխգործակցությունը 1998-2008 թթ.	83
Պողոսյան Ա.Տ. – Քեշիկը Կովկասում.....	89
Ռուխկյան Լ.Մ. – Պոլիարխիան և նորազատականության ժամանակակից դրսևորումները.....	99
Հովսեփյան Մ.Հ. – Սիրիահայ համայնքը և սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն 1964-1985 թթ.	110

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Սուվարյան Յու. Մ., Սարգսյան Վ.Ա. – Հանրային կառավարման արդյունավետության գնահատման մեթոդաբանությունը.....	128
Ոսկանյան Վ.Ս., Մանուկյան Ա.Ա. – Ծխելու արգելքը աշխատավայրում. սոցիալ-տնտեսական վերլուծություն.....	150
Ավետիսյան Գ.Ս. – Անբարեխիղճ մրցակցության պետական կարգավորման հիմնախնդիրները.....	161
Գասպարյան Ռ.Լ. – ՀՀ բանկային համակարգի կայունությունը.....	172

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Սաֆարյան Գ.Գ., Թավադյան Ա.Լ. – Պետության և իրավունքի տիպաբանության ժամանակակից պատկերացումները. տեսական- իրավական վերլուծություն.....	181
--	-----

Հարությունյան Ա.Ա. – Իրավագիտակցությունը իրավաստեղծման և իրավաիրացման համատեքստում.....	190
--	-----

ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

Գալստյան Մ.Վ. – Միգրանտների հուղարկավորումը Հայաստանում. սգի ինքնության և կառուցակցման հարցեր.....	199
Կարապետյան Ռ.Ս. – Հայ-բելառուսական էթնոմշակութային միջնորդավորված կապերի շուրջ.....	211

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Սաֆրաստյան Լ.Մ. – Վտարանդիության ողբերգական փորձառությունը XX դարի իրանական գրականության մեջ. Սադեղ Հեդայաթ, Ղոլամ Հոսեյն Սաեդի.....	225
Հարությունյան Լ.Ա. – Պատճառահետևանքային կապերի արտահայտումը գործարար նորություններում.....	237
Գլյան Ա.Մ. – Հակոբ Պարոնյանը և իր ժամանակը.....	248

ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Սահակյան Լ.Զ. – Գողթան երգիչներ. Կոմիտաս վարդապետն ու Արամ Խաչատրյանը.....	264
Խաչմանյան Ս.Հ. (ԱՄՆ, Լոս Անջելես) – Կաթողիկոսական թագ-խույրի խորհրդաբանությունը.....	275

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Քոչարյան Գ.Գ. – Դվինի կենտրոնական թաղամասի անտիկ շերտի բնութագիրը.....	293
Կունտներ Վ.Ա. (Ավստրիա, Ինսբրուկ), Հայնշ Ս.Ա. (Ավստրիա, Ինսբրուկ), Ավետիսյան Հ.Գ. (ՀՀ, Երևան) – Արամուսի արևմտյան ու կենտրոնական ամրոցներում իրականացված պեղումների նախնական արդյունքների և հետազոտման համատեքստի շուրջ (2009-2015 թթ.).....	304
Վարդանյան Բ.Վ. – Անվավոր փոխադրամիջոցներով ուշ բրոնզեդարյան թաղումների սոցիալ-ժողովրդագրական հետազոտության խնդիրները Կուրարաքսյան Միջագետքում.....	332

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Մահտեսյան Հ.Շ. – Ստեփան Կամսարականի կազմած՝ Անդրկովկասի վարչատարածքային բաժանման ծրագիրը (1917թ.).....	350
---	-----

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մկրտչյան Ս.Ս. – Միհրան Գալստյան, Ռուբեն Օհանջանյան, Թամար Զաքարյան, Գայանե Հակոբյան, Արդի հայ ընտանիքը փոխակերպվող հասարակությունում	361
Թադևոսյան Ա.Զ. – Ռաֆիկ Նահապետյան, Հունական և հռոմեական անտիկ սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին.....	367
Կարապետյան Ա.Հ. – Արարատ Հակոբյան, 1937 թվականը Հայաստանում.....	370
Խաչատրյան Ա.Ս. – Նարինե Աբգարյան, Երկնքից երեք խնձոր ընկավ...	374

ՄԵՐ ՀՈՐԵԼՅԱՐՆԵՐԸ

Բաղդասարյան Ռ.Ա. – Հովհաննես Թումանյանը և ռուս գրականությունը (բանաստեղծի ծննդյան 150-ամյակին).....	378
--	-----

ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ

Վարդանյան Ն.Խ. – Հայագիտության մեծ նվիրյալը. Սարգիս Հարությունյան.....	384
---	-----

СОДЕРЖАНИЕ

ИСТОРИЯ И ПОЛИТОЛОГИЯ

Саргсян С.Т. – "Айкашен" – газета-официоз реорганизованной партии Гнчакян.....	12
Варданян А.М. – Борьба за политическую власть в Армении в первой половине VIII века между нахарарскими домами Мамиконянов и Багратуни.....	31
Сукиасян Р.А. – Досье библиотеки Нубарян о резне и депортации в Себастии.....	46
Марукян А.Ц., Шарафян Н.Г. – Причины и мотивы геноцида африканского населения Дарфура.....	59
Петоян С.А. – Библиотека-читальня шушинского филиала Кавказско-армянского благотворительного общества (1889-1900 гг.).....	68
Багдасарян С.А. – Армяно-болгарское экономическое сотрудничество в 1998-2008 гг.	83
Погосян А.Т. – Кэшик на Кавказе.....	89
Рухкян Л.М. – Полиархия и современные проявления неолиберализма...	99
Овсепян М.О. – Армянская община Сирии и комитет по культурным связям с армянами диаспоры в 1964-1985 гг.	110

ЭКОНОМИКА

Суварян Ю.М., Саркисян В.А. – Методология оценки эффективности общественного управления.....	128
Восканян В.С., Манукян А.А. – Запрет курения на рабочем месте: социально-экономический анализ.....	150
Аветисян Г.С. – Проблемы государственного регулирования недобросовестной конкуренции.....	161
Гаспарян Р.Л. – Стабильность банковской системы РА.....	172

ФИЛОСОФИЯ И ПРАВО

Сафарян Г.Г., Тавадян А.Л. – Современные представления государственно-правовой типологии: теоретико-правовой анализ..	181
Арутюнян А.А. – Правосознание в контексте правотворчества и правоприменения.....	190

СОЦИОЛОГИЯ

Галстян М.В. – Погребение мигрантов в Армении: вопросы самобытности и конструктивизма траура.....	199
Карапетян Р.С. – О опосредованных армяно-беларусских этнокультурных связях.....	211

ФИЛОЛОГИЯ

Сафрастян Л.М. – Трагический опыт изгнания в иранской литературе XX века: Садег Хедаят, Голам Хоссейн Саеди.....	225
Арутюнян Л.А. – Отражение причинно-следственных отношений в бизнес-новостях.....	237
Глджян А.М. – Акоп Паронян и его время.....	248

КУЛЬТУРА И ИСКУССТВОВЕДЕНИЕ

Саакян Л.З. – Певцы Гохтана: Комитас Вардапет (Архимандрит) и Арам Хачатурян.....	264
Хачманян С.Г. (США, Лос-Анджелес) –Символика митры – короны католика.....	275

АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ

Кочарян Г.Г. – Характеристика античного слоя центрального квартала Двина.....	293
Кунтнер В.А. (Австрия, Инсбрук), Гайнш С.А. (Австрия, Инсбрук), Аветисян Г.Г. (РА, Ереван) – О контексте исследований и предварительных результатах раскопок, проведенных в западном и центральном крепостях Арамуса (2009-2015 гг.).....	304
Варданян Б.В. – Вопросы социально-демографического исследования позднебронзовых колесничных погребений в Куро-аракском междуречье.....	332

ПУБЛИКАЦИИ

Майтесян Г.Ш. – Проект административно-территориального деления Закавказья, составленный Степаном Камсараканом (1917 г.).....	350
--	-----

РЕЦЕНЗИИ

Мкртчян С.С. – <i>Мигран Галстян, Рубен Оганджаниян, Тамар Закарян, Гаянэ Акопян, Современная армянская семья в трансформирующемся обществе</i>	361
Тадевосян А.З. – <i>Рафик Нахапетян, Этнографические данные греко-римских античных первоисточников об Армении и армянах</i>	367
Карапетян А.А. – <i>Арарат Акопян, 1937 год в Армении</i>	370
Хачатрян А.С. – <i>Нарине Абгарян, С неба упали три яблока</i>	374

НАШИ ЮБИЛЯРЫ

Багдасарян Р.А. – <i>Ованес Туманян и русская литература (к 150-летию со дня рождения поэта)</i>	378
---	-----

СЛОВО ПАМЯТИ

Варданян Н.Х. – <i>Заслуженный арменовед: Саркис Арутюнян</i>	384
--	-----

CONTENTS

HISTORY AND POLITICAL SCIENCE

S. Sargsyan – “Haykashen” – The Official Newspaper of the Reorganized Hunchag Party.....	12
A. Vardanyan – Struggle between Mamikonyan and Bagratuni Noble Families for Political Power in Armenia in the First half of the VIII Century..	31
R. Sukiasyan – The Dossier of Nubarian Library on the Massacres and Deportation of Sebastia.....	46
A. Marukyan, N. Sharafyan – The Causes and Motives of the Genocide of Black Africans in Darfur.....	59
S. Petoyan – The Reading Hall of Shushi Branch of the Caucasus Armenians’ Benevolent Society (1889-1900).....	68
S. Baghdasaryan – Armenian-Bulgarian Economic Cooperation in 1998-2008.....	83
A. Poghosyan – <i>Keshig</i> in Caucasus.....	89
L. Rukhkyan – Polyarchy and Modern Manifestations of Neoliberalism.....	99
M. Hovsepyan – Armenian Community of Syria and the Committee on Cultural Relations with Armenians of the Diaspora in 1964-1985.....	110

ECONOMY

Yu. Suvaryan, V. Sargsyan – Methodology of Public Administration Effectiveness Assessment.....	128
V. Voskanyan, A. Manukyan – Smoking Ban in the Office. Socio-Economics Analysis.....	150
G. Avetisyan – Issues of State Regulation of Unfair Competition.....	161
R. Gasparyan – Stability in RA Banking System.....	172

PHILOSOPHY AND LAW

G. Safaryan, A. Tavadyan – Modern Standards of State-Legal Typology: A Theoretical and Legal Analysis.....	181
A. Harutyunyan – Legal Awareness in Context of Lawmaking and Law-Realization	190

SOCIOLOGY

M. Galstyan – Migrant's Funeral in Armenia: Issues of Identity and Mourning Construction.....	199
R. Karapetyan – On Armenian-Belarussian Ethnic-Cultural Intercourse....	211

PHILOLOGY

L. Safrastyan – Tragic Experience of Exile in the 20 th Century Iranian Literature. Sadegh Hedayat, Gholam Hosseyn Sa'edi.....	225
L. Harutyunyan – Expression of Causative and Resultative Relations in Business News.....	237
A. Gldjyan – Hakob Paronyan and His Time.....	248

CULTURE AND ART HISTORY

L. Sahakyan – Singers of Goghtn: Komitas Vardapet (Archimandrite) and Aram Khachaturian.....	264
S. Khachmanyan (USA, Los Angeles) – The Symbology of the Miter-Crown of the Catholicos	275

ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

G. Kocharyan – The Antique Layer of Central District of Dvin.....	293
W. Kuntner (Austria, Innsbruck), S. Heinsch (Austria, Innsbruck), H. Avetisyan (RA, Yerevan) – Some Remarks on the Research Context and the Preliminary Results of the Excavations Conducted in the West and Central Forts of Aramus between 2009 and 2015.....	304
B. Vardanyan – The Problems of Social-Demographical Research of Chariot-Burials in the South Caucasus during the Late Bronze Age...	332

PUBLICATIONS

H. Mahtesyan – The Project of Stepan Kamsarakan on Administrative and Territorial Division of Transcaucasia (1917).....	350
--	-----

LITERARY REVIEWS

S. Mkrtchyan – <i>Mihran Galstyan, Ruben Ohanjanyan, Tamar Zakaryan, Gayane Hakobyan, Modern Armenian Family in Transformative Society</i>	361
A. Tadevosyan – <i>Rafik Nahapetyan, Ethnographic Data of Ancient Greek and Roman Sources on Armenia and Armenians</i>	367
A. Karapetyan – <i>Ararat Hakobyan, The Year of 1937 in Armenia</i>	370
A. Khachatryan – <i>Narine Abgaryan, Three Apples fall from the Sky</i>	374

OUR JUBILEES

R. Baghdasaryan – <i>Hovhannes Tumanyan and Russian Literature (Towards the 150th Anniversary of the Poet)</i>	378
--	-----

WORD OF MEMORY

N. Vardanyan – <i>The Great Devotee of Armenology: Sargis Harutyunyan</i> ..	384
---	-----

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՎԵՐԱԿԱԶՄՅԱԼ ՀՆՉԱԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ «ՀԱՅԿԱՇԵՆ» ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԸ

ՍԱՐԳՍՅԱՆ Ս.Թ.*

1887 թ. հիմնադրված Հնչակյան կուսակցության գործիչները (հիմնականում՝ արևմտահայ) ճիշտ չէին համարում Լոնդոնում գտնվող իրենց կուսակցության կենտրոնի գործունեությունը՝ Ավ. Նազարբեկի մենատիրական ղեկավարությամբ (դժգոհությունը հատկապես մեծ էր Մարո Նազարբեկից): «Արփիարականներ» անվանված գործիչները՝ Միհրան Տամատյանը, Արփիար Արփիարյանը, Միհրան Սվազյանը, Լևոն Մկրտիչյանը և ուրիշներ¹, համոզված, որ Թուրքիայում արդյունաբերական պրոլետարիատի բացակայության պայմաններում սոցիալիզմի համար մղվող պայքարն անհեռանկար է և այլևս «աւելորդ ու վնասակար Հայկական հարցի լուծման համար», հանդես եկան միայն ազգային-ազատագրական պայքար մղելու պահանջով:

Նրանք արևմտահայ իրականության համար ժամանակավորեալ էին համարում սոցիալիզմի տեսությունը և գտնում էին, որ այն զուր տեղը լոկ կշլատի իրենց ուժերը: 1896 թ. առանձնացան և 1898 թ. հիմնադրեցին Վերակազմյալ հնչակյանների կուսակցությունը (այսուհետև՝ ՎՀԿ)²: Մի քանի անգամ նրանք փորձեցին վերամիավորվել (օրինակ, 1902-ի մարտին՝ «խախտու հիմերու վրայ, քանի որ բուն գժտութեան խնդիրը, ընկերվարութիւնը (սոցիալիզմը), բոլորովին մէջտեղէն վերացված չէր»)», սակայն

* Պատմ. գիտ. դոկտոր, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նոր պատմության բաժնի առաջատար գիտաշխատող, sargsyansuren@yandex.ru, հոդվածի ընդունման օրը՝ 1.03.2019, գրախոսման օրը՝ 2.04.2019:

¹ Այդ մասին պատկերացում են տալիս Ապահի, Ռշտունու, Տամատյանի, Արփիարյանի և մի շարք այլ գործիչների նամակներ. տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), Ապահ Պետրոսյանի ֆ. N 453, ց. 1, գ. 6, թ. 1:

² Տե՛ս **Հովհաննիսյան Գ.**, Վերակազմյալ հնչակյան կուսակցություն [Հայ ազգային և Հայաստանի ու Անդրկովկասի սոցիալիստական կուսակցությունների պատմության ակնարկներ (1885–1914 թթ.), Ե., 2003]:

³ **Տեփոյեան Պ.**, Միհրան Տամատեան 1863–1946 թթ., Պեյրոպ, 1964, էջ 105:

1906 թ. շարունակվող խմորումների պատճառով, դարձյալ տրոհվեցին: Ընդհանրապես, Հնչական կուսակցության մեջ պառակտումներն այնքան խորացած ու բազմաբնույթ էին, որ «այնտեղ մայրը իր զաւակը չէր ճանչնար»⁴:

Վերակազմյալների մի հատվածն արմենականների նման դեմ էր արևմտահայերի ազատագրության հարցը սոցիալիստական վարդապետությանն առնչելուն և ցուցադրական ու ահաբեկչական գործողությունների: Սակայն Վահե Արզույանը սակավաթիվ համախոհների հետ որդեգրում է ահաբեկչության ուղին: Դա էլ նոր պառակտման առիթ է դառնում: Լևոն Մկրտիչյանը, Վահան Թեքեյանը, Սուրեն Պարթևյանը, Սարգիս Մալեմեզյանը, Միհրան Տամատյանը և ուրիշներ բաժանվում են կուսակցությունից: Առաջանում են՝ չափավոր կամ «Ազգյան» (1907 թ. ապրիլի 20-ից Ս. Պարթևյանի խմբագրությամբ լույս տեսած «Ազգ» թերթի անունով) և արմատական թևերը⁵: Վերջիններս աստիճանաբար որդեգրեցին չափավոր գաղափարներ, իսկ նրանց ամերիկյան հատվածը 1919-ին իրեն հռչակեց Ազատական կուսակցություն, որը 1921-ին միավորվեց Հայ սահմանադրական ռամկավար կուսակցությանը՝ ստեղծելով Ռամկավար ազատական կուսակցությունը⁶:

Վերակազմյալներն ակտիվ գործունեություն ծավալեցին հատկապես մամուլի ասպարեզում: Նրանք հրատարակեցին «Ձայն Հայրենյաց», «Մարտ», «Նոր կյանք», «Ազատ բեմ», «Ազգ» և մի քանի այլ պարբերականներ, որոնք քիչ թե շատ ուսումնասիրված են, իսկ ներկայացվող «Հայկաշենը»՝ բոլորովին⁷: ՎՀԿ կենտրոնական վարչության օրգան «Հայկաշեն» ազգային, գրական, քաղաքական ամսաթերթը սկսել է լույս տեսնել 1917 թ. նոյեմբերի 1-ից Թիֆլիսում^{*}: Մինչև թերթի լույսընծայումը գաղափարամոտ պարբերականներից մեկում ազդարարվում է. «Վերակազմեալ Հնչակեան կուսակցութեան Կովկասի կեդրոնական մարմնոյ կողմից»

⁴ Դարբինեան Ա., Հայ ազատագրական շարժման օրերէն, Փարիզ, 1947, էջ 181-182:

⁵ Տե՛ս Ղազարեան Վ., Համառոտ պատմութիւն ՌԱԿ-ի, Պեյրուք, 1978, էջ 25:

⁶ Այս մասին մանրամասն տե՛ս Սարգսյան Ս., Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցություն (1908–1921 թթ.), Ե., 2009:

⁷ Տե՛ս Սարգսյան Ս., Վերակազմյալ հնչական մամուլի պատմությունից. «Մարտ», «Նոր կեանք» [ՀԽՍՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների (այսուհետև՝ Լրաբեր), 1995, N 2, էջ 106–114], նույնի՝ «Ձայն հայրենեաց» (1899–1911), Հայ պարբերական մամուլի պատմություն 1900–1922, հ. 2, Ե., 2017, էջ 628–639:

^{*} Թերթի խմբագրության հասցեն էր՝ Թիֆլիս, Բեհբության փողոց, թիվ 30:

յուրաքանչյուր ամսի 15-ին 32 մեծադիր էջերով և գեղարվեստորեն ձևավորված կազմով լույս կտեսնի «Հայկաշեն» թերթը⁸:

Նույն հայտարարության մեջ նշվում էր, որ թերթն իր շուրջը պետք է համախմբի «Հայ ազգայնականության հաւատացող» բոլոր ուժերին և ջանքեր գործադրի, որ բոլոր ազգային կուսակցությունները ղեկավարելու ունակ գործիչներին համախմբի և կազմի «կեդրոնական կորիզը ազատական և ազգայնական տարրերու»⁹:

«Հայկաշենի» հրատարակութեան առթիւ» ՎՀԿ-ի կենտրոնական վարչության ստորագրած անդրանիկ առաջնորդողում նշվում է, որ իրենց թերթն սկսում է լույս տեսնել այնպիսի դժվարագույն պայմաններում, երբ հոգսերով ծանրաբեռնված, բայց անկախության ձգտող ժողովուրդները փորձում են կերտել իրենց վաղվա օրը: Նրանք «քաղաքական և քաղաքացիական կրկնակ խոհականութեամբ» ենթադրում են, որ «ոգորումի գերագույն պրկումէն յետոյ պիտի սկսի բիրեղացումը նոր մարդկութեան մը նորագոյն ըմբռնումներուն և գոյակենցաղին»¹⁰: Հետևաբար՝ հայերն էլ, որ ամենամեծ զոհողություններն էին ունեցել պատերազմի տարիներին, անբավարար հետաքրքրություն դրսևորեցին վաղվա օրվա հանդեպ: Հայերի համար ստեղծված բարդ իրավիճակից հաղթանակած դուրս գալու համար անհրաժեշտ էր կշռադատված և միասնական գործելակերպ դրսևորել:

Հայկական հարցի լուծման ուղիներ գտնելը ցավատանջ է եղել հայ ժողովրդի համար, իսկ տվյալ պահին անհամեմատ ավելի բարդ իրավիճակ էր ստեղծվել «մանաւանդ մեզ զգեստնել ձգտող հարուածներէն յետոյ»¹¹: Հայ ժողովուրդն այդ ահեղ հեղաբեկումներից հետո իսկապես հոգեկան բացառիկ ուժի և համախմբվածության կարիք ուներ, որպեսզի կարողանար հնարավորինս ապահով դուրս գալ ստեղծված կացությունից: Ավելին, թերթի հեղինակների կարծիքով, ստեղծված իրավիճակից դուրս գալու միակ միջոցը համագործակցությունն էր, որը հարկավոր էր

⁸ Տե՛ս Հայաստան, N 144, 29.X.1917:

⁹ Նույն տեղում:

¹⁰ Հայկաշեն, N 1, նոյեմբեր, 1917, էջ 1:

¹¹ Նույն տեղում:

ավելի խորացնել: Հենց դրան նպաստելու առաքելությամբ էր ասպարեզ իջնում «Հայկաշենը», որը «չպիտի առաջնորդուի նեղմիտ նկատումներով»¹²:

Հրատարակիչների ասելով՝ թերթը պետք է գնահատի և սատարի այն բոլոր ձեռնարկները, որոնց նպատակն է համագործակցության ամուր հիմքեր ստեղծելը հայկական միջավայրում գործող տարբեր քաղաքական ուժերի միջև, որոնք ապահովված կլինեն գործնական և իրական երաշխիքներով: Ավելին, ամեն ինչ պետք է անի, որ «լիպերալ ծրագիր ունեցող ազգայնական կուսակցությունները ի մի ձուլուին» և միասնական հզոր ուժ ստեղծեն, որն ի վիճակի կլինի ազգային հավաքական շահերը պաշտպանել «ստորա-ներով սնանուող» զանազան հոսանքներից¹³: Համագործակցությունը ջատագովելով հանդերձ՝ «Հայկաշենը» շեշտում էր, որ համազգային շահերից ելնելով՝ նաև անողորմ կքննադատի և անարգանքի սյունին կգամի բոլոր նրանց, ովքեր կփորձեն խաթարել միասնականության ոգին:

Խմբագրակազմը հայտարարում է, որ թերթը պետք է ունենա հետևյալ հիմնական բաժինները. 1) Հայկական դատ, 2) Ազգայնական շարժումը ժամանակակից պատմության ընթացքում և հայ ազգայնականությունը, 3) Համազգային կյանք, 4) Գրական-գեղարվեստական, 5) Միջազգային կյանք, 6) Ժամանակակից հայոց պատմության քննադատություն, 7) Կոտորածների վերաբերյալ նորագույն փաստաթղթեր: Վերջում ավելացնում է, որ «Հայկաշենը» ապահովված է նյութապես, նաև կարող աշխատակիցներով¹⁴: Գովելի է, որ թերթի գլխագրից անմիջապես հետո տրվում էր համարի բովանդակությունը. նշվում էին հոդվածների հեղինակներն ու դրանց վերնագրերը:

Անդրանիկ համարի «Թափառումներ իմ ցեղի նկարագիրներուն մէջ» հրապարակման մեջ անդրադառնալով հայ ժողովրդի պատմությանը՝ հոդվածագիր Վ. Թորթվենցը շեշտում է, որ հայ ազգն ունեցել է «դարերու հերոսական, անվեհեր, տառապող ու դիմացող, մաշուղ և միշտ ստեղծագործող կեանք»¹⁵, քայլել է ժամանակին համընթաց, որը շատ կարևոր հանգամանք է: Ուստի ցեղասպանության վերքերն էլ ժամանա-

¹² Նույն տեղում:

¹³ Նույն տեղում, էջ 3:

¹⁴ Հայաստան, N 50, 5.XI.1917, էջ 4:

¹⁵ Հայկաշեն, N 1, էջ 7:

կի ընթացքում կսպիանան. մարտնչող հայ ժողովուրդը կշարունակի իր հերոսական ընթացքը, որովհետև նա արարող ու հաղթանակներ տարած էթնոս է: Ուրեմն, եզրակացնում է հողվածագիրը, հայ ժողովուրդը, որ «դարաւոր մշտենջենական ըլլալու և ստեղծագործական տարերքն ունեցած է»¹⁶, կհարատևի մշտապես: Միայն թե ափսոս, որ քաղաքական պայմանների ճնշման ներքո «ես»-ը հաճախ հակադրության մեջ է հայտնվել ամբողջական գաղափարախոսության, անհատը՝ հասարակության հետ:

Եվ թե ինչու՞ հայ անհատի հանճարը «օտար հորիզոններու տակ ունեցած է զարմանահրաշ փթթումներ», իսկ իր ժողովուրդի միջավայրում երբեմն դառնում է անօգուտ, հողվածագիրը պատասխանում է. «Մեր իրական հանճարները իզուր տեղը յաճախ կարծած են, որ իրենց թոփշքներու համար նեղ են հայ ժողովուրդի հասարակական սահմանները», առանց հասկանալու, որ փոքրաքանակ ժողովուրդը ևս կարող է ծնել ու սնել բարձր արժեքներ ու դրանց կրողներ¹⁷: Բայց ամեն անգամ, երբ այդ հանճարները փորձել են մտնել հայրենիքի սահմաններից ներս, տեղի մտավորականությունը սրբորվ է դիմավորել նրանց, և ինքը մնացել «միջակը»: Հանճարներն էլ ստիպված լքել են «միջակ մտաւորականութեան աւերներուն մէջ եղած» հայրենիքը¹⁸: Հեղինակը ցավով արձանագրում է, որ մեր դառնագին վիճակի պատճառը հենց այդ միջակության հանդգնությունն է եղել և նրա անհանդուրժողականությունը «դրսեցիների» նկատմամբ:

«Անմոլար ճանապարհ» հրապարակման մեջ նկարագրելով պատերազմի աշխարհակործան հետևանքները՝ հողվածագիր Նորայր Գընթունին շեշտում է, որ հայ ժողովուրդը չպետք է խաբվի իրենց «սոցիալիստ» անվանող նյութապաշտների խոստումներից, որոնք, երկրի անտեր վիճակից օգտվելով, «բաժանական ոգի են քարոզում հեշտ տիրելու և շահագործելու յետին մտքով»¹⁹: Հայ ժողովուրդը պատերազմի փորձությունից ելնելու համար «մէկ անմոլար ճանապարհ ունի», գրում է հեղինակը. դա «ազգայնականութեան, հայրենասիրութեան» ճանապարհն

¹⁶ Նույն տեղում, էջ 9:

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ Նույն տեղում, էջ 10:

¹⁹ Նույն տեղում:

է²⁰: Դրանով առաջնորդվողներն են իսկական հայ հերոսները, այդ ճանապարհը որդեգրողներն անմահ են:

«Այժմէական հարցեր» հրապարակման հեղինակ Թաթուլը Ռուսաստանի օրինակով ցույց է տալիս, որ ամենուր տարածվել են սոցիալիստական գաղափարախոսությունն ու այն դավանող քաղաքական ուժերը, որը, սակայն, անընդունելի է հայ ժողովրդի դեպքում: Միակ ուղին համարելով ազգային համախմբվածությունն ու շուկայական տնտեսությունը և չվախենալով քննադատություններից՝ հեղինակը եզրակացնում է. «Մենք կը հաւատանք թէ այս սկզբունքները ավելի օգտակար են ու նպատակայարմար են հայ ժողովուրդին համար»²¹:

«Մեր յառաջիկայ գործելակերպը. ազատագրական հոսանքի վերլուծումը» ընդարձակ հրապարակման մեջ Լ. Թյությունջյանը, պատմական փոքրիկ էքսկուրս կատարելով, եզրակացնում է, որ ի դեմս կամավորական շարժման հայ ժողովուրդը ներկայացավ նորովի, ինքնակազմակերպման բարձր մակարդակով, որն էլ հույսեր է ներշնչում ապագայի նկատմամբ:

«Հայկական հարցի վերջին փուլերը» մեծածավալ հոդվածում հեղինակը՝ Պարթևը, Հայկական հարցի լուծումը գտնում է հայ ժողովրդին «իր նախկին անկախութիւնը վերադարձնելու իր պատմական հայրենիքին մէջ անդորր ու ինքնուրոյն կեանքն ապահովելու մէջ»²²: Նա Հայկական հարցը համարում է հին պատմական իրողություն, որի ակունքները տեսնում է Արշակունյաց թագավորության վերջին շրջանում, երբ հայոց պետականությունն սկսեց պարբերաբար առկախվել: Այդ հարցը այդուհետև մնաց «մեր դարաւոր մարտիրոսութեան մէջ իբր իրական կեանքի ահաւոր երևոյթ մը»²³ և մշտական ուղեկիցը հայ ժողովրդի պատմության: Իսկ Սան Ստեֆանոյի և Բեռլինի դաշնագրերում սկիզբ առավ Հայկական հարցի «դիւանագիտական բնոյթը»:

Համաշխարհային աշխարհակործան պատերազմի ժամանակ էլ, գրում է Պարթևը, ազգովին միացանք դաշնակիցներին և «մեր թիւն քաղդատմամբ ամենաշատ զոհերը տուինք դաշնակիցներուն ընդհա-

²⁰ Նույն տեղում, էջ 12:

²¹ Նույն տեղում, էջ 1:

²² Նույն տեղում, էջ 21:

²³ Նույն տեղում, էջ 22:

նուր դատին համար»²⁴: Սակայն այս անգամ էլ արդյունք չունեցանք: Ընդհանուր առմամբ, արձանագրում է հողվածագիրը, ամբողջ քաղաքակիրթ աշխարհը պարտական է հայերին, քանի որ XI դարից սկսած՝ Արևելքի բոլոր ավարառու ցեղերի արշավանքների առաջին դիմադրողը, առաջին զոհվողն ու իր արյան գնով ներխուժումների թափը կոտրողը հայն է եղել: Գոնե այս անգամ, նշում է հեղինակը, Եվրոպան կարողանա մարել հայերի նկատմամբ ունեցած պարտքը և նրանց ազատել թուրքական բռնատիրությունից: Իսկ մեր՝ հայերիս առաքելությունը պետք է լինի «մեծերուն ու հզորներուն այդ շահերուն տեսակետներուն համաձայնեցումը Հայկական հարցը վճռելու համար»²⁵:

Պարթևը նշում է. «Տաճկահայաստան քաղաքական թերմինը կը պարունակէ հայկական վեց նահանգներ միայն» (Էրզրում, Վան, Բիթլիս, Խարբերդ, Սեբաստիա, Դիարբեքիր-Ս.Ս.)²⁶: Իսկ «կատարելապես» ինքնորոշվելու համար անհրաժեշտ է, նախ՝ միավորել տվյալ ժողովրդի բնօրրանը կազմող բոլոր տարածքները, ապա այդ տարածքի վրա այդ ժողովրդին հնարավորություն ընձեռել ազատ կամքով ընտրելու իր ապագան: Այսինքն՝ հայ ժողովրդի պարագայում ինքնորոշման համար նախ անհրաժեշտ է իրականացնել «ազգային միավորումը»:

Հեղինակի կարծիքով, հարցի վերաբերյալ ռուսական կողմն էլ իր մոտեցումները ձևակերպել է «Հայաստանն առանց հայերի» և այնտեղ «Եփրատեան քաղաքակրթութիւն հիմնելու» տխրահռչակ դրույթով: Այնուհետև վկայակոչելով ռուս քաղաքական գործիչ Սկոպլևի ձևակերպումը, թե՛ «հայ ժողովուրդը նոյնպէս երաշխիքներ պէտք է ունենայ իր ապագայ գոյութեան համար, եթե ոյժերը բաւեն՝ անկախ գոյութեան համար»²⁷, պարզաբանում է, որ այն ավելի աննպաստ է հայ ժողովրդի համար, քան եվրոպացիների վարկածը: Քանի որ այս դեպքում բոլորովին չի պաշտպանվում փոքր ազգերի ինքնորոշման իրավունքը:

Հեղինակը որպես ավելի առաջադեմ և հայանպաստ դիրքորոշում է նշում Ռուսաստանի Հանրապետության Ժամանակավոր խորհրդում հայկական խմբակի կողմից Ջևելեգյանի առաջ քաշած տեսակետը՝ հայ-

²⁴ Նույն տեղում, էջ 25:

²⁵ Նույն տեղում, էջ 26:

²⁶ Նույն տեղում, N 3, հունվար, 1918, էջ 17:

²⁷ Նույն տեղում, էջ 19:

կական վեց վիլայեթների հետ Կիլիկիայի միացումով անկախ «Նոր Հայաստան» պետության ստեղծումը, որը պետք է գտնվի բոլոր պետությունների երաշխավորության ներքո:

Գրականագիտական բարձրարժեք վերլուծական է Գարեգին Լևոնյանի «Հայազն հնդիկ բանաստեղծ XVI դարում» հոդվածը: Ամսաթերթում տեղ են գտել նաև մի քանի գողտրիկ «Արծակ երգեր», որոնք հեղինակել են Արաքսի Մովսիսյանը, Ռաֆայել Զարդարյանը, Մեխակը, Վահան Թորթվենցը, Նորայր Ազգունին:

«Միջազգային կեանք» բաժնում խոսվում է շարունակվող պատերազմի և դրա կործանարար հետևանքների մասին, և կարևորվում է այն գաղափարը, որ պատերազմից տուժում են անխտիր բոլոր ժողովուրդները: «Գլբուս» կեղծանունով հեղինակը, պատերազմը համարելով խոշորագույն չարիք, շեշտում է, որ ռուսական հեղափոխությունից հետո դաշնակիցներն էլ ավելի մեծ ջանքեր պիտի ներդնեն, որպեսզի կարողանան հաղթանակ տանել: «Քրոնիկոն» վերլուծականում հեղինակը ողջունում է Ռուսաստանի Փետրվարյան հեղափոխությունը, Կերենսկուն համարում «ռուսական հայրենիքի մեծագույն յեղափոխական», սակայն մերժում է մեծամասնականներին ու նրանց իրականացրած հոկտեմբերյան հեղաշրջումը: Քանի որ, պարզաբանում է նա, դրանով խախտվեց ուժերի հարաբերակցությունը, և հետաձգվեց մոտալուտ հաղթանակը: Այսինքն՝ դրա հետևանքով պատերազմն էլի կշարունակվի, ու նոր զոհերի ու ավերածությունների առիթ կլինի: Բացի այդ, մեծամասնականները տարաբնույթ դեկրետների հեղեղով նպաստում են, որ ռուս զինվորները զանգվածաբար լքեն ռազմաճակատները, իսկ դա հայերի համար կործանարար կլինի: Թերթը կոչ է անում առժամանակ մոռանալ «տնտեսական-դասակարգային բոլոր վեճերը և սկսիլ դարբնել ազգերու ազատագրությունը»²⁸:

Համարի վերջում առկա են մի քանի հայտարարություններ «Հայկաշեն» թերթի հաջորդ համարն ուշացնելու և այդ պատճառով երկու համարը միասին տպագրելու, ՎՀԿ ծրագրային հարցերի վերաբերյալ, «Փորձ ազգութիւնների մասին», «Շապին-Գարահիսարի ապստամբութիւնը» գրքերի և «Հայաստան» թերթի մասին:

²⁸ Նույն տեղում, էջ 46:

«Հայկաշենի» երրորդ համարը լույս տեսավ 1918 թ. հունվարին՝ «Ծանրակշիռ դէպքերու նախօրեակին» խմբագրականով: Ներկայացնելով Ռուսաստանում հեղափոխություններից հետո ստեղծված քառասյին վիճակը՝ հեղինակը նշում է, որ Կովկասը ևս ենթարկվեց դրանց քաղաքական ու ռազմական ազդեցություններին և կանգնեց «մոայլ անակնկալներու և նոր հնարաւորութիւններու հանդէպ»²⁹: Թերթի կարծիքով, եթե տարածաշրջանի մահմեդականները կտուժեն տնտեսապես, գեղեցիկ Վրաստանը կավերվի, ապա հայերին կսպառնա ֆիզիկական բնաջնջումը: Հետևապես, հայերը մեկ մարդու նման պետք է ոտքի կանգնեն՝ ինքնապաշտպանության համար: Խիստ կարևոր են նաև սկսված տարակարծություններին տուրք չտալը և հայ-վրացական դարավոր ջերմ հարաբերությունները ավելի սերտացնելը: «Եթե ըլլանք կտրուկ, արագ և գործնական, անսահման զոհաբերութեան և շրջահայեաց հեռատեսութեան ընդունակ, այն ատեն կ'երևի, որ պատուով ապրելու սրբազան կտակը դեռ վառ է հայ սրտերուն և մտքերուն մէջ»³⁰, - եզրափակում է խմբագրականի հեղինակը:

Հովհաննես Մազմանյանը «Թուրքիան և հայերը» վերլուծականում նշում է, որ «քաղաքակրթական ձեռնարկներուն մէջ անընդունակ օսմ. պետութիւնը կատարեց նախճիրներուն ամենէն ահռելին, ջնջելու համար Հայկական հարցը, հայերը ջնջելով»³¹, քանի որ դեպի Արևելք իր առաջխաղացման ու ընդարձակման միակ խոչընդոտը նրանք էին: Վերափոխումների ձգտող Թուրքիայի համար հայը «փուշ էր իրենց աչքին», իսկ իրականում ինքն էլ եվրոպացիների համար վերածվել էր հասարակ միջուկայի, որտեղ կարելի էր գնել ամեն ինչ: «Մրցակիցներու պազարը պիտի դառնար մրցակիցներու կրկեսը», - գրում է հեղինակը, ապա ավելացնում, որ տխուր վախճան էր լինելու թուրքերի համար: Իսկ հայ ժողովրդին կոչ է անում համախմբվել, քանի որ 16-րդ ու 61-րդ հոդվածների փոխարեն հնարավորություն էր ստեղծվել ինքնուրույն տնօրինելու ապագան: «Ապագային համար» վերլուծականի հեղինակը, ներկայացնելով հայ ժողովրդի ծանր կացությունը, հորդորում է չտարվել տեսիլքներով, «կարենալ չափուիլ այսօրուան կեանքի պահանջներուն հետ», որպեսզի հնարավոր

²⁹ Նույն տեղում, N 3, հունվար, 1918, էջ 2:

³⁰ Նույն տեղում, էջ 4:

³¹ Նույն տեղում, էջ 5:

դառնա նաև մտածել ապագայի մասին³²: Նա նշում է, որ վաղ թե ուշ գալու է այն օրը, երբ իրենց օտարածին գաղափարներով ժողովրդին առաջնորդած ու կործանման եզրին հասցրած օտարամոլ ուժերը չպիտի կարողանան խուսափել պատասխանատվությունից. «Պատմութիւնը օր մը անժխտելիօրէն պիտի հաստատէ, թէ այս բացասական արդիւնքին մեջ յանցաւորութեան ինչ բաժին ունէին անոնք»³³:

Հոգվածագիրն անդրադառնում է նաև Հայաստանի ապագա կառավարման ձևի մասին քննարկումներին: «Երբ դեռ ազատութիւնը չկայ, դեռ հայրենիքն էլ փաստօրէն չկայ», և ինքնուրույն կառավարմանը հասնելու դժվարություններն առջևում են, գրում է հեղինակը, դրա կառավարման ձևի վերաբերյալ վեճերով անիմաստ է զբաղեցնել ու «տարափեղկել» հայությանը: Վաղաժամ է ու վտանգավոր, մանավանդ որ «ազատութիւնն ու կառավարութիւնը իրենց հրապոյրը կորուսած են այս ժողովուրդին համար»³⁴:

Շարունակելով նույն ոգով՝ հեղինակը ներկայացնում է տարբեր քաղաքական ուժերի մոտեցումները հիմնախնդրի վերաբերյալ: Ռուս սոցիալիստների ամենասիրած «Պրոլետարներ, բոլոր երկրների, միացեք» նշանաբանի օրինակով հոգվածագիր Թաթուլը նշում է, որ այդ սեթևեթանքները հայ ժողովրդի համար խիստ վտանգավոր են, ապա վստահ եզրակացնում, որ ամենաճիշտը «Բոլոր աշխարհի հայեր, միացեք» կոչ-նշանաբանն է, որ պիտի հնչի ամենուր և արմատավորվի յուրաքանչյուր հայի սրտում:

XIX դ. վերջի և XX դ. սկզբի հայ ազգային-ազատագրական պայքարի վերաբերյալ «Ազատագրական հոսանքի վերլուծումը» վերնագրով տեսական-գործական հոդվածի հեղինակ Լ. Թյությունջանը նշում է, որ արևմտահայ մտավորականությունը «արտահայաստանյան էր» և ավելի շատ տարված էր օտարերկրյա դիվանագիտության «կայծկլտումներով», որի հետևանքով էլ այն ավելի «նուազ քուէ շահեցաւ երկրէն՝ քան կովկասահայ ռօմանթիզմը»³⁵: Ավելին, այդ ռոմանտիկ երիտասարդներն աստիճանաբար շրջվեցին դեպի ռեալիզմ, և հակասություն առաջացավ

³² Նույն տեղում, էջ 9:

³³ Նույն տեղում:

³⁴ Նույն տեղում, էջ 12:

³⁵ Նույն տեղում, էջ 15:

հին դպրոցի՝ ռոմանտիկների ու նորի՝ ռեալիստների միջև: Հեղափոխությունն էլ արագացրեց ու խորացրեց ներքին շերտավորումը, «քաղքենիությունը հարկադրական կարիքը զգաց ամուր հիմքերու վրայ դնելու դասակարգային սօցիալ-քաղաքական տիրապետությունը, և մեջտեղ եկավ Հայ ժողովրդական կուսակցությունը»³⁶:

«Միջազգային կեանք» բաժնում այս անգամ ևս քննարկվում են համաշխարհային պատերազմին, պատերազմող կողմերի քաղաքական ու տնտեսական վիճակին առնչվող և պատերազմից հետո հաստատվելիք կացության հնարավոր տարբերակների վերաբերյալ հարցերը: Համարում տեղ է գտել մի ուշագրավ հայտարարություն այն մասին, որ թերթի խմբագրությունը տարեկան մի քանի անգամ 20-ական օրինակ «Հայկաշեն» է նվիրում դպրոցներին և 10-ական՝ ռազմաճակատի զինվորներին:

«Քրոնիկոնում» էլ շեշտվում են մատաղ սերնդի կրթության կարևորությունը, ուրիշների վրա հույս դնելու վնասակարությունը և սեփական ուժերին վստահելու անհրաժեշտությունը. «Դարձեալ մեր ոյժերուն պիտի վստահինք, ժողովուրդ մը որ արի վճռականութեամբ մահ կամ ազատութիւն կաղաղակէ, այդ ժողովուրդը չի կորսուիր և չի յաղթուիր»: Մեզ սերտ միասնություն է անհրաժեշտ և կարգապահություն, ահա փրկության ճանապարհը, շեշտում է հեղինակը:

«Հայկաշենի» չորրորդ համարը լույս է տեսել 1918 թ. փետրվարին: Առաջին էջին Անդրանիկի լուսանկարն է, որի ստորին հատվածում գրված է՝ «Անդրանիկ. Հայաստանի երկրապահ զօրամասի ընդհ. հրամանատար»: Դրան հաջորդում է «Պորիս» կեղծանունով հեղինակի «Ո՛վ է Անդրանիկը» հրապարակումը: Ներկայացնելով հայ ժողովրդի պատմության վճռորոշ կեղծաններում գործած հերոսներին և նրանց համարելով ժամանակի թելադրանքով լույս աշխարհ եկածներ՝ հողվածագիրն իր օրերի «մեծավայելուչ ժառանգը» համարում է Անդրանիկին³⁷: Մեծարելով ազգային հերոսին՝ հեղինակը նշում է, որ նա սովորական մահկանացու չէ: Որ նրան նույնիսկ կուսակցական կաղապարները չկարողացան պատնեշել գաղափարախոսության սահմանագծերում: «Բառին լայն իմաստով, - գրում է Պորիսը, - Անդրանիկը հայ Կարիպալտին է»³⁸, իսկ

³⁶ Նույն տեղում, էջ 17:

³⁷ Նույն տեղում, N 4, փետրվար, 1918, էջ 82:

³⁸ Նույն տեղում, էջ 83:

նրան քննադատողները՝ ոչ իրատեսներ: Քանի որ հայ ժողովրդի ազատագրումից բացի նա չունի ուրիշ «դաւանանքներ, կրօն, հասարակական ու տնտեսական խնդիրներ...»³⁹:

Համարում տեղ է գտել «Վասակի վարձք» հետաքրքիր վերլուծականը, որը որպէս հարգանքի տուրք՝ ձոնված է «Արագած» պարբերականի վաղամեդիկ խմբագիր Մուշեղ Շահինյանի (Սարորդի) հիշատակին: Հոգվածն ամբողջությամբ հայրենասիրության և փորձությունների պահին հայրենիքին անմնացորդ նվիրվելու մասին է: Վասակ-Վարդան հավերժական թեմայի քննարկման հետնախորքի վրա հեղինակը համոզված գրում է. «Առանց հայրենիքի վերածնունդ չկայ. առանց պատմական յիշողութեան Ազգը կը մեռնի»⁴⁰: Ներկայացնելով իրեն ժամանակակից մի քանի հերոսների (օրինակ՝ Մուշի հերոսական ինքնապաշտպանության քաջամարտիկ հաջի Հակոբ Կոտոյանին) և հասարակական-քաղաքական գործիչների (Միհրան Սվազլյանին, Կիմ Չանգալյանին, Ջոն Թագաքչյանին)՝ հեղինակը գրում է. «Ազգը վերապրեցնելու վսեմ պատասխանատուութիւնը այս պառակտեալ, բայց քաջակորով սերունդին յոգնաբեկ ուսերուն վրայ ծանրացալ»⁴¹, որը, մերժելով վասակների, հավատարիմ մնաց իր պատմական ուխտին և փորձում է բոլոր ուժերով տեր կանգնել հայրենիքին:

Շարունակելով նույն ոգով՝ հայրենիքի համար ոչինչ չխնայելու գաղափարն են ջատագովում նաև Վարդանանց նվիրված հոդվածի ("Gloria Victis") հեղինակ Էդուարդը, քաղաքական փոփոխություններից չերկնջել հորդորող Ն. Դշտոյանը («Հերոսներու ուղիով ընթանանք»), Մամիկոնյան տոհմի սխրանքները մեծարող Հ. Մազմանյանը («Հայկական Աւարայր»), «Աւանդական ոգու» հեղինակ Թաթուլը, «Նորէն Վարդանանց օրերի» մասին գրող Վահրամ Նորիսը և այլք:

Հայ մարդու քաղաքական անուղղելի ռոմանտիզմի և ուրիշներին աներկբայորեն հավատալու բացասական հատկանիշների մասին է Պարթևի «Հայ քաղաքական իդեալիզմը» հոդվածը: Պատմական էքսկուրս կատարելով՝ նա զարմացած ու զայրացած հարց է հնչեցնում. «Մինչև

³⁹ Նույն տեղում:

⁴⁰ Նույն տեղում, էջ 88:

⁴¹ Նույն տեղում, էջ 91:

ե՞րբ պիտի շարունակուի մեր այդ ռոմանթիք քաղաքականությունը, այդ իրատեսակ իտէալիզմը»⁴²:

Նույն թեման է շարունակում նաև Գ. Լևոնյանը: «Վարդան Մամիկոնեան եւ Մեսրոպ Մաշտոց» հետաքրքրական հրապարակման մեջ, դիմելով պատմությանը և նշելով, որ V դարը «վերին աստիճանի նշանաւոր է» հայոց պատմության մեջ, հեղինակը գրում է, որ Արևելքի բռնապետության և Արևմուտքի կաշկանդիչ ազդեցության այդ շրջանում «երեւան եկաւ հայ ժողովրդի ֆիզիքական և մտաւոր ոյժերու հաւաքական խմբաւորումն ու թափը»⁴³: Նրանք բազկի ու մտքի հնարագիտության շնորհիվ հեռացրին Հայոց աշխարհին սպառնացող վտանգը: Հետագայում միայն ոսոխների անունները փոխվեցին, իսկ հայ ժողովուրդը մնաց անսասան: Շեշտելով այդ զույգ հերոսների հայապաշտպան գործունեությունը՝ հեղինակն արձանագրում է. «Թող սերնդից սերունդ ու հայ մտքերից անբաժան մնան այս երկու նվիրական անունները»⁴⁴:

Համարի վերջում տեղ են գտել նաև Ա. Արմանի, Խ.Պ.-ի, Անահիտ Մ.-ի, Հ. Մազմանյանի, Վ. Թոթովենցի, Գ. Մելոյանի հայրենասիրական ոգով տոգորված գեղարվեստական մի քանի ստեղծագործություններ: «Կառավարման ձև» ենթաբաժնում հեղինակը «քննում է» միապետությունից մինչև հանրապետություն կառավարման տարբեր ձևերը, նշում դրանցից յուրաքանչյուրի առավելություններն ու թերությունները և իր անթաքույց համակրանքն արտահայտում հանրապետական կառավարման նկատմամբ⁴⁵: Համարի վերջում կան նաև մի քանի կարևոր հայտարարություններ անձնակազմի ռազմաճակատ մեկնելու կապակցությամբ «Հայաստան» թերթի հրատարակության դադարեցման, իրենց թերթին նվիրված գումարների և նվիրատուների ազգանունները, «Հայկաշենի» նոր հասցեն (Բեյքութովսկայա, թիվ 30) և այլն:

«Հայկաշենի» վերջին՝ 5-րդ և 6-րդ համարները միասին լույս են տեսել 1918 թ. ապրիլին: «Վճռական անցքեր» խմբագրականում արձանագրելով, որ «Վճռական անցքերու մեծ թուական մը կ'ապրի Կովկասը պատմա-

⁴² Նույն տեղում, էջ 103:

⁴³ Նույն տեղում, էջ 107:

⁴⁴ Նույն տեղում:

⁴⁵ Նույն տեղում, էջ 120:

կանապէս»⁴⁶, հեղինակը կանխատեսում է՝ երկրամասը, հավանաբար, նոր սահմանագծումներ կունենա: Այնուհետև նշում է, որ ինքնավարության մոտալուտ գաղափարից խանդավառված հայ ժողովուրդը, սակայն, էրզրումը հանձնելով, ծանր կորուստ ունեցավ: Այն «մահացու հարուած տուաւ Տաճկահայաստանի սրբազան դատին»⁴⁷: Հետևապես, հեղինակի կարծիքով, հարկավոր է խելքի գալ և ուժեղ «գործօններ հրապարակ բերել շահելու համար այն, ինչ որ դեռ կարելի է»⁴⁸:

«Հաւատքի պակասը» հոդվածում Ն. Ազգունին գրում է, որ ինչպես անհատների, այնպես էլ ազգի դեպքում, երբ հավատը կորսվում է, «նա կը դառնայ խաղալիք ամէն հոսանքէ փչող քամիներու դէմ և անընդունակ ունէ ստեղծագործող և շինիչ դեր կատարելու»⁴⁹: Հեղինակի կարծիքով, հենց դրա հետևանքով էր, որ զորքը թալանով էր զբաղված և չցանկացավ ռազմաճակատ գնալ, իսկ ղեկավար գործիչները կամ չնկատելու էին տալիս, կամ փորձում էին դա բացատրել զանազան արհեստածին պատճառներով, որոնք ընդամենը «իրականութիւնը քողարկելու միայն կը ծառայէն»: Այդ ամենը խորությամբ դիտարկելու դեպքում, ըստ հոդվածագրի, պարզ էր դառնում, որ մեր ժողովրդի «հոգւոյն մէջ հաւատի պակասը կայ»: Նա չունի կյանքի նկատմամբ այն ռոմանտիկ ըմբռնումը, որն ուներ ազատագրական-ֆիդայական պայքարի ընթացքում⁵⁰: Այդ հավատազրկման արմատներն ու պատճառը հեղինակը տեսնում է տասնամյակներ շարունակ պայքարը ղեկավարած գործիչների թույլ տված սխալներում. «Մեր ժողովուրդը իմաստակացած է, - գրում է Ազգունին, - որովհետև թոյլ տուած է որ տարիներէ ի վեր իր ծոցին մէջ վխտացող և զինք շահագործող շահամոլ, փառասէր և թեթևասօլիկ գործիչներ լարախաղացութեամբ իր ճակատագրին հետ խաղան...»⁵¹:

Ժողովրդի հավատի կորստյան համար մեղադրելով օրվա ղեկավար կուսակցությանն ու գործիչներին և քննադատելով նրանց՝ նա միաժամանակ իր համակրանքն է արտահայտում Մ. Պապաջանյանի նկատմամբ. «Մեր ժողովուրդ այնքան անտարբեր է դարձել, որ չի հետա-

⁴⁶ Նույն տեղում, N 5-6, փետրվար, 1918, էջ 121:

⁴⁷ Նույն տեղում:

⁴⁸ Նույն տեղում, էջ 122:

⁴⁹ Նույն տեղում:

⁵⁰ Նույն տեղում, էջ 125:

⁵¹ Նույն տեղում:

քրքրուիր իր վարիչներով, դրա համար էլ Մ. Պապաջանեանի պէս փորձառու անհատներ կը անտեսուին, որովհետև անոնք դժբաղդ բերումով մը տարբեր կուսակցութեան մէջ կը գտնուին»⁵²: Իսկ ստեղծված տխուր կացութիւնից դուրս գալու համար որպէս դեղատոմս հեղինակն առաջարկում է. «Ժողովուրդի ողնաշարին վերջնական ջախջախման սպառնացող «մուրճավորները» կամ քաշուին հրապարակէ և կամ կուսակցամուլութենէ կուրցած իրենց աչքերը բուժել տան»⁵³:

«Հայրենիքին և ժողովուրդին համար» հոդվածում Թաթուլն էլ ցավով արձանագրում է, որ հասարակության բոլոր խավերը հայ ժողովուրդին սպառնացող վտանգն ամբողջությամբ չեն գիտակցում, և յուրաքանչյուրը սեփական շահի համար զբաղված է ինքնագործունեությամբ: Մյուս կողմից էլ տարբեր քաղաքական ուժեր, դասակարգային հակադրություններ քարոզելով, պառակտում են ազգը: Այնինչ, գրում է հոդվածագիրը, հայ ժողովրդի գոյությանն սպառնացող այդ վտանգավոր պահին «կուսակցական տարբերություններ և դասակարգային շահերու հետապնդում ներելի չէ մեր ազգին համար»⁵⁴: Ոչ էլ կարելի է տեղ տալ արևելահայ կամ արևմտահայ հատվածականությանը, որը կարող է առանց այդ էլ կործանման եզրին հասած ժողովրդի համար աղետաբեր լինել: Հոդվածագիրը ամփոփելով նշում է, որ միայն աներեր հավատը, միասնականությունը և հանուն հայրենիքի ամեն ինչ զոհելու պատրաստակամությունը կարող են բաղձալի հաղթանակներ պարգևել:

Մ. Վանիկն էլ Օդեսայից, վկայակոչելով պատմական մի շարք հերոսական դրվագներ «Ի զէն հայեր» հրապարակման մեջ, բոլոր դասակարգերի ներկայացուցիչներին և նույնիսկ հայ կանանց կոչ է անում խորությամբ գիտակցել պահի ողջ լրջությունը և դիմել գենքի, «քաջաբար մարտնչել մինչև արեան վերջին կաթիլը» և հաղթելով թշնամուն՝ զգալ ազատության «իսկական համն» ու «պայծառ արշալույսը»⁵⁵:

«Ապագայի համար» հրապարակման մեջ, շարունակելով Հայաստանում ստեղծվելիք կառավարման համակարգի հիմնախնդիրը, Թաթուլը գերադասելի է համարում «ամէն անհատի ազատ ու հաւասար

⁵² Նույն տեղում:

⁵³ Նույն տեղում:

⁵⁴ Նույն տեղում, էջ 127:

⁵⁵ Նույն տեղում, էջ 128-130:

ընտրութեամբ ստեղծուած ներկայացուցչական» կառավարման համակարգը⁵⁶, որտեղ միմյանցից անկախ պիտի գործեն գործադիր, դատական և օրենսդիր մարմինները: Բոլոր բնագավառներում իշխող պիտի լինեն ժողովրդականությունն ու ազատ նախաձեռնության հնարավորությունը: Հայաստանում իշխանությունը պիտի պատկանի ամբողջ ժողովրդին:

«Հայկական հարցի վերջին փուլերը» հոդվածում Պարթևը քննարկում է բոլշևիկյան հեղաշրջումից հետո Ռուսաստանի վերաբերմունքը Հայկական հարցի նկատմամբ: Ինչպես հայտնի է, մեծամասնականները, իրենց որդեգրած նշանաբաններին հավատարիմ, այլ հարցերին զուգընթաց, «թղթի վրայ հրովարտակով լուծեցին նաև «Տաճկահայաստանի հարցը»⁵⁷: Դրանով նրանք հայտարարում էին, որ պաշտպանում են «Տաճկահայերու իրաւունքը, ազատ ինքնորոշման, մինչև իսկ կատարեալ անկախութեան համար»⁵⁸, որը պիտի իրականացվեր հայ ժողովրդի ազատ հանրաքվեով: Հոդվածագիրը, ներկայացնելով ստեղծված պայմանները, ցավով արձանագրում է, որ դա սոսկ բոլշևիկյան Ռուսաստանի ցանկությունն էր, որն ապահովված չէր ոչնչով: Իրողություն, որը շուտով ապացուցվեց պատմական իրադարձություններով: Այնպես որ, եզրակացնում է նա, աշխարհի հզորները և «անոնց մէջ յաղթողներն են, որ պիտի ըսեն վերջնական խօսքն այդ հարցում»⁵⁹:

Թերթում տեղ են գտել դոկտոր Ս. Ալթունյանի «Բոսֆ. Տ. Լիւիլէճեանի մահուան տարելիցին առթիւ» սրտաբուխ խոսքը, Արաքսի Մովսեսյանի «Ես սուր պիտի առնեմ», Անահիտ Մ.-ի «Գարնան խոհեր», Գ. Գանարիկի «Զոջում», Վ. Թոթովենցի «Լճի ափին. Մէնտօդա», Հայկի «Քութու», Գ. Մելոյանի «Օջախը (Պատկեր իրական կեանքից)», Ն. Ազգունու «Խաւարման գիշեր», Հ. Վարդանյանի «Զուլդրէն»-ի բացատրութիւնը» արձակ և չափածո գեղարվեստական ստեղծագործությունները:

«Ներքին կեանքում» քննարկվում է տվյալ պահին ստեղծված իրադրությունը, փորձ արվում գտնել բոլորին տանջող հարցի պատասխանը, թե ինչու զինվորը չկռվեց, և ինչու Կարինը հանձնվեց թշնամուն: Հե-

⁵⁶ Նույն տեղում, էջ 130:

⁵⁷ Նույն տեղում, էջ 142:

⁵⁸ Նույն տեղում:

⁵⁹ Նույն տեղում, էջ 144:

դինակը մեծ ցավով արձանագրում է, որ պատճառը հիմնականում անմիաբանությունն է եղել:

«Նամակ խմբագրության» բաժնում տեղ է գտել Անդրանիկի պատասխանը գնդապետ Բեժանբեկովի՝ Սարիղամիշից գրած նամակին, որում ազգային հերոսը վկայում է, որ գնդապետն իզուր է մեծ-մեծ խոսում, քանի որ Իլիճա գյուղի մոտ պաշտպանական գիծն առաջին լքողն ինքն է եղել:

Հավանաբար, «Հայկաշեն» թերթի այլ համարներ ևս լույս են տեսել, որոնք, սակայն, մեզ չհաջողվեց գտնել: Հնարավոր է նաև, որ քաղաքական իրադրության կտրուկ փոփոխությունների հետևանքով, թերթը հանկարծակի դադարել է հրատարակվել: Բոլոր դեպքերում մեզ ծանոթ վերջին համարը բոլորովին էլ վերջինը լինելու հանգամանքը չունի: Ավելին, կան նյութեր, որոնք ավարտվում են «շարունակելի» մակագրությամբ: Ենթադրում ենք՝ Թբիլիսիում պահվող որևէ արխիվում պահպանված կլինեն թերթի այլ համարներ ևս, սակայն «Վրաստանի համալսարանական արխիվում» (որտեղ պահվում են տպագիր մամուլի հավաքածուները) առայժմ խառը իրավիճակ է: Արխիվը տեղափոխելու հետևանքով դեռևս հավաքածուները ֆոնդավորված չեն, և հայտնի էլ չէ, թե դա երբ կավարտվի:

ՎԵՐԱԿԱԶՄՅԱԼ ՀՆՁԱԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ «ՀԱՅԿԱՇԵՆ» ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԸ

ՍԱՐԳՍՅԱՆ Ա.Թ.

Ամփոփում

1887 թ. ստեղծված Հնչակյան կուսակցության պառակտման հետևանքով 1898 թ. հիմնադրվեց Վերակազմյալ հնչակյան կուսակցությունը (ՎՀԿ): Վերակազմյալներն ակտիվ գործունեություն ծավալեցին հատկապես մամուլի ասպարեզում: Նրանք հրատարակեցին մի քանի պարբերական:

ՎՀԿ կենտրոնական վարչության օրգան «Հայկաշեն» ազգային, գրական, քաղաքական ամսաթերթը ցարդ բոլորովին ուսումնասիրված չէ: Այն լույս է տեսել 1917-1918 թթ. Թիֆլիսում: Պարբերականը սկսում է հրատարակվել դժվարագույն պայմաններում, երբ անկախության ձգտող

հայ ժողովուրդը փորձում էր կերտել իր վաղվա օրը: Թերթն ուներ *Հայկական դար, Ազգայնական շարժումը և հայ ազգայնականությունը, Համազգային կյանք, Գրական-գեղարվեստական, Միջազգային կյանք* և այլ բաժիններ:

Վերլուծելով հայության բոլոր հատվածների համար ստեղծված բարդ իրադրությունը՝ թերթի հեղինակներն ընդգծում էին ապագայի նկատմամբ աներեր հավատի, համախմբվելու և սեփական ուժերին ապավինելու անհրաժեշտությունը: Անդրադարձներ կային Առաջին աշխարհամարտին, հայոց ցեղասպանությանը, ռուսական հեղափոխություններին, Հայկական հարցին և այլ կարևոր հիմնախնդիրներին:

Բանալի բառեր՝ պարբերական, կուսակցություն, վերլուծական, հոդված, տեսակետ, հայ ժողովուրդ, Հայկական հարց:

"АЙКАШЕН" – ГАЗЕТА-ОФИЦИОЗ РЕОРГАНИЗОВАННОЙ ПАРТИИ ГНЧАКЯН

САРГСЯН С.Т.

Резюме

В результате раскола в рядах созданной в 1887 г. партии Гнчакян в 1898 г. была основана Реорганизованная партия Гнчакян (РПГ).

Реорганизованная партия Гнчакян развернула активную деятельность в сфере периодики. Членами РПГ было основано несколько периодических изданий и в их числе газета "Айкашен", являвшаяся национальным, литературно-политическим ежемесячником, который стал издаваться в Тифлисе в 1917-1918 гг. В отличие от остальных периодических изданий партии Гнчакян газета "Айкашен" по сей день остается не изученной специалистами. Газета издавалась в сложный исторический период, когда стремившийся к независимости армянский народ пытался консолидироваться, не терять веры в будущее и надеяться лишь на собственные силы в борьбе за утверждение национальных идеалов. Газета обращалась к таким животрепещущим темам, как Армянский вопрос, геноцид армян, Первая мировая война, Февральская революция, Октябрьский переворот и

т.д. Газетные рубрики "Армянский вопрос", "Националистическое движение и армянские националисты", "Общенациональная жизнь", "Литературно-художественная жизнь", "Международная жизнь" и т.д. освещали важнейшие проблемы национальной жизни.

Ключевые слова – периодика, партия, аналитический, статья, точка зрения, армянский народ, Армянский вопрос.

“HAYKASHEN” - THE OFFICIAL NEWSPAPER OF THE REORGANIZED HUNCHAG PARTY

S. SARGSYAN

Abstract

In 1898, the Reorganized Social Democrat Hunchag Party was founded as a result of the split in the ranks of the Hunchag Party established back in 1887. The reorganized Hunchagian party was active in the field of press. Its members founded several periodicals, including the newspaper “Haykashen”, which was a national, literary and political monthly newspaper, published in Tbilisi in 1917-1918. Unlike other periodicals of the Hunchag Party, the newspaper “Haykashen” remains unexplored up to these days. The newspaper was published in a difficult historical period, when the Armenian people were striving for independence trying to consolidate, not to lose faith in the future and to rely only on their own strength in the struggle to establish national ideals. The newspaper addressed such hot and urgent topics as the Armenian Question, the Armenian Genocide, the First World War, the February Revolution, the October Revolution, etc. Newspaper headings “Armenian Question”, “Nationalist movement and Armenian nationalists”, “National life”, “Literary and Artistic life”, “International life”, etc. covered the most important problems of national life.

Key words – periodicals, party, analytical, article, viewpoint, Armenians, the Armenian Question.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՅՔԱՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՆԵՐԻ ԵՎ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՄԻՋԵՎ VIII Դ. ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ Ա.Մ.*

Արաբական խալիֆայությունը 701 թ. նվաճեց Հայաստանը՝ Վիրքի և Աղվանքի հետ միասին ստեղծելով Արմինիա վարչական շրջանը¹: Հայաստանում արաբների վերջնական հաստատումը ծանրացրեց ոչ միայն ժողովրդի, այլև նախարարական դասի վիճակը: Հայ նախարարները, չկարողանալով որևէ կերպ ազդել դեպքերի ընթացքի վրա, փորձում էին ազատվել արաբների տիրապետությունից՝ հեռանալով Բյուզանդիա: Դրան զուգընթաց, նոր թափ էր ստանում նաև հայ նախարարական տների միջև պայքարը երկրում առաջինը լինելու համար: Եթե նախորդ դարերում այդ հակադրությունը բացահայտ բնույթ չէր կրում, ապա VIII դ. սկզբներից երկու հզոր նախարարական տների՝ Մամիկոնյանների և Բագրատունիների միջև քաղաքական իշխանության համար պայքարը հասել էր իր բարձրակետին: Մամիկոնյանները դարեր ի վեր մարտնչում էին Հայաստանի անկախության համար: Արշակունյաց հարստության անկումից հետո օտար բռնակալության դեմ չէր եղել համաժողովրդական որևէ ընդվզում, որին նրանք իրենց մասնակցությունը չբերեին՝ տալով բազմաթիվ զոհեր, ուստի

* Պատմ. գիտ. թեկնածու, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի միջին դարերի բաժնի ավագ գիտաշխատող, argishtiv@list.ru, հոդվածի ընդունման օրը՝ 16.04.2019, գրախոսման օրը՝ 30.04.2019:

¹ Տե՛ս Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 11, **Իբն ալ-Ասիր** (այսուհետև՝ Իբն ալ-Ասիր), թարգմանություն բնագրից. առաջաբան և ծանոթագրություններ՝ Արամ Տեր-Ղևոնդյանի, Ե., 1981, էջ 65: Վերջին ուսումնասիրություններում այսրկովկասյան երկրների նվաճման թվական է նշվում 700-ը [**Եղիազարյան Ա.**, Արաբական խալիֆայության Արմինիա վարչական շրջանը (Պատմաաշխարհագրական ուսումնասիրություն), Ե., 2010, էջ 29]:

չէին կարող հանդուրժել Բագրատունի նախարարների՝ ամեն գնով ժամանակի իշխողին հարմարվելու քաղաքականությանը: Մամիկոնյաններն իրենց նպատակին հասնելու համար հույսը դնում էին սեփական ուժերի և ավանդականորեն՝ Բյուզանդիայի սին օգնության վրա, իսկ Բագրատունիները, բացառությամբ 703 թ. տարերայնորեն սկսված դեպքերի², միշտ լեզու էին գտնում տարածաշրջանում իշխողների հետ և, ինչպես կտեսնենք ստորև, մյուս նախարարությունների հաշվին ընդարձակում էին իրենց տիրույթները: Ա. Հովհաննիսյանը նշում է. «Մրցակից ու հավակնոտ նախարարական հին տոհմերին Բագրատունիները ոչնչացնում էին (արաբների ձեռքով - Վ.Ա.), առաջ քաշելով նրանց տեղը իրենց ընդառաջող նոր ազնվականության»³: Եվ արդեն, VIII դ. սկզբներին մրցակցում էին Հայաստանի խոշորագույն հողատերերի՝ Մամիկոնյանների հետ:

Սակայն հայ ազնվականության մեծամասնությունը գտնվում էր Մամիկոնյանների ազդեցության տակ, իսկ Բագրատունիները նրանց հակադրվելու և Հայաստանում քաղաքական իշխանությունն ամբողջությամբ գրավելու համար օգտագործում էին արաբներին և սրանց զինական ուժերը: Իսկ Հայաստանում ուժեղ հենարան որոնող արաբները նախապատվությունը պետք է տային Բագրատունիներին և ոչ թե Մամիկոնյաններին⁴:

726 թ.⁵ Սմբատ Բագրատունու մահվան վեց տարի անց, Հայոց իշխան նշանակվեց Աշոտ Բագրատունին (732-748)⁵: Մամիկոնյանները,

² 703 թ. հայ զորականները Սմբատ Բագրատունու գլխավորությամբ Վարդանակերտի ճակատամարտում հաղթանակի են հասնում իրենց հետապնդող արաբների նկատմամբ (տե՛ս Պատմություն Ղեոնդեայ Մեծի վարդապետի Հայոց (այսուհետև՝ Ղևոնդ), Ս. Պետերբուրգ, 1887, էջ 24-25): Հաղթանակից հետո Սմբատ իշխանը և նրա կողմնակիցները անցան Բյուզանդիա՝ ժողովրդին թողնելով անպաշտպան: Իսկ արաբները վրեժխնդիր եղան՝ 705 թ. Նախճավանի ու Խրամի եկեղեցիներում այրելով հայ ազնվականությանը (տե՛ս Ղևոնդ, էջ 33, **Յովաննու կաթողիկոսի Դրասխանակերտցույ** Պատմություն Հայոց, Ե., 1996, էջ 100): 703 թ. դեպքերին անդրադարձել են բազմաթիվ հեղինակներ, այդ թվում (տե՛ս **Saint Martin M.** Mémoires historique et géographique sur l'Arménie, t. I, Paris, 1818, p. 340-341: **Առաքելյան Բ.**, Հայերի ապստամբությունը արաբական լծի դեմ 703 թ. [ՍՍՄԴ ԳԱ Տեղեկագիր հաս. գիտ. (այսուհետև՝ Տեղեկագիր), 1941, № 5-6, էջ 55-62, **Տեր-Ղևոնդյան Ա.**, 703 թ. ապստամբությունը Հայաստանում խալիֆայության դեմ, Հոդվածների ժողովածու, Ե., 2003, էջ 518-530]:

³ **Հովհաննիսյան Ա.**, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. Ա., Ե., 1957, էջ 104:

⁴ Տե՛ս **Մելիք-Բախչյան Ա.**, Հայաստանը VII-IX դարերում, Ե., 1968, էջ 305:

⁵ Տե՛ս **Տեր-Ղևոնդյան Ա.**, «Հայոց իշխանը», արաբական տիրապետության ժամանակաշրջանում, Հոդվածների ժողովածու, Ե., 2003, էջ 130: 748 թ. իշխանությունից հե-

որոնք դարերի ընթացքում եղել էին երկրի քաղաքական ասպարեզի առաջամարտիկները և V դ. սկսած՝ Հայաստանի գլխավոր հողատերերից, այլևս չէին կարող հանդուրժել իրենց իրավունքների սահմանափակվելը տերության կառավարման գործում: Աշոտը ոչ միայն կարգվել էր Հայոց իշխան, այլև կատարում էր սպարապետի պարտականությունները, իսկ այդ պաշտոնը ժառանգաբար պետք է Մամիկոնյաններին պատկաներ⁶: Նշենք, որ արաբները 701 թ. Հայաստանում վերջնականապես հաստատվելուց հետո, մինչև IX դ. կեսերը, Հայոց իշխանի, առավել ևս իշխանաց իշխանի պաշտոնը չէին հանձնել Մամիկոնյան տոհմի որևէ ներկայացուցչի: 749-752 թթ. Հայոց իշխան դարձած Մուշեղ Մամիկոնյանն իշխել է նախարարների կամքով և Բյուզանդիայի աջակցությամբ:

Օգտագործելով իր ձեռքում կենտրոնացված իշխանությունը և ժամանակը նպաստավոր համարելով՝ Աշոտ Բագրատունին որոշեց վերջնականապես ազատվել իր տոհմական դարավոր մրցակիցներից: Հայոց իշխանը նախ փորձեց Մամիկոնյանների խնդիրը լուծել արաբների ձեռքով, որոնցից ակտիվ գործունեություն էին ծավալում Սմբատ Մամիկոնյանի որդիները՝ Գրիգորը և Դավիթը⁷: Ղևոնդ պատմիչը, որ կողմնակալ վերաբերմունք ունի դեպքերի նկարագրության գործում և անթաքույց պաշտպանում է Բագրատունիների շահերը, այս առումով նշում է. «Իսկ իմացեալ որդւոցն Սմբատայ զպատիւն Աշոտոյ, զի մեծացաւ անձն նորա յաչս Հեշմայ եւ զօրավարին Մրուանայ՝ եւ յոյժ խեռութեամբ կէին ընդ նմա, մինչև հասանէր գժտութիւն նոցա յականջս որդւոյն Մահմետի: Եւ վաղվաղակի հրամայէ ունել զնոսա, եւ առաքէր առ իշխանն Իսմայելի զԳրիգոր եւ զԴավիթ, որք էին ի տոհմէ Մամիկոնեան. եւ գրէր ամբաստանութիւն զնոցանէն, թէ հակառակք եւ խազմարարք են իշխանութեանս Աշոտոյ»⁸: Ինչպես իրավացիորեն գրում է Լ. Բաբայանը. «Ղևոնդին հարկավոր է եղել նրանց (Մամիկոնյաններին-Վ.Ա.) ներկայացնել ոչ թե համազգային շահերի պաշտպան-

ռանալուց հետո Աշոտ Բագրատունին ապրեց ևս 13 տարի, մահացել է 761 թ. (տե՛ս **Մարկուարտ 3.**, Հայ Բագրատունեաց ճիւղագրութիւնը, Վիեննա, 1913, էջ 28):

⁶ Տե՛ս **Տեր-Ղևոնդյան Ա.**, Հայաստանը VI-VIII դարերում, Ե., 1996, էջ 153:

⁷ Ն. Արոնցը հավատ չի ընծայում Ղևոնդի այն հաղորդմանը, որ Գրիգորը և Դավիթը Սմբատ Մամիկոնյանի որդիներն են՝ կարծելով, որ պատմիչի հիշատակած Սմբատը Բագրատունյաց տոհմից էր [տե՛ս **Արոնց Ն.**, Մամիկոնյան իշխանուհին բյուզանդական գահի վրա (Երկեր, հ. Ա, Ե., 2006, էջ 289)]:

⁸ **Ղևոնդ**, էջ 112-113: Հմմտ. **Չամչանց Մ.**, Հայոց պատմություն (սկզբից մինչև 1784 թվականը), հ. Բ, Ե., 1984, էջ 407-408:

ների, ոչ թե օտարի լծի դեմ ժողովրդի ուժերի համախմբողի ու կազմակերպչի, պայքարի դրոշակակիրների դերում, այլ պաշտոնի, դիրքի ձգտողների»⁹: Հարց է առաջանում, թե երկու եղբայրներն այդ կարճ ժամանակահատվածում, ե՞րբ հասցրեցին դժգոհություն ցույց տալ Հայոց իշխանին և նրա հովանավոր Մրվան ոստիկանին: Պատմիչի հիշատակած «անհնազանդությունը» պատրվակ էր, և Աշոտ Բագրատունին արաբների ձեռքով հաշվեհարդար էր տեսնում իր քաղաքական հակառակորդների նկատմամբ՝ պահը նպաստավոր համարելով: Մամիկոնյան եղբայրների ճակատագիրը կանխորոշված էր, նրանք պետք է հեռանային ասպարեզից, որպեսզի չխանգարեին արաբների դրածոյին. «Եւ հրամայէր տանել զնոսա յԵմանն կոչեցեալ, որ է անապատ, եւ դնել զնոսա ի կալանս բանտի մինչեւ ցվախճան կենաց իւրեանց»¹⁰: Սակայն, ինչպես կտեսնենք, հետագա իրադարձությունները դասավորվեցին այլ կերպ: Ազատվելով իր մրցակիցներից՝ Հայոց իշխանը մեկնեց խալիֆի մոտ՝ իր ծառայությունների վարձը ստանալու: Ինչպես նման բոլոր դեպքերում, Աշոտ Բագրատունին արժանանում է լավ ընդունելության¹¹, հաղորդում է Ղևոնդը: Սակայն կարճ ժամանակ անց իրադրությունը տարածաշրջանում կտրուկ փոխվում է: Արաբական խալիֆայությունն ընկղմվեց գահակալական պայքարի հորձանուտը: Օգտվելով այդ հանգամանքից՝ անապատում ցմահ տաժանակրության դատապարտված Գրիգոր և Դավիթ Մամիկոնյաններին հաջողվում է, մեծ դժվարություններ հաղթահարելով, ազատվել գերությունից¹². «Եւ մինչդեռ ամբոխ աղմկին զօրացեալ յաճախէր ի մէջ որդւոցն Իսմայելի վասն անհաւատ պատերազմին, յայնժամ զերծեալ որդիքն Սմբատայ ի կալանաւոր պատանդէն. քանզի արձակեցան հրամանաւ Վլթի ի բանտէն»¹³: Սակայն նրանց չի հաջողվում անմիջապես Սիրիայից վերադառնալ հայրենիք. նորից ձերբակալվում են¹⁴: Երկար դեգերումներից հետո Մամիկոնյան եղբայրներ-

⁹ **Բաբայան Լ.**, Դրվագներ Հայաստանի վաղ ֆեոդալիզմի դարաշրջանի պատմագրության (V-VIII դարեր), Ե., 1977, էջ 357:

¹⁰ **Ղևոնդ**, էջ 113:

¹¹ Նույն տեղում:

¹² Քննության ենթարկելով Մամիկոնյան իշխանների՝ գերությունից վերադառնալու թվականը, Ս. Մելիք-Բախշյանը նշում է, որ այն պետք է տեղի ունեցած լինի 744 թ. կեսերին, նախքան Մրվանի կողմից խալիֆայության գահը ձեռք գցելը (տե՛ս **Մելիք-Բախշյան Ս.**, նշվ. աշխ., էջ 308-309):

¹³ **Ղևոնդ**, էջ 118:

¹⁴ Տե՛ս **Тер-Гевондян А.** Армения и Арабский халифат, Е., 1977, с. 92:

որ վերջ ի վերջո վերադառնում են հայրենիք՝ Վասպուրական: Օգտվելով Մրվան ոստիկանի բացակայությունից՝ նրանք մասնակցում են խալիֆայության գահի համար մղվող պայքարին: Մամիկոնյանները, պահը հարմար համարելով, սկսում են իրենց շուրջը համախմբել արաբական տիրապետությունից դժգոհ իշխանական դասին: Ղևոնդը նշում է, որ Մամիկոնյան եղբայրները Վասպուրականում խոշտանգումներ գործեցին. «...եւ տագնապ մեծ յարուցանէին ի վերայ երկրին. եւ հարկապահանջ բռնութեամբ վտանգէին զնոսա»¹⁵: Դեպքերը կողմնակալությամբ նկարագրող և Մամիկոնյանների հանդեպ թշնամական դիրք բռնած պատմիչի խոսքերից կարելի է եզրակացնել, որ Գրիգորը և Դավիթը խոշտանգումներ և բռնի հարկահավաքություն էին անում հայ բնակչության շրջանում, և դա էլ առիթ է տվել մի շարք ուսումնասիրողների, որ տարբեր ժամանակահատվածներում նշեն, թե Մամիկոնյանները Վասպուրականում նեղում էին իրենց հայրենակիցներին¹⁶: Սակայն, ուշադիր քննելով Ղևոնդի մեջբերումը, կարելի է վստահաբար ասել, որ Վասպուրականում երկու եղբայրները ոչ թե խոշտանգում էին իրենց հայրենակիցներին, այլ արաբ գաղթականներին և հարկահավաքներին¹⁷: Հակառակ դեպքում Գրիգոր և Դավիթ Մամիկոնյանները չէին կարողանա կարճ ժամանակում միավորել նախարարների մեծ մասին և երեք տարի իրենց տիրապետությունը տարածել Հայաստանի արևմտյան գավառներում: Դրա օգտին է խոսում նաև այն հանգամանքը, որ, բացի Ղևոնդից, ժամանակի և հետագայի որևէ այլ հեղինակ չի խոսում նման միջադեպի մասին:

Կարճ ժամանակում ապստամբների շարքերը համալրվում են նորանոր նախարարներով ու հասարակ բնակչությամբ: Դրա շնորհիվ Մամի-

¹⁵ Ղևոնդ, էջ 119:

¹⁶ Լեո, Երկերի ժողովածու, Ե., 1967, էջ 381: Վերջերս, իր հրապարակախոսական աշխատանքներում Հ. Դավթյանը, առանց սկզբնաղբյուրների մանրամասն քննության, աղավաղում է IV-VIII դդ. Հայոց պատմությունը, մասնավորապես Մամիկոնյաններին վերաբերող դեպքերը: Նա, խտրականություն չդնելով իր արտահայտություններում, 748-750 թթ. համաժողովրդական ապստամբության ղեկավարներին որակում է որպես ստոր ու քինախնդիր ավագակներ (տե՛ս Դավթյան Հ., Մամիկոնյաններ. առասպել և իրականություն, Ե., 2015, էջ 241):

¹⁷ Քննության ենթարկելով արաբական ցեղերի գաղթը Հայաստան՝ Արամ Տեր-Ղևոնդյանը հենվում է Թովմա Արծրունու վկայության վրա, նա նշում է, որ Վանա լճի շրջակայքում գոյություն ուներ արաբ գաղթականություն (տե՛ս Տեր-Ղևոնդյան Ա., Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Ե., 1965, էջ 59):

կոնյան խմբավորումը վերստին գերակշռություն է ձեռք բերում Հայաստանում: Աշոտ Բագրատունին, տեսնելով, որ ինքն արդեն միայն ձևականորեն է զբաղեցնում Հայոց իշխանի պաշտոնը և երկրում փաստացի իշխանությունը հակաարաքական խմբավորման ձեռքին է, իր ընտանիքը պատսպարում է Դարոյնք ամրոցում¹⁸, ինքը մեկնում է Մրվանի մոտ: Դրան նպաստել էր նաև այն հանգամանքը, որ Արմինիայի վարչական շրջանի նոր կառավարիչ Իսահակ իբն Մուալիմը դարեր ի վեր գոյություն ունեցող ավանդության համաձայն, սպարապետության պաշտոնը հանձնել էր Գրիգոր Մամիկոնյանին¹⁹: Ասորիքում Հայոց իշխանը Մրվանի կողմից մասնակցում է գահակալական կոիվներին: Ղևոնդը գրում է, որ Աշոտն իր հրամանատարության տակ ուներ մոտ 15000-ոց հեծելազոր²⁰: Սակայն հարց է առաջանում. եթե Հայոց իշխանն ուներ նման մեծաքանակ զորամիավորում, ապա ինչու՞ ապստամբության հենց առաջին ազդանշանի դեպքում փախուստի դիմեց և չփորձեց կասեցնել շարժումը: Եվ ինչպես Ս. Մելիք-Բախշյան է նշում, Ղևոնդի խոսքերը վստահություն չեն ներշնչում²¹: Այդ քանակի հեծելազորի առկայությունն անհնարին էր, քանի որ, ինչպես վերը նշել ենք, նախարարների զգալի մասը Մամիկոնյանների հետ էր, և վերջիններս էին տեր ու տնօրինություն անում Հայաստանի մեծագույն մասում: Աշոտ Բագրատունին Ասորիքում ոչ միայն օգնեց Մրվանին, այլև կարողացավ ամբաստանել Մամիկոնյան եղբայրներին: «Երբ Աշոտի հովանավոր Մրվանը հաղթեց և ամիրապետ դարձավ, Աշոտի դիրքը նորից ամրացավ»²², - նշում է Ն. Ադոնցը, իսկ ապստամբության կողմնակիցներն առայժմ պետք է սպասեին հարմար առիթի:

Թվում էր, թե նոր ոստիկանի գալով և Գրիգոր Մամիկոնյանի՝ սպարապետ նշանակվելով ապստամբական շարժումը, որը սաղմնային վիճակում էր, շատ չէր ծավալվի: Սակայն դրան նպաստեցին թե՛ Հայոց իշխան

¹⁸ Տե՛ս **Ղևոնդ**, էջ 119:

¹⁹ Այդ մասին տե՛ս **Նալբանդյան Հ.**, Արաբացի ոստիկանները Հայաստանում (7-րդ դարի վերջից մինչև Աշոտ Ա-ի գահակալությունը) (Տեղեկագիր, 1956, № 8, էջ 110-111): Լեոն նշում է, որ արաբ ոստիկանը սպարապետ է նշանակել Դավիթ Մամիկոնյանին (**Լեո**, նշվ. աշխ., էջ 381)՝ առանց հաշվի առնելու պատմիչի հաղորդումը Գրիգորին սպարապետ նշանակելու մասին (**Ղևոնդ**, էջ 120):

²⁰ **Ղևոնդ**, էջ 120:

²¹ **Մելիք-Բախշյան Ս.**, նշվ. աշխ., էջ 307:

²² **Ադոնց Ն.**, Բագրատունյաց փառքը (Երկեր, Պատմագիտական ուսումնասիրություններ, հ. Ա, Ե., 2006, էջ 507):

Աշոտ Բագրատունին՝ իր գործելակերպով, թե՛ նրա հովանավոր արաբները: Բագրատունյաց իշխանը փորձեց Մամիկոնյաններից վրեժխնդիր լինել իրեն փաստացի իշխանությունից հեռացնելու համար: Նա Մրվանի մոտ այնպես ներկայացրեց Հայաստանում տիրող վիճակը և ամբաստանեց Գրիգոր և Դավիթ Մամիկոնյաններին, որ կարճ ժամանակ անց հետևեց խալիֆի հրամանը՝ ձերբակալել Դավիթ Մամիկոնյանին. «Եւ նա (ոստիկանը-Վ.Ա.) իբրեւ ընկալաւ զհրամանն ոչ կարաց յապաղել, այլ նոյնժամայն կոչեաց նենգութեամբ ունել զնա, եւ տայր ի ձեռս անողորմ դահճի, զոր առեալ կապէր դառն կապանօք եւ դնէր ի կալանս բանտի աւուրս ինչ: Եւ գրէ առ Մրուան եթէ զինչ հրամայեսցէ: Եւ տուեալ հրաման՝ ծայրակոտոր առնել ոստիք եւ ձեռօք եւ փայտիւ դատապարտել ի մահ»²³: Ապա պատմիչն ուրախությամբ արձանագրում է Դավիթ Մամիկոնյանի մահը: Հարց է առաջանում, թե ինչու՞ խալիֆի՝ մահապատժի հրամանը կիրառվեց եղբայրներից Դավթի հանդեպ, և Գրիգորը զերծ մնաց արաբների ձեռքով Աշոտ Բագրատունու կազմակերպված հաշվեհարդարից: Սկզբնաղբյուրներում, մասնավորապես Ղևոնդի աշխատանքում այդ մասին չենք գտնում որևէ տեղեկություն: Ն. Ադոնցը քննելով այդ հարցը, նշում է, որ Աշոտի սպանության փորձը կատարել են պատմիչի հիշատակած Բագրատունյաց տոհմից Սմբատի որդիները, որոնք խնդիր են ունեցել իրենց ազգակցի հետ Հայոց իշխանի պաշտոնը զբաղեցնելու հարցում, իսկ աչառու պատմագիրն այն բարդում է Մամիկոնյանների վրա²⁴: Սակայն այս տեսակետը քննություն չի բռնում այն պարզ պատճառով, որ Ղևոնդը մի քանի անգամ հիշատակում է, թե Գրիգորը և Դավիթը Սմբատ Մամիկոնյանի որդիներն էին, իսկ Դավիթը սպանվում է արաբների հրամանով: Կարող ենք միայն եզրակացնել, որ Գրիգորը փրկվեց Իսահակ իբն Մուսլիմի շնորհիվ, քանի որ սպարապետը նրա հետ կարճ ժամանակում հաստատել էր բարիդրացիական հարաբերություններ, և խալիֆին արդյունք ցույց տալու համար ոստիկանը մահապատժի ենթարկեց եղբայրներից Դավթին: Թվում էր, թե վերջինիս մահով Աշոտ Բագրատունին հաղթանակ տարավ իր քաղաքական հակառակորդների նկատմամբ. «դարձեալ հաստատէ զիշխանութիւնն Աշոտոյ Մրուան, եւ առաքէ զնա մեծամեծ պատուօք յերկիրս Հայոց»²⁵: Գրիգոր

²³ Ղևոնդ, էջ 120:

²⁴ Տե՛ս Ադոնց Ն., Բագրատունյաց փառքը, էջ 507-508:

²⁵ Ղևոնդ, էջ 121:

Մամիկոնյանը հասկանում էր, որ եթե առայժմ ինքը զոհ չի գնացել Աշոտ Բագրատունու քաղաքական խարդավանքներին, ապա դա ժամանակավոր բնույթ է կրում: Եվ ուշ թե շուտ Հայոց իշխանը պատրվակ կգտնի արաբների ձեռքով իրեն ևս ասպարեզից հեռացնելու համար: Նա, փորձելով Գրիգորին զրկել լիարժեք իշխանությունից, արդեն հափշտակել էր նաև վերջինիս զբաղեցրած սպարապետության պաշտոնը:

Մրվանի գահ բարձրանալով՝ խալիֆայությունում չեն դադարում խժոժությունները: Օգտվելով այդ հանգամանքից՝ հայ նախարարները փորձում են ապստամբել՝ թոթափելու արաբական լուծը: Ապստամբությունը, ինչպես միշտ, գլխավորում էին Մամիկոնյանները: Ապստամբների համար նպաստավոր էր նաև այն հանգամանքը, որ, բացի խալիֆայության այլևայլ շրջաններից, բուն Աղվանքի տարածքում ևս արաբների դեմ ապստամբություն, բռնկվեց, ինչը կարճ ժամանակում տարածվեց մյուս վայրերում, մասնավորապես Շամախիում²⁶:

Ապստամբության ղեկավար Գրիգոր Մամիկոնյանը, քաջ գիտենալով, որ Աշոտ Բագրատունին մասնակից է իր եղբոր սպանության գործին, ոչինչ չձեռնարկեց նրան պատժելու համար, քանի որ գիտակցում էր, թե առանց Հայոց իշխանի մասնակցության ապստամբությունը չի կարող դառնալ համազգային և ցանկալի պտուղներ տալ: Ընդհանուր գործի շահերից ելնելով՝ Գրիգոր Մամիկոնյանը և նրա համախոհ նախարարները Հայոց իշխանին համոզում են միանալու հակաարաբական շարժմանը: Վերջինս նախ փորձում է նախարարներին համոզել, որ որևէ քայլ չկատարեն ընդդեմ արաբների²⁷, իհարկե, ելնելով անձնական շահերից, քանի որ Աշոտը և իր տոհմը, հատկապես արաբների հովանավորությամբ, VIII դ. սկզբներից բացառիկ դիրք էին ձեռք բերել Հայաստանում մյուս նախարարությունների հանդեպ, և Հայոց իշխանն ամեն ջանք պետք է գործ դներ խալիֆայության դեմ որևէ ընդվզում թույլ չտալու համար՝ ասելով. «Եւ հարկեսցուք նոցա որպէս ցարդ եւս, եւ կացուք զստացուածս մեր, զայգիս, զանտառս եւ զանդաստանս մեր»²⁸: Տեսնելով, որ Աշոտը տատանվում է, նախարարները, վկայակոչելով երկրի աղետալի վիճակը, սպառնացին հետ

²⁶ Տե՛ս Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 16, Արաբական աղբյուրներ, Թ-Ժ դարեր, ներածությունը և բնագրից թարգմանությունները՝ Արամ Տեր-Ղևոնդյանի, Ե., 2005, էջ 279-280:

²⁷ Տե՛ս **Ղևոնդ**, էջ 121:

²⁸ Նույն տեղում, էջ 122:

կանչել իրենց զորամիավորումները²⁹, որոնք գտնվում էին սպարապետության պաշտոնը Գրիգոր Մամիկոնյանից խլած Աշոտ Բագրատունու հրամանատարության ներքո: Տեսնելով նախարարների վճռականությունը և, այլ ելք չունենալով, քանզի մերժելու դեպքում իշխանները նրան կգրկեին իր զբաղեցրած պաշտոններից, որոշում է առերևույթ միանալ նախարարական դասին, քանի որ ինչպես պատմիչի՝ «ամենայն նախարարք Հայոց³⁰» արտահայտությունից կարելի է եզրակացնել, Գրիգոր իշխանի դրոշի տակ էր համախմբվել հայ ազնվականների գերակշիռ մասը:

Որպես պետականորեն մտածող այր՝ Գրիգոր Մամիկոնյանը փորձեց իր դիրքերը ամրապնդել նաև դիվանագիտական ասպարեզում: Ղևոնդի հաղորդած տեղեկություններից գիտենք, որ ապստամբության ղեկավարների և Բյուզանդական կայսրության միջև կնքվել էր «ուխտ խաղաղութեան»³¹: Ինչպես նախորդ դեպքերում, այնպես էլ հիմա, Մամիկոնյանների հինավուրց կալվածք Տայքն իր աշխարհագրական դիրքի շնորհիվ դառնում է ապստամբական ուժերի գլխավոր կենտրոնակայանը: Այն մոտ էր գտնվում Բյուզանդիային, և կողմերը կարողանում էին արագ համաձայնեցնել հետագա գործողությունները: Տայքում նախարարական զորաբանակը համալրվում է նորանոր զինվորական ուժերով: Բագրատունիների շահերի պաշտպան Ղևոնդը, Մամիկոնյանների ձեռնարկները նկարագրելով մոայլ գույներով, նշում է, որ այդտեղ ապստամբների շարքերը լրացնում էին հանցագործներով, «որք ոչ ճանաչեին զերկիւղն Աստուծոյ եւ ոչ գահ իշխանաց»³²: Պատմիչի հիշատակած «հանցագործները», ինչպես եզրակացրել են ուսումնասիրողները, պավլիկյանների զինված խմբերն էին Հայաստանից և այլ շրջաններից³³: Հնարավոր է, որ մասնակցում էին նաև բնակչության ստորին խավի ներկայացուցիչներ, որոնք դժգոհ էին իրենց տերերից և ապստամբների շարքերը մտնելով՝ փորձում էին ինչ-ինչ հարցեր լուծել:

²⁹ Նույն տեղում:

³⁰ Նույն տեղում, էջ 121:

³¹ Նույն տեղում, էջ 123:

³² Նույն տեղում:

³³ Տե՛ս **Бартикан Р.** К вопросу о павликианском движении в первой половине VIII в. (Հայ-բյուզանդական հետազոտություններ, հ. երկրորդ, Ե., 2002, էջ 3): **Մելիք-Բախշյան Ս.**, նշվ. աշխ., էջ 312:

Գրիգոր Մամիկոնյանին հաջողվեց կապ հաստատել բյուզանդական զորամիավորումների հետ՝ փորձելով համաձայնեցնել հետագա գործողությունները: Դրան զուգընթաց, ընդարձակվում էր նաև ապստամբության աշխարհագրությունը: 749-752 թթ. ապստամբություն է բռնկվում Սասունում³⁴, որը գտնվում էր Մամիկոնյանների կալվածք Տարոնի հարևանությամբ, և ապստամբական տրամադրությունները տարածվում նաև այդտեղ³⁵:

Աշոտ Բագրատունին, որը ստիպողաբար էր միացել ապստամբներին, զգալով, որ ապագայում հաշվետու է լինելու իր տերերի՝ արաբների առաջ, դրժեց իր երդումը, հեռացավ հայրենակիցների ճամբարից՝ նպատակ ունենալով «միաբանել ընդ որդիսն Իսմայելի»³⁶: Իմանալով Բագրատունի իշխանի փախուստի մասին՝ Գրիգոր Մամիկոնյանը, որպես ապստամբության ղեկավար, պետք է առաջնորդվեր ռազմական իրադրությանը համապատասխան, այն է՝ պատժեր Հայոց իշխանին: Վերջինիս չհաջողվեց հասնել իր հովանավորների մոտ, բռնվեց «ի գաւառն Բագրեւանդ ի գիւղն Հագր»³⁷: Գրիգոր Մամիկոնյանը ոչ թե կանխամտածված դավադրությամբ³⁸, ինչպես նշում է Ղևոնդը, այլ ելնելով պահի կարևորությունից, քանի որ Աշոտի արարքը կարող էր վարակիչ լինել և հուսախաբ անել մյուս նախարարներին, Հագր գյուղում պատժում է ընդհանուր գործին դավաճանած Հայոց իշխանին՝ կուրացնելով նրան: Միջնադարի չափանիշներով դա, բավական մեղմ պատիժ էր, քանի որ Աշոտն իր արարքի համար աներկբայորեն պետք է մահվան դատապարտվեր:

Ղևոնդի գրչի տակ Աշոտ Բագրատունու դավաճանությունը դարձել է հայրենասիրություն: Այս իրադարձության առնչությամբ Լ. Բաբայանը գրում

³⁴ Մանրամասն տե՛ս **Տեր-Ղևոնդյան Ա.**, Սասունի 749-752 թվականների անհայտ ապստամբությունը (Հոդվածների ժողովածու, Ե., 2003, էջ 230-236):

³⁵ Այդ մասին տե՛ս **Тер-Гевондян А.**, նշվ. աշխ., էջ 97:

³⁶ **Ղևոնդ**, էջ 123:

³⁷ Նույն տեղում: Լեոն ակնհայտորեն շփոթում է՝ Բագրևանդը համարելով Աշոտի հայրենի գավառը (տե՛ս **Լեո**, նշվ. աշխ., էջ 383): Բագրևանդը Մամիկոնյանների կալվածքն էր, որոնք այն ժառանգել էին Սահակ Պարթևից (տե՛ս **Վարդանյան Ա.**, Մամիկոնյան իշխանական ընտանիքը Բագրևանդում և Տարոն-Սասունում IX-XII դդ. (Բանբեր Երևանի համալսարանի, 2017, № 2, էջ 3-16)):

³⁸ Տե՛ս **Ղևոնդ**, էջ 123: Վարդան պատմիչը նշում է, որ Աշոտին կուրացրին Գրիգոր Մամիկոնյանը և Դավիթը (տե՛ս Հաւաքումն Պատմութեան **Վարդանայ վարդապետի** լուսաբանեալ, Վենետիկ, 1862, էջ 75), սակայն, ինչպես գիտենք Դավիթ Մամիկոնյանը սպանվել էր մի քանի տարի առաջ և չէր կարող մասնակցել այդ գործին: Այն կատարել են Դավթի ծառաները (տե՛ս **Ղևոնդ**, էջ 123-124):

է. «Ըստ Ղևոնդի, Գրիգորը Աշոտից իր եղբոր վրեժն է լուծել և ոչ թե դավաճանության համար պատժել, այդ մասին Ղևոնդը լուծում է³⁹»: Ուսումնասիրողների գերակշիռ մասը կամ մակերեսորեն է անդրադարձել Աշոտի դասալքությանը, կամ փորձել է հետևել Ղևոնդին՝ վարկաբեկելով Գրիգոր Մամիկոնյանին⁴⁰: Սակայն Ն. Ադոնցը, քննության առնելով, թե՛ ժամանակաշրջանը և թե՛ Ղևոնդի հաղորդումը, իրեն հատուկ խորաթափանցությամբ նշում է. «Աշոտն իր վարմունքով նվազ ուխտանենգ չէր Գրիգորի նկատմամբ, քան Վասակ Սյունին՝ Վարդանի: Բայց տե՛ս, որ պատմիչը «որդիք յանցանաց» է անվանում Գրիգորի կուսակից ուխտապահներին, և ինքը Գրիգորը «սատակէր ի կենաց անյիշատակ բարձեալ ի միջոյ», մինչդեռ Աշոտը դառնում է «պսակ պերճութեան եւ փառք ազգիս Հայոց»⁴¹:

Հետագայում ծավալված իրադարձությունների մասին պատմիչը կցկտուր տեղեկություններ է հաղորդում: Գիտենք միայն, որ ապստամբները շարժվում են դեպի արաբա-բյուզանդական սահմանագլխին գտնվող Կարին քաղաքը, որն ուներ ռազմավարական կարևոր նշանակություն: Սակայն հարց է ծագում՝ Կարինն այդ ժամանակ բյուզանդացիների՞ թե՞ արաբների իշխանության ներքո էր: Բյուզանդացիների ձեռքին չէր, ըստ արաբ հեղինակի. շուտով սկսվեց Կոստանդին V կայսեր արշավանքը դեպի Մելիտենե, ապա կայսերական զորքերը գրավեցին Կարինը⁴², ըստ ուսումնասիրողների՝ 752 թ.⁴³, իսկ այդ ժամանակ, ինչպես կարելի է դատել սկզբնաղբյուրների հաղորդումներից, կենդանի չէր Գրիգոր Մամիկոնյանը: Քաղաքն արաբների տիրապետության տակ չէր կարող լինել այն պարզ պատճառով, որ Ղևոնդը փաստում է, թե Գրիգորը գնաց Կարին և այնտեղ նշում էր իր հաղթանակը⁴⁴, իսկ Կարինում հաղթանակ նշելու հա-

³⁹ Բաբայան Լ., նշվ. աշխ., էջ 358:

⁴⁰ Լեոն Աշոտի կուրացումը համարում է բարբարոսություն (տե՛ս Լեո, նշվ. աշխ., էջ 383)՝ մոռանալով, որ իր օրերում մահապատժի էին ենթարկում ռազմի դաշտը լքող զինվորականներին:

⁴¹ Ադոնց Ն., Քաղաքական հոսանքները հին Հայաստանում (Երկեր, հ. Ա, Ե., 2006, էջ 235):

⁴² Իբն ալ-Ասիր, էջ 95-96: Արշավանքի մասին տե՛ս նաև Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 13, Բյուզանդական աղբյուրներ, Դ, Թեոփանես Խոստովանող, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ՝ Հրաչ Բարթիկյանի, Ե., 1983, էջ 137, ծան. 718:

⁴³ Լեո, նշվ. աշխ., էջ 384, Тер-Гевондян А., նշվ. աշխ., էջ 100:

⁴⁴ Ղևոնդ, էջ 124:

մար այն պետք է գրավված լիներ ապստամբների կողմից: Մնում է փաստել, որ Կարինը կարճ ժամանակով եղել է ապստամբական ուժերի տրամադրության տակ՝ դառնալով նրանց գլխավոր ռազմականը: Այլ պարագայում Գրիգոր Մամիկոնյանը ոչ միայն չէր կարող լինել այնտեղ, այլև տոնել իր հաղթանակը: Եվ ինչպես Ս. Մելիք-Բախշյանն է նշում, «Ելնելով դեպքերի հետագա ընթացից, պետք է ենթադրել, որ ապստամբական ուժերի՝ Կարինում կենտրոնանալը նախօրոք համաձայնեցված է եղել Բյուզանդիայի հետ, որն իր հարձակումն Արաբական խալիֆայության դեմ սկսեց զարգացնել նաև այդ ուղղությամբ»⁴⁵: Իսկ Ղևոնդը չի փաստում այդ համաձայնքը, քանզի Մամիկոնյանների փոքր ու մեծ ձեռնարկները նրա հավանությանը չէին արժանանում, և նա շտապում է ազդարարել Գրիգոր Մամիկոնյանի մահը՝ ապստամբության ղեկավարին համարելով ուխտադրուժ⁴⁶: Վերջինիս մահով կամաց-կամաց մարում է ապստամբական շարժումը: Որոշ ժամանակ Գրիգոր Մամիկոնյանին փոխարինում է եղբայրը. «Կացուցին իշխան գեղբայր նորին զՄուշեղ սակաւ ինչ ժամանակս»⁴⁷: Սակայն Մուշեղ Մամիկոնյանը նախարարների անմիաբանության պատճառով չկարողացավ հասնել արաբական լծի վերջնական թոթափմանը և նորից Հայաստանը շարունակեց խալիֆայության մաս կազմել: Այս ապստամբությունը տարբերվում էր իր նախորդներից և հաջորդ՝ 774-775 թթ. ապստամբությունից. այն կարող էր լիարժեք հաջողության հասնել, որովհետև Արաբական խալիֆայությունը զբաղված էր ներքին և արտաքին խնդիրներով, իսկ բյուզանդական օգնությունը շոշափելի էր, քանի որ կայսրը, սկսելով իր արշավանքը դեպի Մելիտենե, ապա՝ Կարին⁴⁸, զբաղեցրել էր արաբական ուժերին, իսկ ապստամբները հնարավորություն կունենային լուծելու իրենց խնդիրները: Սակայն Աշոտ Բագրատունու քաղաքական խարդավանքները, վերջ ի վերջո ընդհանուր գործին դավաճանելը և Գրիգոր Մամիկոնյանի անժամանակ մահը հնարավորություն չտվեցին ազատագրական շարժումը հասցնելու լիակատար հաղթանակի և թոթափելու արաբական լուծը:

⁴⁵ Մելիք-Բախշյան Ս., նշվ. աշխ., էջ 313:

⁴⁶ Ղևոնդ, էջ 124: Իսկ ու՛մ էր դավաճանել Մամիկոնյան իշխանը. գուցե Աշոտ Բագրատունու՞ն, մնում է անհասկանալի:

⁴⁷ Տե՛ս նույն տեղում:

⁴⁸ Ղևոնդ, Պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները՝ Արամ Տեր-Ղևոնդյանի, Ե., 1982, էջ 161, ծան. 115:

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՅՔԱՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԱՍԻԿՈՆՅԱՆՆԵՐԻ ԵՎ
ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՄԻՋԵՎ VIII Դ. ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ**

ՎԱՐԴԱՆՅԱՆ Ա.Մ

Ամփոփում

Հայաստանում արաբական տիրապետությունը ծանր կացության մեջ էր դրել ոչ միայն ժողովրդին, այլ նաև նախարարներին: Արաբները փորձում էին պառակտություն սերմանել նախարարական տների միջև՝ հովանավորելով հատկապես Բագրատունիներին, որոնք քաղաքական դաշտում ձգտում էին բացարձակ արտոնությունների: Գրիգոր և Դավիթ Մամիկոնյանները ձերբակալվում և աքսորվում են Եմեն: Բայց նրանց հաջողվում է ազատվել արաբական գերությունից: Վերադառնալով Հայաստան՝ եղբայրները պայքար են սկսում ոչ միայն արաբական լծի, այլ նաև արաբ դրածոների, այդ թվում՝ Հայոց իշխան Աշոտ Բագրատունու դեմ:

748 թ. սկսված ազգային-ազատագրական պայքարն ընդդեմ արաբների լայն թափ է ստանում, սակայն Աշոտ Բագրատունու բացահայտ դավաճանության պատճառով ապստամբների ուժերը հետզհետե թուլանում էին, իսկ Գրիգոր Մամիկոնյանի մահից հետո ապստամբությունը պարտություն է կրում: Արաբների իշխանությունը կրկին ամրապնդվում է Հայաստանում:

Բանալի բառեր՝ Մամիկոնյաններ, Բագրատունիներ, քաղաքական խարդավանքներ, դավաճանություն, պայքար քաղաքական իշխանության համար, արաբական լուծ, ապստամբություն:

БОРЬБА ЗА ПОЛИТИЧЕСКУЮ ВЛАСТЬ В АРМЕНИИ В ПЕРВОЙ ПОЛОВИНЕ VIII ВЕКА МЕЖДУ НАХАРАРСКИМИ ДОМАМИ МАМИКОНЯНОВ И БАГРАТУНИ

ВАРДАНЯН А.М.

Резюме

В результате арабских завоеваний в 701 году в тяжелом положении оказался не только народ, но и нахарары. Помимо завоеваний арабы пытались посеять раздор и вражду между нахарарскими домами, предоставив привилегии нахарарскому дому Багратуни, стремившемуся к абсолютной политической власти.

Были арестованы и отправлены в Йемен Григор и Давид Мамиконяны, которым удалось освободиться из арабского плена и начать борьбу не только против арабского ига, но и ставленника арабов – армянского царя Ашота Багратуни. Начатое ими в 748 году национально-освободительное движение против арабов обрело широкий размах, однако из-за предательства Ашота Багратуни, а в Карине из-за смерти Григора Мамиконяна восстание потерпело поражение, и арабы вновь восстановили свою власть в Армении.

Ключевые слова – Мамиконяны, Багратуни, политические козни, предательство, борьба за политическую власть, арабское иго, восстание.

STRUGGLE BETWEEN MAMIKONYAN AND BAGRATUNI NOBLE FAMILIES FOR POLITICAL POWER IN ARMENIA IN THE FIRST HALF OF THE VIII CENTURY

A. VARDANYAN

Abstract

In 701, after the Arab occupation of Armenia a difficult situation was established not only for the Armenian people, but also for Armenian nobility.

Arabs tried not only to eliminate them, but also opposed each other against the Armenian nobles in particular sponsoring Bagratunis who sought absolute political power in Armenia against the Mamikonyans. On that way Grigor and David Mamikonyans were arrested and sent to Yemen. But they succeeded in getting rid of Arab captivity. Returning to Armenia brothers start a fight not only to knock on the Arabian yoke, but also against the Armenian Prince Ashot Bagratuni. The popular movement which began in 748 initially gained momentum but due to the betrayal of Ashot Bagratuni the rebel forces were slowly wounding and the rebellion of Grigor Mamikonyan in Karin was defeated and Arabs again spread their dominance in Armenia.

Key words – Mamikonian Dynasty, Bagratuni Dynasty, political intrigues, betrayal, struggle for political power, Arabian yoke, uprising.

ՆՈՒՔԱՐՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԹՂԹԱՊԱՆԱԿԸ ՍԵՔԱՍՏԻԱՅԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՈՒ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ Ռ.Ա.*

Հայոց ցեղասպանությունից անմիջապես հետո սկսվել է վկայությունների արձանագրման լայնածավալ աշխատանք, որի առանցքային արդյունքներն ամփոփված են երեք հիմնական հավաքագրումներում¹։ Պոլսի, Կովկասյան և Փարիզի հավաքածուներում¹։

Հայոց ցեղասպանության¹ կոտորածների և տեղահանությունների ամբողջական գործընթացի հիմնական ականատեսներն ընդգրկված են եղել թիրախավորված խմբերում (երբեմն եղել են նաև այլազգիներ), ուստի տեղահանության պատմության ուսումնասիրության համար առանձնակի նշանակություն են ձեռք բերում վերապրողների վկայությունները, որոնք առնչվում են տարբեր վայրերում տեղի ունեցող իրադարձությունների նկարագրությանը։ Օսմանյան սկզբնաղբյուրների հաղորդած տվյալները, սակայն, վերաբերում են գլխավորապես կայսերական կամ գավառային վերնախավերի քառուղիներում տեղի ունեցած իրադարձություններին, որոնցում, ի դեպ, բաց են թողնված տարբեր վայրերում իրականացված կոտորածների ու տեղահանությունների մանրամասներ։ Այսպիսով՝ խիստ կարևորվում են բուն իրադարձությունների մասնակիցների վկայությունները։ Մեծարժեք են ցեղասպանությունից անմիջապես հետո արձանագրված վկայությունները, որոնց մի մասը հավաքել և գրառել է Արամ Անտոնյանը։

* Հայոց ցեղասպանության թանգարան ինստիտուտի ասպիրանտ, ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի, ցեղասպանագիտության բաժնի լաբորանտ, robertsukiasyan@yahoo.com, հոդվածի ընդունման օրը՝ 07.03.2019, տպագրության է երաշխավորել գիտական ղեկավար, պատմ. գիտ. դոկտոր Հ. Դեմոյանը։

¹ Հավաքածուների ստեղծման պատմության և վկայությունների արժևորման մասին մանրամասն տե՛ս Adjemian B. et Kévorkian R. Témoignages de rescapés et connaissance du génocide de 1915-1916 // Études arméniennes contemporaines [En ligne], 5|2015, mis en ligne le 15 juillet 2015, consulté le 22 janvier 2019. URL: <http://journals.openedition.org/eac/755>; DOI : 10.4000/eac.755.

Դրանք ի պահ են տրվել Նուբարյան մատենադարանին, որտեղ պահվում են առ այսօր:

Առաջին աշխարհամարտի սկզբնավորման օրերից Ա. Անտոնյանը նվիրվել է Հայոց ցեղասպանության վերաբերյալ փաստահավաք գործին: Հալեպում նա արձանագրել է սեփական վկայությունները, հավաքել հարյուրավոր վերապրողների հուշեր, ինչպես նաև օսմանյան գաղտնի փաստաթղթեր (դրանց իսկությունը երկար ժամանակ կասկածի տակ էր դրվում), որոնք հետագայում հրատարակվել են²: Նրա հավաքած նյութերը Նուբարյան մատենադարանում դասակարգվում են աշխարհագրական սկզբունքով և պահվում առանձին թղթապանակներում:

Անդրադառնանք միայն Սեբաստիայի վիլայեթում և դրանից դուրս սեբաստացիների հետ տեղի ունեցած ցեղասպանական գործողությունները ներկայացնող՝ «Սեբաստիայի տեղահանություններ և կոտորածներ» 49-րդ թղթածրարին, մասնավորապես դրանում տեղ գտած նյութերի ձեռքբերման պատմությանը և ամփոփ բովանդակությանը: Թղթածրարն ունի 190 թերթ և ներառում է 12 գործ³, որի փաստաթղթերը ստորև կներկայացվեն ըստ արխիվային համարակալման հերթականության:

1. Կարապետ Գաբրիկյան՝ «Վերհուշումները»⁴: Տեքստի սկզբում ներկայացվում են թուրք զինվորների թունավորման հայտնի սադրանքի մանրամասնությունները, և տրվում են կարևոր պարզաբանումներ⁵: 1915 թ. հունվարի 5/6-ին Սեբաստիայի նորակառույց զինվորական շինություններում գտնվող թուրք զինվորների ինքնազգացողությունը վատացել էր, որը դիտարկվել էր իբրև հայերի կազմակերպած թունավորում: Ըստ հեղինակի՝ զինվորների ինքնազգացողության վատթարացման պատճառը եղել է

² **Անտոնեան Ա.**, Այն սեւ օրերուն... (Հայրենիք, Պոսթըն, 1919), **նույնի՝** Մեծ ոճիրը: Հայկական վերջին կոտորածները եւ Թալէադ փաշա: Պաշտօնական հեռագիրներ բնագիրներու ստորագրութեամբ եւ բազմաթիւ պատկերներով, Պոսթըն, 1921: Անտոնյանի Հալեպում կատարած փաստահավաք գործունեության մասին մանրամասն տե՛ս **Մինասյան Մ.**, Արամ Անտոնեան եւ ցեղասպանութեան վաւերագրումի իր աշխատանքը Հալէպի մէջ, «Գանձասար» շաբաթաթերթ, Հալէպ, 24 ապրիլ, 2018, էջ 4-6:

³ Թղթապանակը հասանելի է նաև առցանց՝ Նուբարյան մատենադարանի կայքում՝ http://www.bnulibrary.org/images/archives/fonds_andonian_new_pdf/Andonian49_Sebastia.pdf:

⁴ Fonds Andonian – Matériaux pour l’histoire du génocide, Dossier 49 Massacres et déportations à Sébaste, **Գաբրիկյան Կ.**, Վերյուշումները, էջ 0001-0004:

⁵ **Գաբրիկեան Կ.**, Եղեռնապատում. Փոքուն հայոց եւ նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ, Պոսթըն (Հայրենիք, 1924, էջ 592), **Kévorkian R.** The Armenian genocide. A complete history, London, New York, 2011, p. 431-432.

շինության պատերից արձակված տաքացած կիրը: Նա նշում է, որ Սեբաստիայում պատերի ջերմամեկուսացման համար հայերը կիրառում էին կիրով պատելու մեթոդը: Բնակիչները, սակայն, հատուկ միջոցառումներ էին ձեռնարկում կրի հարակից ազդեցություններից խուսափելու համար, որոնց թուրք զինվորները չէին հետևել: Դրա հետևանքով նրանց ինքնազգացողությունը վատացել էր: Շահարկելով այս և հարակից մի քանի այլ հանգամանքներ՝ հայ զինվորների բացակայությունը տվյալ զորամասից, այլ հացահատիկի օգտագործմամբ պայմանավորված հացի գույնը, շների թունավորումը⁶ նշված իրողությունը ներկայացվում է որպես թուրք զինվորների դեմ հայերի կատարած քայլ, որը մեծ հնչեղություն է ստանում՝ դառնալով նախացեղասպանական փուլի կարևոր հանգրվանային կետ: Փաստաթուղթը շարունակվում է Մեսրոպ Քաջբերունու՝ Չանակ-Կալեյի մասին հուշերով: Այն եզրափակվում է զինվորական աշխատավորական ջոկատների կոտորածների և դրանց պատասխանատուների մասին տեղեկություններով:

2. Անհայտ հեղինակ՝ «Սեբաստիա եւ իր գիւղերը (Սվազի վիլայեթ)»⁷ փաստաթուղթը հաղորդում է նախացեղասպանական փուլի կարևոր մանրամասներ, որոնք ներառում են տեղահանությունը հայտարարելու մասին ժողովրդին բաժանված նամակներին, զինվորական իշխանությունների կողմից գույքի առգրավումներին, զինվորագրությանը, հայ պաշտոնյաների պաշտոնանկություններին, հայերի զինաթափմանը, չեթեների գաղտնի խմբերի կազմակերպմանը, հացի թունավորման վերոնշյալ խնդրին, վրդ. Սահակ Օդաբաշյանի սպանությանը, Էնվերի՝ Սեբաստիա այցին, Բյուրք գյուղի ոչնչացմանն ու ռուս զերիններին առնչվող հարցեր: Հեղինակը առանձին-առանձին հիշատակում է Կովտուն գյուղի իրադարձությունները՝ անդրադառնալով սեբաստացի Մուրադի ձերբակալման փորձերին: Ներկայացվում են հայկական գյուղերի կողմից թուրքական զորքի սպասարկումն ապահովելու մասին տեղեկություններ: Փաստաթուղթում հիշատակվում է նաև Սեբաստիայում գործունեություն ծավալած միսիոներ դոկտոր Քլարքը:

⁶ Fonds Andonian – Matériaux pour l’histoire du génocide, Dossier 49 Massacres et déportations à Sébaste, **Գաբիկյան Կ.**, Վերլուծումները, էջ 0001:

⁷ Fonds Andonian – Matériaux pour l’histoire du génocide, Dossier 49 Massacres et déportations à Sébaste, Սեբաստիա եւ իր գիւղերը (Սվազի վիլայեթ), էջ 0005-0014 շրջ:

3. Կարապետ Գաբրիկյան՝ «Սեբաստիոյ մասին անցեալ թե եւ ժամանակակից համառօտ ծանոթութիւններ»⁸ փաստաթուղթը պարունակում է Սեբաստիայի Ս. Նշան, Ս. Հրեշտակապետ, Անապատ, Խունրկտուր, Ս. Հակոբ, Ս. Թագավոր վանքերի մասին տեղեկություններ: Ներկայացվում են պատմական և աշխարհագրական տեղեկություններ Սեբաստիա տեղանվան ծագման, տեղագրության մասին: Նշված են նաև հակիրճ տեղեկություններ՝ կրոնական, կրթական, աղքատախնամ և որբախնամ հաստատությունների, Ազգային հիվանդանոցի, սեբաստահայերի Սենեքերիմյան երիտասարդական միության, թատերական խմբի, տպարանների և բժիշկների մասին:

4. Անհայտ հեղինակ՝ անվերնագիր նամակ՝ ուղղված Կ. Պոլսում 1891-1892 թթ. Անգլիայի դեսպան Քլեր Ֆորդին⁹: Հեղինակն իր բողոքն է հայտնում հայ բնակչության դեմ իրականացվող հալածանքների, անհիմն բանտարկությունների, կրոնական ազատության սահմանափակման, մամուլի ազատության, զինվորական տուրքի, հոգևորականների հանդեպ ճնշումների, իշխանավորների կամայականությունների, ինչպես նաև Սեբաստիա վիլայեթում տիրող իրավիճակի վերաբերյալ կառավարության հաղորդած կեղծ տվյալների մասին: Նամակի վերջում նա պատրաստակամություն է հայտնում հաստատելու իր հաղորդած տվյալները, եթե ձևավորվի եվրոպական քննիչ հանձնախումբ:

5. Կարապետ Գաբրիկյան՝ «Տեղեկագիր Սեբաստիոյ եւ շրջակայից հայոց տարագրութեան եւ բնաջնջումի»¹⁰: Աշխատանքը հեղինակի «Եղեռնապատումի»¹¹ տարբերակներից մեկն է: Մեզ հայտնի առաջին տարբերակը Գաբրիկյանը գրառել է տարագրության ճանապարհի հանգրվաններից մեկում՝ Րաքքայում, որտեղ հակիրճ ներկայացրել է տարագրության պատմությունը: Այստեղ իր գրառումները նա հանձնել է Սարգիս Մանուկյան անունով մի անձի, որը դրանք Կարինի տարագրության տեղեկագրի

⁸ Fonds Andonian – Matériaux pour l’histoire du génocide, Dossier 49 Massacres et déportations à Sébaste, **Գաբրիկյան Կ.**, Սեբաստիոյ մասին անցեալ եւ ժամանակակից համառօտ ծանոթութիւններ, էջ 0015-0020 շրջ.:

⁹ Fonds Andonian – Matériaux pour l’histoire du génocide, Dossier 49 Massacres et déportations à Sébaste, Անհայտ հեղինակ – անվերնագիր նամակ Քլեր Ֆորդին, էջ 0021:

¹⁰ Fonds Andonian – Matériaux pour l’histoire du génocide, Dossier 49 Massacres et déportations à Sébaste, **Գաբրիկյան Կ.**, Տեղեկագիր Սեբաստիոյ եւ շրջակայից հայոց տարագրութեան եւ բնաջնջումի, էջ 0051-0112-0022-0049:

¹¹ Նույն տեղում, էջ 0051-0112-0022-0049, 0135-0137:

հետ պետք է հանձնել Հալեպի գերմանական հյուպատոսին: Վերջինս, սակայն, սպառնալիքներով պայմանավորված՝ ոչնչացնում է «Եղեռնապատումի» մեզ հայտնի առաջին տարբերակը¹²: Հալեպ հասնելուց հետո Գաբիկյանը վերադարձել է «Եղեռնապատումի» վերաշարադրման գործին¹³: Նա տեղում ծանոթացել է Արամ Անտոնյանի հետ և աշխատակցել նրան վերապրողների հուշերի համակարգման գործում: Այստեղ նա Անտոնյանին է փոխանցել «Եղեռնապատումը», որին վերջինս հավանություն է տվել՝ հայտնելով, որ ձեռագիրն առանձին հրատարակության պետք է արժանանա, և խոստացել է գործընթացի կազմակերպման համար միջոցներ գտնել և «դեռ պիտի գտնե»¹⁴: Գաբիկյանը 1920 թ. ստացել է մի շարք հրավերներ, որոնցից նախապատվությունը տվել է Երուսաղեմի պատրիարքության հրավերին: Այստեղ նա գրառել է տարագրության պատմության հերթական երրորդ տարբերակը և այն ուղարկել ԱՄՆ՝ Չիկագոյում հրատարակվող՝ Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության «Երիտասարդ Հայաստան» թերթում տպագրելու համար¹⁵: Ի դեպ, «Եղեռնապատումի» այս օրինակն ուղարկվել է հատվածաբար: Մեջբերենք նրա նամակներից մի հատված. «Եղեռնապատումի 164-178 էջ կարուած ծրարին օրինակը դրկեցի շատ առաջները, ապահովագրեալ ծրարով, Ձեզ հասա՞ւ արդեօք: Թերթի նամակատուփովը իմացնեիք: Եղեռնապատումի ամենէն պատկերոտ էջն է ատ կտորը, և մասնաւոր. ծանոթութեամբ մը հրատարակելիք թերթին ո՛ր թիւ-էջ մինչև ո՛ր թիւին մեջտեղը ըլլալը ըսելով: Վեր-

¹² **Գաբիկեան Կ.**, Եղեռնապատում Սեբաստիոյ. Փոքուն Հայոց եւ նորին մեծի Մայրաքաղաքին, մաս 113 (Երիտասարդ Հայաստան, 1920, թիւ 23, յունիս 22):

¹³ **Գաբիկեան Կ.**, Եղեռնապատում. Փոքուն հայոց եւ նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ (Հայրենիք, 1924, էջ 543):

¹⁴ Նույն տեղում, էջ 544:

¹⁵ 1919 թ. հոկտեմբեր 18-ից թիւ 48, 51-60, 65-69, 1920 թ. 70-74, 79, 80-82, 85-99, մայիս 1-ից թիւ 1-4, 8-34, 48-81, 84, 1921 թ. 83-84, 85-92, 96, 98, 100, 103, 105, 114, 116, 118, մայիս 9-ից թիւ 4, 8, 10, 11, 13, 15, 17, 21, 23, 25, 26, 31, 35, 36, 48, 1921 թ.-ի մարտի 104-րդ համարը մեզ հասանելի չէ, սակայն ենթադրաբար դրա մեջ նույնպես զետեղված է «Եղեռնապատումից» մի հատված: Այն Արիս Սևակի թարգմանությամբ և Առաքել Պատրիկի համառոտագրությամբ լույս է տեսել անգլերեն (**Kapigian G.** Yeghernabadoum (Story of Genocide), Pan-Sebastia Rehabilitation Union, Inc., N.Y., 1978), իսկ Քնարիկ Տեր-Դավթյանի թարգմանությամբ և ծանոթագրություններով՝ ռուսերեն (**Габикян К.** История уничтожения Малой Армении и ее великой столицы Себастии, Е., 2015): Գրքի հայերեն տարբերակը վերահրատարակվել է Լիբանանում՝ «Եղեռնապատում»: Փոքուն հայոց եւ նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ / Գուժկան Սեբաստիոյ, հրատ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, Անթիլիաս, 2006:

ջին ծրարներով մինչև 325 էջը դրկած եմ: Մնացեալը հոստեղէն վերջ կը հասցուցնեմ»¹⁶: Տպագրվելուց հետո «Եղեռնապատումի» բնագիրը նույնպես կորած է համարվում¹⁷, և վերջին՝ չորրորդ անգամ Գաբիկյանը այն ամբողջացրել է ավելի քան 600 տպագրական էջերի սահմանում՝ «Սեբաստիոյ Վերաշինութեան Միութեան» մեկենասությամբ և ի վերջո գրքի տեսքով այն հրատարակել Բոստոնում¹⁸:

«Եղեռնապատումը» Սեբաստիայի ցեղասպանության պատմությանը նվիրված ամենածավալուն աշխատանքն է: Կ. Գաբիկյանը քաջատեղյակ է գավառի կյանքի մանրամասներին, քաղաքական անցուղարձին: Նյութը շարադրված է բանիմաց ուսումնասիրող և աշալուրջ ականատեսի կողմից, որը հուշագրությունը դարձնում է միաժամանակ վկայություն և հետազոտություն: Այն ներառում է ոչ միայն նախացեղասպանական փուլին, այլև բուն իրադարձություններին առնչվող կարևոր դրվագներ: Հեղինակը հանգամանալից ներկայացնում է գործընթացի ամբողջ ընթացքը՝ տալով աշխարհագրական, թվային տվյալների մանրամասնություններ: Նա չի շրջանցում նաև ոճրագործներին, և ըստ գործողությունների տրամաբանության ու ընթացքի՝ կատարում է կարևոր եզրակացություններ: «Մոռցուած կետեր»¹⁹ վերնագրի տակ նա տեղեկություններ է հաղորդում Սեբաստացի Մուրադի և ոճրագործների կենսագրական տվյալների մասին:

6. Հայկանույշ Զառացյան՝ «Սըվագ»²⁰:

Հեղինակը եղել է Սեբաստիա քաղաքից տեղահանվածների թվում: Նա հաղորդել է մանրամասներ ընդհանուր զորակոչի, հայերի կողմից բանակին սննդի մատակարարման պարտավորության, զենքերի բռնագրավման, տղամարդկանց բանտարկության մասին: Հ. Զառացյանը շարունակել է իր հուշերը՝ ներկայացնելով Սեբաստիա-Կանգալ-Քյոթու խան-Հասան Չելեպի-Գըրգ-Գյոզ, Մալաթիա-Ֆոնջըլար-Գանլը-Դերե-Սուրուժ-Հալեպ-Այնթափ երթուղին:

¹⁶ ՀԱԱ, Փիլիկյան Ներսես, ֆ. 408, ց. 1, գ. 193, էջ 15-15 շրջ:

¹⁷ **Գաբիկեան Կ.**, Բազիրք Սեբաստիայ Գաւառալեզուի, Հրատարակութիւն հաստեքաստիայ վերաշինաց միութեան Ամերիկայի, Երուսաղէմ, 1952, էջ Ե:

¹⁸ **Գաբիկեան Կ.**, Եղեռնապատում. Փոքուն հայոց եւ նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ (Հայրենիք, Պոսթըն, 1924, էջ 6):

¹⁹ Fonds Andonian – Matériaux pour l’histoire du génocide, Dossier 49 Massacres et déportations à Sébaste, **Գաբիկեան Կ.**, Մոռցուած կետեր, էջ 0135-0137:

²⁰ Fonds Andonian – Matériaux pour l’histoire du génocide, Dossier 49 Massacres et déportations à Sébaste, Հայկանույշ Զառացյան, Սըվագ, էջ 0113-0116:

Նրա հուշերն ամփոփում են կարևոր տեղեկություններ տեղահանության իրականացման եղանակների և ընթացքի մասին: Դրանցում կան տեղեկություններ ժանդարմների հարստահարումների, թալանի մեթոդների, միտումնավոր անգործության, փրկագներ չվճարելու պարագայում բռնությունների, այրումների, քրդական հարձակումների, տղամարդկանց, այդ թվում՝ Եփրատի վրա իրականացված սպանությունների, արաբների բռնությունների, սննդի բացակայության, կաշառքով մահվանից ազատագրվելու, հարստությունները թաքցնելու ձևերի, կյանքի համար անհրաժեշտ կենսապայմանների բացակայության մասին:

7. Անհայտ հեղինակ՝ «Սեբաստիա»²¹:

Փաստաթուղթը գրված է Բեռլին-Բադեն քաղաքում մուսլիմների և ելքերի գրանցման համար նախատեսված ձևաթղթերի վրա: Համադրելով այս հանգամանքը Արամ Անտոնյանի՝ Հալեպում գտնվելու և իր ծավալած փաստահավաք գործունեության հետ՝ հնարավոր է եզրակացնել, որ այն կազմվել է Հալեպում: Փաստաթուղթը սկսվում է Սեբաստիա վիլայեթի բնակավայրերի մանրամասն վիճակագրությամբ՝ ներառելով Սեբաստիա, Հաֆիզ, Գոչկիրի, Տիվրիկ, Կանգալ, Կյուրին, Թոնուս, Ջեզիրե, Շապին Գարահիսար, Թոգաթ, Ելդըզլի, Դերենդե, Գոչիսար վիճակագրությունները՝ ըստ բնակչության քանակի և էթնիկ կազմի: Ներկայացվում են գավառակների տեղահանության մասին հակիրճ տեղեկություններ: Փաստաթուղթը պարունակում է երթուղիների և անցումային կայանների մանրամասն քարտեզներ, որոնք խիստ կարևոր նշանակություն ունեն: Առանձին ենթագրերով տեղեկություններ են հաղորդվում Սեբաստիայում գործունեություն ծավալած նշանավոր ամերիկացի միսիոներուհի Մերի Գրեֆեմի և Սեբաստիայի նահանգապետ Մուամմերի վերաբերյալ:

8. Կ. Պոլսի «Ժողովուրդ» թերթի կտրոնները²² Սեբաստիայում տեղի ունեցած ցեղասպան գործողություններին վերաբերող երկու հոդվածներն են: Առաջինը վերնագրված է «Ինչպե՞ս նահատակեցաւ Թոգատի առաջնորդ Շաարշ ծ. վրդ. Սահակեանը (ականատեսի պատմութիւն)»՝ Հ.Ղ. ստորագրությամբ: Ենթադրաբար ստորագրողը Հայկազն Ղազարյանն է, որն

²¹ Fonds Andonian – Matériaux pour l'histoire du génocide, Dossier 49 Massacres et déportations à Sébaste, Անհայտ հեղինակ, Սեբաստիա, էջ 0117-134, 0138-139:

²² Դ.Հ., Ի՞նչպես նահատակեցաւ Թոգատի առաջնորդ Շաարշ ծ. վրդ. Սահակեանը (ականատեսի պատմութիւն) (Ժողովուրդ, 1918, նոյեմբեր 30/13, թիւ 41):

այդ ժամանակահատվածում Կ. Պոլսում գործող սեբաստահայերի Սենեքերիմյան միության «Փաստահավաք մասնախումբի» անդամն էր²³։ Սույն հոդվածում անդրադարձ է կատարվում թե՛ 1915 թ. մայիսի վերջին Մուամմերի Թոկաթ կատարած այցի և թե՛ հունիսի 1-ին Շավարշ վարդապետի վերջին քարոզի մասին, որի ընթացքում նա ժողովրդին կոչ է անում հանձնել զենքերը։ Ըստ այս վկայության՝ ժողովուրդը հետևում է նրա կոչին։ Հունիսի 3-ին վարդապետը հրավիրվում է կառավարչատուն, որտեղ նրան հայտնում են աքսորի որոշման մասին և նույն երեկոյան քաղաքից դուրս գալու ժամանակ սպանում։ Այս հոդվածին թերթում հաջորդել է «Ինչպես տեղահան ըրին Սեբաստիան (Ականատեսի պատմութիւն II)» վերնագիրը կրող նյութը՝ Պ. ստորագրությամբ²⁴։ Հոդվածում ներկայացվում են մանրամասներ հունիսին Սեբաստիայում բանտարկված տղամարդկանց կոտորածների մասին, բերվում են պատասխանատուների ցանկը, նրանց զբաղեցրած պաշտոնները, ոմանց առնչությունները համիդյան կոտորածներին, և նշվում է, որ ջարդարարները գրեթե ամբողջությամբ իթթիհատականներ էին։ Կան նաև տեղեկություններ ջարդերից հետո տղամարդկանց հագուստը գողանալու և Սեբաստիայում դրանք աճուրդով վաճառելու մասին։ Ներկայացվում է հայ աշխատանքային ջոկատների բնաջնջման պատասխանատուների մի ցանկ ևս։

9. Գոհարիկ Գաբիկյան – «Սըվազ», 1918²⁵։

Հեղինակը հայտնում է Կավոա գյուղի թուրքական զորքերի սննդի և բնակարաններով ապահովման պարտավորության, Սեբաստացի Մուրադի գործունեության, տղամարդկանց ձերբակալությունների, նրանց՝ բանտից փրկագնով ազատելու հնարավորության մասին։ Վերապրողը նկարագրում է իր անցած Կամիս-Ղանդալ-Քյոթու խան-Հասան-Չելեպի-Հասան-Պատրիկ-Ալաճա խան-Գըրկ-քյոզ-Մալաթիա-Ֆռնջլար-Ուրֆա-Սուրուճ երթուղին։ Նա հաղորդում է նաև մանրամասներ քարավանի ժողովրդագրության, կայաններում ոստիկանների փոփոխության, ժանդարմների միտումնավոր անգործության, տղամարդկանց՝ կանանց հագուստով ծալովելու

²³ Սեբաստահայերի «Սենեքերիմյան միության» ժողովների արձանագրությունները (ձեռագիր), ՀԱԱ, ֆ. 439, ց. 1, գ. 19։

²⁴ Պ., Ինչպես տեղահան ըրին Սեբաստիան (Ականատեսի պատմութիւն II) (Ժողովուրդ, 1918, նոյեմբեր 30/13, թիւ 41)։

²⁵ Fonds Andonian – Matériaux pour l’histoire du génocide, Dossier 49 Massacres et déportations à Sébaste, Գոհարիկ Գաբիկյան, Սըվազ, 0144-0149 շրջ.։

մեթոդի, քրդական հարձակումների, փոխադրամիջոցների բռնագրավման, տղամարդկանց առանձնացնելու և սպանելու, կենսապայմանների բացակայության, քրդերի կողմից աղջիկների հափշտակությունների, Եփրատ գետն անցնելու մասին:

10. Elise D. Garabédian – «Mémoire d'une jeune fille arménienne de Sivas publiée dans le journal «Arev» d'Alexandrie. Au pays du Zouloum»²⁶.

Ֆրանսերենով գրված այս հուշերը պատկանում են ցեղասպանությունը վերապրած Էլիզա Տեր-Կարապետյանին: Հուշերի հայերեն տարբերակը հոդվածաշարով հրատարակվել է Ալեքսանդրայի «Արեւ» թերթում²⁷: Հեղինակը նկարագրում է տեղահանության պատմությունը՝ մանրամասներ հաղորդելով քրդական հարձակումների, Մալաթիայի մոտակայքից աղջիկներին հափշտակելու, երեխաներին այնտեղ տեղափոխելու, կենսապայմանների բացակայության հետևանքով մահվան դեպքերի, հսկիչ ժանդարմների միտումնավոր անգործության, արաբների վայրագությունների, պարբերական խուզարկությունների և թալանի, չերքեզների հարձակումների, բարյացակամ տրամադրված ժանդարմների, Սուրուճ գյուղաքաղաքի բնակչության լավ վերաբերմունքի մասին: Մանրակրկիտ նկարագրվում են Բաբ-Ռաքքա-Սաբա-Դեր Ջոր երթուղին և տեղահանության ընթացքում տեղի ունեցած իրադարձությունները:

11. Անհայտ հեղինակ՝ «Պատմություն Վարդանուշ Գասմանեանի սիվասի»²⁸:

Վերապրողը Սեբաստիայից դուրս եկած չորրորդ քարավանի տարագրյալներից է, որը տվյալներ է հաղորդում քարավանի տեղաշարժման ժամկետների, տեղահանվող խմբի անդամների քանակի, ուղեկցողների մասին: Հեղինակը ներկայացնում է տեղահանման երթուղին՝ Սեբաստիա-Հասան Պատրիկ-Հասան-Չելեպի-Գանլը-դերե-Գըրկ-Գյոզ, Ռաս-ուլ-այն-Ջերջիփ շրջակայքի գյուղեր: Նա պատմում է ճանապարհին տեղի ունեցած

²⁶ Fonds Andonian – Matériaux pour l'histoire du génocide, Dossier 49 Massacres et déportations à Sébaste, Garabédian D., Elise, Mémoire d'une jeune fille arménienne de Sivas publiée dans le journal «Arev» d'Alexandrie. Au pays du Zouloum, էջ 0150-0170:

²⁷ Կարապետեան Է., Ջուլումի երկրէն: Սեբաստացի աղջկան մը նամակը (Արեւ, 1917, թիւ 94 (404)-թիւ 97 (407):

²⁸ Fonds Andonian – Matériaux pour l'histoire du génocide, Dossier 49 Massacres et déportations à Sébaste, Անհայտ հեղինակ, Պատմություն Վարդանուշ Գասմանեանի սիվասի, էջ 0171-0176: Ներքին համարակալումով՝ 5, 6, 7 էջերը բացակայում են:

թալանի, բռնությունների, քրդերի և չեչենների հարձակումների, երթևեկության միջոցներից զրկվելու, աղջիկների հափշտակումների մասին, հաղորդում է նաև ընթացիկ վիճակագրություններ: Իր հուշերը հեղինակն ավարտում է անապատային կայանների կյանքի մասին տեղեկություններով:

12. Խաչատուր Ֆեներջյան, Անուշավան Սահակյան, Հովհաննես Մինասյան, Հարություն Ճղյան, Կարապետ Արծրունյան, Արամ Օնբաշյան, Նազարեթ Տարաքչյան, Ոսկան Կորկոտյան՝ «Ամբաստանագիր-տեղեկագիր Սեբաստիոյ կուսակալութեան»:

Փաստաթուղթը պատրաստվել և վավերացվել է Հալեպում 1919 թ. փետրվարի 27-ին «Սեբաստիոյ նահանգի գաղթականացալս յանձնախումբի» կողմից²⁹: Հալեպում ստեղծվել էր 32 հայրենակցական միություն, որոնց համագումարն էր Միջգավառային միությունը՝ պրոֆ. Հայկ Արամյանի ատենապետությամբ³⁰: Խնդիր էր դրվել յուրաքանչյուր գյուղի և քաղաքի ներկայացուցիչների ջանքերով պատրաստելու մանրամասն տեղեկագրեր³¹: «Ամբաստանագիր-տեղեկագիրը» թեմային առնչվող ամենավաղ և իր բնույթով իրադարձությունները ամենահամակարգված կերպով ներկայացնող փաստաթուղթն է՝ բաղկացած 26 էջից, և ներառում է մանրամասն պատմական ու վիճակագրական տվյալներ Սեբաստիայի կոտորածների, տեղահանության և նյութական վնասների մասին: Փաստաթղթում նաև ամփոփ ներկայացվում են նախացեղասպանական շրջանի հանգուցային իրադարձությունները (Սահակ վրդ. Օդաբաշյանի սպանությունը, տղամարդկանց, կուսակցականների, առևտրականների ձերբակալություններ): Այն ներառում է նաև 1915 թ. ապրիլ-մայիսին Հաֆիզ գավառակում տեղի ունեցած զանգվածային ձերբակալությունների, հայ աշխատանքային գումարտակների ոչնչացման, բնակչության զինաթափման մասին տեղեկություններ: Շարադրված են նաև բռնագաղթի երթուղիների և կայանների բնորոշիչ կետերի հակիրճ նկարագրությունները, ինչպես նաև շարժական ու անշարժ գույքի բռնագրավումներից պատճառված վնասների վիճա-

²⁹ Լ.Վ., Ամբաստանագիր տեղեկագիրներ (Հայկազեան հայագիտական հանդես, 1995, էջ 557):

³⁰ Արամեան Ա. Հայկ (Ուլնիաժովթ), Մեծ Եղեռնի Պատգամ. Հայոց Տանթեական. Քաւարան եւ իրաշալի յարութիւն, տպ. Տօնիկեան, Պէյրութ, 1970, էջ 177:

³¹ Fonds Andonian – Matériaux pour l’histoire du génocide, Dossier 49 Massacres et déportations à Sébaste, Ամբաստանագիր-տեղեկագիր Սեբաստիոյ կուսակալութեան, էջ 0177-190 շրջ.:

կազրությունը: Փաստաթղթում առկա են Սեբաստիայի, Ամասիայի, Մարգվանի, Գյումիշ Հաջի-Քյոյի, Թոկաթի, Կյուրիհնի, Շապին Գարահիսարի կոտորածների և տեղահանության կազմակերպիչների և իրագործողների ցանկեր, տեղեկություններ տնտեսական կարողության, անշարժ գույքերի, մշակութային դրության, կրած վնասների վիճակագրության մասին, ինչպես նաև ցեղասպանական բնույթի հիմնական գործողությունների հակիրճ նկարագրություններ:

Հայկ Արամյանն իր գրքում մեղադրում է Արամ Անտոնյանին՝ հաղորդելով, որ նրա կողմից շուրջ 30 ամբաստանագրեր «նենգութեամբ խլուեցան, իրացուեցան, եւ անոնցմէ լայնօրէն օգտուելէն վերջ, շատ ու շատ հաւանօրէն թուրք լրտէս-գործակատարներուն ծախուեցան ու ոչնչուեցաւ թուրք կառավարութեան կողմէ»³²: Սակայն իրականում ամբաստանագրերը պահպանվել են, և Սեբաստիայի ամբաստանագիր-տեղեկագիրը համալրում է Արամ Անտոնյանի հավաքածուն:

Այսպիսով՝ ակնհայտ է, որ տարբեր ժամանակաշրջաններին առնչվող և տարատեսակ բնույթի փաստաթղթերի (ձեռագիր, մեքենագիր, նամակ, հուշեր, համակարգված հետազոտություններ) այս հավաքածուն ամփոփում է խնդրո առարկա ժամանակահատվածում Սեբաստիայի կրթական, մշակութային, կրոնական, բարեգործական հաստատությունների գործունեությանն առնչվող արժեքավոր տեղեկություններ: Նյութերում առկա են նախացեղասպանական և բուն ցեղասպանության փուլերին վերաբերող բազմաթիվ վիճակագրություններ, ժողովրդագրական մեծարժեք նյութեր, տնտեսական կարողությունների և կորուստների տվյալներ: Դժվար է գերազնահատել Սեբաստիայի տեղահանությունը նկարագրող վերապրողների հուշերը, որոնք հարուստ են տեղային մակարդակի իրադարձությունների տվյալներով և բանալիներ են տեղահանության ընթացքի ու գործադրման պատմությունն ընկալելու համար:

³² Արամեան Ա. Հայկ, նշվ. աշխ., էջ 178:

ՆՈՒՐԱՐՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԹՂԹԱՊԱՆԱԿԸ ՍԵՐԱՍՏԻԱՅԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՈՒ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ Ռ.Ա.

Ամփոփում

Հայոց ցեղասպանությունից անմիջապես հետո սկսվել է վկայությունների արձանագրման լայնածավալ աշխատանք, որի հիմնական արդյունքներն ամփոփված են Փարիզի Նուբարյան գրադարանի երեք հիմնական՝ Կովկասյան, Կ. Պոլսի և Արամ Անտոնյանի հավաքածուներում: Տարբեր ժամանակաշրջաններին առնչվող և տարատեսակ բնույթի փաստաթղթերի (ձեռագիր, մեքենագիր, նամակ, հուշեր, համակարգված հետազոտություններ) այս հավաքածուն ամփոփում է խնդրո առարկա ժամանակահատվածում Սեբաստիայի կրթական, մշակութային, կրոնական, բարեգործական հաստատությունների գործունեությանն առնչվող արժեքավոր տեղեկություններ: Թղթածրարում պահվող 12 գործերը կարևորվում են Սեբաստիա վիլայեթի ինչպես նախացեղասպանական փուլի ուսումնասիրման, այնպես էլ բուն ցեղասպանական գործողությունների ուսումնասիրման տեսանկյունից:

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանություն, տեղահանություն, Սեբաստիա, գավառ, Նուբարյան գրադարան, Արամ Անտոնյան, ականատեսների վկայություններ:

ДОСЬЕ БИБЛИОТЕКИ НУБАРЯН О РЕЗНЕ И ДЕПОРТАЦИИ В СЕБАСТИИ

СУКИАСЯН Р.А.

Резюме

В библиотеке Нубарян в Париже хранятся документы, касающиеся геноцида армян, в частности резни и депортации армян Себастии. Документы были собраны Арамом Антоняном и другими. В папке под грифом

"Резня и депортация Себасти" хранится 12 работ, которые являются ключевыми источниками для изучения вилайета Себасти как до геноцида, так и после него. Среди них следует выделить "Рассказ о резне" Карапета Габикяна, являющий собой важный документ о трагических событиях, имевших место в Себасти.

Ключевые слова – геноцид армян, переселение, Себастиа, провинция, Библиотека Нубарян, Арам Антонян, свидетельства очевидцев.

THE DOSSIER OF NUBARIAN LIBRARY ON THE MASSACRES AND DEPORTATION OF SEBASTIA

R. SUKIASYAN

Abstract

The article is dedicated to the Armenian Genocide testimonies written by Aram Antonyan and others, kept at the Nubarian Library in Paris. In the first part of the study, a general reference is made to the issue of raising the question of the Armenian Genocide in academia and trying to answer to the point why the Armenian testimonies were ignored in that context. The importance and application of these materials to input in the study of Genocide at this stage are highlighted. The 12 works in this folder, their contents and their significance for studying the pre-genocide phase and the genocidal acts of Sebastia Vilayet are presented. A particular reference is made to Karapet Gabikian's "Eghernabadoum" and its versions, one of which is part of this collection.

Key words – Armenian Genocide, deportation, Sebastia, province, Nubarian Library, Aram Antonyan, eyewitness accounts.

GENOCIDE DE LA POPULATION NOIRE DU DARFOUR: RAISONS ET MOTIFS

A. MARUKYAN, N. SHARAFYAN*

L'étude des génocides relève à la fois de l'observation des faits historiques et de leur étendue, et présente en même temps une importance pratique. Cela est démontré par la répétition des éléments de ce crime à différents stades de l'histoire (y compris notre époque), dans différentes zones géographiques, dans des sociétés à différents niveaux de civilisation et par divers groupes sociaux.

Dans cet article, nous tenterons de présenter les causes et les motifs du génocide commis contre la population noire du Darfour dans le 21^{ème} siècle.

Trouver les raisons d'un génocide est un processus assez compliqué, et les événements historiques qui font l'objet de l'étude dans cet article ne font pas exception. Le génocide en tant que crime résulte généralement de la combinaison de plusieurs facteurs, événements et actions, ce qui complique la découverte du génocide.

Le Darfour fait partie du Soudan occidental, qui est un sultanat indépendant depuis plusieurs centaines d'années et qui a été incorporé par les forces anglo-américaines au Soudan depuis 1916. Jusqu'à 2011 le Darfour a été composé de trois provinces: le Darfour Nord, le Darfour Ouest et le Darfour Sud¹, qui font partie des frontières françaises et bordent la Libye, Tchad, République centrafricaine. En 2011 Khartoum, la capitale du Soudan, a officiellement changé la division administrative du Darfour et le dernier est aujourd'hui divisée en cinq provinces: le Darfour Central, le Darfour Oriental, le Darfour

* Docteur en sciences historiques, Chef du département de la Question Arménienne et de l'Histoire du Génocide Arménien à l'Institut d'Histoire de l'Académie Nationale des Sciences de la République d'Arménie, mararmts@yahoo.com.

Conseiller juridique du Ministre du Développement économique et des Investissements de la RA, l'Université d'État d'Erevan, Centre des Etudes Arméniennes, Faculté des Etudes de Génocide, sharafyan96@gmail.com, La date d'adoption de l'article: 16.04.2019; la date de l'examen: 22.05.2019.

¹ **Totten S.** An Oral and Documentary History of the Darfur Genocide, Praeger Security International, Santa Barbara, 2011, p. 2.

Occidental, le Darfour Nord et le Darfour Sud². Cette décision s'explique par le fait que les autorités centrales tentaient de renforcer leurs leviers de contrôle dans l'ouest du pays. Dans le cadre de cet article, nous serons guidés par la division administrative préliminaire du Darfour.

Au Darfour, il existe des groupes ethniques arabes et non arabes, tous deux essentiellement musulmans. Le groupe Four est le plus grand groupe ethnique arabe, d'où provient l'étymologie du mot «Darfour» (Patrie des Fours). D'un point de vue ethnique, la tribu nomade non arabe Zaghawa réside dans le nord du Darfour, avec un nombre important de tribus arabes, telles que les Beidabes. La plupart du temps, dans le Darfour occidental, il n'y a pas de populations sédentaires arabes, telles que les furers, les masals, les tatars et d'autres groupes ethniques³. Les conditions climatiques et la concurrence pour des ressources limitées ont entraîné des années de tension entre les éleveurs arabes nomades et les agriculteurs non arabes, principalement en raison des droits à la terre et au pâturage. Différents groupes ethniques se sont battus pour avoir accès à l'eau, au pâturage du bétail et aux terres agricoles.

Comme indiqué précédemment, les raisons du génocide peuvent être nombreuses et, dans le cas du Darfour, la réalisation du génocide n'a été possible que grâce à la combinaison de facteurs et d'événements principaux et additionnels suivants:⁴

1. La cause principale d'un tel cas est **l'expulsion de la population noire du Darfour**, à savoir le groupe ethnique autochtone, de son pays d'origine et **le souhait des autorités arabes soudanaises de le prendre définitivement**.

Au cours des 20 dernières années, la population a doublé et la concurrence pour l'aire géographique s'est aggravée. Cependant, la base de cette concurrence réside dans le fait que le droit d'acquérir ces territoires a une autre raison plus profonde, qui est le pétrole. La découverte de ressources énergétiques, en particulier de réserves de pétrole, a joué un rôle décisif dans

² **Gibson G.** Sudan divides Darfur in five smaller states, Reuters, 2011.

³ Ibid, p. 168:

⁴ **Totten S.** An Oral and Documentary History of the Darfur Genocide, Praeger Security International, Santa Barbara, 2011, p. 32:

le génocide au Darfour.⁵ La véritable force motrice de ce conflit est le fait que le pétrole a été découvert au Soudan du Sud par la société Chevron. La bataille traditionnelle pour l'eau et les autres ressources naturelles a eu un résultat complètement différent et a ainsi lancé une guerre civile de 21 ans entre le nord et le sud du Soudan. Lorsque l'organisation Chevron a découvert des réserves de pétrole, le gouvernement arabe dominant à Khartoum a immédiatement modifié ses dispositions légales en surveillant la majorité des réserves de pétrole du nord du Soudan⁶. Ensuite, l'industrie pétrolière s'est installée au Soudan et les profits qu'elle en tire sont devenus la principale source d'enrichissement du gouvernement soudanais. Pour développer cette sphère, le gouvernement aurait dû prendre le contrôle du Sud. Les actions du gouvernement visant à atteindre cet objectif ont été destructrices : plus particulièrement, de nombreux villages ont été détruits, des dizaines de milliers de civils ont été déportés et la lutte entre les forces militaires s'est poursuivie jusqu'en 2005.⁷

Pour Soudan, comme pour l'un des pays les plus pauvres d'Afrique et n'ayant pas des ressources naturelles suffisantes, le pétrole implique une amélioration dans le budget du gouvernement. La quasi-totalité des revenus, ce qui revient à 1 million \$ par jour⁸, est utilisé directement pour la formation des forces de sécurité formation de Khartoum. En fait, les bénéfices du pétrole ont aidé le Soudan à se développer économiquement, mais les habitants de Darfour les personnes, qui ont le plus besoin de profiter des résultats avantageux du pétrole, sont ignorées. Même l'idée que les profits pétroliers ne contribuaient qu'à la poursuite du génocide au Darfour n'empêchait pas les investisseurs étrangers de signer des contrats avec le gouvernement de Khartoum pour acquérir le droit au pétrole au Soudan. Et cette population pauvre a décidé de s'attaquer au problème par le biais de la rébellion, comme en témoignait la guerre civile en cours et les conséquences de la crise du Darfour.⁹

⁵ **Morse D.** "How oil drives the genocide in Darfur", Sudan Tribute, 2005.

⁶ **Barltrop R.** Darfur and the International Community, Library of International Relations, 2011, Copenhagen, p. 27.

⁷ **Duffield J.** Keen, Loane, et al., Sudan: Unintended Consequences, a field evaluation study, Trinity College, Dublin, April 2000, p. 195-96.

⁸ **Reeves E.** Article on "What's Fueling the Genocide in Darfur?", AlterNet, 2004.

⁹ **Engdahl W.** Darfur, Article on "Forget Genocide, There's Oil", Global Policy Forum, 2007.

2. Conditions climatiques, sécheresse extrême et désertification

Dès le début des années 1970, de nombreuses sécheresses (y compris la «grande sécheresse» de 1984-1985) ont entraîné une désertification croissante dans la région du Darfour, ce qui a entraîné une forte baisse du rendement des produits, la perte de bétail et de pâturages.¹⁰ Parallèlement à la famine, les sécheresses ont provoqué des tensions autour des telles questions que l'utilisation des terres et l'accès à l'eau. Ce qui précède a conduit à la poursuite des conflits et de la violence entre groupes agricoles nomades arabes.

3. Le statut privilégié de la population arabe

Selon l'idéologie arabe, les professeurs de religion arabe et ceux qui adhèrent à ce style de vie représentent une classe privilégiée. Et cette idéologie s'applique dans tous les domaines de la vie, qu'il soit culturel, politique, économique, judiciaire ou social. Enfin, selon cette idéologie, tous ceux qui ne sont pas arabes sont considérés comme inférieurs.

Toute mention de la suprématie arabe et du Soudan est incomplète sans à moins de commenter le rôle de Hassan Abd al Tourabi, l'ancien conférencier à l'Université de Khartoum, et le président par intérim du gouvernement soudanais Jafar Nimiri et du gouvernement d'Omar al-Bashir. Tourabi a joué un rôle de premier plan au sein de la Société des Frères musulmans pendant plusieurs décennies et est actif au Soudan depuis 1949. Dès le départ, le but principal des Frères musulmans était «l'institutionnalisation de la loi islamique»¹¹. La base de l'idéologie des «Frères musulmans» était la suivante: «Allah est notre objectif. Le Prophète notre chef. Le Coran notre Constitution. Le Jihad notre voie. La mort sur la voie d'Allah notre plus cher espoir»¹².

Au fil du temps, les «Frères musulmans» ont noué des liens étroits avec Darfouriens, les convainquant d'avoir un impact positif sur l'institutionnalisation de la loi islamique en tant qu'organisation confrontée aux préjugés et à la discrimination. Croyant aux allégations susmentionnées, les jeunes Darfouriens

¹⁰ ICC, Prosecutor v. Ahmad Muhammad Harun ("Ahmad Harun") and Ali Muhammad Ali Abd-Al-Rahman ("Ali Kushayb"), Warrant of Arrest for Ali Kushayb, Case No. ICC-02/05-01/07, 27 April 2007.

¹¹ Totten S., Ibid, p.34:

¹² Muradyan I., «Allah est notre objectif. Le Prophète notre chef. Le Coran notre Constitution. Le Jihad notre voie», irates.am, 2011:

soutiennent Tourabi. Le mouvement politique pacifique des Frères musulmans s'est progressivement transformé en un puissant groupe rebelle. En 1954, l'organisation a été déclarée en Égypte en dehors de la loi pour ses activités contre la République égyptienne et le gouvernement. Depuis 1967, c'est-à-dire après la guerre israélo-arabe, les Frères musulmans ont tenté d'unifier la nation arabe et ont temporairement rejeté l'acte terroriste contre les dirigeants arabes. Dans les années 1970, l'influence sociale et politique des Frères musulmans s'est considérablement accrue en Égypte, ce qui est devenu un problème majeur pour le gouvernement. Il y avait à cette époque des dizaines d'organisations appelées «Frères musulmans» en Égypte¹³,

En 1999 Tourabi est devenu un homme politique influent au Soudan, mais ses projets ne se sont pas réalisés, Al Bashir ayant déclaré l'état d'urgence et renvoyé Tourabi de l'arène.

4. Régime autoritaire

Environ trente ans (de 1989 à nos jours), le Soudan était sous le régime autoritaire d'Omar al-Bashir. Son gouvernement contrôle presque tous les aspects de la vie du Soudan. Lorsque le gouvernement d'Al-Bashir venait d'arriver au pouvoir, ce dernier a commencé à mettre de côté ses comportements, ses vêtements et ses discours permissifs et impolis.¹⁴ En outre, pour toute manifestation de désobéissance, des personnes ont commencé à «disparaître», certaines d'entre elles étant arrêtées et soumises à la torture.

5. L'intolérance du gouvernement soudanais envers la population noire

Le Darfour n'est pas seulement l'un des districts les plus pauvres du Soudan, mais aussi celui de toute l'Afrique. La partie nord du Soudan (où se trouve la capitale du pays) abrite environ 5% de la population du pays, mais presque tout le Soudan est sous son contrôle.

Les Africains vivant au Darfour sont victimes de discrimination et de traitements inhumains et dégradants depuis de nombreuses années. De nombreux exemples et manifestations de telles comportements discriminatoires peuvent

¹³ **Don Cheadle**, *Not on Our Watch: The Mission to End Genocide in Darfur and Beyond* Paperback, May 1, 2007.

¹⁴ ICC, *Prosecutor v. Omar Hassan Ahmad Al Bashir*, Decision on the Prosecution's Application for a Warrant of Arrest against Omar Hassan Ahmad Al Bashir, ICC-02/05-01/09, 4 March 2009.

être cités, mais ces exemples ne seront jamais exhaustifs et ne seront pas suffisants pour exprimer la réalité. Néanmoins, il faut citer certains d'entre eux:

➤ Premièrement, «la mortalité infantile en Occident (122,5 garçons et 104,2 filles pour 1 000 naissances) est très différente des données de mortalité infantile du Nord (100,1 garçons et 88,8 filles pour 1 000 naissances)». ¹⁵

➤ Deuxièmement, selon le «Black Book» (document rédigé, publié et diffusé par le Mouvement pour la justice et l'égalité), seulement deux médecins dans le domaine de la pédiatrie et de la gynécologie du Darfour Occidental, l'un à Geneina et l'autre à Zalengi, desservent 1 650 000 personnes. De plus, l'approvisionnement en eau n'est destiné que pour la capitale en développement de Khartoum, pour le reste des villes, cette question n'est pas planifiée, ce qui entraîne le paludisme, le kala azar et d'autres maladies. ¹⁶

➤ Troisièmement, la partie la plus développée du pays était la partie nord du Soudan, où il y était principalement concentré la construction de routes, de ponts, de systèmes d'alimentation en eau, d'hôpitaux et d'écoles.

Les exemples mentionnés ci-dessus, bien que non exhaustifs, sont la preuve que le Darfour est la région la plus pauvre du Soudan.

Parallèlement au développement de la théorie arabe, certains groupes de nomades ont commencé à se préférer des Noirs africains. Depuis les années 1980, des bergers arabes ont attaqué des agriculteurs noirs africains, après quoi les forces armées soudanaises ont également été impliquées. En outre, parallèlement à l'énorme afflux d'armes au Darfour, de plus en plus de bergers ont commencé à porter des armes, dont l'objectif principal était non seulement de protéger, mais également de participer à des conflits. En raison de la violence et des attaques fréquentes des autorités locales et régionales, ainsi que de la compréhension progressive du fait que la communauté arabe a l'autorisation des autorités locales pour ses actions, des noirs africains ont commencé à créer des groupes d'autodéfense.

La question foncière était depuis longtemps une question centrale et a été activement discutée dans les cercles politiques du Darfour. Selon la tradition, la propriété des terres au Darfour appartient à la communauté. Le rôle

¹⁵ Totten S., Ibid p. 36:

¹⁶ Seekers of Truth and Justice, The Black Book: Imbalance of Power and Wealth in Sudan, translated in 2004.

décisif a été joué par la division traditionnelle des terres par les *dars* («terre, pays»), qui étaient essentiellement importantes pour la population. Cependant, dans les années 1970 avec l'adoption des lois foncières, la propriété privée est devenue possible. Bien que la propriété de la terre fût attribuée à l'État, ceux qui la possédaient depuis au moins un an pouvaient en devenir propriétaires.

Cependant, les récents changements écologiques et démographiques ont eu un impact sur les relations réciproques entre les tribus. Le Darfour fait partie de la région du Grand Sahara, qui compte quelques zones agricoles, notamment la chaîne de montagnes Jebel Marra, mais la majeure partie de cette région est composée de terres désertiques. Au cours des années 1970 et 1980, la sécheresse et la désertification ont eu des effets considérables, que nous avons déjà inclus dans la liste des principales causes du génocide au Darfour. La lutte pour les ressources rares s'est donc intensifiée. En particulier, les tensions entre agriculteurs et bergers se sont aggravées.¹⁷

Les bergers, en cherchant des pâturages et d'eau, ont souvent envahi les champs et les jardins d'agriculteurs, ce qui a entraîné des affrontements entre eux. La division des territoires convenus entre les tribus était fréquemment rompue et, parallèlement à la rareté des terres, la tolérance envers les visiteurs non invités a également diminué¹⁸. La sécheresse et la désertification ont eu un impact non seulement sur le Darfour, mais également sur toute la région de Sahara, ce qui a entraîné l'émigration du Tchad, de la Libye et des nomades d'autres pays. Ainsi, en résumant ce qui précède, nous pouvons affirmer que pendant la sécheresse, des populations aussi denses, associées à de mauvaises conditions de survie, ont provoqué de nombreux affrontements et tensions entre les nouveaux résidents et les habitants, servant ainsi comme les bases du développement futur des événements génocidaires¹⁹:

La position officielle du gouvernement soudanais sur l'extermination massive de la population noire indigène du Darfour par les tribus nomades arabes et les groupes armés parrainés par les autorités est que les événements ne constituaient pas du génocide, mais il y était seulement une guerre dont les

¹⁷Worldwide Movement for Human Rights, the International Court and Darfur, Sudan, 2009.

¹⁸ **Fage J.D. and Tordoff W.**, a History of Africa, 4th edition, Routledge, United Kingdom, 2001, p. 121.

¹⁹ **Mosely A.** Lesch, the Sudan-Contested national Identities, Oxford, 1998, p. 142-145.

coupables étaient les « rebelles » du Darfour et leurs hostilités. Il n'est pas difficile de remarquer que les autorités soudanaises dans ses propagandes utilisaient les méthodologies des régimes criminels qui avaient précédemment mené une telle politique, lorsqu'on tente de présenter les conséquences des crimes de grande envergure comme une cause et que la victime du crime, la population noire du Darfour, est présentée comme coupable de ce qui s'est passé.

ԴԱՐՖՈՒՐԻ ՍԵՎԱՍՈՐԹ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՅԵՂԱՍԴԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐՆ ՈՒ ՇԱՐԺԱՌԻԹՆԵՐԸ

ՄԱՐՈՒՔՅԱՆ Ա.Յ., ՇԱՐԱՖՅԱՆ Ն.Գ.

Ամփոփում

Դարֆուրի ցեղասպանությունը՝ որպես XXI դ. առաջին ցեղասպանություն, սկսվել է 2003 թ. փետրվարին՝ Արդարության և հավասարության շարժմանը և Սուդանի ազատագրման բանակի ընդվզմանը զուգընթաց: Բռնությունների և ոչնչացման մակարդակը ծայրահեղ էր: Հանցագործության կատարմանը նախորդող ժամանակահատվածում 6 միլիոն բնակչություն ունեցող տարածաշրջանում ցեղասպանության պատճառ են դարձել միմյանց հետ փոխկապակցված մի շարք հանգամանքներ, ինչպես՝ տեղացի սևամորթ բնակչության տեղահանումը իրենց պատմական հայրենիքից, բնակլիմայական պայմանները, արաբ բնակչության արտոնյալ կարգավիճակը և Սուդանի ավտորիտար վարչակարգը:

Բանալի բառեր՝ Դարֆուր, Սուդան, ցեղասպանություն, էթնիկ խմբեր, հանցագործություն, մեղադրանք, ապստամբություն:

ПРИЧИНЫ И МОТИВЫ ГЕНОЦИДА АФРИКАНСКОГО НАСЕЛЕНИЯ ДАРФУРА

МАРУКЯН А.Ц., ШАРАФЯН Н.Г.

Резюме

Геноцид в Дарфуре, являющийся первым геноцидом XXI века, начался в феврале 2003 года, одновременно с началом восстания "Движе-

ние за справедливость и равенство" и Суданской освободительной армии. Уровень насилия и разрушений в разгар геноцида в Дарфуре был ошеломляющим. Напряженность в регионе с населением в 6 миллионов человек, приведшая к геноциду в Дарфуре, была вызвана множеством взаимосвязанных факторов, в том числе депортацией местного африканского населения со своей исторической родины, климатическими условиями, привилегированным положением арабского населения и авторитарным режимом Судана.

Ключевые слова – Дарфур, Судан, геноцид, этнические группы, преступление, обвинение, восстание.

THE CAUSES AND MOTIVES OF THE GENOCIDE OF BLACK AFRICANS IN DARFUR

A. MARUKYAN, N. SHARAFYAN

Abstract

The Darfur Genocide, as the first genocide of the 21st century, began in February 2003 along with the starting of rebellions by the Justice and Equality Movement (JEM) and the Sudanese Liberation Army. The level of violence and destruction at the height of the Darfur genocide was staggering. With a pre-conflict population of 6 million people, tensions within the region leading to the Darfur Genocide were produced by multiple interconnected factors, including the deportation of the local black population from their historical homeland, climatic conditions, the privileged status of the Arab population and the authoritarian regime of Sudan.

Keywords – Darfur, Sudan, genocide, ethnic groups, crime, accusation, revolt.

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՇԻՒ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՐԱԴԱՐԱՆ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆԸ (1889-1900 ԹԹ.)

ՊԵՏՈՅԱՆ Ս.Հ.*

Կովկասում բարեգործական ընկերություններ հիմնելու գաղափարը պայմանավորված էր հայերի հասարակական և սոցիալ-տնտեսական պայմաններով ու կարիքներով, իսկ այդպիսի ընկերությունների երևան գալու նպատակն էր իրականացնել ոչ միայն աղքատախնամ, այլև կրթական-մշակութային գործունեություն: Այդ բարեգործական ընկերություններից էր Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը (այսուհետև՝ ԿՀԲԸ), որն իր բուն գործունեությունն սկսել է Թիֆլիսում 1881 թ.: ԿՀԲԸ-ի կանոնադրության 1-ին և 2-րդ հոդվածներում նշված էր Ընկերության գլխավոր նպատակը՝ Կովկասի և Անդրկովկասի հայաշատ վայրերում նպաստել լուսավորության տարածմանն ու նյութական օժանդակմանը, դրա իրագործման համար պահպանել արդեն գոյություն ունեցող հայկական ուսումնարանները և նպաստել նորերի ստեղծմանը, օժանդակել արհեստների տարածմանը, գրքերի և պարբերականների հրատարակությանը, վիճակագրատների, գրադարան-ընթերցարանների, տպարանների հիմնարկմանը և այլն: Դրանց իրագործման համար ԿՀԲԸ-ն պարտավորվում էր պաշտոնական թույլտվություն ստանալ իշխանություններից: Այն իրավունք ուներ նաև մասնաճյուղեր հիմնելու Կովկասի և Անդրկովկասի հայաշատ վայրերում²: Առաջիններից մեկը Շուշիի մասնաճյուղն էր: ԿՀԲԸ-ի Շուշիի տեղական մասնաճյուղի գործունեությունն սկզբնավորվեց 1881 թ. դեկտեմբերի 22-ին, երբ Ղարաբաղի Հայոց հոգևոր դպրոցի տեսուչ Համբարձում Առաքելյանը բարեգործական ընկերությանն անդամակցելու պատրաստ 26 անձանց

* ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հայցորդ, st.petoyan@gmail.com, հոդվածի ընդունման օրը՝ 11.09.2018, տպագրության է երաշխավորել գիտական ղեկավար, պատմական գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Խառատյանը:

² Երեսնամեակ Հայոց Բարեգործական ընկերության Կովկասում 1881-1911, կազմեց՝ Լ.Էօ, Թիֆլիս, 1911, էջ 40-42:

հրավիրեց ընդհանուր ժողովի՝ ձեռնարկելով տեղական վարչության ընտրությունը³։ ԿՀԲԸ-ի Թիֆլիսի խորհուրդը 1882 թ. մարտի 4-ի հրամանագրով Շուշիի մասնաճյուղը հայտարարեց բացված՝ ստանձնելով գործերի ղեկավարումը⁴։

ԿՀԲԸ-ի Շուշիի տեղական վարչությունը հենց սկզբից իր ուշադրությունը կենտրոնացրեց Ընկերության անդամների թվի և նյութական միջոցների ավելացման վրա՝ զանազան անձանց հորդորելով անդամակցել, նվիրատվություն կատարել, ներկայացումներ կազմակերպելով և այլ ճանապարհներով դրամական միջոցներ հավաքել, որի մասին տեղեկանում ենք վարչության 1882 թ. գործունեության հաշվետվությունից։ Մյուս կողմից՝ իր սուղ միջոցները շահեկան օգտագործելու համար վարչությունը որոշում է նախ Շուշիում բացել մի հանրային գրատուն-ընթերցարան, ապա նաև նպաստել գյուղական դպրոցների բացմանը։ Չնայած դրան՝ վարչությունը գիտեր, որ գրատուն բացելու համար մեծ գումարներ էին հարկավոր, որոնցից զուրկ էր։ Վարչությունը կարող էր այդ գործի համար նախկինում փակված «հասարակական գրատան»՝ մոտ 400 ռուբլի արժողությամբ բոլոր գրքերն ու կահկարասին ձեռք բերել անհամեմատ մատչելի գնով (100 ռուբլի), ուստի վերջինս չէր կամենում բաց թողնել այդ պատեհ առիթը⁵։ Դա արդեն իսկ իրագործված ենք տեսնում վարչության 1882 թ. հաշվետվությունում, համաձայն որի՝ վարչությունը ձեռք էր բերել նշված գրատան կահկարասին ու գրքերը (419 միավոր գիրք)⁶։

1882 թ. օգոստոսի 8-ին վարչությունը Շուշիում գրատուն-ընթերցարան բացելու նպատակով առաջին անգամ դիմեց Թիֆլիսի խորհուրդ՝ հայտնելով, որ տեղական կառավարությանը դիմելու հարցում խորհուրդն ավելի մեծ լիազորություններով էր օժտված, քան վարչությունը⁷։ Խորհուրդը սեպտեմբերի 6-ին պատասխանեց, որ, համաձայն ԿՀԲԸ կանոնադրության, վարչությունն իրավասու է դիմելու տեղական կառավարություն՝ գրատուն-

³ Ընդհանուր ժողովի նախագահ ընտրվեց Ղարաբաղի թեմի առաջնորդ Անդրեաս արքեպիսկոպոսը, ատենադպիր՝ Հ. Առաքելյանը։

⁴ **Հարությունյան Վ.**, Էջեր Կովկասի Հայոց բարեգործական ընկերության՝ Շուշիի տեղական վարչության պատմությունից, «ԼՂՀ Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու», 2014, էջ 79։

⁵ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 28, ց. 1, գ. 1004, թ. 33ա և շրջ.։

⁶ Նույն տեղում, թ. 36։

⁷ Նույն տեղում, թ. 18 և շրջ.։

ընթերցարանի բացման թույլտվության խնդրանքով⁸: Այդուհանդերձ, նույն թվականի հոկտեմբերի 8-ին խորհուրդը որոշեց անձամբ դիմել Գանձակի նահանգապետին՝ թույլատրելու ԿՀԲԸ-ի Շուշիի տեղական վարչության կառավարության ներքո բացել գրատուն-ընթերցարան⁹: Այս և հաջորդ երկու դիմումները (1883 թ. փետրվարի 16-ին¹⁰ և 1883 թ. ապրիլի 26-ին¹¹) որևէ պատասխանի չարժանացան: 1880-ական թվականներից ցարական քաղաքականությունն ազգային փոքրամասնությունների նկատմամբ արդեն իսկ կարող է ենթադրել բյուրոկրատիայի քամահրական վերաբերմունքի դրսևորումներ, և այս հենքի վրա հասկանալի է դառնում Գանձակի նահանգապետի անտարբերությունն այս դիմումների նկատմամբ:

1884-1886 թթ. Շուշիի տեղական վարչության համար բավական ծանր տարիներ էին: Խիստ նվազել էր անդամների թիվը. եթե 1882 թ. վարչությունն ուներ 86, իսկ 1883 թ.՝ 82 անդամ, ապա 1884-ին՝ 36, 1885-ին՝ 20, 1886-ին՝ 14 անդամ¹²: Ֆինանսական վիճակն այնքան էր ծանրացել, որ վարչությունն ստիպված վաճառեց նախկինում ձեռք բերած «հասարակական գրատան» գրքային ֆոնդը: Ըստ Լեոյի՝ դա պարտադրված քայլ էր¹³: 1886 թ. վարչության անդամների թիվը (14), ըստ ԿՀԲԸ-ի կանոնադրության, նվազագույն շեմն էր, որը չհաղթահարելու դեպքում տեղական վարչությունը պետք է լուծարվեր¹⁴: Իսկ անդամակցությունն ինքնին ենթադրում էր անդամավճարների գանձում (տարեկան 5 ռուբլի), որն էլ վարչության ֆինանսական գլխավոր աղբյուրներից էր: Վերոհիշյալ վաճառված գրքերի գումարով վարչությունը նպատակ ուներ կայունացնել իր ֆինանսական վիճակը: Հետևաբար անպտուղ էր մնալու գրատուն-ընթերցարանի գաղափարը: Հենց այս՝ վարչության համար ամենածանր տարում՝ 1886 թ. նոյեմբերի 16-ին, գրատուն-ընթերցարան բացելու թույլտվության հարցով խորհուրդը մեկ անգամ ևս դիմեց Գանձակի նահանգապե-

⁸ Նույն տեղում, թ. 19 և շրջ.:

⁹ Նույն տեղում, գ. 269, թ. 1 և շրջ.:

¹⁰ Նույն տեղում, թ. 3 և շրջ.:

¹¹ Նույն տեղում, թ. 7 և շրջ.:

¹² Տարագ, 1891, թիվ 48, էջ 714:

¹³ Նույն տեղում:

¹⁴ Նույն տեղում:

տին¹⁵: Խորհուրդը գիտակցում էր, որ գրատուն-ընթերցարանի բացումը կաշխուժացներ հետաքրքրությունը տեղական վարչության նկատմամբ:

Ի վերջո, Գանձակի նահանգապետարանը 1888 թ. հունիսի 9-ին արձագանքեց Ընկերության դիմումին՝ թույլատրելով գրատուն-ընթերցարան բացել ԿՀԲԸ-ի խորհրդի անձնական պատասխանատվությամբ: Այս գրությունը կրում է խորհրդի փոխնախագահի երկու մակագրությունները (10 սեպտեմբերի, 1888 թ.), համաձայն որոնց՝ վերջինս հանձնարարում է վկայագիրն ուղարկել Շուշիի տեղական վարչություն՝ գրատուն-ընթերցարան բացելու, ինչպես նաև ընթերցարանի կանոնադրությունը կազմելու ու խորհրդի հաստատմանն ուղարկելու համար¹⁶: Սակայն այս անգամ էլ գրատուն-ընթերցարանի բացման թույլտվությունը միանշանակ չընդունվեց Շուշիի տեղական վարչությունում: Լուրջ կասկածներ կային ընթերցարանի նկատմամբ հանրային հետաքրքրության, ուրեմն և բավարար թվով ընթերցողների առկայության վերաբերյալ: Իսկ գրադարանի բացման կողմնակիցները խնդրի լուծումը տեսնում էին հանրության մեջ պահանջ և հետաքրքրություն առաջացնելու ուղղությամբ¹⁷: Որոշվեց, որ Շուշիի մասնաճյուղն անպայման պետք է ունենա իր գրատուն-ընթերցարանը: Վարչությունը 1888 թ. հոկտեմբերի 27-ին խորհրդի քննությանն ու հաստատմանը ներկայացրեց Շուշիում բացվելիք գրատուն-ընթերցարանի կանոնադրությունը¹⁸, որն էլ հաստատվեց 1889 թ. փետրվարի 12-ին¹⁹: Կանոնադրության երկլեզու (հայերեն և ռուսերեն) տեքստի տպագրությունը թույլատրվեց 1889 թ. մարտի 15-ին²⁰:

ԿՀԲԸ-ի Շուշիի տեղական վարչությունը 1889 թ. մարտի 10-ին տարածում է երկլեզու (հայերեն և ռուսերեն) հայտարարություն, ըստ որի՝ մարտի 12-ից Հայոց հրապարակի վրա՝ Խուբլարյան եղբայրների խանութի վերնահարկում, նախատեսվում էր բացել գրատուն-ընթերցարան²¹: Գրատուն-ընթերցարանը գործելու էր ամեն օր՝ առավոտյան ժամը 9-ից մինչև

¹⁵ ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 269, թ. 8 և շրջ.:

¹⁶ Նույն տեղում, թ. 9:

¹⁷ Տարագ, 1891, թիվ 48, էջ 715:

¹⁸ ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 269, թ. 14:

¹⁹ Նույն տեղում, թթ. 17 և շրջ., 18 և շրջ.:

²⁰ Հոդվածի վերջում որպես հավելված զետեղել ենք վերոհիշյալ կանոնադրությունը՝ «Կանոններ Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան Շուշոյ Տեղական Վարչութեան Գրատուն-Ընթերցարանի համար»:

²¹ ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 169, թ. 1:

2-ը և երեկոյան ժամը 5-ից մինչև 9-ը²²: Ընկերության անդամ չհանդիսացող յուրաքանչյուր ընթերցողի համար գործում էր հետևյալ բաժանորդագինը՝ տարեկան 4 ռուբլի, ամսական 50 կոպեկ և օրական 5 կոպեկ²³: Ընկերության անդամներն ազատված էին բաժանորդագնից, քանի որ վարչությանը տարեկան տրամադրում էին 5 ռուբլի անդամավճար²⁴:

Գրադարան-ընթերցարանն²⁵ առաջին տարում (1889 թ.) ունեցել է ընդամենը 587 միավոր գիրք և ստացել 17 պարբերական հրատարակություն: Այն չի ունեցել ձեռագրերի բաժին, իսկ գրքային հավաքածուն միայն հայերենով և ռուսերենով էր²⁶:

Շուշիի տեղական վարչության 1889 թ. գործունեության հաշիվ-տեղեկանքում ելքերի համար ողջ տարվա ծախսը կազմել է 725 ռուբլի, որից 465.75 ռուբլին սահմանված էր բացվելիք ընթերցարանի ծախսերի համար²⁷: Վարչությունն իր միջոցների մեծ մասը նպատակ ուներ հատկացնել գրադարան-ընթերցարանի կարիքների համար: Թեև սկզբից գրադարան-ընթերցարանի գործունեությունը բավական դանդաղ էր ընթանում, բայց աստիճանաբար այն կարողանում է գրավել հասարակության մի մասի համակրանքը՝ ապահովելով ընթերցողների պահանջը²⁸:

Գրադարան-ընթերցարանի առաջին տարիների գործունեության կարևորագույն ձեռքբերումներից էին հրատարակված գրացուցակները, որոնցով վերջինս հաշվետու էր խորհրդին, ընթերցող հասարակությանը, նվիրատուներին, ինչպես նաև բոլոր նրանց, ովքեր հետաքրքրված էին գրա-

²² Ընթերցարանի մինչև երեկոյան 9-ը գործելը հուշում է, որ վարչությունը հաշվի էր առել այն փաստը, որ աշխատավորները ևս երեկոներն ընթերցանությամբ զբաղվելու հնարավորություն ունենային:

²³ Հետաքրքրական մի փաստ ևս: Գանձակի նահանգապետի գրասենյակի թույլտվությամբ 1888 թ. հունիսի 1-ից Շուշիում բացվում է մեկ այլ գրադարան-ընթերցարան, որը գտնվում էր Հայոց Հոգևոր Տեսչության տպարանին կից Հասան-Ջալալյանի տանը: Գրադարանի բաժանորդագինն էր տարեկան 5 ռուբլի, ամսական 50 կոպեկ, իսկ չանդամագրվածներն ամեն մի մուտքի դիմաց պետք է վճարեին 5 կոպեկ (մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 167, թ. 29):

²⁴ Մանրամասն տե՛ս հավելվածում:

²⁵ Պաշտոնական բոլոր գրագրություններում և տեղական վարչության ընթերցարանի կանոնադրության մեջ հիշյալ հաստատությունը կոչվում էր «գրատուն-ընթերցարան»: Սակայն գործունեության առաջին իսկ տարվանից պաշտոնական տեղեկագրերում և զեկուցագրերում հաստատությունը կոչվում է «գրադարան-ընթերցարան»:

²⁶ Ազգագրական հանդէս, երկրորդ տարի, Բ գիրք, 1897, էջ 103:

²⁷ ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 1004, թ. 108:

²⁸ Տարագ, 1891, թիվ 48, էջ 715:

դարանի գրքային ունեցվածքով: Այսպես, 1891 թ. մարտի 7-ի մի գրությունից տեղեկանում ենք, որ սույն գրադարանի ողջ գրքերի ցուցակը պատրաստվում էր տպագրության, որի ավարտից հետո վարչությունն այն ներկայացնելու էր խորհրդին²⁹: Ըստ այդմ՝ 1892 թ. փետրվարի 21-ին վարչությունը խորհրդի ուշադրությանն էր ներկայացնում գրադարանի միակ տպագիր գրացուցակը և առանձին թերթերի վրա տեղ գտած պարբերական հրատարակությունների ձեռագիր ցուցակը: Փետրվարի 21-ի գրությունից պարզ է դառնում, որ գրադարանն ունեցել է 1638.11 ռուբլի արժողությամբ գրքեր և 634.05 ռուբլու հրատարակություններ՝ չհաշված ամենօրյա թերթերը: Ձեռագիր ցուցակում առկա են 32 միավոր ռուսերեն և 108 միավոր հայերեն պարբերական հրատարակություններ, իսկ տպագիր գրացուցակում՝ 1346 միավոր ռուսերեն և հայերեն գրքեր: Գրադարանի համար ձեռք բերվող նոր գրքերի ցուցակը ևս պետք է հրատարակվեր՝ իբրև հավելված: Վարչությունն էլ պարտավորվում էր այդ հավելվածները, որպես տեղեկություն, ամեն անգամ ներկայացնել խորհրդին³⁰:

Հիմք ընդունելով 1892 թ. փետրվարի 21-ի գրության տեղեկությունները, որոնք վերաբերում են Շուշիի գրադարան-ընթերցարանի գրացուցակներին, փորձեցինք պարզել, թե հիշյալ գրադարան-ընթերցարանն իր գոյության ընթացքում որքան տպագիր գրացուցակ է ունեցել: Այսպես, մատենագիտական ցանկերում առկա են ԿՀԲԸ-ի Շուշիի գրադարան-ընթերցարանի՝ մեզ հայտնի երկու տպագիր գրացուցակներ (հրատարակված Շուշիի «Հայոց Հոգևոր Տեսչության» տպարանում): Դրանք են՝ «Գրացուցակ Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերության Շուշի քաղաքում» (1891 թ., 80 էջ) և «N 2 Գրացուցակ Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերության Շուշի քաղաքում» (1894 թ., 70 էջ): Գրացուցակները կազմված են երկու մասից, որոնցից առաջին մասը ռուսերեն գրքեր են, իսկ երկրորդը՝ հայերեն: Գրացուցակներն ունեն կարգային (սիստեմատիկ) կառուցվածք³¹: 1891 թ. գրացուցակի և՛ ռուսերեն, և՛ հայերեն մասերի նկարագրությունները ներկայացված են 12 բաժիններում: Հայերեն մասի կարգային բաժանումներն են. I. Կրօնական, փիլիսոփայական, հոգեբանական, II. Դպրու-

²⁹ ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 269, թ. 26:

³⁰ Նույն տեղում, թթ. 29 և շրջ., 30 և շրջ., 31:

³¹ **Իշխանյան Ռ.**, Հայ մատենագիտության պատմություն, պրակ Բ (1800-1920), Ե., 1968, էջ 329:

թին (բանահիւսական, վիպասանական, բանաստեղծական), III. Մատենագիտութիւնը նախնեաց, IV. Պատմութիւն, կենսագրութիւն, ազգագրութիւն, V. Աշխարհագրութիւն, ճանապարհորդութիւն, տեղագրութիւն, VI. Մանկավարժութիւն, դասագրքեր, VII. Ժողովրդական և մանկական գրքեր, VIII. Լեզուագիտական, հնախօսական, IX. Բնական գիտութիւնք, մասնագիտական, X. Բժշկական, առողջապահական, XI. Օրէնսգիտական, քաղաքական, սօցիոլոգիական, XII. Այլ եւ այլք³²:

1894 թ. տպագրված N 2 գրացուցակի երկու բաժիններն էլ գրեթե ամբողջությամբ նման են նախորդ գրացուցակի կառուցվածքին՝ միայն այն տարբերությամբ, որ ռուսերեն բաժինն այստեղ կազմված է 13 գլխից (ավելացվել է «Периодическія изданія» գլուխը), իսկ հայերեն բաժնի «Օրէնսգիտական, քաղաքական, սօցիոլոգիական» գլուխը փոխարինվել է «Պարբերական հրատարակութիւններ» գլխով: Այս գրացուցակներից տեղեկություն ենք ստանում գրադարան-ընթերցարանի ֆոնդային ունեցվածքի մասին, որը ձևավորվել է տարբեր անհատների նվիրատվություններից³³ և վարչության միջոցներից: Վարչությունն ամեն ինչ անում էր գրադարանը պահպանելու և ֆոնդերը համալրելու ուղղությամբ³⁴: Ընդհանուր առմամբ, վարչությունը գրադարանի տասնամյա գործունեության համար (1889-1899 թթ.) հատկացրել է 11001.61 ռուբլի, իսկ որպես շահույթ ստացել է 1894.18 ռուբլի: Փաստորեն, պակասորդը կազմել է 9107.43 ռուբլի: Իսկ գրադարանի շահույթի մեծ մասն էլ ձևավորվել է բաժանորդագնից: Տաս-

³² 1891 թ. գրացուցակում գրքերի մատենագիտական նկարագրությունները թեև համառոտ են, սակայն հաղորդում են հիմնական տեղեկություններ, օրինակ՝ **Հասան-Ջալալեան Ս. եպիսկ.**, Բարեկարգութիւնք, Շուշի [18] 72: Այս գրքի որևէ օրինակ չի հանդիպում Հայաստանի գրադարաններում, գրքի նկարագրությունը ներառված չէ հայ գրքի մատենագիտական ցանկերում:

³³ Գրադարան-ընթերցարանին նվիրատվություններ են կատարել Հովհաննես Ադամյանը (800 ռուբլի), Աննա Ղուկասյանը (200 ռուբլի), Սարգիս Ադամյանը (100 ռուբլի), Լեոն (20 ռուբլի և 176 միավոր գիրք), Կրասիլնիկյան եղբայրները (300 ռուբլի արժողությամբ գրքեր), Ջաքարյանները (63 ռուբլի արժողությամբ գրքեր), Արամ Տեր-Իսրայելյանը (103 միավոր գիրք՝ 96.95 ռուբլի արժողությամբ), Գաբրիել Դանիելբեկյանցը (139 միավոր գիրք՝ 113.21 ռուբլի արժողությամբ) և ուրիշներ: Գրադարանի բարեկամների թվում էին նաև Շուշիի ընթերցասեր երիտասարդները, որոնք դրամական հասույթներ էին նվիրաբերում:

³⁴ Եթե գործունեության առաջին տարում գրադարան-ընթերցարանն ունեցել է 587 անուն գիրք, ապա փակվելու պահին գրքերի ընդհանուր թիվն անցել է 5000-ից (միջին հաշվով տարեկան համալրումը կազմում է 450-500 միավոր գիրք), որն էլ տվյալ ժամանակաշրջանի համար փոքր քանակ չէր:

նամյա գործունեության ընթացքում տարեկան բաժանորդների ընդհանուր թիվը կազմել է 68 ընթերցող, ամսական՝ 3143, իսկ օրական՝ 3389 ընթերցող: Այդ ժամանակահատվածում «գրավականով» տուն են տարվել 51042 միավոր գիրք և պարբերական³⁵: Առաջին հայացքից անհասկանալի է, թե ինչպես կարող էր տասնամյա գործունեության ընթացքում ամսական և օրական կտրվածքով բաժանորդագրվածների թիվն այդքան մոտ լինել իրար: Սա բացատրվում է այն իրողությամբ, որ ընթերցողների գրեթե կեսը ուսանողներ ու աշակերտներ էին (ընթերցողների մասին վիճակագրությունը տե՛ս ստորև), որոնք էլ, բնականաբար, վճարունակ չէին: Ուստի առավել նպատակահարմար էր օգտվել օրական և ամսական բաժանորդագրություններից, որոնք համեմատաբար մատչելի էին³⁶:

Գրադարանը հասարակության բոլոր խավերին մատչելի դարձնելու համար գործունեության հինգերորդ տարվանից վարչությունը նվազեցրեց սահմանված բաժանորդագինը չունևոր ընթերցողների համար, որով վերջիններս կարող էին օգտվել գրադարանից՝ վճարելով տարեկան 1.50 ռուբլի՝ 4 ռուբլու փոխարեն, կես տարվա համար՝ 1 ռուբլի³⁷, ամսական 20 կոպեկ՝ 50 կոպեկի փոխարեն, օրական 2 կոպեկ՝ 5 կոպեկի փոխարեն: Մեկ այլ կետի համաձայն՝ չունևորները գրքեր և պարբերականներ տուն տանելու ազատվում էին «գրավականից», փոխարենը բավարար էր միայն Ընկերության անդամներից մեկի գրավոր երաշխավորությունը³⁸: Փաստորեն, վարչությունը չունևոր ընթերցողների համար հաստատել էր վճարման նոր կարգ: Սա արվում էր գրադարանին առավել մեծ թվով ընթերցողներ ապահովելու և այն հասարակության տարբեր խավերին հասանելի դարձնելու նպատակով:

³⁵ Այս հանրագումարում ներառված է նաև չունևորներին տրամադրած բաժանորդագինը (մանրամասն տե՛ս աղյուսակում):

³⁶ Համեմատելով սահմանված բաժանորդագինը և ընթերցողների վճարունակության չափը՝ կարող ենք վկայակոչել Ստեփան Լալայանի հիշատակությունը XIX դարավերջին Արցախում աշխատավորության եկամտի մասին: Ըստ այդմ՝ բանվորների օրավարձը միջինում 7-40 կոպեկ էր, որից նվազագույն չափը բաժին էր ընկնում բանվոր երեխաներին (մանրամասն տե՛ս **Լալայան Ե.**, Երկեր (հինգ հատորով), հ. 2, Ե., 1988, էջ 86):

³⁷ Տեղեկություններ չկան այս հավելման կիրառման մասին:

³⁸ Տեղեկագիր Հայոց Բարեգործական Ընկերութեան Կովկասում 1893. տասն եւ երրորդ տարի, Թիֆլիս, 1894, էջ 43-44:

Գրադարան-ընթերցարանի գործունեությունը [1889-1898 թթ.]

Թուական		տրուած են անդորրագրեր			գրքեր են տարուել կարդալու համար	մուտք		ելք		ելքի առաւելութիւնը	
		տարեկան	ամսական	մուտքի (օրական)		րուբ.	կոպ.	րուբ.	կոպ.	րուբ.	կոպ.
I	1889 թ. մարտի 10-ից-	9	161	270	1834	138	91	1364	16	1225	25
II	1890 թ. „ „	1	216	423	2631	139	61	570	5	430	44
III	1891 թ. „ „	4	228	323	3353	152	-	646	90	494	90
IV	1892 թ. „ „	3	230	306	4202	151	55	1300	17	1148	62
V	1893 թ. „ „	5	233	246	3506	161	-	1219	77	1058	77
VI	1894 թ. յունուարի 1-ից-	6	359	327	5371	193	25	986	84	793	59
VII	1895 թ. „ „	9	395	344	6723	215	40	1045	3	829	63
VII I	1896 թ. „ „	10	385	382	7310	203	50	1282	73	1079	23
IX	1897 թ. „ „	11	428	406	7453	253	35	1449	43	1196	8
X	1898 թ. „ „	10	508	362	8659	285	61	1136	53	850	92
10 տարուայ ընթացքում		68	3143	3389	51042	1894	18	11001	61	9107	43

Ծանոթ. 1) VI, VII, VIII, IX և X տոտ. տարեկան և ամսական հաշուի մէջ մտած են նաև չունկոր բաժանորդներին տրուած անդորրագրերը: VI տ. – տրուած են տարեկան՝ 2, ամսական՝ 117. VII տ. – տարեկան՝ 2, ամսական՝ 138. VIII տ. – տարեկան՝ 4, ամսական՝ 177. IX տ. – տարեկան՝ 2, ամսական՝ 141. X տ. – տարեկան՝ 3, ամսական 143:

2) Տուն տարուած գրքերի հաշուի մէջ չեն մտնում այն գրքերը, որոնք կարդացուած են ընթերցարանում: Դա էլ, պիտի ասել քիչ տոկոս է կազմում:

3) Վերջին տարեշրջանի մուտքը, այն է՝ 285 րուբ. 61 կոպէկը կազմուել է հետևեալ աղբիւրներից. ա) բաժանորդավճարներից – 261 րուբ. 71 կոպ., բ) տուգանքներից (գրքերի ուշացման համար) – 13 րուբ. 10 կոպ. և գ) գրացուցակների վաճառումից – 10 րուբ. 80 կոպէկ: Յիշեալ 285 րուբ. 61 կոպ. գումարը յանձնուած է ընկերութեան տեղական Վարչութեանը:

4) Վերոյիշեալ աղիւսակի մէջ չեն մտցրուած ընկերութեան անդամները, որոնք ձրիաբար են օգտուած գրադարան-ընթերցարանից: Դրանցից օգտուողների թիւը տարեկան, միջին թուով, հասնում է 30-60-ի:

5) Ելքի վերաբերեալ աւել ծախսուած գումարները հոգացուել են ընկերութեան տեղական ճիւղի եկամտից³⁹:

³⁹ ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 58, թ. 62:

Տասը տարվա կտրվածքով գրադարանի ընթերցողների ազգային պատկանելության վիճակագրական տվյալներն են՝ 80-85% հայեր, 3-10% ռուսներ, 2-8% թուրքեր, 2-5% վրացիներ և այլազգիներ: Իսկ ըստ դասակարգման՝ ընթերցողների թվում էին 40-50% ուսանողներ (աշակերտներ և աշակերտուհիներ), 20-25% վաճառականներ, 10-15% պաշտոնյաներ, 5% ուսուցիչներ, 3% արհեստավորներ և 2% կանայք⁴⁰: Գրադարանի տասնամյա գործունեության ընթացքում ավելի շատ ընթերցվել են վեպեր (60-70%), ապա՝ պարբերական հրատարակություններ, պատմական, կենսագրական, բժշկական, առողջապահական, բնագիտական, սոցիոլոգիական և այլ բնույթի գրականություն: Գրադարանը բավական հարուստ է եղել նաև գիտական գրականությամբ⁴¹: Ամենաընթերցված հայ հեղինակներն են եղել Ռաֆֆին, Շիրվանզադեն, Պ. Պռոշյանը, Իս. Աբովյանը, Ծերենցը, Լեոն և այլք, եվրոպական գրողներից՝ Ա. Դյուման, Ժյուլ Վեռնը, Ֆ. Շիլլերը, Մոլիերը և այլք (հայերեն թարգմանությամբ), իսկ ռուս հեղինակներից՝ Լ. Տոլստոյը, Ֆ. Դոստոևսկին, Ն. Գոգոլը, Ա. Պուշկինը, Ա. Չեխովը և այլք:

Հայերեն պարբերական հրատարակություններից առավել կարդացվում էին «Մուրճ», «Արաքս», «Տարազ», «Փորձ», «Աղբիւր», «Թատրոն», «Մշակ», «Նոր-Դար», իսկ ռուսերենով՝ «Артистъ», «Вестник Европы», «Книжки Недели», «Русская Мысль», «Сев. Вестник», «Мирь Божий», «Русское Богатство» և այլ ամսագրեր, շաբաթաթերթեր, օրաթերթեր:

Գրադարան-ընթերցարանին վերաբերող տեղեկագրերն ու պաշտոնական զեկուցագրերն ուսումնասիրելիս չենք հանդիպում որևէ գրքի կամ ամսագրի պակասորդի: Սա ուշագրավ հանգամանք է գրադարանային գործի կազմակերպման տեսակետից, որն էլ վկայում է Շուշիի գրադարան-ընթերցարանի գործունեության բարձր մակարդակի մասին: Տարբեր տարիներին գրադարան-ընթերցարանի տնօրեններ են եղել Առաքել Բաբախանյանը, Միրզաջան Լալազարյանը⁴² և Բագրատ Տեր-Սահակյանցը, իսկ գրադարանապետի պաշտոնում աշխատել է Քրիստափոր Թումյանը⁴³:

⁴⁰ Վիճակագրական թվերը ստացվել են Շուշիի գրադարան-ընթերցարանի ամենամյա հաշվետվությունների համեմատության և հանրագումարի շնորհիվ:

⁴¹ Ազգագրական հանդես, երկրորդ տարի, էջ 105:

⁴² Տեղեկագիր Հայոց Բարեգործական Ընկերութեան Կովկասում 1893. տասն երրորդ տարի, էջ 43:

⁴³ ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 46, թ. 88:

1899 թ. ԿՀԲԸ-ի կանոնադրության փոփոխությունից հետո լուծարվեցին Ընկերության բոլոր ճյուղերը, այդ թվում՝ Շուշիի մասնաճյուղը, որի հետևանքով 1900 թ. հունվարի 1-ին վերջնականապես փակվեց նաև գրադարան-ընթերցարանը⁴⁴։ Համաձայն Գանձակի նահանգապետի 1902 թ. հունվարի 24-ի հրամանի, որն ուղղված էր Կովկասի Քաղաքացիական մասի գլխավոր վարչությանը, ԿՀԲԸ-ի Շուշիի նախկին բաժանմունքի լուծարման հետևանքով տեղի գրադարան-ընթերցարանի ֆոնդը (ավելի քան 5000 գիրք՝ 8000 ռուբլի արժողությամբ) և ողջ շարժական գույքը (աթոռ, սեղան, պահարան և այլն) փոխանցվեցին Շուշի քաղաքի տեղական իշխանություններին՝ հանրային վարչության կառավարման ներքո⁴⁵։

Շուշիի տեղական մասնաճյուղը կրկին սկսեց գործել 1908 թ. մարտի 6-ին։ Քանի որ նույն թվականի հունվարի 31-ին հաստատել էր ընկերության նոր մշակված կանոնադրությունը, համաձայն որի՝ ԿՀԲԸ-ն իր ճյուղերով կարող էր նորից գործել Կովկասի հայաբնակ վայրերում⁴⁶։ Շուշիի վերաբացված տեղական վարչության առաջին քայլերից էր նախկին փակված մասնաճյուղի «պարծանք կազմող գրադարանը» քաղաքային վարչությունից վերադարձնելու գործը, որը տեղի ունեցավ նույն թվականի նոյեմբերի 1-ին։ Կարճ ժամանակում կարգի բերվեց գրադարան-ընթերցարանը, որից և ընթերցողները կանոնավոր սկսեցին օգտվել⁴⁷։

⁴⁴ Նույն տեղում, ֆ. 1262, ց. 2, գ. 287, թ. 150։

⁴⁵ Նույն տեղում, գ. 347, թ. 266 և շրջ.։

⁴⁶ Երեսնամեակ Հայոց Բարեգործական ընկերութեան Կովկասում 1881-1911, էջ 334։

⁴⁷ Տեղեկագիր Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան 1908 թ. գործունեության, Թիֆլիս, 1909, էջ 63-64։

ՀԱՎԵԼՎԱԾ

Կանոններ Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերության Շուշույ Տեղական Վարչության Գրատուն-Ընթերցարանի համար⁴⁸

1. Կովկասի Հայոց Բարեգործական ընկերության Շուշույ Տեղական Վարչության Գրատուն-Ընթերցարանը բացում է Շուշի քաղաքում Ընկերության կանոնադրության 2-րդ յօդուածի Ե) կէտի հիման վերայ:

2. Գրատուն-Ընթերցարանի նպատակն է նպաստել ընթերցանության տարածմանը հասարակության բոլոր դասակարգերի մէջ:

3. Գրատուն-Ընթերցարանը ունի պարբերական հրատարակութիւններ և մատենագրութեան ու գիտութեանց վերաբերեալ գրքեր:

4. Գրքերի և պարբերական հրատարակութիւնների ընտրութիւնը և Գրատուն-Ընթերցարանը լաւ վիճակի մէջ պահելու հոգսը վերապահում է Բարեգործական Ընկերության Շուշույ Տեղական Վարչութեանը: Վարչութիւնը ընտրում է իւր միջից Գրատուն-Ընթերցարանի համար մի վերահսկող տնօրէն:

5. Գրքերի և պարբերական հրատարակութիւնների պահպանութեան, բաժանորդներին տալու և յետ ստանալու պարտականութիւնը յանձնում է գրադարանապետին, որ Վարչութեան ընտրած տնօրէնի անմիջական հսկողութեան տակ է գտնուում:

6. Գրատուն-Ընթերցարանի համար հարկաւոր մեծ ծախքերը կատարում են Վարչութեան ժողովի որոշմամբ, իսկ առօրեայ մանր ծախքերը կարող է անել տնօրէնը և կամ գրադարանապետը՝ առանց թոյլտուութիւն խնդրելու իւրաքանչիւր ծախքի համար. բացի՝ ծախքերի հաշիւը պիտի ներկայացուի Վարչութեանը ի հաստատութիւն ամիսը մի անգամ:

7. Գրատուն-Ընթերցարանի բաժանորդագիւնը որոշում է՝ տարեկան չորս ռուբլի, ամսական 50 կոպ., օրական 5 կոպ.: Բարեգործական Ընկերության անդամները, ուր էլ անդամագրուած լինեն, ազատ են վերոյիշեալ վճարներից: Բաժանորդ գրողները ստանում են տպած անդորրագիր տնօրէնի ստորագրութեամբ և Վարչութեան կնիքով վաւերացրած:

Ծանօթ. Վարչութիւնը ներկայ յօդուածում նշանակուած գները կարող է նուազեցնել ըստ իր նկատողութեան:

8. Լրագրերը մնում են Ընթերցարանի սենեակում մի շաբաթ, իսկ ամսագրերը մինչև հետևեալ համարի ստացուիլը: Գրատուն-Ընթերցարանից

⁴⁸ ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 173, թթ. 1, 2, 3 և շրջեր.:

դուրս տարուող պարբերական հրատարակությունները և գրքերը յիշատակում են ժապախենալ մատենանում և ստացողը ստորագրում է:

Ծանոթ. Վարչությունն է որոշում իւրաքանչիւր տարուայ սկզբում, թէ յարկապէս ինչ գրքեր չը պիտի դուրս տարուին ընթերցարանից, օրինակ՝ բանարաններ, քարտէզներ, հազուագիւր գրքեր և այլն:

9. Գրքերը և պարբերական հրատարակությունները առանց գրաւականի դուրս չեն տրուում: Գրաւականի չափը և թէ միանուագ քանի հատ գիրք և պարբերական հրատարակություն կարելի է տալ ամեն մի անդամի և յատկապէս որքան ժամանակով, որոշում է Վարչությունը իւրաքանչիւր տարի ըստ իւր տեսութեան:

10. Տուն տարուած գրքերը և պարբերական հրատարակությունները ժամանակին յետ չը դարձնողը ուշացման իւրաքանչիւր օրուայ համար վճարում է յօգուտ ընթերցարանի տուգանքը, որի չափը իւրաքանչիւր տարուայ սկզբում որոշում է Վարչությունը: Իսկ եթէ վերցուած գիրքը կամ հրատարակությունը փչացուի և կամ իսպառ չը վերադարձուի, տանողը կը զրկուի իր տուած գրաւականից:

11. Վարչությունն է սահմանում ընթերցարան յաճախողների նկատմամբ ներքին բարեկարգութեան հրահանգներ, որպէս նաև ընթերցարանի բացման օրերի և ժամերի որոշումներ:

12. Ընթերցարանի բոլոր հասոյթները ստացուելուն պէս գրում են Վարչութեան տուած ժապախենալ մատենանի մէջ գրադարանապետի ձեռքով, իսկ վճարողին տրում է անդորրագրական մատենանից ստացագիր, որի բունը մնում է մատենանում: Մուտքը և ելքը ստուգում է տնօրէնը առնուազն ամիսը մի անգամ և նրա օրինաւորութիւնը հաստատում իր ստորագրութեամբ: Տնօրէնը նոյնպէս պիտի ստուգէ գրաւականների կանոնաւոր ստացումը, ապահով պահուիլը և յետ ստացուիլը:

13. Բոլոր գրքերի և պարբերական հրատարակությունների համար կազմում է ընդհանուր ցուցակ, որի մէջ նշանակում են գրքերի և հրատարակությունների գները և նրանց համեմատ նշանակուած գրաւականի չափը:

14. Ներկայ կանոնները և Վարչութեանը Գրատուն-Ընթերցարանին վերաբերեալ հրամանագիրը պիտի կախուած լինին ընթերցարանի սրահում՝ ի գիտութիւն ամենեցուն:

**ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՇՈՒՇԻԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՐԱԴԱՐԱՆ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆԸ
(1889-1900 ԹԹ.)****ՊԵՏՈՅԱՆ Ս.Հ.****Ամփոփում**

Կովկասի հայոց բարեգործական ընկերության Շուշիի մասնաճյուղի գործունեության մեջ նշանակալի դեր է ունեցել գրադարան-ընթերցարանը, որը հայ հասարակությանը հաղորդակից էր դարձնում ոչ միայն հայ, այլև համաշխարհային գրականությանը: Պարբերական հրատարակությունների շնորհիվ ընթերցարանը եղել է տեղի հասարակության համար տեղեկատվության հիմնական աղբյուրներից մեկը: Գրադարան-ընթերցարանն իր գործունեության կարճ ժամանակահատվածում (1889 թ. մարտի 10–1900 թ. հունվարի 1) կարողացել է դառնալ Շուշիի կրթական-մշակութային կարևորագույն կենտրոն: Ընթերցարանից օգտվում էին հասարակության լայն շերտերը:

Բանալի բառեր՝ Կովկասի հայոց բարեգործական ընկերություն, կրթական-մշակութային կենտրոն, բարեգործություն, գրադարան-ընթերցարան, գիրք, գրացուցակ, տպագրություն:

**БИБЛИОТЕКА-ЧИТАЛЬНЯ ШУШИНСКОГО ФИЛИАЛА
КАВКАЗСКО-АРМЯНСКОГО БЛАГОТВОРИТЕЛЬНОГО
ОБЩЕСТВА (1889-1900 ГГ.)****ПЕТОЯН С.А.****Резюме**

В деятельности Шушинского филиала Кавказско-армянского благотворительного общества важную роль играла библиотека-читальня, приобщавшая армянское общество не только к армянской, но и к мировой литературе. Благодаря поступающим в библиотеку периодическим изда-

ниям читальня была одним из основных источников информации для местного общества. За короткий период своего существования библиотека-читальня (с 10-го марта 1889 г. по 1-ое января 1900 г.) стала важным образовательно-культурным центром. Ею пользовались широкие слои общества.

Ключевые слова – Кавказско-армянское благотворительное общество, образовательно-культурный центр, местное управление Шуши, благотворительность, библиотека-читальня, книга, каталог, печать.

THE READING HALL OF SHUSHI BRANCH OF THE CAUCASUS ARMENIANS' BENEVOLENT SOCIETY (1889-1900)

S. PETOYAN

Abstract

In the activities of the local government of Shushi of the Caucasus-Armenians' Benevolent Society the library-reading hall played an important role, which directed the Armenian society not only to the Armenian, but also to the world literature. Thanks to the periodicals received by the library, the reading hall became one of the main sources of information for the local community. For a short period of its existence (from March 10, 1889 to January 1, 1900) the library-reading room became an important educational and cultural center. It was used by a wide society.

Key words – Caucasus Armenians' Benevolent Society, educational-cultural center, charity, library-reading hall, book, catalog, printing.

ՀԱՅ-ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 1998-2008 ԹԹ.

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ Ս.Ա.*

Հայաստանի Հանրապետությունը և Բուլղարիայի Հանրապետությունը, սկսած 1990-ական թթ., ունեին ակտիվ տնտեսական փոխգործակցություն և տարեցտարի արձանագրում էին տնտեսական ցուցանիշների աճ: Ի տարբերություն Հայաստանի, Բուլղարիան 1990-ական թթ. երկրորդ կեսին հայտնվեց տնտեսական ճգնաժամի մեջ, քանի որ ուներ բավական նպաստավոր աշխարհագրական դիրք: 1990-ական թթ. վերջին Բուլղարիան ղեկավարվում էր միջազգային վալյուտային ֆոնդի կողմից, որը հսկում էր ամեն ինչ և նույնիսկ հաստատում գները: Երկրի տնտեսությունը մեծ կախվածություն ուներ արտաքին շուկաներից, և դա հատկապես վերաբերում էր էներգետիկ ոլորտին:

Համաշխարհային տնտեսության համաշխարհայնացման խորացումը հասել էր այնպիսի աստիճանի, որ մի երկրում դրսևորվող տնտեսական միտումներն ու քաղաքական իրադարձություններն անխուսափելիորեն իրենց ազդեցությունն էին թողնում գործընկեր երկրների տնտեսությունների վրա¹: Հայաստանում և Բուլղարիայում առկա տնտեսական խնդիրներն ու առաջացած ճգնաժամերը բացասական ազդեցություն էին թողնում երկկողմ տնտեսական հարաբերությունների վրա, որոնք զգալիորեն բարդանում էին երկու երկրների տնտեսությունների մեջ առկա բացասական միտումների հետևանքով: Սակայն հայ-բուլղարական առևտրատնտեսական կապերի ձևավորմանն ու զարգացմանը զուգընթաց՝ սկսեցին ձևավորվել միջկառավարական մարմիններ, որոնք ակտիվորեն ներազդում էին երկու երկրների առևտրատնտեսական գործունեության վրա: Այս մար-

* ԵՊՀ պատմության ֆակուլտետ, Հայոց պատմության ամբիոնի ասպիրանտ, sergeybaghdasaryan.gov@gmail.com, հոդվածի ընդունման օրը՝ 1.02.2019, տպագրության է երաշխավորել ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնը, գիտական ղեկավար՝ պատմ. գիտ. դոկտոր Է. Մինասյան:

¹ Փախյան Ա., Ռուս-վրացական հարաբերությունների ազդեցությունը ՀՀ արտաքին առևտրի վրա (Լրաբեր հասարակական գիտությունների, 2010, № 3, էջ 125-138):

միները էական ազդեցություն ունեցան ՀՀ և ԲՀ միջև իրականացվող տնտեսական գործընթացներում:

1990-ական թթ. վերջին և 2000-ական թթ. Սկզբին Բուլղարիայի տնտեսության մեջ գերակա դարձան լեռնահանքային արդյունաբերությունը, էներգետիկան, մետալուրգիան, մեքենաշինությունը, գյուղատնտեսությունը, տուրիզմը: Արդյունաբերական արտադրանքի հիմնական ապրանքներն էին հագուստը, երկաթը, մեքենաները և վառելանյութերը²: Սակայն երկրի տնտեսության մեջ չկար ներդրումներ իրականացնելու համապատասխան միջավայր³:

Թեև թվային հարաբերությամբ 1998 թ. արտահանումը և ներկրումը աճեցին երկկողմ առևտրում, սակայն տոկոսային հարաբերությամբ Բուլղարիան նահանջեց Հայաստան ապրանք ներմուծող երկրների ցանկում և զբաղեցրեց 14-րդ տեղը⁴: Այդուամենայնիվ, այս ցուցանիշով Բուլղարիան շարունակում էր գերազանցել արևելաեվրոպական բոլոր երկրներին: 1998 թ. արտաքին առևտրի շրջանառության ընդհանուր ծավալը երկու երկրների միջև կազմել է 17214.6 հազ. դոլար, որից արտահանման ծավալն էր 1028.5 հազ. դոլար (արտաքին առևտրի ընդհանուր ծավալի 6%-ը), ներմուծմանը՝ 16186.1 հազ. դոլար (արտաքին առևտրի ընդհանուր ծավալի 94%-ը)⁵: Այստեղ արդեն արտահանումը ուներ տեսանելի աճ, սակայն հարաբերակցությունը դեռևս խիստ խախտված էր:

1998 թ. ՀՀ-ից Բուլղարիա է արտահանվել ընդամենը 796.0 տոննա արտադրանք՝ 523.8 մլն. դրամ (1028.5 հազ. դոլար) ընդհանուր արժողությամբ, ներմուծվել է ընդամենը 18174.2 տոննա արտադրանք 8178.2 մլն. դրամ (16186.1 հազ. դոլար) ընդհանուր արժողությամբ⁶: Արտահանված ապրանքների մեջ գերակշռում էին պղինձը և պղնձե իրերը, նաև ալյումինից, քարից, գիպսից, ցեմենտից պատրաստված իրերը, դեղագործական մթերքը, բանջարեղենի, պտուղների վերամշակումից ստացված մթերքը,

² Տե՛ս <https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/geos/bu.html> (17.02.2019):

³ Տե՛ս http://www.sgi-network.org/2014/Bulgaria/Key_Challenges (17.02.2019):

⁴ Նույն տեղում: Տե՛ս նաև Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2002, Ե., 2002, էջ 494:

⁵ ՀՀ արտաքին գործերի նախարարության պատմադիվանագիտական արխիվ, Եվրոպայի երկրների վարչության երկրորդ եվրոպական բաժին, Փաստաթղթեր (գրագրություն, տեղեկանք, զեկուցագիր և այլն) ԲՀ և ՀՀ համագործակցության և փոխհարաբերությունների վերաբերյալ, ց. 5, գ. 55, թ. 47:

⁶ Նույն տեղում:

նաև սուրճ, թեյ և այլ համեմունքներ: Ներմուծվող ապրանքների մեջ գերակշռում էին հացահատիկը, շաքարը, բանջարեղենի, պտուղների, ընկույզի և բույսերի վերամշակումից ստացված մթերքները⁷:

1998 թ. ակտիվ միջկառավարական, միջխորհրդարանական փոխառնչությունները էական ազդեցություն ունեցան երկկողմ տնտեսական հարաբերությունների զարգացման վրա: 1999 թ. Բուլղարիայից դեպի Հայաստան ներմուծումը կազմել է 12 081 800 դոլար, որն ավել էր արևելաեվրոպական մնացած երկրներից: Հայաստանից Արևելյան Եվրոպա արտահանվող ապրանքների ընդհանուր արժեքը կազմել է 1 318 500 դոլար, որից Բուլղարիայի մասնաբաժինն էր 881 800 դոլարը⁸: Այս ցուցանիշները հաշվի առնելով՝ կարող ենք ասել, որ Արևելյան Եվրոպայի երկրների շարքում Բուլղարիան Հայաստանի ամենաարդյունավետ գործընկերներից էր:

1988-2003 թթ. ընկած ժամանակահատվածում Բուլղարիայից Հայաստանի տնտեսության մեջ կատարվել է 252,6 մլն ԱՄՆ դոլարի ուղղակի ներդրում⁹: ՀՀ-ում 2003 թ. հունվարի 1-ի դրությամբ գրանցված էին բուլղարական կապիտալի մասնակցությամբ 30 ձեռնարկություններ¹⁰: 2004 թ. Բուլղարիայից ներմուծման ցուցանիշները բավական բարձր էին և կազմում էին 3,9%: Մասնավորապես, այդ ցուցանիշով Բուլղարիան զբաղեցնում էր 10-րդ տեղը՝ գերազանցելով տնտեսապես զարգացած մի շարք երկրների, ինչպիսիք էին, օրինակ, Ֆրանսիան, Իտալիան, Լեհաստանը, Չինաստանը և այլն:

2006 թ. Բուլղարիայի և Հայաստանի միջև առևտրի ծավալները նվազում էին՝ ընդհանուր ներմուծման ծավալների մեջ հասնելով 1,9 %-ի¹¹: Պահպանվում էր առևտրի բացասական հաշվեկշիռը, որը շարունակում էր բնութագրական լինել Հայաստանի տնտեսության համար: Այս առումով, հարկ է նշել, որ որոշակի տեղաշարժեր կատարվել էին, քանզի երկրների ցանկը, որտեղ արտահանումը գերազանցում էր ներմուծմանը, աճել էր:

⁷ Նույն տեղում:

⁸ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2003, Ե., 2003, էջ 492:

⁹ Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանի պաշտոնական այցը Բուլղարիայի Հանրապետություն (Հայաստանի Հանրապետություն, 6.IX.2003):

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Հայաստանը թվերով 2007 թ., Վիճակագրական գրքույկ, Ե., 2007, էջ 80:

Արևելաեվրոպական երկրների մեջ Ռումինիան ներմուծման ծավալներով շրջանցել էր Բուլղարիային¹²:

Բուլղարիայի և Հայաստանի միջև առևտրի ծավալները 2007 թ. զգալիորեն ընդարձակվել էին, ինչի շնորհիվ ՀՀ-ից արտահանումը հասել է 4.07%-ի, ներմուծումը կազմել է 2.68%: Այն թեև տոկոսային հարաբերությամբ ավելի փոքր էր, սակայն գումարային առումով գերազանցում էր արտահանմանը, քանզի ՀՀ-ից արտահանման ծավալները շուրջ 3 անգամ ավելի քիչ էին¹³: Բացի այդ, ներմուծման և արտահանման գումարային չափի վրա ազդել էին նաև փոխարժեքի տատանումները, ինչի հետևանքով, Հայաստանում դրամի գինը բարձրացել էր, որն էլ հանգեցրել էր առևտրի ծավալների մեծացմանը՝ դոլարի տեսքով:

Չնայած երկկողմ տնտեսական խնդիրներին, որոնք պայմանավորված էին նույնանման ապրանքների արտադրությամբ և բեռնափոխադրումների դժվարություններով, կողմերը փորձում էին տնտեսական հարաբերությունները զարգացնել համատեղ ձեռնարկությունների տարբերակով, որի օրինակ էին բուլղարական առաջին ներդրումները Հայաստանում գինեգործության ոլորտում: Հայաստանից Բուլղարիա արտահանման ծավալները 2008 թ. շարունակեցին աճել, որի շնորհիվ Հայաստանից ապրանք ներկրող երկրների ցանկում Բուլղարիան հայտնվեց 6-րդ տեղում, իսկ ԵՄ երկրների ցանկում 4-րդն էր: Հայաստան ներկրելու ցուցանիշներով, թեև Բուլղարիայից ավելի շատ ապրանք ներկրվեց, սակայն տոկոսային հարաբերակցությունը չփոխվեց:

Այսպիսով, այս տարիներին հայ-բուլղարական առևտրատնտեսական համագործակցությունը աշխուժացնելու նպատակով կազմակերպվում էին տեղեկատվության փոխանակում, գործարարների փոխադարձ այցեր, գործարար համաժողովներ, ցուցահանդեսներ: Բազմակողմ համագործակցությունը իրականացվում էր Սևծովյան տնտեսական համագործակցության (ՍԾՏՀ) կազմակերպության և Սևծովյան տարածաշրջանային էներգետիկ կենտրոնի ծրագրերի շրջանակներում: Թեպետ Հայաստանի և Բուլղարիայի միջև առևտրատնտեսական համագործակցության զար-

¹² Ռումինիայից Հայաստան ներմուծումը հասել էր 3,8%-ի, սակայն արտահանումը դեպի Ռումինիա գրեթե զրոյական էր (նույն տեղում):

¹³ 2007 թ. ՀՀ-ից արտահանվել է 1 152 300 800 դոլարի ապրանք, ներկրվել՝ 3 267 788 000 դոլարի: Մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 79:

գացման համար ձևավորված էր անհրաժեշտ իրավապայմանագրային դաշտ, այդուհանդերձ, առևտրաշրջանառության ծավալները դեռևս հեռու էին ցանկալի մակարդակից:

ՀԱՅ-ԲՈՒԼԴԱՐԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 1998-2008 ԹԹ.

ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ Ս.Ա.

Ամփոփում

1998-2008 թթ. Հայաստանի Հանրապետության և Բուլղարիայի Հանրապետության տնտեսական փոխառնչություններում կարևորվել են մի շարք ոլորտներ՝ թեթև արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, էներգետիկան, տուրիզմը և այլն: Հայաստանում և Բուլղարիայում առկա տնտեսական խնդիրներն ու առաջացած ճգնաժամերը իրենց բացասական ազդեցությունն էին թողնում երկկողմ տնտեսական հարաբերությունների վրա, որոնք զգալիորեն բարդանում էին երկու երկրների տնտեսության մեջ առկա բացասական միտումների հետևանքով: 2000-ական թթ. երկկողմ տնտեսական հարաբերությունները նոր գործոնների ազդեցությամբ սկսեցին վերելք ապրել:

Բանալի բառեր՝ Հայ-բուլղարական հարաբերություններ, տնտեսություն, արտահանում, ներմուծում, ՄՕՏՀ, էներգետիկա, գյուղատնտեսություն:

АРМЯНО-БОЛГАРСКОЕ ЭКОНОМИЧЕСКОЕ СОТРУДНИЧЕСТВО В 1998-2008 ГГ.

БАГДАСАРЯН С.А.

Резюме

Приоритетными направлениями армяно-болгарского экономического сотрудничества в 1998-2008 гг. были легкая промышленность, сельское хозяйство, энергетика, туризм и т.д. Экономические проблемы в Армении

и Болгарии и связанные с ними возможные кризисы оказывали неблагоприятное влияние на двусторонние экономические отношения, осложненные, таким образом, негативными тенденциями в экономиках двух стран. В 2000-ых годах двусторонние экономические отношения стали обуславливаться рядом новых факторов.

Ключевые слова – армяно-болгарские отношения, экономика, экспорт, импорт, ОЧЭС, энергетика, сельское хозяйство.

ARMENIAN-BULGARIAN ECONOMIC COOPERATION IN 1998-2008

S. BAGHDASARYAN

Abstract

From 1998 to 2008 in the economic relations of Bulgaria and Armenia a number of spheres, such as light industry, agriculture, energy, tourism, etc. were highlighted. The economic problems in Armenia and Bulgaria and the emerging crises had a negative impact on bilateral economic relations, which were significantly complicated by negative tendencies in economies of both countries. In the 2000's bilateral economic relations began to rise as a result of new factors.

Key words – Armenian-Bulgarian relations, economy, export, import, BSEC, energy, agriculture.

KESHIG IN CAUCASUS

A. POGHOSYAN*

In the creation of early state formations among nomadic tribes, the immediate circumference of the leader, had a great role in the governance system. From the strongest and young representatives were gathered the “*unique link of management*” of leader, the primary problem of which was the security of the head of state. Thus, “Royal Scythians”, which are still mentioned at Herodotus, were collected from the junior representatives of the Scythian influential clans and were obliged not only to secure the king's personality, but also to fulfill various assignments in the government. They were assigned to high government posts¹. The Xianbei's² khagan's guard was gathered from “great people's” younger brothers and sons. As in the case of Scythians, people included in Royal Guard were actively participating in state rule³. Similar guards also existed at the Mongolian kidans and the Tungusic Jurchen, which had a great influence on the formation of the Mongolian governance system⁴.

The guard of the Mongol's leader was called Keshig⁵. Formation of keshig is not only conditioned with social relations at the Mongols. It's embryonic

* Yerevan State University PhD student, arampoghosyan.hist@gmail.com, article received 05.02.2019, recommended by Dr. in History A. Grigoryan, supervisor Dr. in History H. Margaryan.

¹ **Braund D.** “Royal Scythians and the slave-trade in Herodotus' Scythia”. *Antichthon*, vol. 42, 2008, pp. 6-10.

² **Xianbei** - Turkic or Mongolian nomadic tribes residing in Inner Mongolia. In the early Middle Ages, they created in northern China quite strong nomadic state in the II-III centuries (See more about Xianbei **Holcombe Ch.** *The Xianbei in Chinese History, Early Medieval China*, (2013), *The Cambridge History of Inner Asia*, edited by Nikola Di Cosmo, Allen J. Frank and Peter B. Golden, Cambridge University Press, 2009, Part One, The Rise of the Chinggisids, pp. 7-10).

³ **Holcombe Ch.** *The Xianbei in Chinese History, Early Medieval China*, (2013), p. 25.

⁴ **Biran M.** *Nomads as Agents of Cultural Exchange: The Mongols and Their Eurasian Predecessors*, Honolulu, University of Hawaii Press, 2017, pp. 152-181.

⁵ The explanation of the word “Keshig” still gives rise to controversy. Thus, Keshig meets in *History of Yuan* in the form of Ch'ieh-hsieh (Kese /g/) and interpreted as “*soldier-guards who serve in shifts*” (**Ch'i-ch'ing Hsiao**, *The Military Establishment of the Yuan Dynasty*,

manifestations or similar forms, as mentioned, existed in the nomadic state units formed in different historical eras in the Asian steppes. The functions of Keshig were finally clarified during the reign of Genghis Khan (1206-1227). It not only carried out the functions of the Royal guard, but also certain state government, because in the composition of Keshig were included free class and people belonging to a notable family. It was often viewed as a "*prison camp*", as well as an "*academy*", for demonstration of young nobility⁶. In *History of Yuan*⁷, members of the Keshig are mentioned with their respective functions. More than 14 functions are mentioned. It was divided into dozens of systems, including 10,000 members.

The members of the Keshig were unique "*honorable hostages*", through which Mongols succeeded in establishing a relatively reliable ruling system. Keshig's primary task, of course, was to provide Khan's security. On the other hand, Ubeing collected from the representatives of the aristocratic families, it was also presented the elite of the Mongolian state. Very often they organized reconnaissance campaigns. Mongolian noyans⁸, on the one hand, were presented as talented commanders, who were skilled in the wars, were also effective in remote and unfamiliar countries, and, on the other hand, being involved in the Keshig, they were not limited to the conquering operations but also organized

Harvard University, London, 1978, pp. 92): According to P. Buell, Keshig is the word of Mongol origin and has the meaning of the "*near, beloved and dear slave to the head of state*" (**Buell Paul D.** Historical Dictionary of the Mongol World Empire, Historical Dictionaries of Ancient Civilizations and Historical Eras, No. 8, Lanham, Maryland and Oxford, 2003, pp. 222-223). According to C. Atwood's observation, the word has a Turkic origin in the sense of "*shift*" (**Atwood Ch.** Encyclopedia of Mongolia and the Mongol Empire, Indiana University, 2004, pp. 308-309).

⁶ Ch. Hsiao is convinced that the keshig, first of all, was the Imperial embryonic administration, which was the "*interior bureau of service*" of Mongolian nomadic nobility, which was serving the interest of noyans (**Ch'i-ch'ing Hsiao**, Harvard University, London, 1978, p. 34).

⁷ *The History of Yuan* (Yuán Shǐ), also known as the Yuanshi, is one of the official Chinese historical works known as the Twenty-Four Histories of China. Commissioned by the court of the Ming dynasty, in accordance to political tradition, the text was composed in 1370 by the official Bureau of History of the Ming dynasty, under direction of Song Lian (1310-1381).

⁸ **noyan** (noyon)-the word noyan has throughout Mongolian history signified those not of the ruling lineage who are entrusted by the sovereign, or Khan, with higher office. Its specific designation at any one time flows from the particular character of Mongolian authority at the time. In the Mongol empire the commanders of the decimal units (10s, 100, 1000s and 10000s) were all noyan, although in practice the title was reserved for the higher ranks (**Atwood Ch.** Encyclopedia of Mongolia and the Mongol Empire, 2004, Indiana University, p. 426):

temporary military-civilian supervision. In this regard, an interesting example is the Caucasian region, where we meet many noyans from Keshig, about which medieval sources have kept rich information.

In the Caucasus, the first Mongol army commander known to us from the Genghis Khan and then from the Ögedei Khan's Keshig, was Sübedei, who served for many years as a *ba'atur* in the Genghis Khan's Keshig. In Armenian sources, he is mentioned as "Sabadah Bahatur"⁹ (arm. Սաքադա Բահատուն). As it is known, together with Jebe and Togachar, Sübedei led the Mongolian intelligence army in the Caucasus in 1220-1223. In 1236, during the general invasion, is mentioned Ghara Noyan¹⁰. Kirakos Gandzakets'i mentions the latter as "Ghara Bahatur" (arm. Ղարա Բահաթուն) in connection with the capture of St. Mary¹¹. The next representative was Chormaghan, who had previously carried out the duties of qorchi (quiver-bearer) at Genghis Khan and Ögedei's Keshig.¹² After Chormaghan (1241/1242), Baiju Noyan was appointed commander of the Mongolian troops, which Kirakos Gandzakets'i mentions in the form of "Bachu-ghurchi" (arm. Բաչու-ղուրչի)¹³. From the qorchis is mentioned Ghatagha Noyan, who also was in the army of Chormaghan¹⁴. Ghatagha Noyan is mentioned by Juvaini, referring to the activity of Batu Khan, Juvaini speaks about Ghatagan qorchi, who was in charge of arresting Elchigidei¹⁵. Perhaps, this same Ghataghan noyan was also mentioned by anonymous author from Sebastia in his Chronicle and the Step'annos Episkopos (bishop) who mention him during the capture of Kamakh and Erzincan¹⁶.

Rashid al-Din mentions Chaghatai, from the arulat's tribe, who carried out qorchi's duties again¹⁷. This is the same Chaghatai who killed by the assassins

⁹ **Kirakos Gandzakets'i**, History of the Armenians, Melik'-Ohanjanyan (ed.), Erevan: Academy of Science Press, 1961, p. 204 (in armenian).

¹⁰ **Rashid al-Din**, 1952, v. 1, p. 189 (in russian).

¹¹ **Kirakos Gandzakets'i**, p. 261.

¹² **Rashid al-Din**, 1952, v. 1, т. 1, p. 98, The Secret History of Mongols, § 260, p. 252.

¹³ **Kirakos Gandzakets'i**, p. 279.

¹⁴ **Vardan Arevelts'i**, Universal History, completed in 1267, G.B. T'osunyan (ed.), Erevan University Press, 2001, p. 146 (in armenian).

¹⁵ **Juvaini**, Genghis Khan, History of the World-Conqueror, Boyle J. (ed.), Manchester University Press, 1958, p. 590.

¹⁶ **Hakobyan V.** (ed.), Minor Chronicles of the 13th-18th centuries, vol. 2, Erevan: Academy of Science Press, 1956, p. 43 (in armenian).

¹⁷ **Rashid al-Din**, 1952, v. 1, т. 1, кн. 1, с. 100.

(arm. «մուխենք») according to Kirakos Gandzakets'i¹⁸. According to Grigor Aknerts'i Chagatai had a rather high position among the Noyans and soon is called "Khan" (arm. «Դան») ¹⁹. According to the Georgian anonymous Chronicle Chaghatai headed the Mongolian armies with Chormaghan, Baiju, and Yusur, and was referred to as "Greate noyan" (ge. ღიღი ნობნი)²⁰. Kirakos Gandzakets'i speaks about the high position of Chaghatai, pointing to the increase of lawlessness after his death²¹. According to information provided by Kirakos Gandzakets'i²² and Vardan Arevelts'i²³, Chaghatai was ordered to conquer Lori. The Keshig system was also preserved after the splitting of the united Mongol empire. After the division of the latter, as was known, the great khan's title was given to the rulers of Yuan empire created in China and Mongolia. There were formed three substantive states so called uluses independently from the Karakorum: Chagataids in Central Asia, the Golden Horde, or the Juchids in the Dasht-e Qipchak, the Russian principalities and some parts of Eastern Europe, Ilkhanids in Iran, in the South-Caucasus Range, in majority of Asia Minor, in Mesopotomia and in a part of Afghanistan. All rulers of uluses, even formal, were accepting the supremacy of Greate khan sitting in Karako-

¹⁸ **Kirakos Gandzakets'i**, p. 264.

¹⁹ It should be noted that the historian mentions another Chagatai calling him "*another little Chaghatai*" (**Grigor Aknerts'i/Grigor of Akanc'**, History of the Tatars/ History of the Nation of the Archers, Jerusalem, St. Jacob Press, 1974, p. 26, in armenian). The letter is also mentioned by Rashid ad-Din, mentioning that Chagatai was from the tribe of sunit. According to Mongolian tradition, after the death of Genghis Khan's son Chaghatai (1242), that name was forbidden and banned to use and the Chaghatai Junior was called Sanit'ay, considering the tribal affiliation (**Rashid al-Din, 1952**, v. 1, p. 98). Bar Hebraeus mentions him as Sunatai Aghonesta, who acts in Cpppadocia (**Bar Hebraeus' Chronography**, translated from the Syriac by Budge E., vol. 1, Oxford University Press, 1932, p. 394). According to Grigor Aknerts'i Chaghatai Elder, from arulat's tribe, was called Sanit'ay (arm. Սոնիթայ), and as we have seen, that person was the Chaghatai Junior from the sunit tribe and not Chaghatai Elder. Here, the historian probably missed the name Sanit'ay. Taking into account this specification, L. Babayan and D. Bayarsaikhan mistakenly viewed Sanit'ay as a separate noyan who operated with two Chaghatai (**Babayan L. Socio-Economic and Political History of Armenia in the 13th-14th c.**, Erevan, 1964, p. 234 (in armenian), **Bayarsaikhan Dashdondog**, The mongols and the Armenians (1220-1335), Brill, 2011, p. 69).

²⁰ **Kartlis Tskhovreba**, Georgian National Academy of SSciences, Tbilisi, 2014, p. 340, էջ 75, 91, comp. ქართლის ხცოვრება, ტ. II, თბილისი, 1959, გვ. 184, 210.

²¹ **Kirakos Gandzakets'i**, p. 264.

²² *ibid*, p. 255:

²³ **Vardan Arevelts'i**, p. 146.

rum. But when broke a civil war (1260-1264) between Kublai and his brother Ariq Böke, ulus-states were completely separated in legal terms. In spite of all this, the rulers of Yuan held the structures typical of central government. The preservation and subsequent survival of the Keshig is largely referred to by the sources in the Yuan court. XIII century Venetian traveler Marco Polo kept the interesting information about the role and importance of the Keshig in the royal court of Yuan. According to the latter, "*Quescican*" means "*knights dedicated to their master*", whose number exceeded 12,000 during the reign of Kublai²⁴. Being a member of this unit was primarily a great responsibility and dignity²⁵. As a result of state reforms carried out by Kublai Khan in 1263, some changes took place in the process of replenishing the Keshig. Particularly, a large number of Chinese people have been added to the Keshig from both well-known nobility dynasties and non-well-known, mainly military men²⁶.

L. Kwanten claims, that the Keshig was preserved only in Yuan, and in the rest of the ulus-states, the leaders of the latter were keeping their own security unit.²⁷ But, as we shall see, the Keshig preserved its existence not only in the center of the empire, but also in ulus-states. Keshig was first introduced as a unique symbol of the Mongol Empire, and was a connecting link between the conquerors and the conquered. Under the reign of Hulagu (1261-1265), a local "Keshig" was formed in Mongolian-Iranian state, which included the non-Mongols. According to Ch. Melville, the junior representatives of the local Iranian noble dynasties mainly were included in that structure²⁸. But, author did not pay attention to Armenian and Georgian sources whose study also gives an opportunity to study the process of establishing the Keshig system, in which an important role was played not only the representatives of the Iranian, but also the Armenian, Georgian and Alan noble dynasties.

²⁴ The Book of Ser Marco Polo, The Venetian Concerning the Kingdoms and Marvels of the East, translated and Edited, with Notes, by Colonel sir Henry Yule, Vol. II, ch. 12, p. 379.

²⁵ *ibid.*

²⁶ **Endicott-West E.** Mongol Rule in China, Local Administration in the Yuan Dynasty, Harvard University, 1989, pp. 85-86.

²⁷ **Kwanten L.** Imperial Nomads, A History of Central Asia, Philadelphia, University of Pennsylvania Press, 1979, pp. 92-93.

²⁸ **Melville Ch.** The *Keshig* in Iran: The Survival of the Royal Mongol Household, Beyond the Legacy of Genghis Khan, Brill, 2006, pp. 135-140.

Armenian, Georgian, Arabian and Persian sources, unfortunately, do not provide information on replicating Keshig from the alans. We meet them only in *The History of Yuan*. Mongols from 1238 to 1239 conquering the Kingdom of Alania and after capturing the capital of Magas, immigrated to the Far East a large number of alan noble families with their military forces²⁹. Soon they went into service in the great royal court and, as *The History of Yuan* said, added a Keshig of Great Khan³⁰.

If the Alans were found in the Great Khan Keshig, then the Armenians and the Georgians filled the Keshig in Ilkhanate. The Armenian-Georgian forces have often demonstrated their military capabilities in the battlefield and came to the attention of the Mongols. Armenian-Georgian military units have been particularly active in the defeat of the Seljuks of Rum and have made some contributions to the determination of the outcome of the Battle of Kose-Dagh (1243). The picture is repeated also during the Mongol invasion to Syria (1260). The emphasis on military superiority in the battlefield was not one that was praised by Mongol commanders. Perhaps on this occasion Grigor Aknerts'i mentions Armenian-Georgian forces: "*since Hulegu liked them extremely because of the bravery they had displayed before him in all battles*" (arm. յոյժ սիրէր Հուլաւու Ղանն զգաւորն Հայոց եւ Վրաց, վասն կարի քաջութեան իրեանց, զոր առնէին առաջի նորա յամենայն պատերազմունս)³¹. Continuing, the historian adds: "*Therefore he styled them Bahaturs. He Chose the handsome and young sons of the princes of the Armenians and Georgians and set them up as his guards (door-keepers), calling k'e'sikt'oyk' who are the guards with sword and bow*" (arm. «վասն որոյ **Բահադուրս** անուանեց զնոսայ. զի զգեղեցիկ եւ զերիտասարդ որդիս մեծ իշխանացն Հայոց եւ Վրաց ընտրեաց եւ կացոյց զդոնապանս իւր, եւ անուանեաց զնոսայ **քէսիկթոյք**, որք են դոնապանք, սրով եւ աղեղամք»³²). So, Grigor Aknerts'i mentions

²⁹ Minorsky V. Caucasia III: The Alān Capital *Magas and the Mongol Campaigns // Bulletin of the School of Oriental and African Studies, Vol. 14, № 2, 1952, pp. 221-238.

³⁰ In *The history of Yuan* they were mentioned Asu/d/ (**Ch'i-ch'ing Hsiao**, The Military Establishment of the Yuan Dynasty, p. 97):

³¹ Grigor Aknerts'i, p. 47.

³² ibid.

some functions, that was in Keshig. Subdivision of *ba'aturs*³³ in the Keshig was created still in the reign of Genghis Khan (1203) and have thousand member. The soldiers of the latter were responsible for 24-hour supervision at the Khan's residence and were divided into daytime "*torguud*" and night time "*Khevtuul*" shifts subdivisions³⁴. They were considered Khan's vanguard in battles. Functions, those we find in the history of Grigor Aknerts'i, are mentioned in *The History of Yuan*, specially: door-keepers as "*e'üdechi*", sword-bearers as "*ildüchi*" and quiver-bearers as "*qorch*".³⁵ The fact that Armenians and Georgians played an important role in Keshig and were in the ranks of Hulagu Khan's relatives, often appearing in suggestions, appears from the Aknerts'i testimony when it comes to the strict punishments made against the Muslim figures in the state system, according to the historian, "*This was schooling for the Armenian and Georgian troops*" (arm. *Եւ այս եղեւ ի խրապուկ զաւրացն Հայոց եւ Վրաց*).³⁶

The Georgian Anonymous Chronicle also shows the high role of the Armenian and Georgian nobles. The latter contains interesting information about the replenishment of Keshig from the Armenians and Georgians. The source does not mention the word Keshig, but lists the functions that existed in that structure. Talking about the arrival of Hulagu, the historian states that the Commander of the Mongolian Troops "*Chormaghon, Iosur, Bicho and Angurag*" are heading to Hulagu, and the latter places high positions from the Georgians and Armenians³⁷. According to the historian: "*The Georgian dignitaries appeared before Ulo (Hulagu). He looked kindly upon them, welcomed them and armed them, assigning them as his allies; he appointed some of them to the rank of **uldachs**, which means sword-bearers, people who have swords and stay as guards at gates, others are called **sukurchs**, which means that they bear refreshing folded circle, which they unfold when needed over the Khan's head on a high pole-the staff, and keep it in this way (cooling him) No one,*

³³ This word is met in *The History of Yuan* as *ba'atur* or *ba'atud* in the meaning of the word "brave" (**Ch'i-ch'ing Hsiao**, *The Military Establishment of the Yuan Dynasty*, p. 36). In Russian it is preserved as «*богатырь*».

³⁴ **Ch'i-ch'ing Hsiao**, *The Military Establishment of the Yuan Dynasty*, p. 36.

³⁵ **Melville Ch.** *The Keshig in Iran: The Survival of the Royal Mongol Household, Beyond the Legacy of Genghis Khan*, p. 137.

³⁶ **Grigor Aknerts'i**, p. 47.

³⁷ **Kartlis Tskhovreba**, p. 344, comp. ქართლის ხცოვრება, ტ. II, გვ. 222-223.

who was not of the Khan's family, was allowed to hold it; others were made **q'ubchachs**, who were trusted with garment and footwear; others **evdarchs**, who were door-keepers; others **q'orchs**-arrow-bearers and quiver-bearers"³⁸. According to the historian, this step was humiliating for the Georgian nobles, but at the same time, this step was regarded as a privilege by the Mongols. These functions except q'ubchach, also are giving in *The History of Yuan*. Thus, mentioned sword-bearers (ge. "ულდაზი") meet in *The History of Yuan* as "ildüchi", fold-bearers (ge. "სუქურზი") as "sugurci", door-keepers (ge. "ევდარზი") as "e'üdechi" and quiver-bearers ("ყორზი") as "qorci"³⁹.

The replenishment of the Keshig was periodic. As we mentioned, involving representatives of the noble class from the occupied territories into Keshig allowed the Mongols first of all to control them and prevent possible rebellions. The information of Mkhit'ar Ayrivanets'i is noteworthy in this regard. On the occasion of armenian-georgian second rebellion (1259-1261) the historian mentions that after the failure: "*Two king Davids of Georgia fled to Sonet (Svaneti), and (mongols) take hostages in horde iskhans (noblemens, princes) and freelances and called them k'e'sik'tank*" (arm. «...*փախեաւ երկոքին Ռաւիթ թագաւորքն Վրացի Սոնէթ. իսկ զիշխանս և զազապորդիս զամենեսին պատանդ տարան յորդուն (այսինքն՝ հորդա) և քեսիքդանք անուանեցին*»)⁴⁰. The forms of *k'e'sikt'oyk'* and *k'e'sikt'tank'* preserved by Grigor Aknerts'i and Mkhit'ar Ayrivanets'i have the meaning of "*Keshig's member*". We have parallels in this case. According to Ch. Hsiao's research, Keshig's members were called "*kesigdei*" (unique, member's meaning) and "*kesigden*" (plural, meaning of members) in Chinese official historiography⁴¹. According to W. Cleaves – *k* of "*k'e'sikt'oy*" is an Armenian plural, and the word is transcription of the Mongolian "*kesigtü*"⁴².

Interestingly, the word keshig has been preserved in some Armenian dialects. In the sense of "guard" or "bodyguard" it use T'hovma Metsobets'i. His-

³⁸ *ibid.*

³⁹ **Ch'i-ch'ing Hsiao**, *The Military Establishment of the Yuan Dynasty*, p. 94.

⁴⁰ **Mkhit'ar Ayrivanets'i**, *History of the Armenians*, M. Emin (ed.), Moscow: Lazar Institute Press, 1860, p. 94 (in armenian).

⁴¹ **Ch'i-ch'ing Hsiao**, *The Military Establishment of the Yuan Dynasty*, p. 35.

⁴² **Cleaves W.F.** *The Mongolian Names and Terms in the History of the Nation of the Archers* by Grigor of Akanc, *Harvard Journal of Asiatic Studies*, vol. 12, No. ¾ (Dec., 1949), p. 38.

torian referring to the achievements of Tamerlane states, that the letter forms his keshig in the way to Khorasan⁴³.

Much later, in the sense of “shift” and “guard”, we find keshig in archive document during the siege of the fortress of Shusha/Shushi (1826 yule)⁴⁴.

Thus, the information provided by Armenian and Georgian sources on Keshig enables us to expand and complement our understanding of the Mongolian nomadic governance system, where, as we saw, were included the members of the subordinated noble families.

ՔԵՇԻԿԸ ԿՈՎԿԱՍՈՒՍ

ՊՈՂՈՍՅԱՆ Ա.Տ.

Ամփոփում

Պետական վաղ կազմավորումների ձևավորման ընթացքում քոչվոր ցեղերի մեջ կառավարման համակարգը ստեղծելու հարցում մեծ դերակատարում ունեին առաջնորդի անմիջական շրջապատի մարդիկ: Նրանցից կազմվում էր պետության ղեկավարի անվտանգությունը պահպանող գվարդիան, որի գործառույթներն ավելի լայն էին, քանի որ այդ մարդիկ մասնակցում էին նաև պետության կառավարմանը: Մոնղոլներն այդ համակարգը կոչում էին *քեշիկ*, որն իր ավարտուն տեսքը ստացավ Չինգիզ խանի կառավարման շրջանում: Քեշիկը պահպանվեց նաև մոնղոլական միասնական պետության տրոհումից հետո: Հայկական և վրացական միջնադարյան աղբյուրները հետաքրքիր տվյալներ են հաղորդում իլխանների ձևավորած քեշիկի մասին, որտեղ իրենց գործուն մասնակցությունն ունեին նաև վրացի և հայ իշխանական տոհմերի ներկայացուցիչները:

Բանալի բառեր՝ քոչվոր ցեղեր, քեշիկ, իշխան, պատվավոր պատանդներ, բահաթուրներ, ռազմական ներուժ, կառավարման հուսալի համակարգ:

⁴³ **T'hovma Metsobets'i**, History of Tamerlane and His Successors, Moscow, 1860, p. 10 (in armenian).

⁴⁴ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թ. 54, վավ. 342:

КЭШИК НА КАВКАЗЕ

ПОГОСЯН А.Т.

резюме

В формировании ранних государственных образований среди кочевых племен непосредственное окружение лидера играло существенную роль в создании системы управления. Функции дружины или личной охраны были шире, так как они также являлись частью правительства. У монголов эта система называлась кэшик, и процесс её формирования завершился при Чингис-хане. Система кэшик сохранилась и после распада единого монгольского государства. В армянских и грузинских источниках приводится интересная информация о кэшиках, образованных при ильханах, в которые также были вовлечены представители знатных родов Грузии и Армении.

Ключевые слова – кочевые племена, кэшик, ильхан, почетные заложники, баатуры, военный потенциал, надежная система управления.

KESHIG IN CAUCASUS

A. POGHOSYAN

Abstract

In the process of formation of the early state structures and control systems among the nomadic tribes, the immediate environment of the leader played a significant role. Functions of the squad or personal guard were broader, as they were also part of the government. The Mongols called this system keshig, and the process of its formation was completed at Chinggis Khan. The keshig system was preserved even after the collapse of the unified Mongolian state. In the Armenian and Georgian medieval sources interesting data have been kept about the keshig, which was formed under the Ilkhans. In the system of keshig representatives of noble families of Georgia and Armenia also actively participated.

Key words – nomadic tribes, keshig, ilkhan, honorable hostages, ba'aturs, military capability, reliable ruling system.

ՊՈԼԻԱՐԽԻԱՆ ԵՎ ՆՈՐԱԶԱՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

ՌՈՒԽԿՅԱՆ Լ.Մ.*

Պոլիարխիան ժամանակակից հասարակության շրջանում կառավարման յուրօրինակ դրսևորում է, որը այլ քաղաքական կարգերից տարբերվում է երկու հիմնական բնութագրիչներով՝ ընդդիմության հանդեպ բարձր հանդուրժողականությամբ և կառավարության վարքագծի վրա ազդելու լայն հնարավորություններով՝ ներառյալ պաշտոնատար անձանց պաշտոնանկ անելը խաղաղ միջոցներով¹: Պոլիարխիայի տեսությունը իր աշխատություններում զարգացրել է Ռ. Դալը²:

Իշխանության բաշխման վերաբերյալ նրա փորձարարական հետազոտությունները և ժողովրդավարությանն ու բազմակարծությանն առնչվող տեսական հայեցակարգերը նշանակալի ազդեցություն են թողել քաղաքական գիտության վրա:

Համընդհանուր հետաքրքրություն առաջացրեց հատկապես 1950-ական թթ. Ռ. Դալի մշակած պոլիարխիայի հայեցակարգը, որը տարբերվում է ժողովրդավարության իդեալից, սակայն դրանով քաղաքացիներին ընձեռվում է քաղաքական մասնակցության, իսկ խմբերին և առաջնորդներին՝ իշխանության համար ազատ մրցակցության հնարավորություն³:

Պոլիարխիան (հունարեն πολυαρχία՝ «բազմիշխանություն») քաղաքական համակարգ է, որը հիմնված է տարատեսակ խմբերի քաղաքական մրցակցության վրա⁴: Ժողովրդավարության ժամանակակից տեսություն-

* Հայ-ռուսական համալսարան, Քաղաքագիտության ամբիոնի ասպիրանտ, levonrukhyan@gmail.com, հոդվածի ընդունման օրը՝ 17.10.2018, տպագրության է երաշխավորել քաղ. գիտ. թեկնածու Վ. Դավթյանը, գիտական ղեկավար՝ քաղ. դոկտոր Ա. Ենգոյան:

¹ Democracy in developing Countries: Asia (Ed. by L Diamond et all) London, 1987, Democratization, Ch. 8-14.

² **Даль Р.А.** Полиархия: участие и оппозиция, М., 1971, **նույնի՝** Демократия, свобода и равенство, М., 1986.

³ **Даль Р.** Предпосылки возникновения и утверждения полиархий (Полис, 2002, № 6, с. 256).

⁴ **Даль Р.А.** Полиархия: участие и оппозиция, М., 2010, с. 38.

ների համաձայն՝ պոլիարխիան համակարգ է, որը ներառում է ներքոշա-
րադրյալ յոթ ինստիտուտները՝

- **Պետական ընտրական պաշտոններ.** ժամանակակից ժողովրդա-
վարությունը ներկայացուցչական է, այսինքն՝ հիմնական օրենքին համա-
պատասխան, նորմատիվ ակտերի ընդունման և քաղաքական որոշումնե-
րի կայացման հարցում վերահսկողություն են իրականացնում քաղաքացի-
ների կողմից ընտրված անձինք:

- **Ազատ, արդար և պարբերաբար անցկացվող ընտրություններ,**
որոնց մասնակցելու իրավունք ունի յուրաքանչյուր քաղաքացի (որպես
ընտրող, որպես թեկնածու) քաղաքացիների և նրանց միավորումների միջև
տեղի ունեցող քաղաքական բաց մրցակցության պայմաններում է⁵:

- **Կառավարության արձագանք.** իրականացվող քաղաքականութ-
յունը կախված է ընտրությունների արդյունքներից և ընտրողների նախա-
սիրություններից:

- **Արտահայտվելու ազատություն.** քաղաքացիներն իրավունք
ունեն անպատժելիության հիմքով արտահայտելու սեփական մտքերը, այդ
թվում՝ քննադատելու իշխանությանը, քաղաքական համակարգը, հասա-
րակական-տնտեսական կարգը և գերակշռող գաղափարախոսությունը:

- **Տեղեկատվության այլընտրանքային և անկախ աղբյուրների
հասանելիություն.** Քաղաքացիներն իրավունք ունեն փնտրելու և տեղեկա-
տվություն ստանալու այլ քաղաքացիներից, գրքերից, զանգվածային լրա-
տվության միջոցներից և այլն: Տեղեկատվության այլընտրանքային աղբ-
յուրները պետք է գոյություն ունենան, լինեն հասանելի և ենթակա չլինեն
քաղաքական որևէ այլ խմբի:

- **Հասարակական կազմակերպությունների ինքնավարություն.**
քաղաքացիներն իրավունք ունեն ձևավորելու հարաբերականորեն ան-
կախ միավորումներ կամ կազմակերպություններ, այդ թվում՝ քաղաքական:

- **Քաղաքացիության համընդհանրություն.** յուրաքանչյուր անձ, որը
մշտապես ապրում է երկրում և ենթարկվում է երկրի օրենքներին, պետք է
ունենա քաղաքացու բոլոր իրավունքները⁶:

⁵ **Ледяхов В.Г.** Кто правит? Дискуссия вокруг концепции власти Роберта Даля (Со-
циологический журнал, 2002, № 3, с. 31-68).

⁶ **Ситников А.** В ряду режимных демократий (Коммерсантъ, № 16 (№ 3347), 31.I.2006).

Պետք է նկատի առնել այն հանգամանքը, որ պոլիարխիայի վերո-
շարադրյալ յոթ հատկանիշներից ոչ բոլորն են հավասարաչափ դրսևոր-
վում ժամանակակից ժողովրդավարական պետություններում, և շատ
երկրներում դրան հասնելուն խոչընդոտում են էական դժվարություններ:

Պոլիարխիայի հիմնական առանձնահատկություններն են քաղաքա-
կան մրցակցության, քաղաքականությանը մասնակցելու իրավունքի ապա-
հովման և կոալիցիայի հիմքով կառավարման հնարավորությունները: Կա-
ռավարումն իրականացվում է հաշվի առնելով առանձին ինքնավար խմբե-
րի նախապատվությունները, որոնցից յուրաքանչյուրը, առանձին վերցրած,
համարվում է փոքրամասնություն: Այս խմբերի առաջ գալը պայմանավոր-
ված է նրանով, որ յուրաքանչյուր քաղաքացի պատկանում է մարդկանց
որոշակի շրջանակի, որոնք ունեն որոշակի շահեր՝ կապված իրենց առօր-
յա կյանքի հետ⁷: Այսօրինակ կառավարումը հակասում է բռնապետությա-
նը, երբ քաղաքական կուրսի ընտրության դեպքում գերակայում են մեկ
խմբի նախապատվությունները: Բացի այդ, պոլիարխիայի պարագայում
իշխանությունը սովորաբար բաժանված է միմյանցից տարբերվող, երբեմն
նաև պետությունից անկախ հասարակական խոշոր կառուցվածքների
միջև: Իշխանության նման բաշխումը բնութագրական չէ բռնատիրությա-
նը, չնայած իշխանության կենտրոնացումը պետությունից անկախ կազմա-
կերպությունների ձեռքում չի համընկնում նաև ժողովրդավարության իդեա-
լի հետ: Կարևոր նշանակություն ունի մրցակցող վերնախավի պահանջ-
մունքը՝ ձեռք բերել բնակչության լայն շերտերի աջակցությունը⁸: Դալի
կարծիքով, դա նպաստում է ազգային ինքնիշխանության և քաղաքական
հավասարության աճին, որը հակասում է օլիգարխիային, չնայած գործնա-
կանում բնակչության զգալի զանգվածները պասիվություն են դրսևորում ո-
րոշումների ընդունման հարցում⁹:

Հայաստանյանում ևս միտում կա հասնելու պոլիարխիայի համընդ-
հանուր «տիրապետությանը»: Պոլիարխիայի հաստատման հնարավորու-
թյուն ստեղծվեց «թավշյա հեղափոխությամբ», ինչը հայաստանյան իրո-

⁷ **Ильин М.В.** Сравнительная политология. Научная компаративистика в системе по-
литического знания (Полис, 2001, № 4, с. 162-165).

⁸ **Krouse R.W.** Polyarchy & Participation: The Changing Democratic Theory of Robert
Dahl (англ.), 1982, Р. 441.

⁹ Политология: словарь-справочник, под редакцией М.А. Василик, М.С. Вершинина
и др., М., 2001, с. 328.

դությունների արդի փուլում միանշանակորեն չի ընդունվում: Պոլիարխայի հիմնադրույթների հաստատումը վերածվում է «միֆի», երբ առաջ է գալիս տեղի ունեցածը «հեղափոխություն» է, թե՞ իշխանափոխություն» որակելու հարցը:

«Հեղափոխություն» հասկացությունը ծագել է ուշ շրջանի լատիներեն revolutio բառից և նշանակում է շրջադարձ, խոր, արմատական-որակա-կան փոփոխություն, ինչը ենթադրում է հասարակության թոփքաձև զարգացում՝ նախորդ կենսապայմանների հետ համեմատած¹⁰: Ընդգծենք, որ նախկինում տեղի ունեցած հեղափոխությունների մեծ մասին ներհատուկ էին բիրտ վարվելաձևը, արյունահեղությունները և բռնությունները: Վերո-նշյալ հարցադրման առաջացումը միանգամայն արդարացված է, քանի որ՝

- հեղափոխության «թավշյա» կամ ոչ բռնի լինելը հակասում է հեղափոխության վերաբերյալ գործող գրեթե բոլոր տեսություններին և հասարակության լայն շերտերի պատկերացումներին¹¹,

- իշխանափոխությունը՝ որպես քաղաքական գործընթաց, ենթադրում է իշխանությունը «անցնցում» հանձնելու, լայնախոհության և պետականամետության դրսևորում, իսկ հեղափոխությունը՝ մարդու իրավունքների ոտնահարման, օրենքը ըստ նպատակահարմարության գործադրելու, անարդարությունների, կամայականությունների, կոռուպցիոն սխեմաների վերացման նպատակով ստեղծված իրողություն:

Մեր երկրում տեղի ունեցած «թավշյա հեղափոխությունը» պետք է միտվի դեպի պոլիարխիայի երկրներին բնութագրական հետևյալ գծերը՝

- կենսամակարդակի ցուցանիշների համեմատաբար բարձր մակարդակը և երկարատև ժամանակահատվածում այս ցուցանիշների աճը,

- գրագիտության լայն տարածումը,

- մասնագիտական գործունեության ոլորտների բազմաքանակությունը,

- արտադրության բնագավառում ձեռնարկությունների ինքնավարությունը, որոնք հստակորեն կենտրոնացած են ազգային և միջազգային շուկաներում:

Այս գծերը խոչընդոտում են իշխանության կենտրոնացմանը մեկ խմբի ձեռքում:

¹⁰ Политология: учеб. пособие /под ред. А.С. Тургаева, А.Е. Хренова, СПб., 2005, с. 164.

¹¹ **Доган М., Пеласси Д.** Сравнительная политическая социология. How to Compare Nations, М., 1994, с. 134-147.

Ելակետ ընդունելով Ռ. Դալի մշակած պոլիարխիայի տեսությունը¹², գտնում ենք, որ գործառնության մեջ պետք է դրվի երկու չափանիշ՝

- ժողովրդավարական ընտրությունների ճանապարհով մրցունակ կառավարող ընտրախավի հավաքագրում և առաջնորդի կայացում,
- ներկայացուցչական ժողովրդավարության սկզբունքների վրա հիմնված՝ բնակչության լայն զանգվածների մասնակցություն քաղաքական որոշումների ընդունման գործընթացին:

Տեղի ունեցած իրադարձությունից հետո կայացան ժողովրդավարական ընտրություններ, սակայն չենք կարող ասել, թե արդյունքը մրցունակ կառավարող ընտրախավի հավաքագրումը և առաջնորդի կայացումն էր: «Մրցունակ կառավարող վերնախավի հավաքագրում և առաջնորդի կայացում» ասելով՝ նկատի ենք ունենում այն, որ նոր հավաքագրված վերնախավը ոչ միայն պիտի պատասխանատվություն կրի իր իրականացրած քաղաքականության համար, այլև պատրաստ լինի երկրորդ սերնդի «նոր ժողովրդավար» բարեփոխիչ առաջնորդի հաղթանակն ապահովելու ընտրություններում: Միայն այս «եթե»-ները նկատի առնելով՝ ՀՀ-ում ժողովրդավարական ընտրությունների միջոցով հավաքագրված վերնախավի և առաջնորդի կողմից նոր սերնդի բարեփոխումները կիրականացվեն՝ զուգամիտելով ազգային և հանրային շահերը: Միաժամանակ, պետք է հաշվի առնել, որ այս գործընթացը ենթադրում է նաև քաղաքականապես չեզոք բյուրոկրատիայի սկզբունքի առկայություն, որը ՀՀ-ում նպատակահարմար է իրականացնել ժողովրդավարացվող քաղաքական համակարգի հետևյալ գործառնություններով.

- վարչական ապարատի վերապատրաստում և նորարարական գիտելիքների յուրացում,
- կառավարման ապարատի իրավունքներն ու պարտականությունները կարգավորող կանոնների և ընթացակարգի մանրամասն մշակված օրենսդրական համակարգի ստեղծում,
- ապակենտրոնացման միջոցով ինքնակառավարման ինստիտուտների արդյունավետության ապահովում՝ համայնքների, անհատների և կազմակերպությունների մակարդակով,

¹² **Даль Р.А.** Демократия и ее критики (Российская политическая энциклопедия (РОССПЭН), М., 2003, с. 78).

- տարաբնույթ արժեքների և շահերի համակարգ ունեցող սոցիալական խմբերի միջև հասարակական-քաղաքական երկխոսության և համագործակցության մշակույթի հաստատում,

- քաղաքական վերնախավի, առաջնորդության և բյուրոկրատիայի ինստիտուտների գործառույթների հստակեցման նկատառումներով օրենսդրական դաշտի շարունակական բարեփոխումների իրականացում:

Այդ գործընթացներն էլ հնարավորություն կտան ոչ միայն բյուրոկրատիային «ազատագրելու» քաղաքական վերահսկողությունից, այլև քաղաքական համակարգը ձերբազատելու ոչ ժողովրդավարական ընտրությունների միջոցով հավաքագրված կառավարող խավից՝ բարձրացնելով ՀՀ քաղաքացիների քաղաքական գիտակցությունը: Ելակետ ունենալով ՀՀ նախագահական և խորհրդարանական ընտրությունների փորձը՝ կարող ենք եզրակացնել, որ ՀՀ-ում անհատի գիտակցությունը կողմնորոշված է դեպի մարզինալ ավանդական արժեքները: Թեև անհատը մասնակցում է քաղաքական կյանքին, սակայն այդ մասնակցությունը չի համարվում նրա կողմից քաղաքական նպատակի ակտիվ ընտրության հետևանք և, ըստ էության, ներկայանում է որպես քաղաքականից դուրս գործունեություն՝ թելադրված վախի, շահի և այլ գործոններով:

Սոցիալական գործընկերության մոդելները, որոնք ձևավորվել են զարգացած երկրներում, տարբեր են: Ռուսաստանում, Դանիայում, Հոլանդիայում, Նորվեգիայում, Ֆինլանդիայում, Շվեդիայում տարածում ստացած մոդելն ընդունված է անվանել տրիպարտիզմ¹³: Դրա առանձնահատկությունն այն է, որ պետությունն այս համակարգում իր վրա է վերցնում սոցիալական գործընկերության սուբյեկտի դերը աշխատանքի վճարման և պայմանների կարգավորման, բնակչության զբաղվածության, սոցիալական պաշտպանության հարցերում¹⁴: Մենք առաջարկում ենք տրիպարտիզմը սահմանել որպես աշխատանքի, բիզնեսի, պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների ինստիտուցիոնալացված փոխգործակցություն հասարակական-աշխատանքային հարաբերությ-

¹³ Хантингтон С. Политический порядок в меняющихся обществах, М., 2004, с. 57.

¹⁴ Dyuric D. "Social Dialogue, Tripartism and Social Partnership Development in the South East European Countries, Including Recommendations for Serbia and Montenegro", International Policy Fellowship Program 2002/2003, pp. 23-24.

յունների կարգավորման հարցերով՝ սոցիալական առավելագույն արդյունավետության հասնելու նպատակով:

Սոցիալական գործընկերության մեխանիզմը այն մեթոդների և գործիքների ամբողջությունն է, որոնց միջոցով ապահովվում է կողմերի գործընկերության հասնելը:

Ինչպես ցանկացած այլ մեխանիզմ, այն ևս ունի որոշակի գործիքներ, որոնց փոխգործակցումը հանգեցնում է ընդհանուր գործառույթի իրականացմանը: Սոցիալական գործընկերության կարևորագույն տարրերից են՝

- սոցիալական գործընկերության ինստիտուտի, այդ թվում՝ արհմիությունների, աշխատակիցների միավորումների, ձեռնարկատերերի և պետական կառույցների ներկայացուցիչների միջև մշտապես գործող բանակցային գործընթացը,

- սոցիալ-աշխատանքային հարաբերությունների կարգավորման գծով մշտապես աշխատող մարմինները (եռակողմ կոմիսիաներ),

- կողմերի շահերի և դիրքորոշումների համաձայնեցման սահմանումը և դրանց հետևելը,

- գործընկերային հարաբերությունների կարգավորումը օրենսդրության և նորմատիվ-իրավական ակտերին համապատասխան,

- կնքված պայմանագրերի և համաձայնագրերի վերահսկողության համակարգերը,

- գործընկերային հարաբերությունների փորձագետների աշխատանքը, որոնք վերլուծում են սոցիալական գործընկերության համակարգի իրավիճակը և զարգացման հեռանկարները,

- սոցիալական գործընկերության գաղափարները աշխատողների լայն շերտերին հասցնելը¹⁵:

«Տրիպարտիզմի» համակարգի առաջին սուբյեկտները արհմիություններն են, որոնք աշխատանքային հարաբերությունների առավել ճկուն տարրերն են, որոնցով պաշտպանվում են վարձու աշխատողների շահերը, կարգավորվում են աշխատանքային պայմանների և վարձատրության հետ կապված հարցերը. դրանք էլ՝ իրենց հերթին, նպաստում են աշխատուժի վերարտադրությանը: Արհմիությունների նպատակայնություն-

¹⁵ **Маргарян М.М., Меликян Р.С.** Аспекты информационной безопасности Армении на пороге новых вызовов регионального развития (на примере СНГ), СПб., 2010, с. 156.

նը դրսևորվում է նրանում, որ վերջիններս գործատուին թույլ չեն տալիս վարձատրությունը նվազագույն աշխատավարձից առավել ցածր իջեցնել: Դրա համար արհմիություններն օգտագործում են վարձու աշխատողների շահերի բավարարման տարբեր ձևեր և մեթոդներ:

Տրիպարտիզմի համակարգին պետության մասնակցությունը պետք է հիմնվի վերջիններիս կողմից իրականացվող սոցիալական քաղաքականության վրա՝ ելնելով հետևյալ սկզբունքներից.

- **հումանիզմի**, որն իրացվում է հաշվի առնելով ընդհանուր հասարակական արժեքների ճանաչումը և հարգանքը,

- **սոցիալական արդարության**, որն ապահովում է աշխատանքային գործունեության մասնակցությունը, համապատասխան աշխատավարձ ստանալու հավասարությունը, եկամուտների բաշխման չափազանց բևեռացման բացառումը, մարդկանց դրական ունակությունների առավելագույն օգտագործումը:

- **որոշումների մշակման ժողովրդական սկզբունքը** ենթադրում է սոցիալ-քաղաքական որոշումների ընդունման հարցում բնակչության ներգրավումը, հասարակական կարծիքի հաշվառումը,

- **հասցեականության սկզբունքը՝** սոցիալական ծառայությունների մատուցումը կոնկրետ անձանց (հասցեատերերի)¹⁶:

Որպես սոցիալական պետության ներսում սոցիալական գործընկերության իրացման ինստիտուտ՝ տրիպարտիզմը ներառում է երեք հիմնական սոցիալական ուժեր՝ կապիտալ (սեփականատերեր, ձեռնարկատերեր), աշխատանք (վարձու աշխատողներ) և սոցիալական պետություն (իշխանություն), որոնց փոխշահավետ փոխգործակցությունից կախված է հասարակության կայուն և հարաշարժ զարգացումը: Այսօրինակ տրիպարտիզմը ներկայացնում է աշխատանքային և, դրա հետ կապված, սոցիալ-տնտեսական հարաբերությունների կարգավորում՝ հասարակական-քաղաքական երկխոսության և սոցիալական ուժերի ու դրանց ասոցիացիաների (արհմիություններ, միավորումներ, միություններ և այլն) համագործակցության հիմքով:

Տրիպարտիզմի մեխանիզմը կարևորագույն շահերը դասակարգում է խմբերով, ինտեգրում է դրանք կառավարման գործընթացներին և ներա-

¹⁶ **Slopp H.** “Europe: A Political Profile: An American Companion to European Politics”, ABC – CLIO, LLC, USA, California, 2011, p. 59.

ռում իշխանության կառավարման որոշումների ընդունման մեխանիզմում: Կողմերի հավասար հասանելիությունը տրիպարտիական կառուցվածքների իշխանական-կառավարական ոլորտին նվազեցնում է սոցիալ-աշխատանքային հարաբերությունների կամավոր մասնակիցների միջև կոնֆլիկտների առաջացման հավանականությունը: Նրանց կողմից սոցիալական գործընկերության կարգավիճակում հավասար պատասխանատվության սկզբունքի պահպանումը կարող է ապահովել արտադրատնտեսական ոլորտի, սոցիալական հարաբերությունների և առհասարակ ողջ երկրի կայունություն և զարգացում¹⁷:

Տրիպարտիզմի մեխանիզմը նպաստում է սոցիալ-տնտեսական որոշակի խնդիրներին առնչվող համաձայնեցված որոշումների ընդունմանը, որոնք էլ հասարակության հիմնական սոցիալական ուժերի շահերը բավարարելու հնարավորություն են ընձեռում¹⁸: Ժողովրդավարական հասարակություններում հաճախ տարատեսակ «համաձայնեցման համաժողովների» շրջանակներում հավաքվում էին պետության, արհմիությունների, ձեռնարկատերերի ներկայացուցիչները և քննարկում սոցիալ-տնտեսական զարգացման հիմնահարցեր, այդ թվում՝ հարկային, ներդրումային, օրենսդրական, տարիֆային, դիֆերենցիալ վարձատրության, աշխատատեղերի, աշխատանքային պայմանների և այլն: Այս ամենը կատարվում էր ժողովրդավարական ճանապարհով, հանրության աչքի առաջ: Ապա գործադիր և օրենսդիր իշխանությունների փոխգործակցության համակարգի միջոցով կոլեկտիվ համաձայնությունները ներդրվում էին բյուջեում և օրենսդրությամբ ամրագրվում: Այս դրական հանգամանքը (նեոկորպորատիվիզմը) դարձավ պետության, կապիտալի և աշխատանքային շահերի գործառական ներկայացուցչության աղբյուր, որը հիմնված էր կողմերի ուղղակի կապերի վրա¹⁹:

Այսպիսով, սոցիալական կոնկրետ խնդիրների համաձայնեցված որոշումները նպաստում էին սոցիալ-տնտեսական քաղաքականության ընդհանուր նպատակների սահմանմանը, որոնք բավարարում էին հասարակության հիմնական սոցիալական ուժերի շահերը:

¹⁷ **Авдеенко О.А.** Экономика и социология труда, М., 2012, с. 204.

¹⁸ Политические системы современных государств: энциклопедический справочник, в 4 т. /Науч. ред.: Мельвиль А.Ю., отв. ред.: Миронюк М.Г., т. 1, М., 2009, с. 139.

¹⁹ **Бейбутова И.И.** Экономика труда, М., 2013, с. 162.

Սոցիալական գործընկերության կայացումը ուղեկցվում է դրական արդյունքներով՝ սոցիալ-տնտեսական գործընթացների կառավարման աճով, իշխանության կառավարման կառուցվածքների սոցիալական պատասխանատվության բարձրացմամբ, սեփականության և ընկերության գործերում վարձու աշխատողների մասնակցությամբ, միջին դասի ձևավորումով և կենսամակարդակի բարձրացմամբ, գործազրկության կրճատումով, քաղաքական անկայունության նվազեցմամբ:

ՊՈԼԻԱՐԽԻԱՆ ԵՎ ՆՈՐԱԶԱՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

ՌՈՒԽԿՅԱՆ Լ.Մ.

Ամփոփում

«Պոլիարխիա» եզրույթը բառացիորեն նշանակում է «մեծամասնության իշխանություն»: Սա կառավարման ձև է, որի ժամանակ իշխանությունը գտնվում է մեծ թվով մարդկանց ձեռքում և հակադրվում է միապետությանը, որը տեսության մեջ ուսումնասիրվում է որպես ժողովրդավարությունից տարբեր երևույթ, որի դեպքում քաղաքացիները հնարավորություն են ունենում մասնակցել քաղաքական գործընթացներին, իսկ առաջնորդները՝ ազատ մրցակցել իշխանության համար: Տրիպարտիզմի զարգացումը ՀՀ-ում թույլ կտա տրիպարտիական համաձայնության կողմերից յուրաքանչյուրին ունենալ իր շահերը՝ պետությանն ապահովելով սոցիալական կայունությամբ, ձեռնարկատերերին՝ շահույթով, վարձու աշխատողներին՝ կյանքի արժանապատիվ պայմաններով՝ բարձրացնելով գործարարների սոցիալական պատասխանատվությունը:

Բանալի բառեր՝ պոլիարխիա, տրիպարտիզմ, Ռոբերտ Դալ, ապակենտրոնացում, քաղաքական գիտակցություն, միապետություն, ժողովրդավարություն:

ПОЛИАРХИЯ И СОВРЕМЕННЫЕ ПРОЯВЛЕНИЯ

НЕОЛИБЕРАЛИЗМА

РУХКЯН Л.М.

Резюме

Термин "полиархия" буквально означает "власть большинства". Это форма правления, при которой власть находится в руках большинства людей и противостоит монархии. Последняя в теории рассматривается как нечто отличное от демократии, при которой граждане имеют возможность участвовать в политических процессах, а лидеры – свободно бороться за власть. Развитие трипартизма в Армении позволит каждой из сторон соглашения иметь свои интересы, государству – социальную стабильность, предпринимательству – прибыль, наемным работникам – достойные условия жизни и деловую ответственность.

Ключевые слова – полиархия, трипартизм, Роберт Даль, децентрализация, политическое сознание, монархия, демократия.

POLYARCHY AND MODERN MANIFESTATIONS OF NEOLIBERALISM

L. RUKHKYAN

Abstract

The term "polyarchy" literally means "the power of the majority." This is a form of government in which power is in the hands of the majority of people and opposes the monarchy, which in theory is viewed as something different from democracy, in which citizens have the opportunity to participate in political processes and leaders freely fight for power. The development of tripartism in Armenia will allow each of the parties to the agreement to have its own interests, for the state – social stability, for entrepreneurship – profits, for hired workers – decent living conditions and business responsibility.

Key words – polyarchy, tripartism, Robert Dahl, decentralization, political consciousness, monarchy, democracy.

ՍԻՐԻԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵՆ 1964-1985 ԹԹ.

ՀՈՎՍԵՓՅԱՆ Մ.Հ.*

Սիրիահայ համայնքը հայկական սփյուռքի ամենանշանակալից համայնքներից մեկն է, որ մշտապես աչքի է ընկել կազմակերպական դիմագծով, հայապահպանության առավել հղկված մեխանիզմներով, ինչպես նաև ներհամայնքային հարաբերությունների հստակությամբ:

1964 թ. Խորհրդային Հայաստանում ստեղծված Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն համայնքների հետ կապեր ձևավորելիս հաշվի էր առնում սիրիահայ համայնքի վերոհիշյալ առանձնահատկությունները:

1. ՍԻՐԻԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ՝ ԸՍՏ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐԻ (1960-1980-ԱԿԱՆ ԹԹ.)

Կոմիտեն հայկական համայնքներում իր գործունեությունն իրականացնելիս և համապատասխան աշխատանքային ծրագրեր կազմելիս հենվում էր Խորհրդային դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների տեղեկանքների կամ համայնքներ գործողված աշխատակիցների հաշվետվությունների վրա: Պահպանվել է 1964 թ. Հալեպի հայ համայնքի մասին ԽՍՀՄ գլխավոր հյուպատոսության տեղեկանքը, որը հալեպահայության պատմության կարևոր աղբյուր է: Տեղեկանքի համաձայն՝ 1959 թվականը հանգուցային էր հալեպահայ համայնքի համար: Այդ թվականի նախօրյակին քաղաքի հայության թվաքանակը շուրջ 70 հազար էր, իսկ դրանից հետո քաղաքական վայրիվերումների ու տնտե-

* ԵՊՀ սփյուռքագիտության ամբիոնի ասպիրանտ, melik13@mail.ru, հոդվածի ընդունման օրը՝ 03.11.2018, տպագրության է երաշխավորել ԵՊՀ սփյուռքագիտության ամբիոնի վարիչ, գիտական ղեկավար, պատմ. գիտ. դոկտոր Ա. Եղիազարյանը:

սական ճգնաժամի պայմաններում մեծ թվով հայեր հեռացել են Լիբանան, Լատինական Ամերիկա և ԱՄՆ¹: Դրա հետևանքով Կոմիտեի գործունեության սկզբում (1964 թ.) հալեպահայության թիվը շուրջ 55 հազար մարդ էր: Քաղաքի հայության մի մեծ հատված էլ հայրենադարձվելու խնդրանքով դիմել էր ԽՍՀՄ գլխավոր հյուպատոսություն:

Հալեպի հայերը արհեստավորներ էին, գործարարներ, կային նաև պետական պաշտոնյաներ: Այդ իսկ պատճառով նրանց 85 տոկոսն ապրում էր բարեկեցիկ կյանքով, ըստ որում՝ հայությունն ավելի բարձր կյանքի որակ ուներ, քան այլ խմբեր: Քաղաքի հայության 35-40 հազարը լուսավորչական էին, 6-8 հազարը՝ կաթոլիկ, իսկ մնացած 6 հազարը՝ բողոքական:

Տեղեկանքում մանրամասնորեն խոսվում էր հալեպահայ հասարակական-քաղաքական անցուդարձի մասին: Համայնքի հասարակական-քաղաքական կազմակերպությունները Կոմիտեն բաժանում էր երեք մասի՝

1. առաջադիմական (կոմունիստներ, Սոցիալ-դեմոկրատ հնչակյան ու Ռամկավար ազատական կուսակցությունների անդամներ),

2. հետադիմական (Հայ յեղափոխական դաշնակցության անդամներ),

3. չեզոք (որոնք համակրում են առաջադիմական ուղղությունը):

ՍԴՀԿ-ն և ՌԱԿ-ը Սիրիայում իշխող ԲԱԱՍ կուսակցության համագործակցության առաջարկը մերժել են՝ պատճառաբանելով, թե Սիրիայում իրենք մասնաճյուղեր չունեն, դրանք ցրվել են: Ինչ վերաբերում է ՀՅԴ-ին, ապա, տեղեկանքի համաձայն, այդ կուսակցությունը կորցրել էր իր կշիռը Սիրիայի իշխանության աչքում: Հալեպում ՌԱԿ-ի անդամների թիվը շուրջ 100 էր, բայց նրանք ազդեցություն ունեին Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) տեղական մասնաճյուղի վրա²: Վերջինս Սիրիայում ուներ 1000 անդամ, որից Հալեպում՝ 750: ՍԴՀԿ-ի անդամների թիվը գրեթե 100 էր, նրա ուղեկից կազմակերպություններից ՀՄՄ-ի կազմում 500 անդամ, «Նոր Սերունդ» մշակութային միության կազմում 200:

¹ Սիրիահայերի տեղաշարժերի մասին տե՛ս **Ղանալանյան Տ.**, Սփյուռքի ներքին տեղաշարժերը 1950-1980-ական թվականներին, Ե., 2016, էջ 132: Ի դեպ, 1970-ական թթ. վերջերին, կապված հայերի նկատմամբ սիրիական իշխանությունների վերաբերմունքի բարելավման հետ, սիրիահայերի արտագաղթը գրեթե դադարեց, և նույնիսկ որոշակի ներգաղթ էր նկատվում: Տե՛ս նույն տեղում, էջ 134:

² Սիրիայում ՀԲԸՄ-ն ընդհանուր առմամբ ուներ շուրջ 1450 անդամ, որոնք միավորված էին վեց մասնաճյուղերում: Տե՛ս «Գեղարդ» սուրիահայ տարեգիրք, գ. Ա, Հալեպ, 1975, էջ 481-482:

Հալեպում ամենաբազմամարդը ՀՅԴ-ի շարքերն էին. նրա անդամների թիվը 1000-ից ավելի էր: Համայնքում կային նաև մի քանի հայրենակցական միություններ (օր.³ Մարաշցիների հայրենակցական միությունը, տարոնցիների «Արծիվ» հայրենակցական միությունը և այլն), մշակութային կառույցներ, վարժարաններ, դպրոցներ և այլն³:

Շատ կարևոր փաստաթուղթ է Սիրիայում ԽՍՀՄ դեսպանության 1967 թ. տեղեկանքը սիրիահայ համայնքի մասին, քանի որ պարունակում է համայնքի վերաբերյալ էական մանրամասներ: Սիրիահայության թիվը շուրջ 110 հազար է, որից Դամասկոսում՝ 5, Հալեպում՝ 65, Լաթաքիայում և Քեսապում՝ 7 հազար, Հոմսում՝ 1000⁴, մնացյալը՝ Գամիշլիի շրջանում: Մեծ է հայերի դերը արհեստագործության և թեթև արդյունաբերության մեջ: Որոշ թվով հայեր Խորհրդային Հայաստան են տեղափոխվել 1964-1966 թթ.: Ուշագրավ է, որ այստեղ էապես փոփոխված էր ներկայացված սիրիահայության դավանանքային կազմի պատկերը՝ 75% հայ առաքելականներ, 10% բողոքականներ և 20% կաթոլիկներ:

Սիրիահայ համայնքի ղեկավար մարմինը Գավառական ժողովն է կամ թեմական խորհուրդը, որն ընտրվում է երկու տարով: Գավառական ժողով ունի թեմերից յուրաքանչյուրը: Դրանք համապատասխանաբար բաղկացած են 14 հոգուց, որից երկուսը հոգևորականներ են: Ժողովի նախագահը թեմի առաջնորդն է: Դամասկոսի թեմի գավառական ժողովում մեծամասնություն են «առաջադիմականները», իսկ Հալեպի թեմի գավառական ժողովում՝ ՀՅԴ-ի ներկայացուցիչները, որոնք Դամասկոսի թեմում ազդեցություն տարածելու հնարավորություն չունեն:

ՀՅԴ-ն համայնքի ամենախոշոր կազմակերպությունն է՝ 1000-ից ավելի անդամներ, մեծաթիվ համակիրներ և երիտասարդական միություն (Սիրիահայ երիտասարդական միություն), որտեղ կուսակցական կադրեր են պատրաստվում: Ինչպես և մյուս կուսակցությունները, ՀՅԴ-ն էլ պաշտոնապես չի գործում Սիրիայում, բայց իր գործունեությունն իրականացնում է տարբեր միությունների միջոցով: Կուսակցության հովանու ներքո է մի քանի ուսումնական հաստատություն (Հայկազյան, Զավարյան, Կարեն-Եփփե և այլն):

³ Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆոնդ 326, ց. 1, գ. 360, թ. 7-8:

⁴ Հայտնի է, որ Հոմսից 1960-ական թթ. հայեր են մեկնել Հունաստան: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 4, գ. 24, թ. 10:

ՍԴՀԿ-ի անդամների ու համակիրների թիվն սկսել էր աճել: Կուսակցությունն իր գործունեությունն իրականացնում էր միությունների միջոցով (ՀՄՄ, Նոր սերունդ և այլն): Նրա հովանավորությամբ գործում էին «Կիլիկյան», «Վարդանյան» և այլ ուսումնական հաստատություններ: ՍԴՀԿ-ի առաջարկությամբ սիրիահայ «առաջադիմական» կազմակերպությունները 1966 թ. հիմնել են «Սիրիահայ առաջադիմական ճակատ»՝ «հետադիմականների» ու ՀՅԴ-ի դեմ պայքարելու նպատակով: 1967 թ. այդ ճակատը փորձում էր իր անդամներին անցկացնել Հալեպի գավառական ժողովի կազմի մեջ:

ՌԱԿ-ը թվակազմով երրորդ կուսակցությունն էր սիրիահայ համայնքում: Նրա ազդեցության ներքո էր Սիրիայի ՀԲԸՄ-ի մասնաճյուղը: ՀԲԸՄ-ն իր կառույցում միավորում էր ավելի քան 1500 հոգի: Միության կազմում գործում էին մի շարք հանձնաժողովներ (կանանց, երիտասարդական, մարզական, մշակութային): Հայտնի է ՀԲԸՄ-ի հովանավորությունը վայելող Հայ երիտասարդաց ընկերակցությունը: ՀԲԸՄ-ի աջակցությամբ գործում էին «Լազար Նաճարյան» և «Արամեան» վարժարանները Հալեպում ու «Սահակյան» վարժարանը Դամասկոսում, նաև հայկական ծերանոցը: Համայնքում հայտնի էր նաև մի քանի հայրենակցական միություն, կարևորներից էին «Վասպուրականը» և մարաշցիների «Վերածնունդը»:

«Առաջադիմական» հոսանքի ներկայացուցիչ էր նաև «Ազգային մշակութային միությունը» (ստեղծվել է 1955 թ.):

Սիրիայում գործում էր շուրջ 60 հայկական վարժարան (նախակրթարաններով ու մանկապարտեզներով հանդերձ)՝ 15 հազար աշակերտներով:

Հայ կաթոլիկ համայնքը բաղկացած էր 500 ընտանիքից⁵, ավետարանականներն ավելի սակավաթիվ էին: Սակայն երկուսն էլ ունեին իրենց ուսումնական հաստատությունները⁶:

Դամասկոսի հայ համայնքի մասին ԽՍՀՄ-ի դեսպանության 1967թ. տեղեկանքում նշվում էր, թե քաղաքում բնակվում էր շուրջ 6 000 հայ: Հայության կյանքը ղեկավարում էր թեմական խորհուրդը, որը չի ճանաչում

⁵ Թիվը հավանաբար սխալ է, քանի որ գրեթե համաժամանակյա (1970 թ.) մեկ այլ տեղեկանքում միայն Հալեպի հայ կաթոլիկների թիվը նշված է 6000 մարդ: Տե՛ս g. 1, գ. 470, թ. 4:

⁶ Տե՛ս նույն տեղում, ֆ. 326, ց. 1, գ. 414, թ. 1-10: Հրատարակվել է «Սփիռքահայ քաղաքական հոսանքներն ու գաղութները խորհրդային գաղտնի փաստաթուղթերու մէջ (1945-1991, ընտրանի)» ժողովածուում (կազմ.՝ Գ. Եազըճեան, Ե., 2016, էջ 220-230):

Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը: Այդ պահին պայքար էր գնում թեմի նոր առաջնորդի թեկնածության շուրջ: «Առաջադիմականները» պայքարում էին, որ նոր առաջնորդ դառնա նախորդի գիծը շարունակող մեկը, իսկ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը և դաշնակցականները ձգտում էին, որ նոր առաջնորդ ընտրվի Կիլիկիո կաթողիկոսությանը հարող անձ: Տեղեկանքում խոսվում էր այն մասին, որ այդ ժամանակ Հալեպում «առաջադիմականները» պայքարում էին ազգային բոլոր հիմնարկներից դաշնակցականներին հեռացնելու ուղղությամբ⁷:

Հալեպի հայ համայնքի վերաբերյալ ԽՍՀՄ-ի գլխավոր հյուպատոսության արդեն 1968 թ. տեղեկանքում նշվում էր, որ 1964-1966 թթ. Հալեպից Խորհրդային Հայաստան է ներգաղթել 2.5 000 հայ: Հնչակյանների թիվը շուրջ 200 է, նրանք ունեն 400-500 համակիր, ռամկավարներինը՝ շուրջ 120⁸:

ԽՍՀՄ գլխավոր հյուպատոսությունը 1970 թ. ներկայացրել է հալեպահայության վերաբերյալ հերթական տեղեկանքը: Երկու տեղեկանքների համադրությունը հնարավորություն է տալիս հայտնաբերելու Կոմիտեի և հալեպահայ կազմակերպությունների ու անհատների հետ հարաբերությունների որոշ խնդիրներ: Ըստ 1970 թ. Կոմիտեի մի տեղեկանքի՝ հալեպահայության թիվը 35-40 000 էր, քանի որ 1964-1965 թթ. շատերը քել էին երկիրը: Սիրիահայերն ավելի շատ մեկնել էին Արևմուտքի երկրներ, քան ներգաղթել Խորհրդային Հայաստան⁹: Սիրիահայության շրջանում հայրենադարձություն կազմակերպելը համարվում էր ոչ նպատակահարմար, քանի որ Սիրիայի իշխանությունները խոչընդոտում էին դրան, իսկ ՀՅԴ-ն՝ հակաքարոզում, ուստի արդյունքները բավարար լինել չէին կարող: Չնայած դրան, հայրենադարձել ցանկացողների թիվն աճել էր այն բանից հետո, երբ Սիրիայի իշխանությունները դպրոցներում հայոց լեզու և գրականություն դասավանդելու վրա արգելք էին դրել¹⁰:

⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 414, թ. 11-12:

⁸ Տե՛ս նույն տեղում, գ. 441, թ. 1-4:

⁹ Հազարավոր սիրիահայեր հաստատվել էին Լիբանանում: Տե՛ս Ազդակ, 25 մարտի, 1970, էջ 3: Տե՛ս **Ղանալանյան Տ.**, նշվ. աշխ., էջ 90:

¹⁰ 1963 թ. Սիրիայում ԲԱԱՍ կուսակցության իշխանության հասնելուց հետո, 1965 թ. սկիզբ առած արաբականացման քաղաքականության հետևանքով բոլոր դպրոցները, այդ թվում՝ հայկական, ստացան արաբական անվանումներ ու անցան պետության ենթակայության տակ: Տե՛ս **Հարությունյան Ն.**, Լիբանանի և Սիրիայի հայկական դպրոցները, Ե., 2002, էջ 208: Տե՛ս **Փաշայան Ա., Հարությունյան Լ.**, Սիրիայի հայ

Համայնքը բաժանված էր 2 մասի՝ «առաջադիմական» և «ռեակցիոն»: Հայկական համայնքի հասարակական կյանքը կազմակերպում էր Սիրիայի կողմից պաշտոնապես ընդունված Ազգային գավառական ժողովը, որի անդամների մեծ մասը դաշնակցականներ կամ նրանց համակիրներն էին (ժողովի 35 անդամներից միայն 5-ն էր «առաջադիմական»): 1966 թ. ստեղծվել էր «առաջադիմական» հայերի՝ «Սիրիայի արաբական հանրապետության առաջադիմական ճակատը»: Կոմիտեն կարծում էր, որ հարկ է օգնել «Առաջադիմական ճակատին»՝ ԽՍՀՄ գլխավոր հյուպատոսության միջոցով¹¹:

Չնայած 1970 թ. Սիրիայում Հաֆեզ ալ-Ասադի իշխանության գալուց հետո հայ համայնքի համար հաստատված համեմատաբար բարվոք պայմանների, երբ հայկական կազմակերպությունները գործունեության լայն հնարավորություններ ստացան¹², 1973 թ. ԽՍՀՄ-ի Հալեպի գլխավոր հյուպատոսությունը հայտնում էր, որ վերջին տարիներին սիրիահայության մեծ զանգվածներ տեղափոխվում են Լիբանան, Քուվեյթ, Կանադա, ԱՄՆ, Ավստրալիա¹³: Ընդ որում, Խորհրդային Հայաստան ներգաղթածների թիվն այնքան էլ մեծ չէր, եթե այն համեմատում ենք այլ պետություններ մեկնածների հետ: Ներգաղթելու համար գլխավոր հյուպատոսություն դիմածների մեծ մասը երկրի հյուսիսարևելյան հատվածից են (կենտրոնը՝ Գամիշլի): Համայնքի ազգային հաստատությունները ՀՅԴ-ի ազդեցության

համայնքը. արդի հիմնախնդիրներ, Ե., 2011, էջ 21: Հաֆեզ ալ-Ասադի կառավարման տարիներին իրավիճակը մասամբ կարգավորվեց, սակայն որոշակի սահմանափակումներ պահպանվեցին: Տե՛ս նույն տեղում, էջ 30:

¹¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 4, գ. 34, թ. 1-6:

¹² Տե՛ս **Փաշայան Ա., Հարությունյան Լ.**, նշվ. աշխ., էջ 12:

¹³ 1960-ական թթ. երկրորդ կեսին սիրիահայերը սկսում են հեռանալ տարբեր երկրներ: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 3, գ. 7, թ. 1, **Санджян А.** Армянские общины в условиях гражданской войны (сравнение Ливана и Сирии), “Диаспоры” независимый научный журнал, 2015, N 1-2, էջ 87 և այլն: Օրինակ՝ 1966-1969 թթ. Ֆրանսիայի Վալանս քաղաք է տեղափոխվել սիրիահայ 100 ընտանիք: Տե՛ս **Մկրտչյան Ն.**, Վալանսի հայ համայնքը, Լրաբեր հասարակական գիտությունների (թ. 2, էջ 112 1991): Պետք է նշել, որ կարճ ժամանակ անց՝ 1975-1976 թթ., Լիբանանի ներքաղաքական իրավիճակի լարման հետևանքով 20-25 000 լիբանանահայ հեռացավ Սիրիա: Տե՛ս **Վարդանյան Գ.**, Հայ համայնքը Լիբանանում երկրորդ քաղաքացիական պատերազմի տարիներին (1975-1990 թթ.) և հայության արտագաղթը, «1946-1948 թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրն այսօր» համահայկական գիտա-ժողովի զեկուցումների ժողովածու, Ե., 2009 էջ 365: Նույնը տեղի ունեցավ նաև 1978 թ., երբ Սիրիա տեղափոխվեց շուրջ 8 000 լիբանանահայ: Տե՛ս նույն տեղում, էջ 368:

ներքո էին: Տեղեկանքի հեղինակներին հատկապես անհանգստացնում էր այն, որ սիրիահայ համայնքում իրենց հիմնական գործընկեր ՍԴՀԿ-ն սկսել էր ՀՅԴ-ին մերձենալու գործընթաց՝ նպատակ ունենալով վերջինիս աջակցությամբ պատգամավորական տեղեր ստանալ¹⁴:

Արդեն 1981 թ. ԽՍՀՄ ԱԳՆ-ի տեղեկանքը Սիրիայի հայ համայնքի մասին հաղորդում էր, որ սիրիահայության ընդհանուր թիվը 80 000 էր, որից 55 000-ը՝ Հալեպում, 5 000-ը՝ Դամասկոսում, մնացածը՝ Հոմսում, Լաթաքիայում, Գամիշլիում և Քեսապում: Համայնքը պահպանել էր իր դիրքերը արհեստագործության մեջ, ինչպես նաև դերը երկրի տնտեսական կյանքում: Համայնքի դավանանքային կազմը բաշխված էր հետևյալ կերպ՝ 70% առաքելականներ, 20% կաթոլիկներ և 10% բողոքականներ: Ինչպես և նախկինում, ԽՍՀՄ-ի ներկայացուցիչները համայնքը քաղաքական առումով բաժանում էին «առաջադիմական» ու «հետադիմական» հատվածների: Չնայած «առաջադիմականների» ջանքերին՝ Հալեպի թեմական խորհրդում շարունակում էր պահպանվել ՀՅԴ-ի գերազանցությունը: Համայնքում անցած 15 տարիներին այլ էական փոփոխություններ տեղի չէին ունեցել¹⁵:

1. ԿՈՄԻՏԵՆ ԵՎ ՍԻՐԻԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Կապերի հաստատում: Կոմիտեի ամենակարևոր խնդիրը սիրիահայ համայնքի կազմակերպությունների ու անհատների հետ կապերի հաստատումն էր: Արդեն 1964 թ. վերջին Կոմիտեն սիրիահայ կազմակերպությունների ու անհատների հետ հաստատել էր նամակագրական կապեր¹⁶: Ի դեպ, նման գործընթացը միակողմանի չէր, սիրիահայ տարբեր կազմակերպություններ իրենք էին կապ հաստատում Կոմիտեի հետ՝ շնորհավորելով նրա ստեղծումը: Նման շնորհավորական նամակներ ստացվեցին Հալեպի Արիական կազմակերպություններից (ՀՄՄ, ՀԵԸ, «Վասպուրական»), «Մարաշ» հայրենակցական միությունից և մի շարք երիտասարդական

¹⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 529, թ. 1-10: Հրատարակվել է «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսում (թ. 1, էջ 122-128, 2009) և «Սփիուքահայ քաղաքական հոսանքներն ու գաղութները խորհրդային գաղտնի փաստաթուղթերու մէջ (1945-1991, ընտրանի)» ժողովածուում (էջ 277-285):

¹⁵ Տե՛ս նույն տեղում, ց. 4, գ. 92, թ. 2-5:

¹⁶ Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 116:

կազմակերպություններից: Ուշագրավ է, որ Կոմիտեի հետ հարաբերվելու համար ՀԲԸՄ-ի Դամասկոսի մասնաճյուղի ջանքերով ստեղծվել էր հատուկ «Մշակութային շրջանակ»¹⁷: Վերջինս 1965 թ. դիմեց Կոմիտե՝ մշակութային միջոցառումների անցկացման, գրադարանների ստեղծման, թատերախմբի ձևավորման և երիտասարդական ու պատանեկան խմբերի արշավների իրականացման հարցերում աջակցության խնդրանքով¹⁸:

Կոմիտեի գործունեությունն ըստ հարկի գնահատելու համար կարևոր են հատկապես նրա հաշվետվությունները: Օրինակ՝ 1969 թ. հաշվետվության մեջ թեև սկզբում ասվում էր, որ իրենց նպատակը գաղթօջախների հետ կապերի զարգացումն էր՝ այդ կապերն օգտագործել «միջազգային իմպերիալիզմի ազդեցության ոլորտի» երկրներում ապրող հայ ազգաբնակչությանը հասցնելու համար ճշմարտությունը Խորհրդային Միության և Խորհրդային Հայաստանի մասին, սակայն հիմնական աշխատանքներն ուղղված են եղել հայրենիք-սփյուռք հարաբերությունների զարգացմանը¹⁹: Ակնհայտ է, որ «վերևից» թելադրված նպատակները այս կամ այն չափով իրականացնելուց բացի, Կոմիտեն առավել միտված էր իր հիմնական նպատակին՝ հայրենիք-սփյուռք հարաբերությունների զարգացմանը: Կոմիտեի գծով՝ առաջին սիրիահայերը Խորհրդային Հայաստան այցելեցին 1965 թ., երբ Հայոց ցեղասպանության տարելիցին, ի թիվս այլ պետությունների հայ համայնքների ներկայացուցիչների, հրավիրվեցին նաև սիրիահայեր: Խորհրդահայ «զարթոնքի» հետ կապված՝ էականորեն աճեցին Կոմիտեի կապերը համայնքների և համայնքային կազմակերպությունների հետ: Խորհրդային Հայաստանի պիոներական ճամբարներում իր հանգիստն անցկացրեց նաև սիրիահայ 13 պատանի²⁰:

Կոմիտեի ստեղծման լուրն ստանալուն պես բազմաթիվ համայնքներից ստացվեցին օգնության խնդրանքներ: Քեսաբի հայ կաթոլիկ դպրոցը խնդրում էր երգարաններ և դասագրքեր, Լաթաքիայի ազգային երկսեռ

¹⁷ Տե՛ս նույն տեղում:

¹⁸ Տե՛ս նույն տեղում:

¹⁹ Տե՛ս նույն տեղում, ց. 4, գ. 17, թ. 23:

²⁰ Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 116, թ. 1-10:

վարժարանը՝ գրամեքենա, Հալեպի Մխիթարյան վարժարանը՝ դասագրքեր ու գեղարվեստական գրականություն և այլն²¹:

Փոխայցերը: Այդ առումով կարևորվում էր փոխայցերի իրականացումը, որ հնարավորություն էր տալիս հնարավորին չափ ճանաչելու իրար²²: Արդեն 1964 թ. Կոմիտեի խողովակով Թ. Ալթունյանի երգի ու պարի անսամբլի հետ Սիրիա մեկնեցին բանաստեղծ Հրաչյա Հովհաննիսյանը, պրոֆեսոր Ռուբեն Զարյանը, լրագրող Գուրգեն Առաքելյանը, որոնք հանդիպումներ ունեցան Դամասկոսում ու Հալեպում²³: 1966 թ. Կոմիտեն սիրիահայ համայնք գործուղեց ճանաչված հայագետներ Լ. Խաչիկյանին ու Ս. Արևշատյանին: Քանի որ Հալեպի թեմը հարում էր Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությանը, գիտնականների ընդունման հարցով զբաղվեց Դամասկոսի թեմի առաջնորդը: Նույն թվականին ԽՍՀՄ այցելեցին Հայ ավետարանական եկեղեցու ներկայացուցիչները²⁴:

1966 թ. Կոմիտեն շարունակաբար աջակցում էր նաև սիրիահայ այլ շրջանականների ներկայացուցիչների այցերին Խորհրդային Հայաստան²⁵:

Կոմիտեն մեծ կարևորություն էր տալիս «առաջադիմական» հայրենակցական միությունների հետ կապերին: Այսպես, 1969 թ. կազմակերպվել է հայրենակցական միությունների ներկայացուցիչների այցելություն Խորհրդային Հայաստան, որին մասնակցել են Սիրիայի «Մարաշ» հայրենակցական միության մի շարք մասնաճյուղերի ներկայացուցիչներ (բացի Հալեպի մասնաճյուղից)²⁶: 1965 թ. Կոմիտեի կազմակերպմամբ Խորհրդային Հայաստան են այցելել սիրիահայ կանանց և տղամարդկանց վոլեյբոլի թիմերը, ֆուտբոլի թիմը²⁷: 1967 թ. Հալեպի Ազգային մշակութային միութ-

²¹ Տե՛ս նույն տեղում, գ. 118: Տե՛ս **Եղիազարեան Ա.**, Սփիռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն եւ սիրիահայութիւնը, «Սուրիոյ հայերը» գիտաժողովի նիւթեր (24-27 մայիս 2015), Պէյրոս, 2018, էջ 364-365:

²² Տե՛ս նույն տեղում, թ. 36-54: Պետք է նշել, որ Կոմիտեի աշխատանքներն ընդհանուր առմամբ մանրամասնորեն ներկայացրել է Հ. Մելիքսեթյանը: Տե՛ս **Մելիքսեթյան Հ.**, Հայրենիք-սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980-ական թթ.), Ե., 1985, էջ 366-446:

²³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 1, գ. 37, թ. 72:

²⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 203:

²⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 586, թ. 2:

²⁶ Տե՛ս նույն տեղում, ց. 4, գ. 17, թ. 23:

²⁷ Տե՛ս նույն տեղում, գ. 5, թ. 1-13:

յունը բանվորների 5-հոգանոց պատվիրակություն էր ուղարկել Խորհրդային Հայաստան²⁸:

Հայաստանի խորհրդայնացման 50-ամյակի և Վ. Լենինի ծննդյան 100-ամյակի առիթով Կոմիտեն 1970 թվականը հռչակեց հրեյլանական տարի: Կոմիտեի 1970 թ. աշխատանքային ծրագրում թեև մեծ տեղ էր հատկացված գրականության առաքման, ուսուցիչների վերապատրաստման, պիոներական ճամբարներում երիտասարդների հանգստի կազմակերպման աշխատանքներին, բայցևայնպես նախատեսվում էր մտավորական և մշակութային խմբեր ուղարկել մի քանի երկրներ, նաև՝ Սիրիա: Սիրիահայ դպրոցներին աջակցելու նպատակով այնտեղ պետք է ուղարկվեր 5 ուսուցիչ²⁹: Այդ ժամանակ Կոմիտեն ակտիվացրել էր իր աշխատանքները երիտասարդության շրջանում: 1971 թ. տեղի ունեցավ Սփյուռքի երիտասարդական-առաջադիմական կազմակերպությունների ներկայացուցիչների հավաք-հանդիպումը, որին մասնակցում էին Հալեպի Ազգային մշակութային միության և ՍԴՀԿ «Նոր Սերունդ» մշակութային միության ներկայացուցիչները³⁰: Առհասարակ, Կոմիտեի միջոցով սիրիահայ համայնք են այցելել Գ. Սունդուկյանի անվան դրամատիկական թատրոնը, դասախոսներ, գրողներ, գիտնականներ, մարզական խմբեր, բժիշկներ և այլն³¹:

Խորհրդահայ խմբերի այցելություններով հետաքրքրված էին սիրիահայ համայնքի «առաջադիմական կազմակերպությունները»: 1974 թ. «Նոր Սերունդ» մշակութային միությունը շրջագայության նպատակով 15-20 հոգուց բաղկացած մտավորականների խումբ հրավիրեց³²: Թվերը փաստում են, որ Սիրիայի հայությունն առանձնապես ոգևորված չէր կոմունիստական գաղափարներ տարածող թերթ-ամսագրերով:

Սիրիահայ մշակութային կազմակերպությունները հատկապես ոգևորված էին Խորհրդային Հայաստանի արվեստագետների այցերով: 1974 թ. սիրիահայ մշակութային կազմակերպությունները նամակ են գրում անձամբ Արամ Խաչատրյանին՝ նրան հրավիրելով Հալեպ՝ տոներու նրա 70-ամյակը³³: Մյուս կողմից՝ 1974 թ. «Նոր սերունդ» մշակութային միություն-

²⁸ Տե՛ս նույն տեղում, ց. 4, գ. 9, թ. 18:

²⁹ Տե՛ս նույն տեղում, գ. 45:

³⁰ Տե՛ս Սովետական Հայաստան (1971, թ. 4, էջ 22-23, թ. 5, էջ 4):

³¹ Տե՛ս **Մելիքսեթյան Հ.**, նշվ. աշխ., էջ 420:

³² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 6, գ. 570:

³³ Տե՛ս նույն տեղում:

նը կոմիտեի միջոցով Սիրիա հրավիրեց Սունդուկյանի անվան թատերախումբը³⁴: Պատասխան նամակում Կոմիտեն տեղեկացնում էր, որ նման շրջագայություն իրականացնելը հնարավոր չէ³⁵: Միևնույն ժամանակ, մերժվեց նաև Հալեպի ազգային մշակութային միության խնդրանքը՝ գրամեքենա և կինոցուցադրման մեքենա առաքելու վերաբերյալ³⁶: Կոմիտեին գրում և արվեստագետներ է հրավիրում Սիրիա նաև ՌԱԿ «Թեքեյան» մշակութային միությունը³⁷: Ուշագրավ է, որ չնայած Կոմիտեի 1975 թ. հաշվետվության սկզբում գետեղված այն պնդմանը, թե սիրիահայության հետ էական աշխատանք է ծավալվել, հաշվետվության մեջ որևէ միջոցառման մասին չի խոսվում³⁸: Արդեն 1976 թ. հաշվետվության մեջ ասվում է, որ Մերձավոր Արևելքում տիրող ճգնաժամի հետևանքով փոխայցեր չեն իրականացվել³⁹: Նման իրավիճակում Կոմիտեի Արևելյան երկրների բաժինը 1978 թ. նախատեսում էր մայիսի 1-ի տոնակատարություններին մասնակցելու համար Սիրիայից պատվիրակություն հրավիրել Երևան. խորհրդահայ հաջողությունները քարոզելու նպատակով՝ գիտության, մշակույթի և արվեստի գործիչներ, սփյուռքահայ երիտասարդությանը Խորհրդային Հայաստանի շուրջ համախմբելու համար՝ երիտասարդական ու մարզական խմբեր սիրիահայ համայնքից, «առաջադիմական» ու «հայրենասիրական» կազմակերպությունների և կուսակցությունների ղեկավարների հետ անմիջական շփումների նպատակով՝ առաջադեմ գործիչների, հայրենակցական միությունների ղեկավարների, հեղինակավոր անհատ գործիչների, իրագործել ուսուցիչների վերապատրաստման ծրագիրը, ընդունել և առաքել զբոսաշրջային, մտավորական ու մշակութային խմբեր⁴⁰:

Կոմիտեի նախագահ Վ. Համազասպյանը 1980 թ. մեկնեց Մերձավոր Արևելք և մասնավորապես Սիրիա: Նա այնտեղ սփյուռքահայ համայնքների ներկայացուցիչների առաջին համահայկական հավաքը կազմակերպելու շրջանակներում հանդիպել է առաջադիմական կազմակեր-

³⁴ Տե՛ս նույն տեղում, ց. 8, գ. 129, թ. 68:

³⁵ Տե՛ս նույն տեղում, թ. 67:

³⁶ Տե՛ս նույն տեղում, թ. 65-66:

³⁷ Տե՛ս նույն տեղում, ց. 6, գ. 570:

³⁸ Տե՛ս ՀԱԱ, ց. 6, գ. 19, թ. 35: Տե՛ս **Եղիազարեան Ա.**, նշվ. աշխ., էջ 371:

³⁹ Տե՛ս նույն տեղում, գ. 33, թ. 16-19:

⁴⁰ Տե՛ս նույն տեղում, ց. 8, գ. 157, թ. 1-3:

պոլիտիկայի ղեկավարների և թերթերի տնօրենների հետ⁴¹: Դրա շնորհիվ 1980 թ. նոյեմբերի 24-27-ին Կոմիտեի նախաձեռնությամբ, «Վերածնված հայրենիքը և սփյուռքը, պայքար հանում խաղաղության և առաջադիմության» խորագրով, Երևանում տեղի ունեցավ սփյուռքահայ համայնքների ներկայացուցիչների առաջին համահայկական հավաքը («Հայրենիք-Սփյուռք համաժողով»)՝ որին մասնակցում էին բազմաթիվ ներկայացուցիչներ Սիրիայից («առաջադիմական» կազմակերպությունների ղեկավարներ, անհատ գործիչներ, մտավորականներ)⁴²:

1980-ական թթ. առաջին կեսին սիրիահայ համայնքին վերաբերող Կոմիտեի ծրագրերը շատ աղքատիկ էին: Օրինակ՝ Կոմիտեի 1982-1983 թթ. ծրագրով նախատեսվում էր սիրիահայ համայնքից 10 օրով հյուրընկալել 3 հոգուց բաղկացած պատվիրակություն, սիրիահայ համայնք առաքել հայոց լեզվի ուսուցիչ՝ դպրոցում մեկ տարի դասավանդելու նպատակով և այլն⁴³: 1984 թ. մայիսի 1-ի առիթով Սիրիայից Խորհրդային Հայաստան են եկել աշխատավորների 3 ներկայացուցիչներից կազմված պատվիրակությունը և Սիրիայի «Գրական շրջանակի» խումբը⁴⁴:

Գրականության և այլ առաքումներ: Կոմիտեի գլխավոր առաքելություններից մեկը սփյուռքահայ համայնքներին գրքեր (այբբենարաններ, զանազան դասագրքեր, գեղարվեստական գրականություն) առաքելն էր⁴⁵: 1966 թ. Դամասկոսի թեմի առաջնորդ Ս. Շավարշ եպ. Գյույումճյանի հասցեով այդ տարի ուղարկվեցին նաև զգալի քանակով գրքեր (դասագրքեր և գեղարվեստական գրականություն)⁴⁶: 1966 թ. ՍԴՀԿ-ի Սիրիայի կառույցը Կոմիտեից խնդրում էր դաշնամուր, տպագրական մեքենա (թերթ հրատարակելու համար) և այլն⁴⁷: Կոմիտեն տրամադրեց տպագրական մեքենան, քանի որ «առաջադիմական» թերթի հրատարակությունը առավել կհամախմբեր համապատասխան ճակատը⁴⁸:

⁴¹ Տե՛ս նույն տեղում, գ. 40, թ. 15:

⁴² Տե՛ս նույն տեղում, գ. 9, գ. 40, թ. 1-2: Տե՛ս նաև Սովետական Հայաստան (1980, թ. 12, էջ 7-34):

⁴³ Սիրիահայ մասնակիցների ցուցակը, տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, գ. 9, գ. 38, թ. 77:

⁴⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 14, գ. 21, թ. 7:

⁴⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 16, գ. 6, թ. 2-4:

⁴⁶ Տե՛ս նույն տեղում, գ. 1, գ. 586, թ. 36-54:

⁴⁷ Տե՛ս նույն տեղում, գ. 203:

⁴⁸ Տե՛ս նույն տեղում, գ. 206, թ. 41:

⁴⁹ Տե՛ս նույն տեղում, թ. 42-45:

1968 թ. Կոմիտեն սիրիահայ «առաջադիմական» կազմակերպություններին է ուղարկում իր պաշտոնաթերթը՝ «Հայրենիքի ծայն» շաբաթաթերթը, և «Սովետական Հայաստան» ամսագիրը: Ուշագրավ է, որ արխիվի պահանջագրերից պարզվում է, թե որքան պահանջարկ ունեին խորհրդահայ թերթերը և այլ պարբերականները սիրիահայ համայնքում: 1974 թ. «Նոր սերունդ» մշակութային միությունը խնդրել է առաքել պարբերականներ («Հայրենիքի ծայն»՝ 200, «Սովետական Հայաստան»՝ 25, «Սովետական գրականություն»՝ 5, «Պիոներ կանչ»՝ 10, «Գարուն»՝ 10, «Պիոներ»՝ 10, «Ոգնի»՝ 10, «Սովետական մանկավարժ»՝ 5, «Պատմա-բանասիրական հանդես»՝ 5, «Ծիծեռնակ»՝ 10 հատ)⁵⁰: Կոմիտեն այդ շրջանում մտահոգված էր արևմտահայերենով մանկական և պատանեկան գրականության հրատարակության և համայնքներ առաքելու հարցով, որը, ճիշտ է, այդ և հետագա տարիներին չլուծվեց, սակայն նրա ներկայացուցիչները անընդհատ թարմացնում էին խնդիրը⁵¹:

Կոմիտեն չէր բավարարվում միայն վերոհիշյալ առաքումներով: Կոմիտեի միջնորդությամբ Հալեպի Թարգմանչաց և Կիլիկյան վարժարանները Կոմիտեի կողմից օժտվել են բնագիտական լաբորատորիաներով⁵²:

Ներգաղթ: Կոմիտեի գործունեության հենց առաջին տարում՝ 1964 թ., Սիրիայից ներգաղթեց 187 ընտանիք (836 մարդ)⁵³: 1965 թ. ներգաղթող սիրիահայերի թիվն էլ ավելի մեծացավ (463 ընտանիք (2468 մարդ)): Ի դեպ, դա հայրենադարձության եզակի զանգվածային դեպքերից էր այդ տարի⁵⁴: 1965 թ. ներգաղթածների մի մասը Գամիշլիից էին⁵⁵: 1966 թ. ներգաղթողների թվով սիրիահայությունն առաջատարն էր՝ 191 ընտանիք (1311 մարդ)⁵⁶: Ի դեպ, հաճախ ներգաղթի խնդիրներում Կոմիտեն հանդես էր գալիս միջնորդի դերում: Այսպես, նույն 1966 թ. Սիրիայի Տիրեք գյուղաքաղաքի 60 հայեր դիմեցին Կոմիտեին ներգաղթի հարցում աջակցելու խնդրանքով⁵⁷: Բայց 1967 թ. Սիրիայից ներգաղթ տեղի չունեցավ⁵⁸ «6-օր-

⁵⁰ Տե՛ս նույն տեղում, ց. 6, գ. 570:

⁵¹ Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 592, թ.12:

⁵² Տե՛ս **Մելիքսեթյան Հ.**, նշվ. աշխ., էջ 393-394:

⁵³ Տե՛ս նույն տեղում, էջ 270:

⁵⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 271-272:

⁵⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 292:

⁵⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 277:

⁵⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 1, գ. 592, թ. 60:

⁵⁸ Տե՛ս **Մելիքսեթյան Հ.**, նշվ. աշխ., էջ 278:

յա պատերազմի» պատճառով: Մինչև 1970-ական թթ. կեսերը սիրիահայերի ներգաղթի խնդիրները մնացին առկախ: Օրինակ, սիրիահայության մասին 1970 թ. տեղեկանքում առաջարկվում էր սիրիահայության շրջանից հայրենադարձություն չակնկալել, քանի որ տիրող իրադրության մեջ (արաբա-իսրայելյան հակամարտության ծայրաստիճան սրում 1970 թ. հունիս-հուլիսին) այն անարդյունավետ էր լինելու⁵⁹: 1962-1982 թթ. ներգաղթեց 889 ընտանիք (4848 մարդ), որ երկրորդ ցուցանիշն էր իրանահայերից հետո⁶⁰:

Ուսուցիչների վերապատրաստում և ուսուցում: 1967 թ. Կոմիտեն խնդրագրեր ստացավ ՀԲԸՄ-ի Սիրիայի կրթական հանձնախմբից և Հալեպահայ ուսուցչական միությունից: Վերջիններս խնդրում էին Խորհրդային Հայաստանում կազմակերպել սիրիահայ ուսուցիչների հեռակա ուսուցում, քանի որ Սիրիայում գործող օրենքին համապատասխան՝ երկրի հայկական վարժարանների ուսուցիչները պետք է ունենային Սիրիայի կրթության նախարարության համար ընդունելի դիպլոմներ (օրինակ՝ Խորհրդային), իսկ սիրիահայ հայ ուսուցիչների հիմնական մասն ուներ միայն Մելգոնյան վարժարանի և Երուսաղեմի ու Անթիլիասի դպրեվան-քերի վկայականներ, որոնք ընդունելի չէին⁶¹: Կոմիտեն փորձեց խնդիրը լուծել համապատասխան գերատեսչությունների հետ համագործակցելով. սիրիահայ վերոհիշյալ կազմակերպություններին առաջարկվեց Խորհրդային Հայաստանում 6 ամսից մինչև 1 տարի ժամկետով կատարելագործման դասընթացներ անցնել⁶²: Սիրիահայության հետ կապերը և հատկապես ուսուցիչների վերապատրաստման ծրագրում սիրիահայ ուսուցիչների մասնակցությունը հաճախ խոչընդոտվում էր Մերձավոր Արևելքում պարբերաբար սրվող իրավիճակով: Օրինակ «Հյուժիչ պատերազմի» պայմաններում 1969 թ. ուսուցիչների ամենամյա վերապատրաստման ծրագրում Սիրիայից ուսուցիչներ չեն մասնակցել⁶³: Այդ և հետագա տարիներին մերձավորարևելյան ճգնաժամի պայմաններում սիրիահայ համայնքից ուսուցիչների վերապատրաստման ծրագրերին սիրիահայ ուսուցիչներ հիմնականում չեն մասնակցել:

⁵⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 4, գ. 34, թ. 1-3:

⁶⁰ Տե՛ս **Մելիքսեթյան Հ.**, նշվ. աշխ., էջ 299:

⁶¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 1, գ. 294, թ. 23:

⁶² Տե՛ս նույն տեղում, թ. 37:

⁶³ Տե՛ս նույն տեղում, ց. 4, գ. 17, թ. 23:

Սիրիահայ ուսանողները և պատանիները Խորհրդային Հայաստանում: 1960-1980-ական թթ. խորհրդահայ բուհերում և տեխնիկումներում ուսում էին ստանում տասնյակ սիրիահայեր: 1970 թ. դրությամբ ՀՍՍՀ բուհերի և տեխնիկումների 180 շրջանավարտներից (157 բուհական և 23 տեխնիկումի) 62-ը եղել են սիրիահայեր: Այդ ցուցանիշն առաջինն է բոլոր համայնքների մեջ⁶⁴: Սիրիահայ շրջանավարտների թիվն առաջինն է նաև 1960-80-ական թթ. ՀՍՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական հաստատություններն ավարտածների թվով (324)⁶⁵:

1965 թ. ՀԿԿ Կենտկոմը «Սփյուռքահայ երեխաների հրավիրման մասին» որոշում ընդունեց, որով մասնավորապես Սիրիայից հրավիրվելու էր 13 երեխա՝ խորհրդահայ պիոներական ճամբարներում հանգիստն անցկացնելու համար: Նպատակի բաժնում նշվում էին Խորհրդային Հայաստանի ձեռքբերումների քարոզչությունը և աճող սերնդի շրջանում աշխատանքի օգտակարությունը⁶⁶: Հետագա տարիներին այս գործընթացը պարբերական բնույթ չի կրել, քանի որ արաբա-խորայեյան անընդհատ հակամարտության մեջ Սիրիայի ուղղակի ներգրավվածությունը շատ հաճախ արգելք էր դառնում սիրիահայ ուսանողների ու պատանիների՝ Խորհրդային Հայաստան գալուն:

Ամփոփելով քննությունը՝ կարող ենք նշել, որ սիրիահայ համայնքի հետ հարաբերությունները մեծ կարևորություն են ունեցել Կոմիտեի համար: Այնտեղ Կոմիտեի նպատակները ներառել են այսպես կոչված «առաջադիմական» կազմակերպություններին աջակցությունից մինչև կրթամշակութային առնչություններ և հայրենադարձություն: Ցավոք, չնայած ծավալուն ծրագրերին և ներդրված ջանքերին, դրանց արդյունքը հաճախ եղել է ոչ բավարար՝ քաղաքական նպատակներով համայնքային կազմակերպությունների տարանջատման և մերձավորարևելյան տարածաշրջանում պարբերաբար սրվող իրավիճակի պատճառով:

⁶⁴ Տե՛ս նույն տեղում, ց. 6, գ. 1, թ. 1-5:

⁶⁵ Տե՛ս Սովետական Հայաստան (1980, թ. 12, էջ 22-23):

⁶⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 18, թ. 30: Տե՛ս «Հայոց ցեղասպանության 50-ամյակը և Խորհրդային Հայաստանը (փաստաթղթերի և նյութերի ժողովածու)», խմբ. Ա. Հարությունյան, Ե., 2005, էջ 61-62:

**ՍԻՐԻԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ
ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵՆ 1964-1985 ԹԹ.**

ՀՈՎՍԵՓՅԱՆ Մ.Հ.

Ամփոփում

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի համար Սիրիայի հայ համայնքի հետ հարաբերությունները շատ կարևոր էին, քանի որ այդ համայնքը առանձնահատուկ տեղ էր գրավում ողջ սփյուռքում: Կոմիտեն սիրիահայ համայնքի հետ հարաբերությունները կառուցում էր իր աշխատակիցների, ինչպես նաև ԽՍՀՄ դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների մանրամասն տեղեկանքների հիման վրա: Քանի որ Սիրիայի հայ համայնքում ՀՅԴ-ի դիրքը շատ ամուր էր, կոմիտեն անընդհատ աջակցում էր տեղի հայկական «առաջադիմական» կազմակերպություններին՝ համայնքում որոշիչ կարգավիճակի հասնելու համար:

Կոմիտեն աջակցել է Սիրիայի հայկական կազմակերպությունների մշակութային, սոցիալական և կրթական համարյա բոլոր նախաձեռնությունները: Միաժամանակ նրա օգնությամբ Սիրիայի հայ համայնքի երիտասարդները ուսանել են Խորհրդային Հայաստանի բուհերում, երեխաները հանգստացել խորհրդահայ ճամբարներում: Բացի այդ, 1960-1970 թթ. Կոմիտեի օգնությամբ հազարավոր սիրիահայեր հայրենադարձվել են Խորհրդային Հայաստան:

Բանալի բառեր՝ Կոմիտե, սիրիահայ համայնք, կուսակցություն, միություն, վերապատրաստում, ուսուցում, հայրենադարձություն:

АРМЯНСКАЯ ОБЩИНА СИРИИ И КОМИТЕТ ПО КУЛЬТУРНЫМ СВЯЗЯМ С АРМЯНАМИ ДИАСПОРЫ В 1964-1985 ГГ.

ОВСЕПЯН М.О.

Резюме

Отношения с армянской общиной Сирии для Комитета по культурным связям с армянами диаспоры были очень важны, поскольку эта община занимала особое место во всей Диаспоре. Так как в армянской общине Сирии Армянская революционная федерация Дашнакцутюн занимала ключевое положение. Комитет постоянно поддерживал т.н. "прогрессивные" организации, чтобы в их руках сосредоточить все общинные позиции.

Комитет также оказывал всяческую помощь армянским организациям Сирии, поддерживая их культурные, общественные и образовательные начинания. При поддержке Комитета студенты из армянской общины Сирии учились в вузах Советской Армении, а дети проводили каникулы в пионерских лагерях. В течение 1960-1970 гг. тысячи сирийских армян репатриировали в Советскую Армению.

Ключевые слова – Комитет, сирийская армянская община, партия, союз, обучение, образование, репатриация.

ARMENIAN COMMUNITY OF SYRIA AND THE COMMITTEE ON CULTURAL RELATIONS WITH ARMENIANS OF THE DIASPORA IN 1964-1985

M. HOVSEPYAN

Abstract

Relations with the Armenian community of Syria for the Committee on Cultural Relations with Diaspora Armenians were very important, because this community has a special place in the whole Diaspora. The Committee has

based the relations with the Syrian Armenians on investigations of its own staff or diplomatic and consular missions of the USSR.

Since the positions of the Armenian Revolutionary Federation Dashnaktsutyun were especially strong in the Armenian community of Syria, the Committee constantly supported the so-called “progressive” organizations so that they could catch all community positions.

The committee also provided all possible assistance to the Armenian community of Syria supporting their cultural, social and educational initiatives. With the help of the Committee students from the Armenian community of Syria studied in universities of Soviet Armenia and the children spent their holidays in pioneer camps. During 1960-1970-s thousands of Syrian-Armenians were repatriated to Soviet Armenia with the help of the Committee.

Keywords – Committee, Syrian Armenian community, party, union, training, education, repatriation.

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՍՈՒՎԱՐՅԱՆ ՅՈՒ.Մ., ՍԱՐԳՍՅԱՆ Վ.Ա.*

Տնտեսագիտության մեջ գրեթե աքսիոմատիկ ճշմարտություն է, որ տնտեսական գործունեության արդյունավետությունը կարող է գնահատվել ստացված արդյունքների և կատարված ծախսերի համադրմամբ: Սակայն միշտ ծագում են խնդիրներ արդյունքները և ծախսերը հաշվարկելու մեթոդական հարցերի շուրջ, քանի որ ծախսերը միատարր չեն (ընթացիկ և երկարաժամկետ ծախսեր, կենդանի աշխատանք և նյութական ծախսեր), իսկ արդյունքները ևս բազմաբնույթ են (այդ թվում՝ սոցիալական ուղղվածության) և հաճախ դժվար չափելի: Հանրային կառավարման արդյունավետության գնահատման առումով այս խնդիրներն ավելի բարդ են հատկապես կառավարման մարմինների գործունեության արդյունքները խիստ բազմաբնույթ լինելու և չափելիության դժվարությունների պատճառով:

Ի դեպ, բոլոր մակարդակների կառավարման մարմինների գործունեության առանձնահատկությունների հաշվառմամբ՝ արևմտյան գործընկերները գտնում են, որ միայն արդյունքներ-ծախսեր համադրումը բավարար չէ կառավարման արդյունավետությունը գնահատելու համար: Թե՛ հանրային կառավարման, թե՛ կազմակերպությունների կառավարման մարմինները պարտավոր են գործել իրավական դաշտում (հաճախ մասնակցել դրա ստեղծմանը), մշակել կազմակերպության զարգացման ռազ-

* ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադ.-քարտուղար, suvaryan@sci.am.

Տնտեսագիտության դոկտոր, ՀՏՊՀ տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի վարիչ, varsarg@yahoo.com, հոդվածի ընդունման օրը՝ 11.09.2018, գրախոսման օրը՝ 1.10.2018:

մավարությունը՝ ընթացիկ և երկարաժամկետ նպատակներով, հաշվարկել անհրաժեշտ ռեսուրսները, ճիշտ գնահատել ներքին և արտաքին միջավայրը, հատկապես գիտատեխնոլոգիական հնարավորությունները, մրցակցային սպառնալիքները, հնարավոր մարտահրավերները, զանազան ռիսկերը և այլն ու ապահովել սահմանված նպատակների իրագործումը: Կառավարման գիտական հիմնավորվածության աստիճանի այս չափանիշներով գնահատումը դիտարկվում է իբրև կառավարչական գործունեության որակական արդյունավետություն կամ արդյունքաբերություն¹:

Որակական արդյունավետության գնահատման անհրաժեշտությունն ակնհայտ է դառնում նաև նրանից, թե ինչպես են ձևակերպվել հանրային կառավարման արդյունավետության գնահատման նպատակները միջազգային ծրագրերում².

ա) հանրային կառավարման արդյունավետությունը և արտադրողականությունը բարելավել՝ պետական ծախսերի ռացիոնալացման և վարչական գործընթացների վրա ծախսված ժամանակի կրճատման միջոցով՝ քաղաքացիներին և ձեռնարկություններին ավելի լավ ծառայություն մատուցելու համար.

բ) կանոնակարգային բարեփոխումներ իրականացնել՝ կարգավորիչ ազդեցության գնահատման և ավելի լավ կանոնակարգերի միջոցով.

գ) վարչարարական բեռը ձեռնարկությունների և քաղաքացիների հետ աշխատանքային ընթացակարգերում կրճատել՝ բարելավելով աշխատանքային և գործարար միջավայրը.

դ) մրցունակությունն ամրապնդել, որը տնտեսական ճգնաժամի արմատներից մեկն է Եվրոպայում.

ե) հանրային ոլորտի վերակառուցման գործում ինստիտուցիոնալ փոփոխություններ կատարել՝ վերացնելով (միաձուլելով) վարչական ստորաբաժանումների կամ մակարդակների քանակը՝ նպատակաուղղված

¹ Տե՛ս, օրինակ, **Кунц Г., О’Доннел С.** Управление: системный и ситуационный анализ управленческих функций, т. 1, М., 1981, с. 40. **Мескон М., Альберт М., Хедоури Ф.** Основы менеджмента, М., 2000, с. 48-50, **Дафт Р.Л.** Менеджмент, СПб., Питер, 2006, с. 810-812.

² Evaluation of public administrations added value to the Lisbon strategy goals (UP-DATE 2010)².

լինելով սիներգիա գտնելու, և նոր ու ավելի արդյունավետ կառուցվածք ստեղծել՝ համընկնող գործառույթները հեռացնելու միջոցով.

զ) նորարարությունը խթանել և հնարավորություն տալ՝ որպես հիմնական աջակցություն արտադրողականության բարձրացման համար բոլոր տնտեսական ոլորտներում.

է) թափանցիկությունը և հաշվետվողականությունը բարձրացնել՝ տեղեկատվությունը բացելով քաղաքացիների համար՝ հրապարակային գործողությունները բացատրելու և հանրային կատարողականը շահագրգիռ կողմերին գնահատման ներկայացնելու համար:

ՄԱԿ-ի շրջանակներում օգտագործում են հանրային կառավարման արդյունքների գնահատման առնվազն երեք տեսակի ցուցանիշներ³.

1) իրավիճակային (ազդեցության) ցուցանիշներ, որոնք ապահովում են պատկեր, թե արդյո՞ք ՄԱԿ-ի համար կարևոր նշանակություն ունեցող զարգացումներն իրականում տեղի են ունենում (ազդեցության ցուցանիշները և իրավիճակային ցուցանիշները ըստ էության նույնն են, թեև առաջինը կարող է ավելի կոնկրետ լինել, և վերջինս կարող է ավելի ընդհանուր լինել):

Իրավիճակային ցուցանիշներն ըստ էության դինամիկ ենթատեքստում բնութագրում են զարգացման իրավիճակը: Դրանք կիրառվում են ՄԱԿ-ի հազարամյակի զարգացման ծրագրերի գնահատման նպատակով և արտացոլում են երկարաժամկետ զարգացման արդյունքներ կամ ազդեցություն: Առկա ցուցանիշներն ապահովում են երկրի մակրոտնտեսական զարգացման վիճակի ընդլայնված պատկերը: Այդ ցուցանիշներն առավել օգտակար են երկրի կառավարման արդյունավետության գնահատման համար՝ ցույց տալով, թե ինչպես են իրականացվում այս կամ այն զարգացման ռազմավարությունները: Այսպիսի ցուցանիշի կոնկրետ օրինակ է ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրի իրականացման գնահատումների շրջանակներում կիրառվող մարդկային զարգացման ինդեքսը (Human Development Index).

2) արդյունքի ցուցանիշներ, որոնք առաջընթացն են գնահատում կոնկրետ արդյունքների առումով: Այս ցուցանիշները հիմնականում օգնում են կազմակերպություններում կամ մակրոմակարդակում գործունեության առանցքային արդյունքների վերաբերյալ իրականացնել ռազմավարական

³ Ruby Sandhu-Rojon Selecting Indicators for impact evaluation, UNDP.

գնահատումներ և օգտակար են զարգացման դրական փոփոխություններ ընդգծելու համար: Պետական կառավարման համակարգում նմանատիպ ցուցանիշներ կարող են կիրառվել պառլամենտական գործունեության արդյունքում իրավական դաշտի, ինչպես նաև ֆինանսական ռեսուրսների տեղաբաշխման արդյունավետությունը գնահատելու համար:

3) արտադրանքի (ելքային) ցուցանիշներ, որոնք գնահատում են կոնկրետ գործառնական գործունեության առաջընթացը: Այս ցուցանիշները օգնում են չափել և ստուգել ելքային արդյունքը, որը կարող է չափելի լինել և կարող է հստակորեն ցույց տալ արդյունավետության աստիճանը: Ստացված գնահատականները օգտակար են նախագծի կառավարիչներին, որոնք պատասխանատու են արդյունքների համար: Այս ցուցանիշները հիմնականում քանակական բնույթի են: Օրինակ՝ հանրային կառավարման ոլորտում քանի դպրոց է վերանորոգվել, քանի ուսուցիչ է վերապատրաստվել, ինչքան աշխատատեղ է ստեղծվել և այլն:

Վերջին շրջանում ՄԱԿ-ի հետազոտություններում կարևորվում են հատկապես որակական գնահատումները: Մշակված են նաև արդյունավետ ցուցանիշների ընտրության մեթոդաբանական մոտեցումներ այս կամ այն ծրագրերի համար:

Ցուցանիշների ընտրությունը և կիրառումը համարվում են կարևոր և բովանդակային աշխատանք, որը պահանջում է լուրջ հետազոտական ներուժ: Մեծ թվով ցուցանիշների կիրառումը հաճախ արդյունավետ չէ: Ցուցանիշի հավաստիությունը խիստ կարևորվում է հուսալի արդյունք ստանալու համար: Ըստ էության, քանակական ցուցանիշներն առավել օբյեկտիվ են արտացոլում իրավիճակը, քան որակական դիտարկումները, որոնք առավելապես սուբյեկտիվ են և հիմնականում հենված են ոչ հավաստի և մոտավոր տեղեկատվության վրա, սակայն դրանց կիրառությունը առավել մեծ թափ է ստանում:

Օրինակ, որպես արդյունքի կամ ելքի ցուցանիշ կարող են կիրառվել ինչպես որակական կամ կատեգորիան բնութագրող, այնպես էլ քանակական կամ թվային ցուցանիշները: Որակական ցուցանիշները կարող են արտահայտել բինար արժեք («այո» կամ «ոչ»), ինչպես նաև նույնականացնել որոշակի կատեգորիա մի քանի կատեգորիաների մեջ (A, B, C կամ D): Քանակական ցուցանիշները կարող են ցույց տալ բացարձակ կամ հարաբերական արժեք (օրինակ մաս կամ %):

Կառավարման արդյունավետության գնահատումը հիմք է կառավարման բարելավման ռազմավարությունների ձևավորման համար: Եթե տնտեսական արդյունավետության գնահատման համակարգը դետերմինացված է և արդեն իսկ ձևավորված, քանի որ այն հենվում է քանակական գնահատականների վրա, ապա հանրային կառավարման արդյունավետությունը չի կարող գնահատվել միայն քանակական տեսանկյունից, քանի որ այստեղ խաչվում են նաև սոցիալական և քաղաքական ազդակներ, և առավել են կարևորվում կառավարման արդյունավետության որակական ցուցանիշները: Գիտական գրականության մեջ այս առումով առկա են տարբեր և հաճախ նաև միմյանց հակասող մոտեցումներ: ՀՀ-ում հանրային կառավարման համակարգի արդյունավետության գնահատման առավել ընդունելի մոտեցումների ձևավորման համար օգտակար է ուսումնասիրել գիտական առկա փորձը և գործնական մոտեցումները:

Ինչպես արդեն նշվեց, կառավարչական գործունեության արդյունավետությունը կարող է բնութագրվել քանակական և որակական ցուցանիշներով: Քանակական ցուցանիշները սովորաբար բնութագրում են տնտեսական ազդեցությունները, իսկ որակական ցուցանիշները առավելապես սոցիալական և քաղաքական ազդեցությունների դաշտում են⁴: Իհարկե, քանակական ցուցանիշներով, բացի տնտեսական ազդեցություններից, կարելի է գնահատել նաև սոցիալական գործոններ:

Եթե խնդիր է դրված գնահատել կառավարման հաջողությունները՝ կիրառելով արդյունավետության ցուցանիշներ, ապա նախ և առաջ անհրաժեշտ է սահմանել հանրային կառավարման «կատարողական» հասկացությունը, քանի որ արդյունավետության գնահատումը, ըստ էության, հանգում է կատարողականի գնահատման: Ինչպես Neely-ն է նշում⁵՝ «կատարողականի չափումն այն խնդիրն է, որ հաճախ քննարկվում է, բայց հազվադեպ է սահմանվում»: Նույն հեղինակները ներկայացնում են իրենց սահմանումը, թե ինչպես հասկանալ հանրային կառավարման գործունեության արդյունավետությունը և դրա չափումը. «Արդյունավետության

⁴ <https://studfiles.net/preview/3847102/page:7/>.

⁵ **Neely A.D., Mills J.F., Gregory M.J., Platts K.W.** Performance measurement system design – literature review and research agenda. International Journal of Operations and Production Management, Vol. 15, No. 4, 1995, pp. 80-116. ISSN 0144-3577.

չափումը կարող է սահմանվել որպես արդյունավետության և որակական արդյունավետության քանակական գնահատման գործընթաց»:

Տեխնիկական գիտություններում համակարգերի կատարողական արդյունավետությունը համեմատաբար հստակ է ներկայացվում կատարողականի փոփոխականով (միավոր ժամանակի ընթացքում կատարված աշխատանքի քանակը): Հանրային կառավարման ոլորտում նմանատիպ հստակ սահմանում դժվար է ձևակերպել: Սա հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ պետական կառավարման համակարգը շատ բարդ համակարգ է, որի ներդրումները և արդյունքները չափելի են (օրինակ՝ ֆինանսական բնույթը), սակայն նաև ուղղակիորեն չափելի չեն (օրինակ՝ անձնակազմի աշխատանքի որակը, ոչ առևտրային ծառայությունների որակը, պաշտոնյաների գործունեությունը և այլն...): Այստեղ առկա է մի սկզբունք, որն ասում է, որ չի կարելի չափել անչափելին, նույնիսկ չի կարելի կառավարել անչափելին, ուստի անհրաժեշտ է, առաջին հերթին, բոլոր այն ցուցանիշները, որոնք ազդում են կատարողականի վրա, հնարավորին չափ չափելի դարձնել: Հանրային կառավարման մարմինների կատարողականի չափումը և գնահատումը կարող են պատասխանել այն հարցին, թե ինչքան որակապես արդյունավետ և ուղղակի արդյունավետ են մատուցվում հանրային ծառայությունները⁶:

Հանրային կառավարման ոլորտում կատարողականը, ընդհանուր առմամբ, շատ ընդգրկուն եզրույթ է, հատկապես եթե հաշվի առնեք շահագրգիռ կողմերի (բոլոր անձանց և հաստատությունների, որոնք կապված են հանրային կառավարման հետ) տեսանկյունից կատարված աշխատանքը, քանի որ առաջին հայացքից նրանց շահերը կարող են տարբեր լինել: Սա արտացոլվում է հատկապես հանրային բյուջեի շրջանակներում ֆինանսական հարաբերությունների երկակիության և դրա հետևանքով առաջացող սիներգիկ հետևանքների մեջ: Հանրային ընտրության յուրաքանչյուր մասնակից ընդունում է տարբեր նպատակներ և գործողություններ՝ ըստ իր հետաքրքրության և շահերի:

Այնուամենայնիվ, եթե հանրային կառավարման համակարգը ճիշտ գործի, բոլոր շահագրգիռ կողմերի տարբեր շահերի համախմբման և բա-

⁶ GREILING D. Performance measurement in the public sector: the German experience. International Journal of Productivity and Performance Management, Vol. 54, No. 7, 2005, pp. 551-567. ISSN 1741-0401.

վարարման անհրաժեշտությունը բաղկացած կլինի փոխզիջումային լուծումներից կամ մաթեմատիկական լեզվով ասած՝ օպտիմալ կառավարման համակարգի ստեղծումից, որը նաև արտաքին ազդակներ է ստանում: Եթե հաշվի առնենք, որ որոշակի շահագրգիռ կողմերի համար հանրային կառավարման արդյունավետության օգուտները բնորոշվում են համակարգի մուտքերից (այսինքն՝ ներդրումներից), ապա հնարավոր է սահմանել կատարողականը յուրաքանչյուր շահառուի առումով՝ որպես ելքերի և մուտքերի հարաբերակցություն կամ որպես ելքերի և մուտքերի տարբերություն:

Տարածված կարծիք է, որ շահույթ չհետապնդող կազմակերպությունները, որոնք ընդգրկում են բոլոր պետական ինստիտուտները, ընդհանուր առմամբ չեն կարող որևէ շահույթ ստանալ իրենց գործունեությունից: Այս կարծիքը սխալ է, քանի որ շահույթ չհետապնդող կազմակերպություններն իսկապես կազմակերպություններ են, որոնք շահույթ չեն ստեղծում իրենց սեփականատերերի, ղեկավարների կամ շահառուների շրջանում վերաբաշխման համար, բայց որոշակի պայմաններում կարող են շահույթ ստեղծել, որն այնուհետև պետք է վերստին ներդնել նույն կազմակերպության զարգացման մեջ՝ նպատակներին հասնելու համար:

Հանրային կազմակերպությունների առջև ներկայումս արդիական է կատարողականի չափման ցուցանիշների հստակ համակարգի մշակման խնդիրը, որը համապատասխանաբար կարտացոլի որակական արդյունավետությունը և արդյունավետությունը⁷: Հանրային կառավարման կատարողականի չափման համապարփակ մոդել սահմանված չէ, և տարբեր կազմակերպություններում մոտեցումները տարբերվում են:

Սակայն առանց հասարակական երևույթների և գործընթացների պատշաճ գնահատման, դրանց դրական (հասարակական առաջընթացին նպաստող) և բացասական (հասարակության զարգացումը խոչընդոտող կամ կասեցնող) կողմերի վերլուծության անհմատ և արժեզրկված է դառնում իրավաստեղծ գործունեությունը: Այսինքն, իրավաստեղծ գործընթացում իրավական գաղափարախոսությունը կատարում է նաև արժեքային (գնահատման) գործառույթ:

Իրավական գաղափարախոսության իմացաբանական և գնահատման գործառույթները ներառվում են իրավական գաղափարախոսության մտավոր կողմի մեջ: Այն հանգամանքը, որ իրավակազմավորման և իրավաստեղծ գործունեության ընթացքում իրավական գաղափարախոսության մտավոր-ճանաչողական գործառույթն ինքնանպատակ չէ և ունի կիրառական հատուկ նպատակ՝ ստեղծել իրական՝ արդյունավետ գործող նորմատիվ-իրավական ակտեր, ինքնաբերաբար ենթադրում է նաև իրավական գաղափարախոսության ակտիվ կողմը, որն արտահայտվում է նրա կամային գործունեությամբ:

Անհրաժեշտ է ընդգծել, որ իրավական գաղափարախոսությունն առանց գործուն-կամային տարրերի չի կարող գոյություն ունենալ: «Իրավունքը ոչ միայն իրավական գաղափարախոսության մտավոր բովանդակության օբյեկտիվացման, այլ նաև դրա ակտիվ-կամային գործառույթի» արդյունք է⁴:

Իրավական գաղափարախոսության մտավոր և կամային գործառույթների իրականացումը նույնպես ընթանում է փոխկապակցվածության ու փոխազդեցության ձևով, որտեղ առաջնայինը մտավոր տարրն է, քանի որ կամային գործունեությունը պայմանավորված է մտավոր տարրերի ծավալով ու բովանդակությամբ:

Սակայն իրավաստեղծման գործընթացում կարևորվում են իրավագիտակցության ոչ միայն իրավական-գաղափարախոսական ենթահամակարգերը, այլ նաև իրավական հոգեբանությունը, որը սերտորեն առնչվում է իրավական գաղափարախոսության մտավոր և կամային գործառույթների հետ:

⁴ Тихомиров Ю.А. Право: прогнозы и риски, М., 2015, с. 33-34.

Իրավագիտակցությունը իրավական նորմերի ճշգրիտ և լիարժեք կենսագործման կարևորագույն ու անհրաժեշտ պայման է: Իրավունքի նորմերի պահանջներն ուղղված են անմիջականորեն մարդկանց: Այդ պահանջները նույնպես իրականացվում են նրանց գիտակցական-կամային գործունեության միջոցով: Որքան բարձր է պետության քաղաքացիների իրավագիտակցությունը, այնքան ճշգրտորեն են կենսագործվում իրավական նորմի կարգադրագրերը: Իրավագիտակցության զարգացումն ապահովում է իրավական պահանջների կամավոր, խորապես գիտակցված կենսագործում, դրանց ճշգրիտ և խելամիտ ըմբռնում: Մարդկանց մեջ այն առաջ է բերում անհանդուրժողականության զգացում իրավակարգը խախտողների նկատմամբ:

Իրավագիտակցության դերն իրավունքի իրացման գործում նույնպես հսկայական է և վերաբերում է մարդկանց վարքագծին, որը կարող է լինել ինչպես իրավաչափ, այնպես էլ ոչ իրավաչափ: Քաղաքացիների մասնակցությունը իրավունքի իրացման գործում մեկ անգամ ևս ապացուցում է վշտակցության և գործունեության անխզելի կապը⁵: Հաշվի առնելով իրավագիտակցության դերն ու նշանակությունը հասարակական կյանքում՝ անհրաժեշտ է այն զարգացնել և ամրապնդել:

Անհատների, խմբերի իրավագիտակցությունը կարևոր կարգավորիչ դեր ունի իրավական բնագավառում: Այն ուղղորդում և կարգավորում է անձի վարքագիծը՝ հիմնված իրականության ճանաչման և օբյեկտիվ գնահատման վրա, որը ներառում է քաղաքացիական հասարակությունում գործող իրավական նորմերի համակարգը և արժեքները: Իրավաբանական գրականության մեջ առկա են մի շարք առաջարկություններ, որոնց նպատակն է նոր օրենքներ ընդունելը կամ գործող օրենսդրությունը փոփոխելը: Իհարկե, նման առաջարկությունները պետք է ոչ միայն գիտականորեն հիմնավորված լինեն, այլև բխեն հասարակական զարգացման օբյեկտիվ անհրաժեշտությունից:

Իրավագիտակցության դերը կարևոր է նաև իրավաբանական գործերի քննության և իրավական նորմերի հիման վրա իրավական որոշում-

⁵ Гойман В.И. Механизм обеспечения реализации закона в современных условиях (Советское государство и право, 1991, N 12, с. 5-6); Решетов Ю.С. Реализация норм права, Казань, 1989.

ներ կայացնելու հարցում⁶: Այստեղ գործում է մասնագիտական իրավագիտակցությունը, որը փաստական հանգամանքների և իրավաբանական նորմերի բովանդակության ճանաչման սոցիալ-հոգեբանական կողմն է՝ որոշման ընդունման բաղկացուցիչ մասը:

Գործի հանգամանալից, բազմակողմանի հետազոտությունը, օրինականության պահանջների խորը իմացությունը թույլ են տալիս որոշել հակաիրավական արարքի հասարակական վտանգավորությունը, շարժառիթները, որոնցով ղեկավարվել է հանցագործը, կատարել իրավական ճիշտ որակում և կայացնել հիմնավորված, արդարացի, օրինական վճիռ՝ վճռական պայքար տանելով իրավախախտումներն արմատախիլ անելու համար:

Բնակչության իրավագիտակցության բարձր մակարդակն իրավական նորմի ճիշտ իրացման անփոխարինելի պայմանն է, պարտականությունների հստակ կատարման և իրավունքների իրավաչափ օգտագործման երաշխիքը: Իրավունքի կիրարկման գործընթացում առկա է իրացման երկու գործոն: **Առաջինը** պետական հարկադրանքի սպառնալիքն է, իսկ **երկրորդը**՝ իրավագիտակցության բարձր մակարդակը: Անհատի իրավագիտակցության ցածր մակարդակը կարող է հանգեցնել ոչ իրավաչափ գործողությունների կատարման, և, ընդհակառակը, անհատական իրավագիտակցության բարձր մակարդակը խթան, իրավական շարժառիթ է ծառայում իրավաչափ վարքագծի համար: Այստեղից էլ՝ իրավական դաստիարակության կարևորությունը: Զարգացած իրավագիտակցությունն ապահովում է իրավական պահանջների կամավոր, գիտակցված իրականացում, դրանց ճշմարտացիության և բանական լինելու ըմբռնում:

Իրավագիտակցության և իրավունքի փոխգործակցության արդյունքը նաև իրավունքի ազդեցությունն է ժողովրդի իրավագիտակցության ձևավորման և զարգացման վրա: Իրավունքն օժտված է դաստիարակչական ուժեղ ունակությամբ: Իրավական նորմերը ներգործում են քաղաքացիների գիտակցության զարգացման, հիմնավորված և արդարացի դատողությունների, իրավական պահանջների պատկերացումների, իրավական հարաբերությունների, սուբյեկտիվ իրավունքների և պարտականությունների, պատասխանատվության ձևավորման վրա: Իրավունքի գործուն դերը

⁶ **Кудрявцев В.Н.** О правопонимании и законности (Государство и право, 1994, N 3, с. 5-6).

զգալի է անհատական և զանգվածային, բարոյական և քաղաքական գիտակցության վրա: Նշենք, որ իրավական ակտերը պարտադիր նշանակություն են տալիս այն իրավական հայացքներին, որոնք առաջացել են հասարակության գիտակցության մեջ, սակայն դեռ գերիշխող չեն դարձել նրանում: Արտացոլվելով պետական իրավական ակտում՝ դրանք դառնում են պետական կամքի արտահայտություն, ինչն էլ խթանում է դրանց ակտիվ դերը իրավագիտակցության զարգացման մեջ: Իրավական նորմերը նպաստում են իրավագիտակցության բովանդակության հարստացմանը և կոնկրետացմանը, քանի որ մեքենայաբար չեն արտացոլում այս կամ այն իրավական հայացքը, այլ կոնկրետացնում են այն՝ որոշելով ոչ միայն ընդհանուրի, այլ նաև իրավաբանական փաստի յուրօրինակ հարաբերակցությունը, իրավահարաբերությունների կողմերի իրավաչափ կամ ոչ իրավաչափ վարքագծի տարբերակները: Այդպիսով, իրավական ակտերն ընդունակ են ընդլայնելու իրավագիտակցության բովանդակությունը⁷:

Այսպիսով, իրավագիտակցությունը ակտիվ ներգործություն ունի պետության և հասարակության մեջ առկա կենսական գործընթացների ամբողջ բազմազանության կարգավորման վրա, նպաստում է քաղաքացիների, բոլոր սոցիալական խմբերի միավորմանը, հասարակության մեջ կարգուկանոնի ապահովմանը և ամրապնդմանը: Հասարակության առողջ իրավագիտակցությունը, քաղաքացիների հարգանքը օրենքի նկատմամբ պետության հենքն են, քաղաքական և իրավական համակարգերի արդյունավետ գործողությունների հիմքը:

Զարգացած զանգվածային իրավագիտակցությունը, առանձին քաղաքացիների հասուն իրավագիտակցությունը և ակտիվությունը, լինելով իրավունքի գերագույն հիմքը քաղաքակիրթ հասարակության մեջ, իրավական պետության հենքն են: Քաղաքացիների իրավագիտակցության դաստիարակությունն իրավախախտումների կանխման, դրանց դեմ պայքարի անհրաժեշտ բաղկացուցիչ մասն է:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարող ենք ասել, որ *իրավագիտակցությունը*՝

1. գոյություն ունի իրավունքի բոլոր՝ իրավակազմավորման, իրավաստեղծման, իրավակիրառման և իրավապահպանման գործընթացներում,

⁷ Лукашева Е.А. Право, мораль, личность, М., 1986.

2. օրինականությունն ապահովելու և իրավակարգը ամրապնդելու արդյունավետ եղանակ է,

3. արդյունավետ արդարադատության նախապայմանն է,

4. իրավական քաղաքականության ու իրավական դոկտրինի մշակման անհրաժեշտ գործիքակազմն է:

ԻՐԱՎԱԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՎԱՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԻՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա.Ա.

Ամփոփում

Իրավագիտակցությունը, լինելով իրավունքի գաղափարական աղբյուրը, անմիջականորեն ներգործում է իրավաստեղծման վրա, իր արտահայտությունն է գտնում իրավաբանական ակտերում: Իրավագիտակցության դիրքորոշումներն են պայմանավորում իրավական ակտերի բովանդակությունը և ձևը, իրավական նորմերի կառուցվածքային առանձնահատկությունը:

Կարևորագույն իրավական ակտերի մշակման գործում մեծ դեր է խաղում ժողովրդի զանգվածային իրավագիտակցությունը, որն արտացոլվում է հասարակական կարծիքում: Իրավակազմավորման գործընթացում, պետության օրենսդրական գործունեության մեջ էական նշանակություն ունեն օրինագծերի կամ կոնկրետ իրավաբանական դրույթների զանգվածային քննարկումները: Ժողովրդի զանգվածային իրավագիտակցությունը հատկապես կարևորվում է հանրաքվեների ժամանակ:

Զարգացած զանգվածային իրավագիտակցությունը, առանձին քաղաքացիների հասուն իրավագիտակցությունը և ակտիվությունը կազմում են իրավունքի գերագույն հիմքը քաղաքակիրթ հասարակության մեջ, իրավական պետության հենքը: Քաղաքացիների իրավագիտակցության դաստիարակությունն իրավախախտումների կանխման, դրանց դեմ պայքարի անհրաժեշտ բաղկացուցիչ մասն է:

Բանալի բառեր՝ իրավագիտակցություն, իրավաստեղծում, իրավա-իրացում, իրավաբանական գործերի քննություն, իրավական նորմեր, իրավական պետություն:

ПРАВОСОЗНАНИЕ В КОНТЕКСТЕ ПРАВОТВОРЧЕСТВА И ПРАВОПРИМЕНЕНИЯ

АРУТЮНЯН А.А.

Резюме

Правосознание, являясь непосредственным идеологическим источником права, непосредственно влияет на правотворчество и находит свое выражение в юридических актах. Позиции правосознания определяют содержание и вид правовых актов, а также конструктивные особенности.

В вопросах разработки важнейших правовых актов главную роль играет массовое правосознание народа, которое выявляется в общественном мнении. В процессе правосознания в государственной законодательной деятельности существенное значение имеют массовые обсуждения законопроектов или конкретных юридических положений. Массовое правосознание народа особенно важно во время референдумов.

Развитое массовое правосознание, зрелое правосознание и активность отдельных граждан является основой права и правового государства в цивилизованном обществе. Воспитание правосознания граждан является необходимым компонентом предотвращения и борьбы с правовыми нарушениями, из которых можно сделать вывод.

Ключевые слова – правосознание, правотворческий, правоприменение, рассмотрение юридических дел, правовые акты, правовое государство.

LEGAL AWARENESS IN CONTEXT OF LAWMAKING AND LAW-REALIZATION

A. HARUTYUNYAN

Abstract

The legal awareness, being a direct ideological source of law, directly affects lawmaking, the legal awareness finds its expression in legal acts. Legal awareness positions cause the content and form of legal acts and the structural features of legal norms.

The massive legal awareness of the people plays an important role in elaborating the most important legal acts, which is reflected in public opinion. In the process of law-formation, mass discussions of draft laws or specific legal provisions are essential in the legislative activities of the state. The mass legal awareness of the people is especially important during referendums.

The developed mass legal awareness, mature jurisprudence and activity of individual citizens are the supreme basis of law in a civilized society, as well as the basis of the jural state. The education of citizens' legal awareness is a necessary part of the prevention of offenses and the fight against or control of offenses from which could be correspondingly concluded.

Key words – legal awareness, lawmaking, law-realization, consideration of legal cases, legal acts, legal state.

ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒՄԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՍԳԻ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ԿԱՌՈՒՑԱԿՑՄԱՆ ՀԱՐՑԵՐ

ԳԱԼՍՏՅԱՆ Մ.Վ.*

Հետխորհրդային Հայաստանից բնակչության արտագաղթի և արտերկրում նոր սփյուռքի ձևավորման հետևանքով միգրանտները սոցիալական ցանցերի միջոցով ծագման երկրում շարունակում են պահպանել իրենց կապերն ընտանիքի անդամների, հարազատների, ընկերների ու ծանոթների հետ: Նրանք, ընդգրկվելով մեկից ավելի հասարակությունների ինստիտուցիոնալ կառույցներում, միաժամանակ կրում են տարբեր հասարակությունների մշակութային արժեքներ¹: Միգրանտները և նրանց ընտանիքները, մշտական բնակություն հաստատելով այլ երկրներում և դառնալով այլ երկրի քաղաքացիներ, երբեմն գերակայությունը տալիս են հայրենիքում հուղարկավորմանը: Մշակութաբանական առումով այդ երկույթը քիչ ուշադրության են արժանացրել հետազոտողները, մինչդեռ այն մի կողմից առնչվում է միգրանտի էթնիկ ինքնության՝ այդ տոհմին, ազգին շարունակական մաս կազմելու երևույթի հետ, մյուս կողմից՝ էթնիկ խորհրդանիշների, տվյալ դեպքում՝ հայրենի սրբազան հողի և այնտեղ ննջելու մղումների հետ: Հայ ժողովրդի պատկերացումներում հողն օժտված է հոգևոր մի շարք հատկություններով և համարվում է հայրենասիրության աղբյուր: Այն կորցրածները կսկիծով են հիշում. «Արգրում, հողիտ ու ջրիտ մեռնիմ..., պիտի ըլլի օր մե օրմ՝ գամ, հողտ լիզեմ ...Շատ հիվանդներ

** ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, էթնոսոցիոլոգիայի բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող, պատմ. գիտ. դոկտոր, akoonk@yahoo.com, հոդվածի ընդունման օրը՝ 11.01.2019, գրախոսման օրը՝ 15.05.2019:

¹ **Кайзер М., Бредникова Ол.** Транснационализм и транслочальность (комментарии к терминологии) (Миграция и национальное государство/Под ред. Бараулиной Т. и Карпенко О., СПб., 2004, с. 133-146).

պանդխտության մեջ իրենց գյուղի ջրից բերել են տալիս և խմում»²: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ արտերկրում աշխատող միգրանտների մահվան դեպքում Հայաստանում հուղարկավորելու երևույթը տարածված է եղել ինչպես խորհրդային, այնպես է հետխորհրդային ժամանակահատվածում, ընդ որում ոչ միայն դրսում աշխատող կամ բնակություն հաստատած հայերի, այլև Հայաստանի ազգային փոքրամասնությունների շրջանում: Հետխորհրդային Հայաստանում դրսից միգրանտների հուղարկավորման ցուցանիշները բարձր են եղել մինչև 2000-ական թվականների սկիզբը, երբ նրանց ընտանիքների մեծ մասը դեռևս հանրապետությունում էր, իսկ հետագայում՝ վերամիավորումից, ինչպես նաև ընդունող երկրներում հաստատվելուց և այնտեղ նոր գերեզմանոցներ հիմնադրելուց հետո, նրանց թիվը կրճատվեց:

Հիմնախնդրի վերլուծության համար կարևորվել է հետազոտական այն հարցը, թե հայրենիքում հուղարկավորվելու հանգամանքը արդյո՞ք միայն պայմանավորված է ննջեցյալի ինքնության խնդիրներով, թե՞ այդ հարցում կարևորվում է նաև հարազատների, համայնքի անդամների կողմից նրանց շիրմին այցելությունների, հիշողության և «սգի կառուցակցման» միջոցով նրանց «ապրեցնելու» և մոռացության չմատնելու հանգամանքը: Տեսական առումով այդ հարցերն առնչվում են միգրանտի էթնիկ ինքնության խնդրի և այդ հանրության մաս կազմելու գիտակցություն հետ: Էթնիկ ինքնությունը ներառում է կայուն իմաստներ, որոնք վերաբերում են էթնիկ խմբին անհատի նմանության, անդամակցելու և մյուսներից տարբերվելու բնութագրերին: Մյուս հանրությաններից էթնոտարբերակիչ հատկանիշների հիմքն են լեզուն, արժեքներն ու նորմերը, պատմական հիշողությունը, կրոնը, ընդհանուր նախնիների մասին առասպելը, ազգային բնավորությունը և այլն³: Էթնիկ ինքնության խնդրին առնչվող տեսություններն անդրադառնում են նաև այդ երևույթը բնութագրող մի շարք գործոնների՝ ծնողների ծագում, լեզու, մշակույթ, ծննդավայր: Էթնիկ ինքնությունը կենտրոնացած է մշակույթի ու անցյալի ուղղությամբ և ավելի շատ առնչվում է դիցաբանությանը: Դրա ձևավորման համար շատ կարևոր է նաև էթնիկ

² **Լալայեան Ե.**, Զավախք, Ազգագրական հանդես, Զավախք, Թիֆլիս 1896, գիրք Ա, էջ 350:

³ **Гумилев Л.Н.** Этногенез и биосфера Земли, М., 2002, հասանելի է http://www.bimbad.ru/docs/gumiljev_lev_ethnogenesis.pdf (12.02.2018).

խորհրդանիշների առկայությունը: Անշուշտ, նշված մոտեցումները, որոնք պահպանվել են միգրանտների շրջանում, կարող են մոտիվացնել հայրենիքում հուղարկավորվելու ցանկությունը: Մյուս տեսական հիմքը, որի շրջանակներում կարևորվել է հողվածում տեղ գտած նյութերի քննարկումը, ժակ Դերիդայի այն մոտեցումն է, ըստ որի՝ սուգը մեկնաբանվում է որպես մահացածներին «ապրեցնելու» կոնստրուկտ և ցանկություն, նրանց անընդհատ «կենդանացնելու» փորձ, հիշողություն և պարտականություն⁴: Հայրենիքում հիմնված ընտանեկան գերեզմանոցը այն վայրն է, որտեղ մահացածներին տարբեր առիթներով պարտադիր այցելում են հարազատները, համայնքի անդամները և ննջեցյալների հետ կապված ծեսերի, սգի վերարտադրման և հիշողությունների միջոցով «կենդանացնում» և «ապրեցնում» են նրանց: Այսինքն՝ համայնքը, հարազատները տարբեր առիթներով գերեզմանոց այցելությունների միջոցով ապրեցնում են նրա հիշատակը: Այս հանգամանքը կարող է դառնալ կարևոր շարժառիթ ննջեցյալին հայրենիքում հուղարկավորելու համար:

Որպես հետազոտության օբյեկտ՝ ընտրված են խորհրդային և հետ-խորհրդային շրջանում նախկին ԽՍՀՄ տարածքում աշխատանքային միգրացիայի մեկնած կամ բնակություն հաստատած և հայրենիքում հուղարկավորված միգրանտները և նրանց ընտանիքները:

Մահացած միգրանտների վերաբերյալ տվյալները հավաքվել են 1980-2018 թթ. Հայաստանի 8 մարզերի 6 քաղաքային և 41 գյուղական համայնքներում: Համակողմանի և բովանդակային տեղեկատվության նպատակով կիրառվել և համադրվել են հետևյալ մեթոդները.

1) **փորձագիտական հարցման մեթոդ.** հուղարկավորված միգրանտների, նրանց մահվան պատճառների, տարիքային կազմի և այլ հարցերի վերաբերյալ տվյալներ են հավաքվել 47 համայնքի ղեկավարների և պատասխանատուների շրջանում.

2) **խորին հարցազրույցի մեթոդ.** Հայաստանում հուղարկավորված միգրանտների ընտանիքի անդամների հետ իրականացվել է 12 խորացված հարցազրույց.

3) **փաստաթղթերի վերլուծության մեթոդ.** ուսումնասիրվել են այդ համայնքների գյուղապետարաններում պահվող հաշվառման/ծխական

⁴ **Деррида Ж.** Призраки Маркса (перевод с французского Б. Скуратова), М., 2006, с. 8-12.

մատյանները. ըստ այդմ՝ հավաքվել են միգրանտների ընտանիքների կազմի, քանակի և մահացած միգրանտների վերաբերյալ վիճակագրական տվյալներ.

4) **դիտարկման մեթոդ.** դիտարկումներ են իրականացվել 7 համայնքների գերեզմանոցներում, և գրառվել են միգրանտների գերեզմանաքարերի գրառումները:

Նշված համայնքների ղեկավարների պատասխանատուներից և ծխական մատյաններից հավաքված տվյալները փաստում են դրսում մահացած և Հայաստանում հուղարկավորված 59 դեպք. հիմնականում դրանք շինարարությունում դժբախտ պատահարների արդյունք են: Այդ դեպքերի 22%-ը վերաբերում է խորհրդային շրջանում արտագնա աշխատանքի մեկնածներին: Նրանք հիմնականում երիտասարդներ էին և 21-35 տարեկան: Մահվան դեպքերի 78%-ը տեղի է ունեցել հետխորհրդային շրջանում, որից 40%-ը միջին հաշվով ՌԴ-ում բնակվել է մինչև 10 տարի և ունեցել է քաղաքացու կարգավիճակ, իսկ մնացածը արտերկրի մեկնել էր աշխատանքի նպատակով. նրանց մահը արտագնա աշխատանքի վայրում պատճառաբանվել է որպես «դժբախտ պատահարի արդյունք»: Ըստ տարիքային կազմի՝ հետխորհրդային շրջանում մահացածների 47%-ը մինչև 29 տ. երիտասարդներ էին, 33%-ը՝ 30-49 տ., իսկ 20%-ը պատկանում էր 50 և բարձր տարիքային խմբին: Նշված վիճակագրական տվյալները մտահոգիչ են այն առումով, որ օտար միջավայրում գերակշռող մասը եղել է աշխատունակ և ակտիվ վերարտադրողական տարիքում: Ըստ սեռի՝ Հայաստանում 46 հուղարկավորվածներից միայն 15%-ն էր կին: Հուղարկավորվածների 60%-ը ՌԴ-ում եղել է ընտանիքի հետ: Նրանց միայն 29%-ը Հայաստանում չունեն հարազատներ, սակայն այդ բնակավայրը համարվում էր իր ծննդավայրը: Հայաստանում հուղարկավորված դեպքերի 60%-ը եղել է մինչև 2010 թվականը, իսկ մնացածը՝ 2011-2016 թթ.: Վիճակագրական այս տվյալները փաստում են վերջին տարիներին մահացածներին Հայաստանում հուղարկավորելու միտումները, որոնք, մեր կարծիքով, պայմանավորված է այդ ընտանիքների նյութական վիճակով և դրսում նոր գերեզմանատներ հիմնելու հանգամանքով: Ըստ պատճառների՝ նրանց 27%-ը մահացել էր բնական մահով, իսկ մնացածը որակվել է որպես «դժբախտ պատահար»:

Միգրանտին հայրենիքում հուղարկավորելու որոշումը պայմանավորված է ինչպես մահացողի կամ ընտանիքի ցանկությամբ, այնպես էլ այդ ընտանիքի տնտեսական վիճակով, քանի որ հանգուցյալին Հայաստան տեղափոխելու համար պահանջվում են որոշակի ֆինանսական միջոցներ, ժամանակ և իրավական ընթացակարգեր: Ըստ հետազոտության՝ հայրենիքում հուղարկավորելու խնդիրը քննարկման առարկա է դառնում նաև համայնքներում. ըստ այդմ՝ կարևորվում են «մայր» և «օտար» հողի խորհրդի, հայրենիքում հուղարկավորվելու դեպքում՝ «հայ մնալու», իսկ օտար տեղում՝ «հայությունը կորցնելու», օտար միջավայրում «անտեր», իսկ հայրենիքում «տիրով» գերեզման դառնալու, «ընտանեկան» գերեզմանոցում հուղարկավորվելու դեպքում նախնիների հետ կապի և մշտապես հիշելու, իսկ օտար միջավայրում նրան շուտ մոռանալու հարցերը: Այդ առումով մեջբերենք հարցազրույցի մասնակիցների մի քանի տեսակետներ, որոնք հավաքվել են Հայաստանի տարբեր մարզերում. «Ամբողջ կյանքը դրսում ա ապրել, էդքան տարի ոչ մի անգամ գյուղ չի եկել, ոչ մեկի մեռլին չի մասնակցել, գյուղի համար ոչ մի լավ բան չի արել, հիմա բերել են, որ գյուղում թաղեն: Էսենց որ գնա, գյուղը իրենց համար կվերածվի գերեզմանոցի» (տղամարդ, 60 տ.)⁵: «Ընտանիքը թողել, գնացել էր, էնդեղ կապվել էր ուրիշ կնոջ հետ: Ռուսաստանում մահանալուց հետո, տղաները իրենց նամուսի համար բերեցին էստեղ թաղեցին» (կին, 66 տ.)⁶: «Էստեղ ծնվել մեծացել է, ունի պապենական գերեզմանոց: Վերջին տարիներին ապրում է դրսում: Ճիշտ են անում, որ բերում են իր հարազատների մոտ են թաղում, հո դրսում օտար տեղ չեն թաղելու» (կին, 47 տ.)⁷: Հարցման մասնակիցները այդ հարցում կարևորում են մահացածի բարոյական կերպարը, մահվան հանգամանքները, սեռը, տարիքը, համայնքից հեռանալու ժամկետները և համայնքի հետ կապերը, համայնքում այդ տոհմի հեղինակությունը և հարազատների առկայությունը: Բայց որոշ մասն էլ այն կարծիքին է, որ եթե ցանկանում են հուղարկավորել հայրենի հողում, անկախ որևէ հանգամանքից, խոչընդոտներ չպետք է ստեղծել և առաջնորդվել քրիստոնեական բարոյականության սկզբունքով: Այդպիսի հուղարկավո-

⁵ Գալստյան Մ., Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետև՝ ԴԱՆ), Գեղարքունիքի մարզ, 2007:

⁶ Գալստյան Մ., ԴԱՆ, Շիրակի մարզ, 2007:

⁷ Գալստյան Մ., ԴԱՆ, Լոռու մարզ, 2011:

րություններին համայնքներում մասնակցության հարցը երբեմն պայմանավորվում է նաև ննջեցյալի սոցիալական և տնտեսական կարգավիճակով: Եթե ննջեցյալի ընտանիքը դրսում ունի նյութական լայն հնարավորություններ, հայրենիքում հուղարկավորության ժամանակ հարազատները համայնքի դրամական օգնությունից ձեռնպահ են մնում՝ ամբողջ ֆինանսական ծախսերը վերցնելով իրենց վրա: Սակայն, ընդհակառակը, եթե ննջեցյալի ընտանիքը նյութական վատ վիճակում է, ապա արարողությունները կատարելու համար համայնքի անդամները գումար են հավաքում: Դիտարկումները ցույց են տալիս, որ այդ հուղարկավորություններին համայնքի անդամների մասնակցության թիվը ավելի քիչ է, քան տեղացիների: Գեղարքունիքի մարզի գյուղերից մեկում ազգակից ընտանիքները ամբողջովին համայնքից արտագաղթելու պատճառով ննջեցյալին օղանավակայանից տեղափոխել են գերեզմանոց և փոքրաթիվ մարդկանցով կատարել հուղարկավորությունը: Ննջեցյալի տեղափոխման ծախսերի և հուղարկավորման համար դրամական օգնություն են ցուցաբերում նաև արտերկրի հայկական համայնքները, հատկապես ազգակիցները և բարեկամները: Այսպես, օրինակ, 2000-ական թթ. ՌԴ-ից երեք մարդու են հուղարկավորել Տավուշի մարզի Ծաղկավան, 2007 թ.՝ մեկին, 2011 թ.՝ երեքին Այգեհովիտ գյուղում. ընդ որում՝ գումարի կեսը ազգականներն են հավաքել, մյուս մասը՝ Ռուսաստանում բնակվող ընկերները: 2008 թ. ամռանը ավտովթարի պատճառով զոհվել է Մոսկվայում բնակվող մի իջևանյան ընտանիք՝ մայրը, 16 և 18 տարեկան երկու աղջիկները: Մոսկվայում բնակվող նախկին տավուշցիների ֆինանսական աջակցությամբ նրանց բերել և թաղել են Իջևանում, ընդ որում՝ երկու աղջիկներին էլ՝ հարսանեկան զգեստով⁸: Դժբախտ պատահարների հետևանքով մահացած արտագնացին հայրենիք տեղափոխելու և հուղարկավորելու ծախսերը բրիգադի կողմից հոգալու պրակտիկան տարածված էր նաև խորհրդային շրջանում: Խորհրդային շրջանում, կապված մահվան հանգամանքների, հաղորդակցման դժվարությունների և սանիտարահիգիենիկ անվտանգության հետ, ննջեցյալին հիմնականում հայրենիք էին տեղափոխում ցինկե փակ դագաղով: Այդ երևույթը նորույթ էր Հայաստանի գյուղական համայնքների համար, և հարցազրույցների ժամանակ նրանց հարազատները հաճախ էին նշում,

⁸ Վարդանյան Լ., Տավուշցիների ընտանեկան ծիսակարգը, Տավուշ, սոցիալ-մշակութային գործընթացներ, Ե., 2014, էջ 215:

որ արտագնացության միջոցով են նրանք ծանոթացել այդ երևույթին⁹: Երբեմն որպեսզի հարազատները համոզված լինեն, որ դրսից բերվածը իրենց ննջեցյալն է, օրինակ, Լոռու մարզի համայնքներից մեկում փակ ցինկե դագաղի կափարիչի վրա բացված է եղել փոքր պատուհան: Որոշակի տարբերություններ են դիտարկվել նաև դրսից ուղարկվող ննջեցյալի դագաղի կառուցվածքի, չափերի, ձևավորման, խաչի ձևի և այլ պարագաների միջև: Օրինակ, դագաղի հետ երբեմն հարազատները, ընկերները ուղարկում են նաև արհեստական ծաղկեպսակ, որի վերևի մասին ամրացված է լինում նաև խաչ: Սոցիալ-մշակութային այդ առանձնահատկությունները կապված են այն միջավայրի հետ, որտեղից տեղափոխվում են ննջեցյալին: Այդ պարագաների ընտրությունը պայմանավորված է նաև մահացածի սոցիալ-նյութական կարգավիճակով: Հայաստանում հուղարկավորելու խնդիրը առկա է նաև ազգային փոքրամասնությունների մեջ: Այսպես՝ եզդիաբնակ Շամիրամ, Ակնալիճ, Զարթոնք համայնքներում կարևորել են հայրենի բնակավայրում հարազատներին հուղարկավորվելու գաղափարը և վերջին երեք տարիներին Ռուսաստանի Դաշնությունից, Գերմանիայից, Ֆրանսիայից 6 հանգուցյալ են բերել և հուղարկավորել տոհմական գերեզմանոցում: Եզդի և քուրդ միգրանտների համար հանգուցյալների շիրիմներին այցելությունները և նախնիների հիշատակման արարողությունները համարվում են էթնիկ ինքնության և հայրենիքի հետ կապերը պահպանելու, ինչպես նաև ազգակիցների և դրացիների հետ շփվելու կարևոր բաղադրիչ: Եզդիների տոնացույցում գոյություն ունի «Ռոժա Մազալան»՝ գերեզմանի օր ավանդույթը, որը նշվում է յուրաքանչյուր տարվա հունիսի 15-ին¹⁰: Այդ օրը արտերկրում ապրող եզդիների որոշ մասը, որ ունի հնարավորություն, այցելում է Հայաստան՝ հարազատների գերեզմանին: Մյուս հիշարժան տոնը, որին Հայաստանում մասնակցում է արտերկրի միգրանտների որոշ մասը, սրբավայրի հիշատակման օրն է (Կվա-եզդիդի): Հայաստանում հարազատներին հուղարկավորելու, հարազատների ննջեցյալների գերեզմանոցներին այցելությունները տարածված են նաև արտերկրում բնակություն հաստատած հույների և ասորիների մեջ: Նշենք նաև, որ վերը

⁹ Գալստյան Մ., Արտագնացությունը Հայաստանում (XIX դարի երկրորդ կես-XX դարի 80-ական թթ.), Հայ ազգագրություն և բանահյուսություն, նյութեր և ուսումնասիրություններ, N 26, էջ 71:

¹⁰ Եզդիաբնակ գյուղերում այդ տոնը նշվում է տարբեր օրերի:

նշված ազգային փոքրամասնությունների շրջանում վերջին տարիներին այդ հարցում նույնպես արձանագրվել են նվազման միտումներ: Դա պայմանավորված է ոչ միայն ֆինանսական դժվարություններով. նշված ազգային փոքրամասնությունները մուտքի երկրների իրենց հավաք բնակավայրերում հիմնել են նոր գերեզմանոցներ: Օրինակ, Ռուսաստանի Դաշնության Յարոսլավլի մարզում եզդիները մեծ համայնք են: Նրանք տեղում հիմնադրել են նաև գերեզմանոց, որը կոչվում է Մալաեզդիա (եզդիների տուն): Ասորիները Կրասնոդարում և Ռոստովում հիմնել են գերեզմանոց և այդ տարածաշրջանից մահացածների աճյունը Հայաստան տեղափոխում են միայն ծայրահեղ դեպքերում¹¹:

Աշխատանքային միգրանտների ընտանիքներում առկա է նաև կենոտաֆ թաղման ծեսը: Թաղման այդ ծեսը տարածված է եղել դեռևս ուշբրոնզեդարյան Հայաստանում¹²: Գեղարքունիքի, Լոռու և Տավուշի մարզերի մի քանի համայնքների գերեզմանոցներում դիտարկման ժամանակ մեզ պատմեցին երեք այդպիսի դեպք. հարազատները կենոտաֆ գերեզմանաքար էին դրել Երկրորդ համաշխարհային պատերազմում դրսում զոհված երկու զինվորի համար¹³, իսկ մյուսը՝ դրսում մահացած աշխատանքային միգրանտի համար: Աշխատանքային միգրանտի կենոտաֆ թաղումը տեղի է ունեցել 1990-ական թվականներին Գեղարքունիքի մարզում. ՌԴ-ում մահացածի կինը և եղբայրները նրա հայրական գերեզմանոցում կանգնեցրել են նկարով գերեզմանաքար՝ այնտեղ ամփոփելով նրա

¹¹ Գալստյան Մ., Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների միգրացիան (էթնոսոցիոլոգիական հետազոտություն), Ե., 2015, էջ 116-117:

¹² «Կենոտաֆ» բառը փոխառություն է հունարենից, որը նշանակում է դատարկ դամբան, այսինքն՝ աճյուն չպարունակող դամբարան, որը կառուցվում էր այն դեպքում, երբ մահացածի դիակն անմատչելի էր թաղման համար: Տե՛ս Թումանյան Գ., Թաղման ծիսակարգերը ուշբրոնզեդարյան Հայաստանում (Պատմա-բանասիրական հանդես, 2007, N 1, էջ 138-152):

¹³ Գյումրու հ. մեկ գերեզմանոցում կենոտաֆ թաղում է կատարվել Միրոյանների կրտսեր որդու՝ Զարգանդի համար, որը Երկրորդ համաշխարհային պատերազմում զոհվել և թաղվել էր Վիտեբսկի շրջանի գյուղերից մեկի եղբայրական գերեզմանոցում (այնտեղ թաղված է մոտ 150 խորհրդային զինվոր): Միրոյանների կրտսեր դուստրը՝ Շուշանիկը, երկրաշարժից հետո՝ 1990 թ., այցելել է Վիտեբսկի եղբայրական գերեզման և այնտեղից մի շիշ հող է բերել և, ծնողների հողաթմբերի միջև թաղելով, պատրաստել է երրորդ թումբը (տեղեկությունը տրամադրել է ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի և «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանի գիտաշխատող Ինգա Ավագյանը):

հանդերձանքը և այլ մասունքներ (կին, 57 տ.)¹⁴: Հատկապես շատ են այն օրինակները, երբ տոհմական գերեզմանոցում դրսում մահացածի համար գերեզմանաքար չի դրվում, սակայն հարազատների մոտ թաղում են այնտեղից բերված շշով հող և այլ մասունքներ: ՌԴ Սևաստոպոլ քաղաքում ուղղափառ եկեղեցու արարողակարգով հուղարկավորել են միգրանտին, որին մասնակցել են նաև Հայաստանի հարազատները: Իսկ հարազատները վերադառնալուց հետո իրենց համայնքում ննջեցյալի համար կատարել են հոգեհանգստի արարողություն՝ այնտեղից բերված հողը թաղելով հայրական գերեզմանոցում (տղամարդ, 63 տ.)¹⁵: Կենտաճ թաղման ծեսը փաստում է մի կողմից՝ ընտանիքի հետ նրա «վերամիավորման», նախնիների հետ կապի, մյուս կողմից՝ սերնդեսերունդ նրան հիշելու միջոցով «ապրեցնելու» խնդիրը:

Միգրանտների և ոչ միգրանտների գերեզմանաքարերի միջև էական տարբերություն չկա: Տարբերություններ են դիտարկվել միայն դրանց վրայի գրությունների բովանդակություններում՝ կապված միգրանտ հանգուցյալի տարիքի, մասնագիտության և մահվան պատճառների հետ: Օրինակ՝ Շիրակի մարզի գյուղական համայնքներից մեկում գերեզմանաքարի վրա պատկերված է այն ավտոմեքենան, որով աշխատանքի ժամանակ Ռուսաստանում վթարի էր ենթարկվել միգրանտը: Նշված են նաև հարազատի ողբը, ափսոսանքը և կարոտը, ինչպես նաև պանդխտություն երկույթի վերաբերյալ դատապարտող խոսքեր: Դրսում հուղարկավորվածի տապանաքարերի վրա հաճախ է նշվում «Գնաց հայրենիքի կարոտով» արտահայտությունը: Բացի հանգուցյալի պատկերի դրոշմումից՝ գրվում է նաև, թե ում կողմից է այդ գերեզմանաքարը: Որոշ գերեզմանաքարերի մոտ հանդիպում ենք նաև արհեստական ծաղկեպսակների¹⁶: Այսպիսով, հայրենիքում հուղարկավորելը կապված է երկու խումբ գործոնների հետ.

1) միգրանտի ինքնության խնդիրներն են, մասնավորապես հայրենի հողում հուղարկավորելու ցանկությունը՝ որպես էթնիկ ինքնության պահպանման կարևոր միջոց: Մինչդեռ, ըստ հարցվածների, օտար հողում հուղարկավորությունը ենթադրում է ինքնության կորուստ, «տեր չունեցող», «օտար» գերեզմանի վերածվելու վտանգ: Հարցվածների կարծիքով, տոհ-

¹⁴ Գալստյան Մ., ԴԱՆ, Գեղարքունիքի մարզ, 1993:

¹⁵ Գալստյան Մ., ԴԱՆ, Կոտայքի մարզ, 2018:

¹⁶ Բոյան Վ., ԴԱՆ, Շիրակի մարզ, 2018:

մական գերեզմանոցում հուղարկավորվելու միջոցով նրանք ոչ միայն շարունակում են պահպանել նախնիների հետ կապը, այլև շեշտվում է հանդերձյալ աշխարհում մահացած ծնողների կամ ամուսնու/կնոջ հետ «ընտանիքի վերամիավորման» և երկատված չմնալու հանգամանքը՝ որպես սոցիալական ինքնության դրսևորում: Այդ հանգամանքը հարցվածները պայմանավորել են նաև Հայաստանում հուղարկավորման միջոցով հայրենիքի հետ սերունդների հետագա կապի պահպանման փաստով՝ որպես ազգային արժեքների փոխանցման միջոց, իսկ Հայ առաքելական եկեղեցու կարգի համաձայն հուղարկավորումը՝ որպես կրոնական ինքնության պահպանման դրսևորում:

2) սգի միջոցով հայրենիքում մահացածներին «ապրեցնելու» հանգամանքը: Ըստ հարցման մասնակիցների՝ ընտանիքը, հարազատները, համայնքի անդամներն ունեն պարտականություններ մահացածների հանդեպ և չընդհատվող հիշողություն: Մինչդեռ հուղարկավորելով օտար հողում՝ կարող է չպահպանվել կամ ընդհատվել ննջեցյալների մասին հիշողությունը: Հարցման մասնակիցների դիրքորոշմամբ՝ միգրանտին հուղարկավորելով հայրենիքում՝ նրանք, ազգային սովորույթների համաձայն, պահպանում և կատարում են բոլոր ծեսերը՝ թաղում, հոգեհաց, յոթ, քառասունք, տարի, հիշատակի օրեր և մեռելոցներ, սգում են ննջեցյալի համար և սգի միջոցով «վերապրեցնում և վերակենդանացնում» նրանց: Այդ երևույթը կատարվում է նաև առօրյա կյանքում նրանց անընդհատ հիշելու միջոցով: Ըստ հարցվածների՝ հայրենիքում ննջեցյալները դառնում են իրենց ինքնության մի մասը և համայնքային կյանքի մասնակիցներ: Այս հանգամանքն ընտանիքի անդամների համար դառնում է հարազատին հայրենիքում հուղարկավորելու կարևոր շարժառիթ, և երբեմն երկրորդ պլան են մղվում ինքնության խնդիրները:

ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՍԳԻ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌՈՒՑԱԿՑՄԱՆ ՀԱՐՅԵՐ

ԳԱԼՍՏՅԱՆ Մ.Վ.

Ամփոփում

Միգրանտները և նրանց ընտանիքները, մշտական բնակություն հաստատելով այլ երկրներում, գերադասում են հուղարկավորվել հայրենիքում: Այդ հիմնախնդիրը քննարկվում է էթնիկ ինքնության և հետևաբար կառուցվածքաբանության տեսությունների շրջանակներում: Հարցման արդյունքներով հայրենի հողում հուղարկավորվելու ցանկությունը նրանք ոչ միայն համարում են էթնիկ ինքնության պահպանման, այլև նախնիների հետ կապի, «ընտանիքի հետ վերամիավորման» կարևոր միջոց: Ըստ հարցման մասնակիցների՝ ընտանիքը, հարազատները, համայնքի անդամներն ունեն պարտականություններ մահացածների հանդեպ և անընդհատ պահպանվող հիշողություն, որը երբեմն բացակայում է օտար հողում հուղարկավորելու դեպքում: Հայրենիքում պահպանում և կատարում են ննջեցյալին նվիրված բոլոր ծեսերը՝ «վերապրեցնելով» նրա հիշատակը: Աշխատանքային միգրանտների ընտանիքներում առկա է նաև կենսոտաֆ թաղման ծեսը:

Բանալի բառեր՝ միգրանտ, հուղարկավորություն, հայրենիք, էթնիկ ինքնություն, հիշողություն, սգի կառուցակցում, կենսոտաֆ թաղում:

ПОГРЕБЕНИЕ МИГРАНТОВ В АРМЕНИИ: ВОПРОСЫ САМОБЫТНОСТИ И КОНСТРУКТИВИЗМА ТРАУРА

ГАЛСТЯН М.В.

Резюме

Мигранты и их семьи, обосновавшись в других странах, предпочитают быть погребенными на Родине. Эта проблема рассматривается в рамках этнической самобытности и теории постконструктивизма. По результа-

там опроса они считают желание быть погребенными в родной земле не только важным средством сохранения этнической идентичности, но и средством “сохранения” связи с предками, “воссоединения с семьей”. Согласно ответам участников опроса, семья, родственники, члены общины имеют обязательства перед усопшими в плане почитания их памяти, что, зачастую, не имеет место при погребении в чужой земле. На Родине соблюдаются и проводятся все посвященные усопшему церемонии. В семьях трудовых мигрантов имеет место также церемония похорон “кенотаф”.

Ключевые слова – мигрант, погребение (похороны), Родина, этническая идентичность, память, конструктивизм траура, церемония похорон “кенотаф”.

MIGRANT'S FUNERAL IN ARMENIA: ISSUES OF IDENTITY AND MOURNING CONSTRUCTION

M. GALSTYAN

Abstract

Migrants and their families, establishing permanent residence in other countries, give priority to burial in their homeland. This problem is discussed within the framework of ethnic identity and post-constructivism theories. According to the results of the survey, the desire to be buried in their homeland is being considered not only as a means of ethnic identity preservation, but also signifies connection with their ancestors, and "reunion with the family". According to the survey participants, family, relatives, community members have memory and responsibilities towards the deceased. The latter could be missed if the burial takes place abroad. In the homeland all the rituals dedicated to the deceased are preserved, thus "rescuing" the memory. Therefore, those buried in the homeland become part of the identity of their relatives. The families of migrant workers also have a ritual of cenotaph burial.

Key words – migrant, funeral, homeland, ethnic identity, memory, mourning construction, cenotaph burial.

ՀԱՅ-ԲԵԼԱՌՈՒՍԱԿԱՆ ԷԹՆՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՆՈՐԴԱՎՈՐՎԱԾ ԿԱՊԵՐԻ ՇՈՒՐՋ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Ռ.Ս.*

Հետխորհրդային պետությունների ներկա համագործակցության բնույթն անհնար է պատկերացնել առանց միգրացիոն գործոնի¹: Չնայած նախկին միութենական հանրապետությունների քաղաքական տարանջամանը՝ նրանց միջև բնակչության փոխանակման գործընթացները ոչ միայն չեն դադարել, այլև նկատելի է միջպետական միգրացիոն տեղաշարժերի աճի միտում: Դա իր հերթին նպաստում է այդ հանրապետությունների միջև տնտեսական, քաղաքական, մշակութային կապերի պահպանմանը և ընդլայնմանը. այս համատեքստում միգրանտներն իրենց ուրույն տեղն են զբաղեցնում:

Պայմանավորված զուտ տնտեսական գործոններով, առաջին հերթին՝ առանձին երկրների լրացուցիչ աշխատանքային ռեսուրսների պահանջով և այլ երկրների տնտեսական դժվարություններով՝ միգրացիան դառնում է լուրջ կառուցվածքաստեղծ գործոն: Ներթափանցելով ելքի և մուտքի երկրների կենսագործունեության բազմաթիվ ոլորտներ՝ այն առաջացնում է սոցիալական և էթնոմշակութային բնույթի բազմաթիվ փոխազդեցության երևույթներ: Այստեղ կարևորվում են շարժունակ էթնիկ խմբերը՝ առանձնակի տեղ զբաղեցնելով տեղաշարժերի հետևանքով առաջացող խնդիրներում: Սա պայմանավորված է նրանով, որ հատկապես էթնիկ միգրանտներն են դառնում բնակչության այն առանձնահատուկ խումբը, որը տար-

* ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի սփյուռքի հետազոտությունների բաժնի վարիչ, պատմ. գիտ. դոկտոր, karapetyan.ruben.s@gmail.com, հոդվածի ընդունման օրը՝ 21.11.2018, գրախոսման օրը՝ 18.02.2019:

¹ Հոդվածը շարադրված է ՀՀ-ում անցկացված էթնոսոցիոլոգիական նյութերի հիման վրա: Հետազոտությունն անցկացվել է ՀՀ կրթության նախարարության գիտության պետական կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ «Բելառուսի հայերը Հայաստան-Բելառուս էթնոմշակութային կապերի միգրացիոն համատեքստում՝ էթնիկ ավանդույթներ և ներկա իրավիճակը» հայ-բելառուսական համատեղ նախագծի շրջանակներում:

բեր էթնոսոցիալական միջավայրերի հետ շփման հետևանքով ձևավորում է գիտակցության և վարքի յուրատեսակ կարծրատիպեր:

Նման պարագայում միջպետական միգրացիոն հոսքերի նկատվող աճը ավելի հավանական է դարձնում էթնիկ տարրի ազդեցության ուժեղացումը ներընտանեկան, ներսոցիալական և միջէթնիկ հարաբերություններում ինչպես նոր, այնպես էլ նախկին միջավայրերում:

Լինելով որոշակի էթնիկ խմբի ներկայացուցիչ և միևնույն դեպքում հայտնվելով այլէթնիկ միջավայրի ազդեցության տակ՝ միգրանտը դառնում է սեփական և այլէթնիկ սոցիալական, մշակութային և այլ տարրերի կրողը ու, հաշվի առնելով նրա կապերը նախկին միջավայրի հետ, նաև փոխանցողը: Սրանով էթնիկ միգրանտները նպաստում են այն իրական փոխակերպման գործընթացներին, որոնք տեղի են ունենում նոր և նախկին բնակավայրում: Այս առումով նրանց արժեքային համակարգի խաթարումը, պատկերացումների, կողմնորոշումների առանձնակի դրսևորումները մեծ չափով կախված են մի շարք գործոններից: Առաջին գործոնը նոր շրջապատի էթնոսոցիալ հատկանիշներն են: Երկրորդը այսպես կոչված «ելքային» հատկանիշներն են՝ սոցիալական, ծագումնաբանական, մշակութային և այլն: Երրորդ գործոնը նոր միջավայրի հետ փոխգործողության բնույթն է: Իսկ չորրորդը միգրանտի կապերի բնույթն է նախորդ միջավայրի հետ:

Այսպիսով, կախված տեղաշարժերի ծավալներից, միգրացիոն խմբերն ունակ են ազդելու մուտքի և ելքի երկրների սոցիալական, քաղաքական մթնոլորտի վրա ինչպես այսօր, այնպես էլ հեռանկարում: Այս հանգամանքը հարուցում է քաղաքական, տնտեսական, սոցիալական և այլ բնույթի բազմաթիվ խնդիրներ, որոնք կարևոր են բնակչության նման փոխանակմանը մասնակցող երկրների համար. այդ են վկայում այդ խնդրի շուրջ ընթացող հանրային բուռն քննարկումները: Վերջիններիս առկայությունը հաստատում է մասնակից երկրների համար այդ գործընթացի հետևանքների վերաբերյալ գիտելիքների ստացման և համակարգման կարևոր սոցիալական պատվերի առկայության մասին:

Անդրադառնալով միգրացիայի էթնոսոցիալական հետևանքներին՝ մեծապես արդյունավետ է որպես ուսումնասիրության թիրախ ընտրել նախկին միութենական այն պետությունները, որոնք արդի շրջանում փոխադարձ անմիջական ակտիվ միգրացիոն կապերի մեջ են: Դրանց մի բևեռը միգրացիոն հոսքերի ընդունող երկիրն է, մյուսը՝ այդ հոսքերը սնու-

ցողը: Վերջինս այն երկրների շարքում է, որի աշխատանքային ռեսուրսների նշանակալի մասն իր սահմաններից դուրս է: Այս երկու «բևեռներում», որտեղ ըստ երևույթին ընթանում են էթնոսոցիալ փոխակերպումների գործընթացները, անհրաժեշտ է հետևել դրանց զարգացման միտումներին: Դա հնարավորություն կտա ըմբռնելու արդի փուլում ընթացող բնակչության ներպետական և միջպետական տեղաշարժերի զարգացման օրինաչափությունները և պատկերացնելու հեռանկարը:

Վերը նշվածի համատեքստում առանձին նշանակություն են ստանում Բելառուսի և Հայաստանի միջև եղած միգրացիոն հարաբերությունները, որում առաջինը հանդիսանում է որպես ընդունող երկիր, իսկ երկրորդը՝ սնուցող: Ըստ բնակչության վիճակագրական տվյալների՝ Բելառուսում դիտարկվում է առանձնակի սոցիալական և ծագումնաբանական կազմով բնորոշ հայերի քանակի աճ²:

Երկու ժողովուրդների բազմադարյա հարաբերությունների հենքի վրա և բելառուսների պատմական զարգացման մեջ հայերի կարևոր դերին զուգահեռ՝ արդի պատմական ժամանակահատվածն առանձնանում է նոր գործընթացներով և երևույթներով: Այս խնդրին անդրադարձել են Ա. Երմալովիչը³ և Ն. Ավետյանը⁴: Բելառուսում հայերի քանակի մասին բավական մանրամասն տեղեկություններ կարելի է ստանալ նաև 2009 թ. այնտեղ անցկացված մարդահամարի տվյալներից⁵:

Ըստ նշված հեղինակների՝ պատմական կտրվածքով հայերի՝ Բելառուս տեղափոխման ժամանակագրությունն ընդգրկում է երեք հիմնական շրջան՝ խորհրդային շրջան, անկախության ու Արցախյան պատերազմի առաջին տարիներ և XX դ. դարի վերջին տասնամյակ: Ակնհայտ է, որ նրանք ներկայանում են առանձնահատուկ էթնիկական միատարր, սակայն ծագմամբ բազմատարր կազմով ու սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչներով՝ ըստ այդ երկրում հաստատման ժամանակահատվածի: Նշված ժամանակահատվածներին համապատասխան՝ հայ-բելառուսական միգրացիոն կապերը կրում են նաև փուլային բնույթ: Դրանք, դրսևորվելով հիմ-

² Ст'ю **Аветян Н.** Армянская диаспора в Республике Беларусь. LAP – Lambert Academic Publishing, 2015, էջ 80:

³ **Ермалович А.** Армяне в Беларуси /А.Ермалович// Несси, 1995, N 5, с. 8-12.

⁴ **Аветян Н.** Армянская диаспора в Республике Беларусь.

⁵ Национальный статистический комитет Республики Беларусь. Перепись населения 2009 года. Национальный состав населения, Минск, 2009.

նականում միջանձնային հարաբերությունների ոլորտում, դառնում են երկու էթնոսների միջև փոխազդեցության մեխանիզմ, որը ժամանակի ընթացքում ունակ է տարածվելու հասարակական հարաբերությունների տարբեր ասպարեզների վրա:

Ենթադրվում է, որ, ուսումնասիրելով մշակույթով մոտ և դրական վերաբերմունքով* Բելառուսի բնակչության շրջանում հայերի ադապտացիայի սոցիալական և մշակութային կողմերը, կարող ենք որոշել նոր միջավայրում հայ էթնոսի սոցիալական և ծագումով տարբեր խմբերի գոյատևման ընդհանուր և առանձնահատուկ գծերը, և, որ շատ կարևոր է, Հայաստան ներգաղթի հեռանկարները:

Այս առումով Բելառուսի և Հայաստանի միջև ներկայումս ստեղծված միգրացիոն կապերի և նրանց զարգացման ուսումնասիրության խնդիրը կարևոր նշանակություն է ստանում հայրենիք-սփյուռք փոխհարաբերությունների ընդհանուր հիմնախնդրի շրջանակներում: Մյուս կողմից էլ, հետևելով այդ կապերի շարժունակությանը և բացահայտելով դրանց բովանդակությունը, հնարավոր է հասկանալ միգրացիոն գործընթացների էթնոսոցիալ բնույթը և պատկերացնել հեռանկարները:

Միևնույն դեպքում իրար հետ հաղորդակցվող երկու բևեռների (հայրենիք-սփյուռք) անդամները մարդիկ են որոշակի կենսագրությամբ, վարքագծով, պատկերացումներով և արժեքներով: Եվ այս ամենը բավական դինամիկ դաշտում է, քանի որ մենք գործ ունենք մասնատված կառուցվածքների հետ, որոնք պետք է ուրույն դրսևորվեն տարբեր միջավայրերում: Առաջին միջավայրը ելքի միջավայրն է, որի կենսակերպը խաթարված է նրա որոշակի անդամների բացակայության պատճառով: Մյուսը մուտքի միջավայրն է, որտեղ ընթանում են նախորդ միջավայրը լքած անդամների ներխուժումը և հարմարեցումը: Նման պարագայում երկու միջավայրերում առաջանում են նոր տիպի գործընթացներ:

Պարզորոշ է, որ այդ երկու միջավայրերում ընթացող գործընթացների մասնակիցները նշված խնդիրները ուսումնասիրողի համար բավական բովանդակալից տեղեկատվության աղբյուր են: Վերջինս որոշակի է և դրանից օգտվելու համար անհրաժեշտ է կիրառել այնպիսի մեթոդաբա-

* Դրա վկայությունն են երկկողմ և բազմակողմ դաշնակցային հարաբերությունները, Հայաստանի անդամակցությունը ՀԱՊԿ-ին և ԵվրԱզԷՍ-ին:

նություն, որի հիմքում բարեկամական-հարևանական կապերի ցանցում գործառվող տեղեկատվությունն է: Ըստ այդմ՝ արյունակցական կապերը կարող են նպաստել խմբի արյունակից, բարեկամ մյուս անդամների մասին տեղեկատվություն ստանալու, անկախ նրանից, թե ինչ հեռավորության վրա են նրանք:

Ինչպես ցույց տվեց մեր նախորդ փորձը⁶, այս աղբյուրը բավական հավաստի և հուսալի է: Նշված համատեքստում Բելառուսում բնակվող միգրանտներին դիտարկենք որպես սոցիալ-մշակութային առանձնակի տարրերի կրող և փոխանցող և դրա կոնկրետ արտահայտությունների հիմամբ ուսումնասիրենք միջմշակութային փոխազդեցության գործընթացների տրամաբանությունը սոցիալ-ժողովրդագրական կտրվածքով: Այս նպատակով կատարեցինք Հայաստանում բնակվող և Բելառուսի հետ միգրացիոն, հետևաբար էթնոսոցիալ կապեր ունեցող ընտանիքների հետազոտություն՝ պարզելու Բելառուսի հետ միգրացիոն առնչությունների դերը, բելառուսական էթնոմշակութային տարրերի ներթափանցման ուղիները և տրամաբանությունը ՀՀ գյուղական բնակչության շրջանում: Վերջինիս ընտրությունը բացատրվում է հետևյալ երկու նկատառումով: Առաջինը բխում է այն պարզ դատողությունից, որ գյուղական բնակչությունը, մանավանդ խոշոր քաղաքներից, մասնավորապես Երևանից հեռու բնակավայրերից ավելի ավանդապահ է և ներփակված է իրեն հատուկ մշակութային միջավայրում: Հետևաբար բնակչության այդ զանգվածի հիման վրա ավելի դյուրին է պարզաբանել միջմշակութային ներթափանցման գործընթացը:

Երկրորդ հանգամանքը բացատրվում է նրանով, որ, լինելով ավելի ավանդապահ, սերտ կապեր է պահպանում հայրենիքից հեռացած իր նախկին հարևանի, համագյուղացու կամ հարազատի, բարեկամի հետ: Այս կապերի ամրության մասին են վկայում նախորդ հետազոտությունների նյութերը: Ըստ այդմ՝ գյուղական բնակչությունը, ի տարբերություն քաղաքայինի, արյունակցական և բարեկամական կապերի մեջ ավելի լայն շառավիղներ է ընդգրկում՝ առավել սերտ առնչվելով հայրենիքից հեռացած անձանց հետ⁷:

⁶ Տե՛ս Կարապետյան Ռ.Ս., Միգրացիան և հայկական նոր սփյուռքը. էթնոսոցիոլոգիական ուսումնասիրություն, Ե., 2013:

⁷ Կարապետյան Ռ.Ս., Միգրացիան և հայկական նոր սփյուռքը..., էջ 5-8:

Երրորդ հանգամանքը կապված է այն նախադրյալի հետ, որ ուսումնասիրման այսպիսի թիրախը հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչպես և ինչ տրամաբանությամբ է ընթանում մշակութային մերձեցումը օտար միջավայրում: Սա շատ կարևոր է այն առումով, որ սփյուռքի ձևավորման գործոնների և բնութագրիչների, մասնավորապես միգրացիայի և սփյուռքի առաջացման փոխկապակցված գործընթացների վերաբերյալ զգալի հակասական դատողություններ կան:

Չորրորդ հանգամանքը. ինչպես ցույց տվեցին մեր ուսումնասիրությունները և Բելառուսում անցկացված սոցիոլոգիական հարցումների նյութերը⁸, այնտեղ բնակվող հայերի առանձնակի խումբ են ծագումով Լոռու մարզի Տաշիրի տարածաշրջանի գյուղերից գաղթած բնակիչները: Այդ նյութերը, ինչպես նաև հարցազրույցը Ն. Ավետյանի հետ վկայում են, որ Բելառուսը բավական սերտ միգրացիոն կապեր է հաստատել մասնավորապես Սարչապետ, Տաշիր, Մեծավան, Լեռնահովիտ բնակավայրերի բնակչության հետ*: Այսպիսով, առանձնացվել էր մոտ հարյուր ընտանիք, որոնք ունեն հետևյալ կազմը. 24՝ բարդ (եռասերունդ), 19՝ պարզ, երկսերունդ, 13՝ մեկ սերունդ, 4՝ ոչ լրիվ կազմ:

Դրանցից 45-ը Բելառուսում, բացի այլ բարեկամներից, ունեն մտերիմ հարազատներ (ծնող, երեխա, եղբայր, քույր), 40-ը՝ միայն հորեղբայր, հորաքույր, քեռի կամ մորաքույր, իսկ 15-ը՝ հեռու բարեկամ կամ համագյուղացի: Ըստ Հայաստանում բնակվող արյունակիցներից ստացված տեղեկատվության՝ հայերի այդ զանգվածը ցրված է Բելառուսի ողջ տարածքում, որից յուրաքանչյուր չորրորդը՝ գյուղական բնակավայրերում: Ըստ այդմ՝ էմիգրանտ հարազատները բնակվում են այդ երկրի մոտ 34 բնակավայրերում արդեն հինգ տարուց ավելի: Դրանց ճնշող մեծամասնությունը՝ մոտ

⁸ Տե՛ս **Аветян Н.** Армянская диаспора в Республике Беларусь. LAP Lambert Academic Publishing, 2015, с. 118-132.

* Վերոնշյալը հիմք էր ուսումնասիրության թիրախ ընտրել Տաշիրի տարածաշրջանի այն բնակիչներին, որոնք արյունակցական կապեր ունեն Բելառուսում գտնվող միգրանտների հետ: Այդ նպատակով ուսումնասիրության ընտրանքը կատարվել է երեք փուլով: Առաջին փուլ՝ ընտրվել են այն գյուղերը, որոնցից նկատվել էր ամենախնտեսիվ հոսքը Բելառուս: Դրանք են Տաշիր, Սարչապետ, Լեռնահովիտ և Մեծավան բնակավայրերը: Երկրորդ փուլ՝ երեք գյուղերի ծխամատյաններից դուրս բերվեց յուրաքանչյուր տասներորդ ընտանիքը, իսկ Տաշիրից՝ յուրաքանչյուր տասներորդ բնակիչը՝ ընտրողների ցուցակից: Երրորդ փուլն առանձնացրեց այն ընտանիքները (և անձանց), որոնց արյունակիցները (ընտանիքի անդամները կամ բարեկամները) Բելառուսում են:

80 տոկոսը, Բելառուսում բնակություն է հաստատել ամբողջ ընտանիքով (ամուսին, կին և երեխաներ), յուրաքանչյուր հինգերորդը կա՛մ միայնակ է, կա՛մ ամուսնու/կնոջ հետ: Սա արդեն վկայում է այդ երկրի հետ առանձնակի միգրացիոն կապի մասին, որը, ըստ երևույթին, բացատրվում է երկրի բարենպաստ պայմաններով (տնտեսական և սոցիալական)*:

Նյութերի վերլուծությունը ցույց տվեց, որ Բելառուս տեղափոխված հայերի մեծ մասն ամուսնացած է եղել, կամ, ապրելով այնտեղ, նախընտրել է ամուսնանալ տաշիրցու հետ: Դրա մասին է վկայում ինչպես ասացողների տեղեկատվությունը, այնպես էլ վիճակագրությունը՝ ընդամենը երկուսն են ամուսնացել բելառուսի, իսկ ութը՝ ռուսի հետ: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Բելառուսում բնակվող հայերի ճնշող մեծամասնությունը կա՛մ տեղափոխվել է ընտանիքով, կա՛մ, անգամ միայնակ գնալով այդ երկիր, այնուամենայնիվ, նախընտրել է ամուսնանալ հայի հետ: Այն փաստը, որ օտարազգի ամուսնությունների դեպքում ռուսները չորս անգամ ավելի են, քան բելառուսները, վկայում է երկու ուշագրավ երևույթի մասին: Նախ՝ օտար միջավայրում էթնիկ փոքրամասնությունը նախընտրում է սերտանալ մեկ այլ՝ այսպես կոչված տիտղոսակիր ազգի «ճնշման» տակ գտնվող էթնոսի հետ՝ միջավայրին հակազդելու մղումով: Երկրորդը վկայում է էմիգրանտի ավելի հեռահար նպատակների մասին՝ ՌԴ մեկնելու տրամադրությամբ: Այս միտումը թերևս նկատվում է Բելառուսի բոլոր բնակիչների շրջանում, որի խորապատկերի վրա հայերի մեջ դիտարկվող քանակի նվազումը (ըստ մարդահամարների տվյալների՝ նրանց քանակի գագաթնակետը 1999 թվականն էր) տրամաբանական է: Ըստ երևույթին, Բելառուսը հայ միգրանտների որոշակի խմբերի համար դառնում է տառանցիկ երկիր:

Հարցվողների մեծ մասը բավական ստույգ տեղեկություն տվեց նշված տարածաշրջանից Բելառուս տեղափոխված անձանց՝ նոր միջավայրում սոցիալական ձեռքբերումների մասին: Այս առումով պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ ծագումով տաշիրցի այս միգրանտները Բելառուսում նախքան վերջնականապես հաստատվելը այնտեղ աշխա-

* Ըստ հարցման ենթարկված 100 ընտանիքներից ստացված տվյալների՝ տեղեկություն ստացվեց Բելառուսում բնակվող մոտ 350-400 անձանց և հետևաբար ընտանիքների մասին:

տանքային միգրանտներ են եղել՝ մեծավ մասամբ զբաղվելով ֆիզիկական աշխատանքով: Այժմ, ըստ տեղեկատվության, նրանց սոցիալական կազմը քիչ է փոխվել: Հայաստանում բնակվող արյունակիցների բանավոր պատմությունները վկայում են այն մասին, որ կանանց կեսից ավելին զբաղված է տնային տնտեսությամբ, մի մասը ծառայում է, մի հատվածն էլ խոհարար է: Տղամարդկանց մեծ մասը զբաղված է շինարարությունում (35%), գյուղատնտեսությունում (30%), տրանսպորտում՝ որպես վարորդ (10%), առևտրում՝ որպես վաճառող (25%): Ինչքանով են այս միգրանտները ամրապնդված Բելառուսում, կարելի է պատկերացնել այնտեղ նրանց սեփականության առկայությամբ: Այս պարագայում պետք է հաշվի առնել նաև Բելառուսի քաղաքական առանձնահատկությունը, որն ավելի մոտ է սոցիալիստականին, քան կապիտալիստականին: Սակայն, միևնույն է, ըստ Հայաստանում հարցվածների՝ Բելառուսում բնակվող իրենց բարեկամների 95 տոկոսը բնակության երկրում չունի սեփականություն, և հակառակը՝ երկու երրորդից ավելին Հայաստանում ունի սեփական տուն, յուրաքանչյուր տասներորդը՝ հողատարածք: Նրանց ճնշող մեծամասնությունը հաճախակի կապ է պահպանում Հայաստանում բնակվող հարազատների հետ սկայպով և վայբերով, իսկ ամեն հինգերորդը հանդիպումներ է կազմակերպում կա՛մ Հայաստանում (95%), կա՛մ Բելառուսում (40%): Այս տեղեկատվությունը վկայում է Բելառուսի հայերի շրջանում որոշ ռեէմիգրացիոն տրամադրությունների առկայության մասին: Նրանց սովոր մասը վերջնականապես չի կտրում կապը հայրենիքի հետ՝ ունի այնտեղ սեփականություն և պահպանում է հարաբերությունները ՀՀ-ում մնացած բարեկամների հետ: Ավելին, Հայաստանում մնացածների կեսը տրամադրված է մնալ հայրենիքում: Իսկ արտագաղթելու տրամադրվածների երկու երրորդը ձգտում է ՌԴ, քսանական տոկոսներն էլ՝ Բելառուս՝ հարազատներին միանալու պատճառաբանությամբ և այլ երկիր տեղափոխվելու: Գաղթելու են տրամադրված մեծահասակներից յուրաքանչյուր չորրորդը (երեխաներին միանալու դրդապատճառով), երիտասարդներից՝ յուրաքանչյուր երրորդը (աշխատանքի և ապագայի խթանով), ամբողջ ընտանիքով՝ յուրաքանչյուր երրորդ ընտանիքը (աշխատանք և ապագա):

Հարցման մեջ ընդգրկված հաջորդ տեղեկատվական հատվածը կոչված էր պարզաբանելու միգրացիոն գործոնը միջմշակութային հարաբերություններում: Պարզորոշ է, որ միգրանտները, լինելով օտարազգի մի-

ջավայրում, լուրջ ազդեցության տակ են՝ ինչպես սոցիալական բնույթի (ակներև էր նրանց սոցիալական հատկանիշների օրինակով), այնպես էլ մշակութային: Հետևաբար, բնակչության տվյալ հատվածը, ադապտացվելով նոր միջավայրին, դառնում է այդ մշակույթի տարրեր կրողը: Բացի դրանից, վերջիններս բարեկամական սոցիալական ցանցի միջոցով հաղորդակից են դարձնում նախորդ բնակավայրի հարազատներին և, շատ հավանական է, ամբողջ միջավայրին:

Միջէթնիկ մշակութային փոխազդեցության տարրերը բացահայտելու և այդ տարրերի գերակշռող և անհետացող մասերը հասկանալու, հետևաբար այդ գործընթացների տրամաբանությունն ընկալելու առումով հատկապես կարևոր է պատկերացում ունենալ մշակութային յուրաքանչյուր տարրի գերակայության աստիճանի ու տեղի մասին: Դիտարկենք նշվածը միջնորդավորված, այսինքն՝ էմիգրանտների՝ Հայաստանում գտնվող արյունակիցների վրա մշակութային ազդեցության չափորոշիչներով: Ըստ հարցվածների կարծիքների՝ միջնորդավորված (էմիգրանտների միջոցով) բելառուսական ազդեցությունն առաջին հերթին վերաբերում է խոհանոցին (հարցվողների մոտ 40 տոկոսը): Ըստ հարցվողների կարծիքի՝ նշվել է բելառուսական խոհանոցի 14 ճաշատեսակ (առաջին՝ կաղամբի, շավիլի, ձկան և սնկի ապուրներ, երկրորդ՝ դրանիկ, վարենիկ, բլիներ, կրոկյանիկ, բուլբաշ ճաշատեսակներ): Ըստ հարցվողների՝ մի քանի տիպիկ բելառուսական մթերքից առանձնանում են սալը, կեֆիրը և բերյոզայի հյութը: Նշելով բելառուսական խոհանոցի ճաշատեսակները՝ հարցվողները ոչ միայն ցույց են տալիս իրենց իմացությունը, այլև դրանց մեծ մասի օգտագործումը խոհանոցում:

Ազդեցության երկրորդ կարևոր տարրը, ըստ Բելառուսում բարեկամներ ունեցող հայաստանցիների, ընտանեկան նիստուկացն ու հարաբերություններն են: Հարցվողների 15 տոկոսի կարծիքով, կարևորագույններից են ամուսինների իրավահավասարությունը և մաքրասիրությունը: Սա բավական ուշագրավ ազդանշան է (հիմնականում կանանց կողմից)՝ ընդօրինակելու այդ ազգի ընտանեկան հարաբերությունները: Ըստ հարցվողների՝ հատկապես կարևորվում են նպատակադրումների (կյանքի արժեքների) առանձնահատկությունները, այսպես կոչված «կյանքը վայելելու» ուղղվածությունը, որ բնորոշ են բելառուսներին (10 տոկոս): Դրանք ևս ինչ-

որ չափով արժե ընդօրինակել բելառուսներից: Այս առումով հարցվողների կեսը կա՛մ բացասում է, կա՛մ դժվարանում է պատասխանել այս հարցին:

Օրինաչափ է նաև մշակութային ազդեցության մեկ այլ հատկանիշի՝ լեզվական վարքի, մասնավորապես լեզվի իմացության խնդիրը: Առաջին հերթին պետք է նշել, որ երկու լեզվի (կամ երեք լեզվի) տիրապետողները հարցվածների համարյա 90 տոկոսն են, որից միայն 5-ը գիտակ են բելառուսերենի, 75-ը՝ ռուսերենի, 14-ը՝ այլ լեզվի: Սա ցույց է տալիս մի կողմից այն մասին, որ ուսման ընթացքում չդասավանդվող լեզվի իմացությունը (խոսքը բելառուսերենի մասին է) կախված է անմիջական շփումից: Դա էլ հաստատվեց հարցման ընթացքում: Բելառուսերենի իմացությունը ձեռք էր բերվել անձնական շփումներից այդ երկրում գտնվելու ժամանակ՝ աշխատանքային միգրացիայի ընթացքում: Եվ պատահական չէ, որ բելառուսերենին տիրապետում են նրանք, ովքեր ունեցել են անմիջական և երկարատև շփում: Այստեղ միջնորդավորվածության գործոնը չի աշխատում: Մնացած լեզուները հարցվողը ձեռք է բերել կա՛մ դպրոցում, կա՛մ ընտանիքում ստացած գիտելիքների շնորհիվ: Նաև պարզորոշ է, որ ռուսերենի իմացությունը (մոտ 90 տոկոսը), որը կախված է դպրոցից և ընտանիքից, շփումների հնարավորություն է տալիս Բելառուսում:

Միգրացիայի միջոցով միջնորդավորված միջմշակութային փոխազդեցության հատկանիշներից մեկը այլ մշակութային տարրերի ներթափանցումն է անձի կենսագործունեության հուզական ոլորտ: Կարևորներից է տոնաձիսական համակարգը, որն ունի ինչպես ընտանեկան, այնպես էլ հասարակական և քաղաքական բնույթ⁹: Այն փաստը, որ և՛ բելառուսները, և՛ հայերն ընկղմված էին ընդհանուր խորհրդային տոնաձիսական համակարգի մեջ, ցույց է տալիս, որ այդ տարրերի առկայությունը օրինաչափ է և տրամաբանական: Զարմանալին այն է, որ այդ տոները (մարտի 8, փետրվարի 23, մայիսի 1 և այլն) հարցվողները դիտարկում են որպես բելառուսական: Այսինքն՝ օտարազգի, հատկապես հետխորհրդային ազգերի տոնաձիսական համակարգը դիտարկվում է ինչ-որ չափով օտարամուտ «խորհրդային» տոնաձիսական համալիրի մեջ, որը, հարցվողների կարծիքով, ավելի է պահպանվել այդ երկրում, հետևաբար այդ երկրի մշակույթի առանձնահատկության ցուցանիշ է: Հետևաբար, բելառուսականը դիտարկվում է և՛ խորհրդային, և՛ քրիստոնեական համակարգի մեջ, որոնց կող-

⁹ Տե՛ս Մկրտչյան Ս.Ս., Հայոց տոնաձիսական մշակույթ, Ե., 2016, էջ 7:

քին առկա է նաև կոնկրետ սլավոնականը (Իվան Կուպալա, Մասլենիցա և այլն): Նկատվում է նաև ևս մեկ միջնորդավորված ազդեցության տարր, այն է՝ Բելառուսի պետական տոները (անկախության, բերքի, մայրության, քաղաքի օրերը): Ուշագրավ է նաև այն փաստը, որ ժամանակակից նորամույժ տոները, որոնք այլ ճանապարհներով արդեն Հայաստանի բնակչության տոնական մշակույթի մեջ են (Սբ. Վալենտինի օրը, Հելոինը և այլն), նույնպես դիտարկվում են որպես բելառուսական ազդեցության արտահայտություն:

Մշակութային միջնորդավորված ազդեցության այլ ցուցիչներ են տվյալ երկրի արվեստի նմուշներին ծանոթ լինելը, մշակույթի և պետական գործիչներին ճանաչելը: Նախքան դրա վերլուծությունը անհրաժեշտ է նշել արդի Հայաստանում և երևի հետխորհրդային տարածքում բնակչության մշակույթի «սպառման» առումով բավական միատարր և ոչ բազմազան բնույթը: Այսպես, օրինակ, 1980 թ. ՀՀ 13 քաղաքի և 25 գյուղի էթնոսոցիոլոգիական ուսումնասիրությունների ընթացքում մոտ 6000 հարցվողների պատասխաններում նշվեցին մոտ 201 գրողի, 158 երգահանի, 76 նկարչի, 195 դերասանի անուններ: Մինչդեռ 2007 թ. նույն հարցերի պատասխաններում (հարցվողների նույն քանակի պարագայում) այդ թվերը նվազեցին՝ 12, 7, 5, 20¹⁰: Ակնհայտ է, որ այդ «բազմազանության» կրողները, որոնք ոչ հեռու անցյալում որոշակի սոցիալական շերտ էին, արդեն ՀՀ-ում չէին և, հավանաբար, նախկին այլ հանրապետություններում էին: Այս խորապատկերի վրա բելառուսական մշակույթի որոշ նմուշների և գործիչների անուններ, այն է՝ մոտ տասը երաժշտական խումբ, երաժիշտներ՝ Բելայա Ռուս, Բելովեժսկայա Պուլչա, Դորոգնում և Սեաբրի, Ռիբակ, Կոլդուն և այլն, մեր հարցվողների պատասխանների ցանկում հայտնվեցին:

Այսպիսով, եթե Բելառուսի համար այս երևույթի գիտական իմաստավորումն արդիական է այդ հասարակությունում հայերի ինտեգրման էթնոմշակութային բնույթի որոշարկման առումով, ապա Հայաստանի համար այն կարևորվում է բնակչության զարգացող տեղաշարժերի ուղղվածության և հաճախականության ըմբռնման տեսանկյունից: Ակնհայտ է այս ոլորտում գիտելիքների համակարգման անհրաժեշտությունը, քանի որ առաջացող խնդիրները պահանջում են գիտական իմաստավորում՝

¹⁰ Տե՛ս **Karapetyan R.S.** Migration in cities of Armenia. Ethnosociological survey, Yerevan, 2013, pp. 165-179:

քաղաքական, ինստիտուցիոնալ, սոցիոմշակութային և տնտեսական բնույթի որոշումների կայացման նպատակով:

Այդ նպատակով առաջադրված խնդիրը և նրա ուսումնասիրության մեթոդաբանությունը ապահովեցին հավաստի տեղեկատվություն Բելառուսում գտնվող հայերի շրջանում ընթացող գործընթացների մասին: Նման պարագայում այս մեթոդը բավական դյուրին է դարձնում ճշգրիտ տեղեկություն ստանալը ոչ միայն այլ երկրում (մասնավորապես Բելառուսում) բնակվող հայերի մասին, այլև նրանց սոցիալական ցանցերի միջոցով տեղեկատվական և դրա հիմքի վրա միջմշակութային առնչությունների քննությունը: Մասնավորապես հնարավոր եղավ հետևելու Հայաստանում միջնորդավորված, միգրանտների սոցիալական ցանցերի միջոցով փոխանցվող օտարազգի մշակութային տարրերի տարածման և յուրացման տրամաբանությանը:

ՀԱՅ-ԲԵԼԱՐՈՒՍԱԿԱՆ ԷԹՆՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՆՈՐԴԱՎՈՐՎԱԾ ԿԱՊԵՐԻ ՇՈՒՐՋ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Ռ.Ս.

Ամփոփում

Բելառուսում ապրող միգրանտները հայ-բելառուսական մշակութային հարաբերություններում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում: Հայաստանի հարազատների հետ հաստատված սոցիալական կապերի միջոցով նրանք բելառուսական մշակույթի որոշ տարրեր են փոխանցում մեր հանրապետության՝ ազգային առումով միատարր միջավայրին: Էթնոսոցիոլոգիական ուսումնասիրությունը ցույց է տվել, որ երկրից հեռացած միգրանտների՝ Հայաստանում բնակվող հարազատների միջոցով հայկական միջավայր են փոխանցվել և տարածվել զուտ բելառուսական ճաշատեսակներ, նրանց բաղադրիչները, առօրյա կյանքի և ընտանեկան հարաբերությունների տարրեր, բելառուսական հասարակությանը բնորոշ տոներ և ծեսեր: Այսպիսով, կարելի է պնդել, որ միջմշակութային փոխազդեցությունը, բացի ուղիղ միջանձնային փոխազդեցություններից, կարող է առաջանալ անուղղակիորեն՝ միգրացիայի հետևանքով ստեղծված սոցիալական ցանցերի միջոցով:

Բանալի բառեր՝ միգրացիա, սոցիալական ցանցեր, միջմշակութային կապեր, փոխազդեցություն, հարազատներ, Հայաստան, Բելառուս:

О ОПОСРЕДОВАННЫХ АРМЯНО-БЕЛАРУССКИХ ЭТНОКУЛЬТУРНЫХ СВЯЗЯХ

КАРАПЕТАН Р.С.

Резюме

Живущие в Беларуси мигранты из Армении занимают особое место в армяно-беларусских культурных взаимосвязях. Посредством сложившихся социальных связей с родственниками в Армении они вносят в мононациональную среду нашей республики определенные элементы белорусской культуры. Мигранты интегрируют в армянскую среду чисто белорусские блюда, их ингредиенты, некоторые элементы быта и семейных отношений и т.д. Тем самым можно утверждать, что межкультурное взаимодействие, помимо непосредственных межличностных взаимосвязей, может происходить опосредованно – через сложившиеся в результате миграций социальные сети.

Ключевые слова – миграция, социальные сети, межкультурные связи, взаимовлияние, родственники, Армения, Беларусь.

ON ARMENIAN-BELARUSIAN ETHNIC-CULTURAL INTERCOURSE

R. KARAPETYAN

Abstract

The migrants living in Belarus play a special role in the Armenian-Belarusian cultural relations. Through social ties with Armenia's relatives, they share some of the Belarusian culture with a homogeneous nation-state.

The actual ethno-sociological study has shown that migrants from the country have been transferred to the Armenian environment through their relatives living in Armenia and have been distributing purely Belarusian dishes, their ingredients, elements of everyday life and family relationships, typical Belarusian holidays and rituals. Thus, it is obvious, that intercultural interaction, in addition to direct interpersonal interactions, may occur indirectly through social networks created as a result of migration.

Key words – migration, social networks, intercultural relations, mutual influence, relatives, Armenia, Belarus.

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՎՏԱՐԱՆԴԻՈՒԹՅԱՆ ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆԸ XX ԴԱՐԻ ԻՐԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ. ՍԱԴԵՂ ՀԵԴԱՅԱԹ, ՂՈԼԱՄ ՀՈՍԵՅՆ ՍԱԵԴԻ

ՍԱՖՐԱՍՏՅԱՆ Լ.Մ.*

Համաշխարհային գրականությունը և պատմությունը պարունակում են վտարանդիության մասին պատմող ողբերգական, ռոմանտիկ և հերոսական փաստեր, որոնք ջանքեր են՝ հաղթահարելու օտարացման վնասված իրականությունը: Գրող Փ. Թաբորիի «Վտարանդիությունը մարդկության պատժի մի ձև է՝ իր սոցիալական զարգացման բոլոր փուլերում»¹:

Իրանական վտարանդի գրականության պատմությունն ուսումնասիրելիս հարկ է անդրադառնալ այն գրողներին, որոնք ապրել են նույն պատմաշրջանում, ունեցել են իրենց սերնդին հատուկ քաղաքական, սոցիալական, մշակութային և վտարանդիության փորձառությունը, ներսերընդային հարաբերությունները և ձևավորվել են որպես խումբ: Այսպիսով, XX դարասկզբի իրանական գրողների խումբը, որն ապաստան էր գտել Եվրոպայում, մասնավորապես Ֆրանսիայում և Գերմանիայում, հանդես եկավ որպես վտարանդի գրական համայնքի ավագ սերունդ:

Իրանական մտավորական սփյուռքի պատմության մեջ մեծ դերակատարում ունի ֆրանսիական սփյուռքը, որն առավել հայտնի է որպես ուսանողների, վտարանդի մեծանուն գրողների և քաղաքական ընդդիմադիրների համայնք: Առաջին հիշատակումները կապված են 1885-1886 թթ. հետ, երբ Ֆարոխ խան Ղաֆարին, հետագայում՝ Ամին ալ Դոուլեն, ուղարկվում է Փարիզ՝ որպես դեսպանորդ, որի գործունեության տարիներին Դար

* Բանասիրական գիտ. թեկնածու, ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետ, lilit.saf.rastyan@gmail.com, հոդվածի ընդունման օրը՝ 8.04.2019, գրախոսման օրը՝ 16.05.2019:

¹ Afrough Sh., Safari H., Azizi K. The Poetics of Exile: Travelling in the Land of Intellectual Adventures, - International Journal of Humanities and Management Sciences' (IJHMS), Vol. 1, Issue 1, ISSN 2320-4044, 2013, pp. 1-3.

ույ Ֆոնունի² քառասուներկու պարսիկ շրջանավարտներ, որոնք ստանում են *Les enfants de Perse* (Պարսկաստանի զավակներ) անվանումը, ուսումը շարունակում են Ֆրանսիայում: XIX դարավերջին իրանական համայնքը համալրվում է քաղաքական ընդդիմադիրներով և նորեկ ուսանողներով:

Մեծ իրադարձություն էին պարսիկ և եվրոպացի մտավորականների մշտական հավաքները և դասախոսություններն Իրանի վերաբերյալ, որոնք հիմք են դարձել 1912-1914 թթ. Փարիզում հրատարակելու հայտնի «*Իրան-շահր*» պարբերականը, որը հանդես էր գալիս որպես մտավորական վտարանդիության պաշտոնաթերթ: Չկա ստույգ տեղեկատվություն այն մասին թե՛ արդյո՞ք 1922 թ. Գերմանիայում հրատարակվող հայտնի «*Իրանշահր*» պարբերականը փարիզյան համանուն պարբերականի շարունակությունն էր, թե՞ ոչ:

1978 թ. Փարիզում ժամանակավոր վտարանդիության մեջ էր գտնվում նաև այաթոլլա Խոմեյնին: 1979 թ. Իսլամական հեղափոխությունից հետո զանգվածային արտագաղթի ժամանակ մարդկանց շատ փոքր հատված է ապաստան գտնում Ֆրանսիայում, որոնք մեծապես ներկայացնում էին ավանդական դարձած իրանական վտարանդիության մտավորական և քաղաքական ընդդիմադիր շրջանակները³: Ֆրանսիայում իրանական վտարանդի գրականության ներկայացուցիչներից են մեծանուն արձակագիրներ Սադեղ Հեդայաթը և Ղոլամ Հոսեյն Սաեդին, որոնց կյանքը ունեցավ ողբերգական ավարտ:

Կա միայն մեկ ճշմարիտ, փիլիսոփայական լուրջ խնդիր, և դա ինքնասպանությունն է, - այսպես է խորհում Ալբեր Բամյուն իր «Սիզիփոսի առասպելում»⁴: Փարիզում, 1927 թ. կատարած ինքնասպանության առաջին փորձից քսանչորս երկար ու տառապալից տարիներ անց, ստեղծագործական բուռն դեգերումներից հետո, 1951-ին ընդհատվում է XX դ. մեծանուն մտավորական, թարգմանիչ, իրանական արդիապաշտական գրակա-

² Դար ու Ֆոնունը առաջին բարձրագույն ուսումնական հաստատությունն է Ղաջարական Իրանում, որը հիմնադրվել է 1851 թ. մեծ վեզիր Ամիր Քաբիրի կողմից: Հաստատության առաջին ղեկավարն է եղել Միրզա Քոլի Խան Հեդայաթը՝ Ս. Հեդայաթի նախապապը, իսկ դասախոսների թվում էր հայազգի, իրանական պետական գործիչ դիվանագետ, լուսավորիչ, գրող Միրզա Մեյքոմ Խանը:

³ Vida Nassehi - Behnam, FRANCE xvii, Persian Community in France - Encyclopaedia Iranica, Vol. X, Fasc. 2, pp. 184-187.

⁴ Camus A. The Myth of Sisiphus and other essays, New York, 1991, p. 3.

նության հիմնադիր՝ Սադեղ Հեդայաթի կյանքը: Գրողի ինքնասպանությունը նրա վերջին արվեստի «գործն» էր:

Հայտնի հեղայթագետ Հ. Քաթուզիանը նշում է. «Հեդայաթը միշտ անկեղծ ու բաց քննադատ էր ...և արմատական մտավորականներից նրա անջատումը վերջինիս վերածեց «virtual e'migre»-ի իր իսկ սեփական երկրում: Այն պակաս դեր չունեցավ 1940-ականներին սկսված ընկճախտի շարունակականության գործում, որը 1951-ին ավարտվեց ինքնասպանությամբ»⁵:

Հեդայաթի վտարանդի կյանքի վկայություններն են 1947-1948 թթ. պարսկական նոր արձակի հիմնադիր՝ Մ. Ալի Ջամալզադեին և մտերիմ ընկերոջը՝ Ֆրանսիայում դիվանագիտական առաքելության մեկնած Շահիդ-Նուրայիին գրած նամակները: 1930-ականներին Հեդայաթը հույս ուներ հյուրընկալվել Շվեյցարիայում բնակվող Մ. Ջամալզադեին, սակայն մեկնում է Հնդկաստան՝ գրող, իր ընկեր և կենսագիր Շին Փարթուին հյուր: 1936 թ. Բոմբեյում, Փարսի զրադաշտական համայնքում հայտնի գիտնական Բահրամգոր Թահմոռազ Անգլեսարիայի մոտ պահլավերեն ուսանելու ընթացքում գրում է պատմվածքներ և 1937 թ. տպագրում իր հայտնի «Քոռ բու» վիպակը՝ հիսուն օրինակով, որի մեծ մասը Ջամալզադեի աջակցությամբ հասցնում է Իրանից դուրս գտնվող իր ընկերներին:

Հեդայաթի հնդկաստանյան կյանքի մասին վկայություններ կան գրողի՝ ընկերներին, մասնավորապես՝ Մոջթաբա Մինովիին, Ջամալզադեին և չեխ իրանագետ Ժ. Ռիպկային ուղղած նամակներում: 1925 թ. Եվրոպա մեկնած Հեդայաթը հանգրվանում է Փարիզում, որտեղ 1927 թ. կատարում է ինքնասպանության առաջին փորձը՝ նետվելով Մառն գետը, և փրկվում է ձկնորսների ջանքերով: 1930 թ. վերադառնում է Իրան, 1950 թ. դեկտեմբերի 3-ին մեկնում է Փարիզ՝ իր ծանր ու տառապալից դեգերումների վերջին հանգրվանը:

Փարիզյան այցի պատճառը նրա մտերիմ ընկերոջ՝ Ֆրանսիայում իրանական դեսպանատան աշխատակից Շահիդ Նուրայիի հորդորն էր և քաջալերանքը: Եվրոպայում էր նաև գրողի մեկ այլ ընկերն ու գաղափարակիցը՝ Լոնդոնում BBC-ի պարսկական գրասենյակի աշխատակից Մասուդ Ֆարզադը: Փարիզ ժամանելուց առաջ Հեդայաթը Շվեյցարիայում

⁵ **Katouzian H.** Sadegh Hedayat: His Work and His Wondrous World, New York: Routledge, 2008, p. 4:

հյուրընկալվում է Զամալզադեի տանը: Փարիզյան այցի հենց առաջին օրերը նրան պարուրում են անկայունության ու հոռետեսության զգացումով: Շահիդ Նուրային մահացու հիվանդ էր. «Ճակատագրի հեզանքով և՛ Նուրային, և՛ Հեդայաթը մահանում են գրեթե նույն ժամանակահատվածում, առանց տեղեկանալու միմյանց վախճանի մասին»: Իր ընկերներից մեկին՝ Աբդուլասեմ Էնջավի Շիրագիին ուղղած նամակում Հեդայաթը գրում է. «Ես այստեղ ուրախություն չգտա, մեկուսացել եմ բոլորից, հատկապես իրանցիներից, գումարն էլ վերջանում է, սակայն ինչ հոգ: Ոչ մի գույն այնքան թանձր չէ, որքան սևը»⁶: Փարիզում հեդայաթյան դեգերումների քարտեզագրումը սկսվում է Մոնպառնասի և հաջորդաբար՝ Սուրբ Միքայելի էժան հյուրանոց-կացարաններով: Դեռ վաղ փետրվարին ֆրանսիական ներգաղթյալների ծառայության կողմից տրված երկամսյա կեցության իրավունքը, ինչպես նաև բոլոր սպասումները հասնում են վերջնակետին: Հուսալքված գրողը կարճատև այցով մեկնում է Համբուրգ՝ իր զրադաշտական ընկերոջը տեսակցելու: 1951 թ. մարտի 10-ին եղբորը՝ Մահմուդին գրած հերթական նամակում հայտնում է իր մտահոգությունը. «Այստեղ իրանցիների համար կան բազում խնդիրներ: Մտադիր եմ մեկնել Շվեյցարիա կամ մեկ այլ վայր»⁷: Դեկտեմբերի 22-ին Էնջավիին գրած նամակում նշում է. «Ես նույնիսկ կինոթատրոն, թատրոն կամ սրճարան չեմ հաճախում: Ավելի վաղ եմ պառկում քնելու, քան սովոր էի Թեհրանում»⁸:

Խոչընդոտներն ու ողբերգական իրադարձությունները հաջորդում են միմյանց: Էնջավիի և Զամալզադեի՝ Հեդայաթի համար Շվեյցարիայի մուտքի արտոնագիր ձեռք բերելու բոլոր ջանքերը պսակվում են անհաջողությամբ: Դրան հաջորդում է ընտանեկան ողբերգությունը: 1951 թ. մարտի 7-ին Թեհրանում սպանվում է քրոջ ամուսինը՝ Իրանի 58-րդ վարչապետ Հաջ Ալի Ռազմարան:

Փարիզում Հեդայաթի միակ ընկերը նրա ողբերգական օրերի ականատեսն ու ուղեկիցն էր երիտասարդ ուսանող Մուսթաֆա Ֆարզանեն, որն ապրիլի 1-ին, գրողին կատարած հերթական այցի ժամանակ, Դենֆեր Ռոշերո փողոցի հյուրանոցային էժանագին սենյակի նախաշեմին դրված

⁶ **Katouzian H.** Sadegh Hedayat: The Life and the Legend of an Iranian Writer, London, New York, 2002, p. 247.

⁷ Նույն տեղում:

⁸ Նույն տեղում, էջ 248:

զամբյուղը գտնում է լցված՝ ճմրթված թղթերով, որոնց մեջ տեղ էին գտել Հեղայաթի մահագուշակ խոհերը. «Ես ինձ հիվանդ եմ զգում, երբ վերցնում եմ գրիչը ձեռքս»⁹:

Հեղայաթի հուսալքված, անտարբեր պահվածքի մասին են խոսում նաև ֆրանսիացի հայտնի իրանագետներ, Հեղայաթի և Ջամալզադեի մտերիմ ընկեր Պիեռ Մենասը և Հենրի Մասեն: Սադեղ Հեղայաթը 1951 թ. ապրիլի 4-ին ինքնասպանություն է գործում Շափիոն 37 հասցեում գտնվող փարիզյան իր վերջին հանգրվանում: Փարիզի մի մզկիթում սակավաթիվ ընկերների և ծանոթների ներկայությամբ և Հ. Մասեի կարճ մահախոսական ճառով հրաժեշտ են տալիս Իրանի մեծ զավակին, հանճարեղ գրողին՝ դեպի հավերժական կյանք: Հեղայաթը թաղված է Պեր Լաշեզ 87-ում, շիրմաքարին դաջված է Քոռ բու հիշեցնող պարսկերեն և ֆրանսերեն գրառում:

Մահվանից առաջ Հեղայաթի գրած խորհրդավոր էսսեներից մեկն է «Կաֆկայի ուղերձը» (1948), պարսիկ գրականագետների դիտարկմամբ՝ եզակի փաստաթուղթ, որը պատկերացում է տալիս ոչ միայն Կաֆկայի հեղայաթյան ըմբռնումների, ընթերցումների ու թարգմանությունների, այլ նաև վերջինիս՝ արդի պարսկական գրականության տեսլականի մասին¹⁰:

Հեղայաթի ինքնասպանության լեգենդը բանավոր ավանդույթի մի մասնիկը չէ, այլ, հակառակը, տարատեսակ տարբերակներ կարելի է գտնել տասնյակ գրքերում, հոդվածներում, հուշերում և հիշատակություններում, որոնք տպագրվել են նրա մահվանից հետո: Դեռևս 1949 թ. Թեհրանում նա կորցրել էր որևէ հետաքրքրություն կյանքի հանդեպ, սակայն ցանկություն չուներ վերջ տալու սեփական կյանքին, քանզի Թեհրանը համարում էր անարժան մի վայր կամ սիրում էր Փարիզը և ցանկություն ուներ թաղվել հենց այդ քաղաքում:

Կար մեկ այլ տարբերակ. Հեղայաթը չէր ցանկանում կյանքն ավարտին հասցնել Իրանում, քանզի չէր ուզում սեփական դիակով աղտոտել արիական հայրենիքը¹¹: 2009 թ. կինոռեժիսորներ Մ. Շահրնազդարի և Ս. Քալանթարի հեղինակությամբ նկարահանվում է գրողի կյանքի վերջին

⁹ Katouzian H. Sadegh Hedayat: The Life and the Legend of an Iranian Writer, p. 252.

¹⁰ Rahimieh N. Hedayat's translation of Kafka and the logic of Iranian modernity (Katouzian H. Sadegh Hedayat: His Work and His Wondrous World, pp. 124-136).

¹¹ Katouzian H. Sadegh Hedayat: The Life and the Legend of an Iranian Writer, pp. 243-244.

օրերը լուսաբանող՝ «No 37-ից» ֆիլմը: Իսկ ահա 2004-ին սփյուռքում բնակվող հայտնի կինովարպետ Ղ. Էբրահիմյանը, որը կինոբեմադրիչ Շ. Նեշաթի բազում ֆիլմերի համահեղինակն է, նկարահանում է «Սուրբ և արքայադուռ» կարճամետրաժ ֆիլմը, որը ներկայացվում է Թրիբեկայի կինոփառատոնում, որտեղ հնչում է Գ. Մահլեթի «Հինգերորդ սիմֆոնիան»¹²:

Վտարանդիության ու տխուր վախճանի ուղին էր ճակատագիրն ընտրել իրանական գրականության մեկ այլ մեծահամբավ գրող, դրամատուրգ Ղոլամ Հոսեյն Սաեդին: «Վտարանդիությունն ինձ համար վերցրեց բառի ոչ թե *nos* հատվածը, այլ երկրորդ *algia*-ն՝ հեռավորության տենչանք, հեռավորության սեր: Արտիստը սահմանային բնակիչ է, ապրում է իր սեփական լեզվի տանը, իր սեփական ավանդույթների, իր սեփական անցյալի բացարձակ կուրության մեջ: Բոլոր գրողներն են սիրում տարօրինակ հեռավորությունը: Կյանք մահից հետո, լինելով վերջինիս ծայրահեղ ձևը՝ մենք հորինեցինք վերակենդանացումը, քանզի այն հիմնված է բացարձակ մթության վրա»¹³:

Ղոլամ Հոսեյն Սաեդին վտարանդիությունը նույնացնում է պարսկերեն «ավարեզի»՝ շրջմոլիկություն, թափառաշրջիկություն բառի հետ: «Համարյա երկու տարի է, ինչ դարձել եմ փախստական այս վայրում՝ ամեն երկրորդ գիշերն անցկացնելով ընկերներիս տանը: Ոչինչ իրական չի թվում: Փարիզյան շինությունները թատերական զարդարանքների են նմանվում: Ինձ թվում է՝ ես ապրում եմ փոստային նամակի մեջ: Սարսափում եմ երկու բանից՝ քնելուց և արթնանալուց»¹⁴:

1969 թ. Սաեդիի և Դ. Մեհրջուիի համատեղ գլուխգործոցից՝ «Կովը» իրապաշտական կինոկտավից հետո նրանց ստեղծագործական համատեղ միությունը շարունակվում է մինչև Սաեդիի ողբերգական մահը¹⁵: 1981 թ. Թեհրանում տեղի ունեցած արյունոտ ցույցերից հետո «Իրանի գրողների միության» շատ անդամներ, խուսափելով ֆիզիկական կտտանքներից և

¹² 1987 թ. կինոբեմադրիչ Ռաուլ Ռուզը (Չիլի) նկարահանում է *La Chouatte aveugle* ֆիլմը՝ Հեղայաթի «Քոռ Բու» վիպակի հիման վրա, իսկ 2005 թ. Խ. Սինային՝ Հեղայաթի մասին պատմող «Երկխոսություն ստվերի հետ» փաստագրական ֆիլմը:

¹³ **Baraheni R.** *Exilic Blindness: The Unwritten Autobiography of a Dramatist in Paris* Posthumously Dictated to a Friend (Modern Drama, Volume 46, Number 1, Spring 2003, p. 114-115).

¹⁴ **Naficy H.** *The Making of Exile Cultures: Iranian Television in Los Angeles*, 1993, p. 11.

¹⁵ **Dabashi H.** *Corpus Anarchicum: Political Protest, Suicidal Violence and the Making of Posthuman Body*, London, 2012, EBook (PDF), p. 167.

աքսորից, լքում են երկիրը: Միության անդամները՝ պարտված և ուժասպառ, հարկադրված էին ընտրություն կատարել վտարանդիության-տան-արտագաղթի, ֆիզիկական կամ զգայական անտնության միջև: Միության անդամների վերջին հայտարարությունը՝ «Ռեպրեսիա, բռնապետություն, խեղդամահություն» խորագրով, լույս է տեսնում հուլիսին, «Բուստան» պարբերականում:

1981 թ. Սաեդին ապաստան է գտնում Փարիզում, 1982 թ. վերականգնավորում է «Իրանի գրողների միությունը վտարանդիության մեջ» կառույցը և վերականգնում «Ալեֆբե» պարբերականի հրատարակությունը, ինչպես նաև հիմնում է «Իրանի թատերական միությունը»: 1983 թ. հրատարակում է «Փարիզյան եռագրություն» ժողովածուն:

Գրողի՝ վտարանդի տարիների արձակը տանջահար ու անկենդան է, երբեմն նույնիսկ կցկտուր, ոչ նման նրա նախկին տարիների պերճախոս ոճին: 1986 թ. գրում է «Օթելլոն հրաշքների երկրում և հայելի հղկող պատմասացները» երգիծական-ողբերգական պիեսը՝ ցույց տալով Շեքսպիրի իսլամացումը Իրանում: Պիեսը թարգմանվում է Մ. Ֆիլիպսի կողմից և բեմականացվում Օհայոյի համալսարանում: Վտարանդիության տարիներին են ծնվում նաև մի շարք ֆիլմերի սցենարներ, այդ թվում՝ «Մուլուս Քորփուսը» իր սիրելի կինովարպետ Դ. Մեհրջուիի ֆիլմի համար¹⁶:

2005-ին «Ավատարը վտարանդիության մեջ» էսսեում Սաեդին գրում է. «Վտարանդիները պետք է բարձրաձայնեն աշխարհին, բոլոր լեզուներով, թե ինչ է տեղի ունեցել իրենց երկրում: Նրանք պետք է պատմեն յուրաքանչյուրին: Նրանք պետք է պատմեն այն սև կտորի մասին, որով մի քանի դահիճներ ծածկում են աշխարհը՝ խեղդելով մարդկանց: Կապանքները պետք է հեռացվեն շրթունքներից: Եկել է բղավելու պահը: Եթե դուք չբղավեք, եթե չթափահարեք աշխարհին, այն հայացք չի նետի ձեզ վրա: Աստիճանական մահը, տևական մահը ձեզ դանդաղ կհափշտակի, ինչպես փտախտը»¹⁷:

¹⁶ Farrokh F., Yavari H. Sa'edi, Gholam - Hosayn.- Encyclopedia Iranica, December 6, 2012 (www.iranicaonline.org/articles/saedi-gholam-hosayn).

¹⁷ Saedi Gh. H. Avatars in Exile, trans Pakravan S.,- Chanteh, Spring: 35, 1993.

«Բոլոր գրողներն օտարներ են՝ ուր էլ որ լինեն, տանը, թե դրսում»¹⁸: Այնուհետև Սաեդին հավելում է. «Երբ առաջին անգամ ժամանեցի Փարիզ, հյուրընկալվեցի ընդդիմադիրների տանը, գիտնականները թարգմանեցին իմ աշխատանքները: Երկու հազար էջ ուղարկվեց ամերիկյան գլխավոր պարբերականներին: Նրանք բոլորը միաբերան մերժեցին: Անհասկանալի են գործերը, և պահանջում են ծանր վերախմբագրում՝ պատճառաբանումով»¹⁹:

Գրողի դիտարկմամբ՝ «Դեռ համակրանք կա Արևմուտքի հանդեպ, այն գրողների հանդեպ, որոնք ենթարկվել են կոտանքների կամ ազատագրված, սակայն ոչ ոք չի կռահում, որ այդ տառապանքների պատճառը գրքերն են, որոնք կմնան չիրատարակված կամ, եթե իրատարակվեն, նրանց գինը կլինեն կոտանքները, դատավճռի ահը, և վերջապես, ինչպես նշում է իմ կենսագիրը՝ կոտրված հոգին»: Իսկ վտարանդիության իր ողիսականի վերջին բաբախյունների մասին այսպես է գրում տանջահար գրողը. «Ես իմ ժամանակն անցկացնում էի խմելով: Ամիս առ ամիս կույր էի ձևանում... Հանկարծ ես այլևս կույր չէի ձևանում: Ես կույր էի: Ես կարիք ունեի մարդկանց, որոնք փողոցում կուղեկցեին ինձ: Նստած էի տանը՝ սպասելով մահվան: Հայրենաբաղձությունը այլ կողմում էր: Կուրացած հուշերն ամենուրեք են: Կար միայն մի ելք. խմել, խմել՝ երևույթները բառերի վերածելու մտածումով»²⁰:

Գրականագետ Ռ. Բարահենին Սաեդին նվիրված՝ «Վտարանդիական կուրություն: Փարիզում դրամատուրգի չգրված ինքնակենսագրություն՝ հետմահու նվիրված ընկերոջս» հոդվածում մտորում է. «Ես մահացա Փարիզում 1985 թ.: Այստեղ եմ, Պեր Լաշեզում, ճիշտ տասնմեկ շիրիմ Մարսել Պրուստից այն կողմ, որից ոչինչ չեմ ընթերցել, և հեռու Ս. Հեդայաթից: Հեդայաթը հեռացավ իր երկրից՝ սպանելու համար իրեն մեկ այլ երկրում: *No nos, no algia: Swan ավարտը: Վտարանդիության ավարտն է*»²¹:

Հոդվածի վերջում Ռ. Բարահենին հիշատակում է այն գրողներին, որոնք իրենց մահկանացուն կնքեցին վտարանդիության մեջ. Սեյդ Մոհա-

¹⁸ **Baraheni R.** Exilic Blindness: The Unwritten Autobiography of a Dramatist in Paris Posthumously Dictated to a Friend, p. 115.

¹⁹ Նույն տեղում, էջ 117:

²⁰ Նույն տեղում:

²¹ Նույն տեղում, էջ 118:

մադ Ալի Զամալզադե (1892, Սպահան - 1997, Ժնև)՝ 81 տարի վտարանդիության մեջ, Բոզորգ Ալավի (1904, Թեհրան - 1997, Բեռլին)՝ 50 տարի, Սադեղ Չուբաք (1916, Բուշեհր - 1998, Բրքլի)՝ 22 տարի, Թադի Մոդարեսի (1933, Թեհրան - 1997, Բալթիմոր)՝ 40 տարի²²:

Ղոլամ Հոսեյն Սաեդիի վտարանդիության դառը կենսափորձի ամփոփումն է «Վտարանդիության ազատությունը և վերաճևավորումը» էսսեի հետևյալ մտորումը. «Վտարանդին, եթե նույնիսկ կենդանի է, մեռած է»²³:

Վտարանդիության ծանր հոգեվիճակի մասին է հիշատակում Իսլամական հեղափոխությունից հետո Փարիզում ապաստան գտած արձակագիր, գրականագետ, թարգմանիչ Մահշիդ Ամիրշահին: «Տանը» վեպի նախաբանում Ամիրշահին գրում է. «Երբեմն օրերով տնից դուրս չէի գալիս, երբեմն գիշերներ շարունակ չէի վերադառնում տուն: Երբեմն զգում էի միայնակ ուրիշների մեջ, երբեմն, երբ միայնակ էի, երազում էի ամբոխի մասին: Երբեմն ցանկանում էի մոռանալ ամեն ինչ, երբեմն չէի ցանկանում ոչինչ կորցնել իմ հուշերից»²⁴:

Վտարանդիության դառը փորձառության մասին մեկ այլ հայտնի գրող՝ Գոլի Թարադին իր պատմվածքի («Առաջին օրը») անգլերեն թարգմանված տարբերակում գրում է. «Իրանը քեզի 1979 թ., Իսլամական հեղափոխության նախաշեմին, և երկու զավակներիս հետ ապաստանեցի Փարիզում: Բավական մանկամիտ էի՝ մտածելով, որ այս սկզբի քաոսային իրարանցումը կվերադառնա բնականոն կյանք, և ես կկարողանամ վերադառնալ: Մեկ տարի անց ես հոսպիտալացվեցի հոգեբուժական հիվանդանոց: Դեղահաբերը վերականգնեցին իմ մտավոր կայունությունը և օգնեցին հաղթահարել այդ սարսափելի ընկճախտը: Սակայն այն, ինչ եկավ ինձ պահպանելու և դուրս բերելու ընկճախտի մութ ճիրաններից, գրականության մոգական ուժն էր»²⁵:

²² **Baraheni R.** Exilic Blindness: The Unwritten Autobiography of a Dramatist in Paris Posthumously Dictated to a Friend, p. 118.

²³ **Darvishpour M.** The New Nest and Horizons of Exile: A Sociology of Diaspora Literature (Gozaar: A Forum on Human Rights and Democracy of Iran, 01, February, 2008).

²⁴ **Naficy H.** The Making of Exile Cultures: Iranian Television in Los Angeles, 1993, pp. 11-12.

²⁵ **Taraghi G.** The First Day, Author's Note. - Words Without Borders, August 2008, <http://www.wordswithoutborders.org/article/the-first-day>.

Այսօր էլ պարսիկ գրականագետների ուսումնասիրությունների ծիրում են այն քաղաքական, սոցիալական, հոգեբանական դրդապատճառները, որոնք հարկադրում են ստեղծագործող անհատին ընտրել վտարանդիության դառը ճանապարհը: Հայրենիքից հեռու ստեղծագործող գրողների մասին այսպես է մտորում գրականագետ Փ. Քարիմը. «Իրանցի գրողները այսուհետև ոչ միայն իրանական կամ վտարանդի գրողներ են, այլև «աշխարհի գրողներ»²⁶:

Ամփոփելով նյութը՝ նշենք, որ Իսլամական հեղափոխությունից հետո սկսված՝ գրողների մեծ արտագաղթը, մեծացնելով վտարանդիության աշխարհագրության ֆիզիկական սահմանները, անխախտ պահեց նրանց՝ միայնության, հուսալքության, տուն, հայրենիք և վերադարձ չունենալու համամարդկային զգացումները:

ՎՏԱՐԱՆԴԻՈՒԹՅԱՆ ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆԸ XX ԴԱՐԻ ԻՐԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ. ՍԱԴԵՂ ՀԵԴԱՅԱԹ, ՂՈԼԱՄ ՀՈՍԵՅՆ ՍԱԵԴԻ

ՍԱՖՐԱՍՏՅԱՆ Լ.Մ.

Ամփոփում

Իրանական մտավորական սփյուռքի պատմության մեջ մեծ դերակատարում ունի ֆրանսիական սփյուռքը, որն առավել հայտնի է որպես ուսանողների, վտարանդի մեծանուն գրողների և քաղաքական ընդդիմադիրների համայնք: Ֆրանսիայում իրանական վտարանդի գրականության ներկայացուցիչներից են մեծանուն արձակագիրներ Սադեղ Հեդայաթը և Ղոլամ Հոսեյն Սաեդին, որոնց կյանքը օտարության մեջ ունեցավ ողբերգական ավարտ: Հայրենիքի հանդեպ տաժաժ մեծ սերը Հեդայաթի հետ էր մինչև մահը: Փարիզում գտնվելու տարիներին նա ապրում է խորը հուսալքություն և դիմում է ինքնասպանության: Հեդայաթի ամենահայտնի ստեղծագործությունը՝ «Քոռ բուն», գրվել է Հնդկաստանում, նույն-

²⁶ Karim P. Writing Beyond Iran: Reinvention and the Exilic Iranian Writer, - World Literature Today, Vol. 89, No. 2, March 2015, p. 35.

պես օտարության մեջ: Վտարանդիության մեջ ապրելու ցավը, հուսալքությունն ու կարոտը նաև Հեղայաթի հայրենակից, մեծ գրող և դրամատուրգ Ղուամ Հոսեյն Սաեդիին մղում են վերջ տալու կյանքին: Վտարանդիության տարիներին են գրվում Սաեդիի շատ հայտնի ստեղծագործություններ:

Բանալի բառեր՝ Իրան, վտարանդիություն, արձակագիր, Ֆրանսիա, Իսլամական հեղափոխություն, օտարացում, մահ:

ТРАГИЧЕСКИЙ ОПЫТ ИЗГНАНИЯ В ИРАНСКОЙ ЛИТЕРАТУРЕ XX ВЕКА: САДЕГ ХЕДАЯТ, ГОЛАМ ХОССЕЙН САЕДИ

САФРАСТЯН Л.М.

Резюме

Иранская колония в Париже, состоящая большей частью из студентов, писателей и политических оппозиционеров, сыграла значимую роль в истории иранской интеллектуальной диаспоры. Ее наиболее известными представителями были писатели-эмигранты Садег Хедаят и Голам Хоссейн Саеди, жизнь которых окончилась трагически.

С. Хедаят до последнего дня своей жизни был исполнен патриотических чувств. Чувство безнадежности, охватившее его в эмиграции, явилось причиной самоубийства. Получившее наибольшую известность произведение Хедаята “Слепая сова” также было написано в эмиграции – в Индии.

Многие произведения представителя современной иранской прозы и драматургии Голама Хоссейна, снискавшие ему мировую известность, также были созданы в годы парижской эмиграции. Глубокая ностальгия по Родине привела к его трагической гибели.

Ключевые слова – Иран, изгнание, Исламская революция, Франция, прозаики, отчуждение, смерть.

TRAGIC EXPERIENCE OF EXILE IN THE 20TH CENTURY IRANIAN LITERATURE. SADEGH HEDAYAT, GHOLAM HOSSEYN SA'EDI

L. SAFRASTYAN

Abstract

The Iranian Diaspora of France best known as a community of students, famous immigrant writers and political oppositionists played a great role in the history of Iranian intellectual Diaspora. The most outstanding representatives of the immigrant Iranian writers Sadegh Hedayat and Gholam Hosseyn Sa'edi ended their lives in the strange land tragically. Great love for homeland was with Hedayat to his last day. The sense of hopelessness gripping the immigrant writer in the years he spent in Paris led to the suicide. The best known book of Hedayat – "The Blind Owl" was written also in immigration – when he was in India. The pain of living in exile, hopelessness and home – sickness engulfing Hedayat's compatriot a great prosaic and play writer Gholam Hoseyn Sa'edi also led him to end his life. Many of Sa'edi's famous writings were written in the years of immigration.

Key words – Iran, exile, France, Islamic revolution, fiction writers, alienation, death.

ՊԱՏՃԱՌԱՀԵՏԵՎԱՆՔԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒՄԸ ԳՈՐԾԱՐԱՐ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Լ.Ա.*

Զանգվածային լրատվության արդի միջոցները մարդու կեցության ան-
քակտելի մասն են, քանի որ իրականացնում են շրջակա աշխարհում տեղի
ունեցող իրադարձություններն իրազեկելու կարևորագույն գործառույթը:
Լրատվական այնպիսի միջոցներ, ինչպիսիք են թերթերը, ամսագրերը,
հեռուստատեսությունը և համացանցը, ժամանակակից մարդու հասարա-
կական կեցության անբաժանելի բաղադրիչներն են, իրադարձությունների,
փաստերի, շրջակա աշխարհի երևույթների հետ հաղորդակցվելու հիմնա-
կան գործիքը: ԶԼՄ-ների շնորհիվ է հասարակության յուրաքանչյուր ներ-
կայացուցիչ ընկղմվում իրադարձությունների հորձանուտը, ընկալման
տարբեր մակարդակներում վերապրում դրանք:

ԶԼՄ-ների դիսկուրսը ներկայանում է երկու տեսակով՝ լրագրային-
հրապարակախոսական և վիրտուալ, որոնց տարբերությունը տեղեկատվու-
թյան հաղորդման և արտացոլման ձևերի ու միջոցների մեջ է: Եթե լրա-
գրային-հրապարակախոսական դիսկուրսում տեքստի նյութական կրիչ-
ներն են թղթե պարբերականները, ապա վիրտուալ դիսկուրսին բնորոշ են
տեղեկության տեսողականացման զանազան տարբերակներ (ռադիո, հե-
ռուստատեսություն, պաստառային գովազդ): Զանգվածային հաղորդակցու-
թյան առանձնահատուկ բնագավառ են համաշխարհային ցանցում տեքս-
տերի հրապարակումը: Այն շատ արդիական է՝ համացանցային տեխնոլո-
գիաների զարգացմամբ պայմանավորված՝ տեղեկատվության արագ հա-
սանելիության շնորհիվ:

Մ. Ժելտուխինյան ԶԼՄ-ների դիսկուրսը սահմանում է որպես կա-
պակցված, խոսքային կամ ոչ խոսքային, բանավոր կամ գրավոր տեքստ՝

* Բանասիրական գիտ. դոկտոր, Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարանի լեզուների ամբիոնի վարիչ, lharutyunyan77@yahoo.com, հոդվածի ըն-
դունման օրը՝ 24.10.2018, գրախոսման օրը՝ 18.04.2019:

գործառույթային, հասարակական-մշակութային, հոգեբանական և այլ գործոնների ամբողջությամբ, զանգվածային հաղորդակցման միջոցներով արտահայտված, իրադարձային առումով վերցված մի ներգործություն, որը մասնակցում է հասարակական-մշակութային փոխազդեցությանը և արտացոլում հաղորդակիցների գիտակցության մեխանիզմը¹:

ԶԼՄ-ների դիսկուրսի առաջնային գործառույթն է տեղեկատվության մատուցումը՝ շրջակա իրականության իրադարձությունների արտացոլումը, որն իր հերթին սերտորեն կապված է մարդու կողմից աշխարհի պատկերի կերտման գործընթացի հետ: Տեղեկությունը, որը հաղորդվում է ԶԼՄ-ների դիսկուրսում, հիմնականում լեզվի օգնությամբ իրագործվող մտավոր հաղորդակցման կարևոր միջոց է, որը դրա առկայացման հիմնական գործիքն է: ԶԼՄ-ների լեզուն՝ վառ և հարաշարժ, հնարավորություն է ընձեռում իրականացնելու համապատասխան դիսկուրսի հիմնական, այն է՝ տեղեկատվական, հետաքրքրաշարժ, կրթական, գովազդային և գաղափարախոսական գործառույթները²:

Զանգվածային լրատվության միջոցների լեզվի բնորոշ գծերից են խոսքային հաղորդակցման ոլորտների և հասարակական առանձին խմբերի խոսքային նորմերի բազմազանությունը, խոսքային սահմանների ընդլայնումը, խոսքի նորաձևությանը հետևելը, «ամերիկանացումը»³:

Տվյալ հոդվածի նպատակն է ուսումնասիրել պատճառահետևանքային կապերի արտահայտման միջոցները գործարար նորություններում՝ «լրագրային հոդված» ձևաչափի շրջանակներում: Պատճառահետևանքային հարաբերություններն օբյեկտիվ իրականության մեջ կատարվող գործընթացների փոխկապվածության և պայմանականության, ինչպես նաև տեքստի իմաստային կառուցվածքի ապահովման առանցքային տարրերից են: Հայտնի է, որ երևույթները, իրադարձությունները, գործընթացները, որ տեղի են ունենում ինչպես բնության, այնպես էլ հասարակության մեջ,

¹ **Желтухина М.Р.** Тропологическая суггестивность масс–медиаьного дискурса: о проблеме речевого воздействия тропов в языке СМИ, М.–Волгоград, 2003, с. 132.

² **Добросклонская Т.Г.** Вопросы изучения медиатекстов (опыт исследования современной английской медиаречи), М., 2005, с. 21, 184.

³ **Володина М.Н.** Язык массовой коммуникации – особый язык социального взаимодействия (Язык средств массовой информации, под общей ред. М.Н. Володиной, М., 2008, с. 22-47).

պայմանավորված են այլ երևույթներով, գործընթացներով, այսինքն՝ որոշակի հանգամանքներով: Ըստ Գ. Հեգելի՝ եթե մի երևույթ որոշակի պայմաններում ձևավորում, առաջացնում է մեկ այլ երևույթ, ապա առաջինը պատճառն է, երկրորդը՝ հետևանքը⁴: Պատճառականությունը համընդհանուր նշանակություն ունի, որովհետև չկա մի երևույթ, որ պատճառ չլինի և հետևանք չդառնա: Վ. Դեմյանկովի կարծիքով՝ իրադարձությունը կարող է ունենալ արտահայտված կամ չարտահայտված պատճառ: Եթե նույնիսկ առաջին հայացքից թվում է, թե իրադարձությունը պատճառ չունի, այդպես էլ: Այն կարող է ունենալ մի քանի պատճառ, որոնցից յուրաքանչյուրն անհրաժեշտ նախապայման է դրա իրականացման համար⁵:

Պատճառականությունն ընդհանուր առմամբ միավորում է նախադրյալի, հիմնավորման, հաստատման, ապացույցի, աղիթի, դրդապատճառի և այլ նմանատիպ հարաբերություններ, որոնք իրադարձությունների միջև ստեղծում են այնպիսի կապեր, որոնց դեպքում իրադարձություններից մեկը բավարար հիմք է մյուսի իրագործման համար: Իր հերթին, արդյունքը կարևոր տարր է իրադարձության համար, քանի որ շատ հաճախ մարդու գիտակցության մեջ վերջինս համակցվում է հենց բուն իրադարձության հետ:

Պատճառականությունը, ըստ Յու. Ստեպանովի, բոլոր առումներով կապված է լեզվի հետ. «պատճառ» հասկացությունը գոյություն ունի միայն որոշակի լեզվի՝ դիսկուրսի շրջանակներում: Հենց այս տեսակետից էլ կարևորվում է պատճառահետևանքային հարաբերությունների և լեզվում դրանց արտահայտման միջոցների ուսումնասիրությունը⁶:

Լեզվաբանության մեջ պատճառական կապերը սահմանվում են որպես իրերի որոշակի դրություն, իրադարձությունների, երևույթների միջև որոշակի տիպի կապեր (պատճառահետևանքային կապեր): Պատճառը և հետևանքը ժամանակային հարաբերության մեջ են, ըստ որի՝ գործողության վերջի և հետևանքի երևան գալու սկզբի միջև գոյություն ունի որոշակի ժամանակահատված: Օրինակ՝ հետևյալ իրադարձության մեջ հստակ

⁴ Гегель Г.В.Ф. Наука логики (Энциклопедия философских наук, в 3 т., т. 1, М., 1975).

⁵ Демьянков В.З. Семиотика событийности в СМИ (Язык СМИ как объект междисциплинарного исследования, ч. 2, М., 2004, с. 68-83).

⁶ Степанов Ю.С. Альтернативный мир, дискурс, факт и принцип причинности (Язык и наука конца XX века, сб. статей, М., 1995).

նշվում է պատճառն առ այն, որ Mr Kipling, Batchelors և Ambrosia մթերա–
յին ապրանքանիշները, մերժելով ամերիկյան McCormick ընկերության կող–
մից կլանման առաջարկը, համագործակցության պայմանագիր են կնքում
ճապոնական Nissin Foods ընկերության հետ: Այնուհետև (after) տեղի է
ունենում նշված ընկերությունների արժեթղթերի գների հանկարծակի աճ.

Shares in the owner of food brands including Mr Kipling, Batchelors
and Ambrosia have surged after it turned down two takeover approaches from
US food group McCormick and struck a cooperation agreement with Japan's
Nissin Foods (The Guardian, March 23, 2016).

Շատ հաճախ գործարար նորությունների հետևանքն արտահայտ–
վում է հոդվածի վերնագրում, և ընթերցողը, ունենալով պատշաճ հենքա–
յին գիտելիք, անմիջապես ընկալում է եղելությունը.

Oil ends steady after Brussels attacks (The Reuters, March 23, 2016).

Տվյալ օրինակում ընթերցողը, տեղյակ լինելով 2016 թ. մարտի 22-ին
Բրյուսելի մետրոներից մեկի կայարանում և ավելի ուշ՝ Զավենտեմ օդա–
նավակայանում տեղի ունեցած պայթյունների և զոհերի մասին, հասկա–
նում է, որ յուրաքանչյուր նմանատիպ ահաբեկչություն ուղղակի ազդեցու–
թյուն ունի համաշխարհային տնտեսական գործընթացների վրա և հե–
տևաբար՝ կարող է խաթարել տնտեսության որոշ բնագավառների գոր–
ծունեությունը, ինչպես նաև պատճառ դառնալ նավթի, ոսկու և այլ ապ–
րանքների գների կտրուկ անկման: Ելնելով այս նկատառումներից՝ նա
անմիջապես վերնագրից ընկալում է նավթի գների կայուն մնալու փաստը:

Որոշ դեպքերում հոդվածի վերնագիրը միաժամանակ հուշում է նո–
րության և՛ հետևանքը, և՛ պատճառը, ինչպես հետևյալ օրինակներում.

Shares in Mr Kipling owner surge after bids rejected (The Guardian,
March 23, 2016).

Virgin America shares soar on reports that **airline is seeking buyers**
(The Guardian, March 23, 2016).

Պատճառը և հետևանքը կարող են արտահայտվել միևնույն նախա–
դասության մեջ՝ այդպիսի ընթերցողին տալով հնարավորություն համա–
պարփակ կերպով ընկալելու իրադարձությունը: Օրինակ.

**A disastrous 2007 harvest, caused by a combination of factors in–
cluding weather and lack of investment in the seed resulting in dwindling**

yields, meant that growers considered abandoning the crop for good (The Financial Times, March 19, 2015).

Ultra-low interest rates after the financial crisis led to insatiable demand for income from investors (The Financial Times, January 28, 2015).

Իրադարձության հետևանքը կարող է լինել և՛ իրական, այսինքն՝ իրականացած, և՛ հնարավոր, բայց դեռևս չիրագործված: Այսպես՝ ստորև բերվող իրադարձություններն արդեն իրագործվել են՝

LinkedIn and other career-networking websites are making it easier for companies to do their own recruiting: JP Morgan Chase now has almost 500 executive recruiters of its own. **As a result of this trend, Korn Ferry collected less revenue from searches last year than in 2008** (The Economist, June 13, 2015).

Aviva is to increase chief executive Mark Wilson's potential pay package to £6.7m as he prepares to lead an enlarged group **as a result of the insurer's planned acquisition of FTSE 100 rival Friends Life** (The Financial Times, March 19, 2015).

Իրական արդյունքի մասին կարելի է խոսել որպես արդեն տեղի ունեցած իրադարձության, մինչդեռ հավանական ելքը հանդես է գալիս՝ կապված հետագա իրադարձության հետ: Լեզվական մակարդակում դա արտահայտվում է եղանակավորման միջոցով: Օրինակ.

John Friedman, an economist at Brown University, estimated that **as a result the drug makers would gain benefits of \$242 billion over a ten-year period** – a healthy return on the \$130m the industry spent on lobbying in the year the law passed (The Economist, June 13, 2015).

“This would be a highly undesirable outcome”, said Tony Dolphin, chief economist at IPPR. **“Households could have more debt, relative to income, by the end of the decade than they had when the financial crisis hit”** (The Financial Times, March 17, 2015).

Գործարար իրադարձության արդյունքը կարող է ունենալ արժևորման տարրեր՝ դրական (բարենպաստ փոփոխություններ տնտեսության մեջ, հանրության, անհատների կյանքում) կամ բացասական (տնտեսության, հանրության, ընկերությունների հետ կապված անբարենպաստ հետևանքներ): Այսպես՝ հոդվածը վերնագրելով «Post-recession Britons are healthier, better off and living greener lives»՝ լրագրողն արդեն իսկ ընթեր-

ցողին ոգևորում է, հաղորդում դրական լիցքեր: Հաջորդիվ լրահուսից տեղեկանում ենք բրիտանացիների ավելի առողջ, ֆինանսապես ավելի կայուն կյանքի, հանցագործությունների ցածր մակարդակի մասին. կյանքի տևողությունը երկարել է, կենսամակարդակը բարձրացել, գործազրկությունը նվազել, ի վերջո՝ Միացյալ Թագավորությունը կարողացել է ձերբազատվել 2007 թ. ֆինանսական ճգնաժամի հետևանքներից.

Recovery from the deepest recession in Britain's post-war history has left Britons healthier, better off, less likely to be victims of crime and living greener lives, according to the latest official snapshot of national wellbeing.

Life expectancy and living standards rose while unemployment fell during a three – year period from 2012–14, a time when the UK finally shrugged off the after-effects of the financial crisis that began in 2007 (The Guardian, March 23, 2016).

Հաջորդ օրինակում գործարար նորությունն ունի բացասական հետևանք, քանի որ վերջին երեք տարիների ընթացքում Ճապոնիայի արտադրող ընկերությունների հանդեպ վստահությունն անկում է ապրել, և ավելին, առաջիկա եռամսյակում առկա են է՛լ ավելի վատթարանալու սպասումներ: Լրագրողն անկումային տրամադրություն է հաղորդում deteriorated, to the lowest, to worsen, concern և worries լեզվաարտահայտչական միավորներով.

Japanese manufacturers' confidence probably deteriorated to the lowest in three years and it is expected to worsen in the coming quarter due to exporters **concern** over a strong yen and **worries** over the global economy, a Reuters poll showed (The Reuters, March 25, 2016).

Այսպիսով՝ հեղինակն ընթերցողի մեջ ձևավորում է իրեն ցանկալի տրամադրվածություն՝ հաստատելով տրամաբանական կապ առանձին երևույթների միջև:

Արժևորման՝ դրական կամ բացասական գաղափարը կարող է հավասարաչափ վերաբերել նաև տնտեսական իրադարձության պատճառին, ինչպես հետևյալ օրինակում.

Thanks to increased life expectancy, the region's army of pensioners will grow rapidly, especially in China, which already has 132m people over the age of 65 (The Economist, June 13, 2015).

Այստեղ լրագրողը պատճառի դրական լինելը փաստում է thanks to արտահայտությամբ. ավելին, կյանքի տևողության մակարդակի բարձրացումն ինքնին լավատեսական նորություն է:

Եվս մեկ օրինակում հոդվածագիրը, ընդգծելով այն փաստը, որ Բրիտանիայում վերջին 25 տարվա ընթացքում երիտասարդների շրջանում և՛ ընդհանուր գործազրկության մակարդակի հարաբերությունը զգալիորեն բարձր է Եվրամիության միջին ցուցանիշից, և՛ ավելի բարձր, քան Իսպանիայում, Հոլանդիայում ու Գերմանիայում, քննադատում է չափից ավելի հավանության արժանացած բրիտանական աշխատուժի շուկայի ճկունությունը՝ նշելով, որ վերջինս կրթական համակարգի հետ լիարժեքորեն չի համագործակցում:

The question is why in Britain the ratio between the youth unemployment rate and the unemployment rate for over 25 years is substantially higher than the EU average and much higher than in Spain, the Netherlands and Germany. The **reason** is, rather, the much applauded flexibility of the British labour market or the lack of connection between the British education system and the labour market (The Financial Times, March 17, 2015).

Այստեղ լրագրողն իր բացասական վերաբերմունքը հաղորդում է the much applauded flexibility և the lack of connection արտահայտությունների օգնությամբ՝ ընթերցողի մեջ առաջացնելով վատատեսական վերաբերմունք:

Լեզվական մակարդակում պատճառահետևանքային կապերը հիմնականում դրսևորվում են պատճառի և հետևանքի երկրորդական նախադասություններով, որոնք կապակցվում են գլխավոր նախադասության հետ as, because, since և այլ շաղկապներով, ինչպես հետևյալ օրինակներում:

As their currencies weaken, capital in these countries confronts low yields at home – spectacularly so in the case of Japan and the eurozone – and higher US Treasury yields, along with further potential dollar strengthening. (The Financial Times, January 7, 2015).

Nokia stumbled in 2007 partly **because** it treated the newly launched iPhone as a phone – one that was less useful, less sophisticated and more fragile than its existing best-selling models. (The Financial Times, March 17, 2015)

However, Uber has an advantage that most delivery and shipping firms lack: it does not have to bear the cost of maintaining its own fleet of vehicles, **since** its drivers supply their own (The Economist, June 13, 2015).

Գործարար իրադարձության պատճառները և հետևանքները ներկայացվում են համապատասխան գոյականների և բայերի միջոցով.

The profit warning, reported just one month after an upbeat third – quarter trading statement, raised questions about the company’s ability to guide the market as analysts pointed to the Black Friday sales as the main **cause** of the company’s woes (The Financial Times, March 17, 2015).

A surge in house building was a significant **reason** for the revival but official data have weakened notably over the past three months, calling into question how long the brick making recovery will last (The Financial Times, March 17, 2015).

“The impact of quantitative easing on corporate pensions and annuities has not been properly appreciated and is one of the dangerous unintended **consequences** of this policy experiment,” said Ros Altmann, an independent pensions expert and investment adviser (The Financial Times, January 7, 2015).

But the way the company interprets its guidelines **has caused** controversy in the past. In 2013 it was criticised for allowing images and videos of people being beheaded to appear on its network, before making a U–turn within days to ban such content (The Financial Times, March 17, 2015).

The difference in approach is no mystery. Europe, with sky–high unemployment, is worried about deflationary expectations taking root. The US, close to full employment, can look past falling prices **induced by** cheap oil (The Financial Times, March 19, 2015).

Profit warnings last year were **triggered** by falling sales across Philips’ healthcare and lighting units, partly caused by currency turmoil in emerging markets, including rouble (The Financial Times, January 28, 2015).

Պատճառական կապերը կարող են ներկայացվել *because of*, *owing to* և *due to* նախդիրներից հետո՝

Food producers usually respond to higher prices by looking for cheaper substitutes, but this is a less viable option for mainstream chocolate producers, mainly **because of** food labeling regulations in Europe and the US, but also for

fear of negative responses from consumers (The Financial Times, November 28, 2015).

The true health costs **owing to** fossil fuel pollution are difficult to quantify, mainly because the adverse health impact from chemical pollutants may not appear for many years (The Financial Times, January 7, 2015).

Foxtons' full-year dividend per share of 9.7p was nearly a third higher than Canaccord's forecast, **due to** the payment of a special dividend (The Financial Times, November 28, 2015).

Հաճախ տնտեսական իրադարձության հետևանքը ներկայացված է thus, therefore, accordingly, hence, consequently մակբայներից և so շաղկապից հետո, ինչպես հետևյալ օրինակներում՝

But if, for an interest rate to be low enough, it needs to drop below zero, sorting things out may well be beyond the powers of the central bank. **Thus** interest rates can be at the same time both extremely low and too high (The Economist, June 13, 2015).

Sales of jewellery and watches are down 16% this year – **hence** the forecasts of lower rents on retail properties (The Economist, June 13, 2015).

The reason this law holds is related to understanding – and to the lack of it. Most people don't have the first idea of how a nuclear power station works, **so** they don't wish to expose their ignorance by discussing it (The Financial Times, January 7, 2015).

Այսպիսով՝ գործարար նորություններում արտահայտված պատճառահետևանքային կապերը կարևոր են իրադարձության իրագործման համար: Պատճառը և հետևանքը կարող են նշվել անմիջապես վերնագրում, կարող են լինել բացասական կամ դրական բնույթի՝ իրենց ուրույն ազդեցությունը թողնելով ինչպես անհատի, այնպես էլ հանրության կենսամակարդակի և ընկերությունների ու կազմակերպությունների գործունեության վրա: Գործարար աշխարհում կատարվող իրադարձության հետևանքը կարող է լինել և՛ իրական՝ իրականացած, և՛ ենթադրյալ: Լեզվական մակարդակում պատճառահետևանքային կապերը կարող են հանդես գալ մի շարք միջոցներով, այդ թվում համապատասխան բառերի՝ գոյականների, բայերի, մակբայների, ինչպես նաև շաղկապների օգնությամբ, որոնք տվյալ պարագայում կապող օղակ են գլխավոր և երկրորդական նախադասությունների միջև:

ՊԱՏՃԱՌԱՀԵՏԵՎԱՆՔԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒՄԸ ԳՈՐԾԱՐԱՐ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Լ.Ա.

Ամփոփում

Պատճառահետևանքային կապերը կարևոր են իրադարձության և երևույթների փոխազդեցության և իրագործման համար: Յուրաքանչյուր իրադարձություն ունի պատճառ և հետևանք, այսինքն՝ փոփոխություն, որը որակապես տարբերվում է ելակետային իրավիճակից: Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ գործարար նորություններում իրադարձության պատճառը և հետևանքը կարող են նշվել անմիջապես վերնագրում, և ընթերցողը, կիրառելով իր հենքային գիտելիքները, կարող է մեկնաբանել այդ իրադարձությունը: Պատճառահետևանքային կապերը կարող են լինել բացասական կամ դրական բնույթի՝ իրենց ուրույն ազդեցությունը թողնելով ինչպես անհատի, այնպես էլ հանրության կենսամակարդակի և ընկերությունների ու կազմակերպությունների գործունեության վրա: Գործարար աշխարհում տեղի ունեցող իրադարձության հետևանքը կարող է լինել և՛ իրական՝ իրականացած, և՛ ենթադրյալ:

Բանալի բառեր՝ ԶԼՄ դիսկուրս, գործարար դիսկուրս, գործարար նորություններ, պատճառահետևանքային կապեր, իրադարձություն, նորությունների բաղադրիչներ, հասարակության կենսագործունեություն:

ОТРАЖЕНИЕ ПРИЧИННО-СЛЕДСТВЕННЫХ ОТНОШЕНИЙ В БИЗНЕС-НОВОСТЯХ

АРУТЮНЯН Л.А.

Резюме

Причинно-следственные отношения являются одной из форм всеобщей связи и взаимодействия событий. Любое явление имеет причину и следствие, т.е. изменение или развитие, качественно отличающееся от исходного состояния. Причина и следствие экономического события яв-

ляются главными компонентами новостей в деловой сфере, которые чаще всего появляются в заголовке новостей, из которого читатель, благодаря своим базовым знаниям, понимает ситуацию. В силу сказанного причина и следствие могут быть реальными и гипотетически возможными, еще не произошедшими. Данные компоненты могут характеризоваться посредством положительной или отрицательной оценки, приводить к изменениям в жизненной или ментальной сфере людей, оказывать влияние на жизнедеятельность отдельных лиц, групп или общества в целом.

Ключевые слова – дискурс СМИ, бизнес-дискурс, бизнес-новости, причинно-следственные связи, событие, компонент новостей, жизнедеятельность общества.

EXPRESSION OF CAUSATIVE AND RESULTATIVE RELATIONS IN BUSINESS NEWS

L. HARUTYUNYAN

Abstract

Causative and resultative relations are considered to be one of the most important forms of interaction between events and phenomena. Any event has a cause and an effect, i.e. a change or development which proves to be completely different from the previous state. The cause and the result of business events can be expressed in diverse ways in news coverage. More often they appear in the headlines of the news, and the readers, owing to their background knowledge can perceive the overall meaning of the news. Depending on the type of the event, the cause and the result can be realistic or hypothetical. These components can be of positive or negative nature and are able to influence people's mentality, their living standards and the activity of society as a whole.

Key words – media discourse, business discourse, business news, causative and resultative relations, event, component of news, activity of society.

ՀԱԿՈՐ ՊԱՐՈՆՅԱՆԸ ԵՎ ԻՐ ԺԱՄԱՆԱԿԸ

ԳԼԶՅԱՆ Ա.Մ.*

Հակոբ Պարոնյանի գրական արժանիքները մեկնաբանելիս Ա. Չոպանյանը, Ա. Արփիարյանը, Հ. Օշականը, Ա. Տերտերյանը և ուրիշ քննադատներ ընդգծել են միայն նրա բացառիկ տաղանդը, իսկ ստեղծագործական անհատականության վրա ազգային-մշակութային միջավայրի ունեցած դրական ազդեցությանը մոտեցել են վերապահությամբ: Դրա հիման վրա էլ գրողին գնահատել են որպես «անկատար գրագետ»¹: Դա ճիշտ չէ: Փորձենք վերականգնել գրողի ապրած դարաշրջանի և ազգային միջավայրի խորքային պատկերը, որը, իբրև երկրորդ «ծնող», բարերար ազդեցություն է ունեցել ստեղծագործական անհատականության ձևավորման գործում:

Հ. Պարոնյանը, որ դեռևս կրում էր ընտանեկան Հովհաննիսյան ազգանունը, 1863 թ. արևմտյան և արևելյան մշակույթների խառնարան հանդիսացող Կ. Պոլիս է գնացել, որպեսզի պատասխան գտնի իր կյանքի գլխավոր հարցին՝ ո՞վ է ինքը, ո՞րն է իր տեղն արևի տակ: Ապագա գրողը սկզբնական շրջանում բնակվել է հորեղբորորդու՝ ճանաչված բժիշկ և հանրային գործիչ Հովհաննես Քյաթիայանի տանը: Վերջինս հովանավորել է նրա առաջին քայլերը: Հ. Պարոնյանը որոշ ժամանակ անց, թևակոխելով անհատականացման նոր աստիճան, որոշել է ինքնուրույն ապրել: Տեղափոխվել է Բերա: Հ. Օշականն արդար չէ, երբ գրում է, թե Պարոնյանը Պոլսում ապրել է որպես «հաստատ գավառացի»²: Նրա կարծիքը հերքել են ժամանակակիցները, որոնք գրողի անհատականության վերաբերյալ թողել են երեք շատ կարևոր վկայություն: Առաջին երկուսը նրա համաքաղաքացի Հ. Աղասյանինն է: Հակոբը երբ հաստատվել է Կ. Պոլսում, հիշել է նա, արդեն «կազմված և ձևավորված գրագետ մըն էր», որը, ճիշտ է,

* Բանասիրական գիտ. թեկնածու, Հայաստանի ազգային ագրարային համալսարան, arsengljyan@mail.ru, հոդվածի ընդունման օրը՝ 12.07.2018, գրախոսման օրը՝ 19.11.2018:

¹ Չոպանյան Ա., Դեմքեր, Փարիզ, 1929, էջ 31:

² Նույն տեղում, էջ 20:

ծնվել էր մայրաքաղաքից հեռու, բայց, հոգեկան արդյունավետ կյանքով էր ապրել, խոր զգացումներ, տպավորություններ, մեծ «կենսագրությանը» բնորոշ փորձ կուտակել: Ապագա գրողն «ադրիանուպոլսեցի էր ոչ միայն իր ծնունդով, այլ նաև մտավոր կազմությամբ», - նշել է այնուհետև Հ. Աղասյանը. «...Այն հատկությունները, որ գերակշիռ են Պարոնյանի մոտ՝ սուր և անողորմ հեգնանքը հանրային գործերու մեջ՝ անաչառ ու անկողմնակալ քննադատություն, սեր դեպի անիրավվածն ու աղքատը, աններողություն կեղծիքի ու սուտի դեմ ու առհասարակ մարդկայնական ոգի մը անկախ ու անշահախնդիր, այս բոլորին սերմերը որոշ չափով գրագետը ստացած էր իր ծննդավայրի հայ միջավայրեն, ուր... մարդիկ այդ նույն նկարագրին գիծերը և նույն բարոյականի սկզբունքները տիրապետած են թե՛ ընտանեկան և թե՛ հանրային կյանքին մեջ»³: Երրորդ վկայությունը թողել է Հակոբի քրոջ որդին՝ Մ. Սանտալճյանը: Ապագա գրողը Կ. Պոլիս տեղափոխվելու առաջին օրերից գիտակցել է, նշել է նա, որ ինքը պատկանում է «եզական անձնավորությանց» տեսակին, որոնք պարտավոր են ոչ միայն արհամարհել միջակությունը, այլև «առ ոչ ինչ գրե ընկերական շատ մ'սկզբունք և օրենք: Եվ այն, որ հանճարի ծնունդ տալ կ'ուզե, մանավանդ առ մեզ, պարտի երկունք կրել ընդ երկար և տառապի անհնարին ցավերով»⁴:

Պարոնյանը Կ. Պոլսում գիտակցել է, որ իր կոչումը գրող լինելն է, իսկ գրական ասպարեզում տեղ ունենալու համար պետք է լրջորեն զբաղվել գրական մշակույթով: Նա, եթե մինչև Կ. Պոլիս գնալն իրեն դրսևորել է որպես տաղանդավոր ընթերցասեր ինքնուս, ապա Զարթոնքի շարժման «մայրաքաղաքը» դարձել է այն դպրոցը, որտեղ աշխարհի և մարդու վերաբերյալ հիմնավոր գիտելիքներ է ձեռք բերել՝ թրծելով անհատականությունը:

Առաջին դասերից մեկը, որ դեռևս ծննդավայրում Զարթոնքի գործիչներից նա յուրացրել է, վերաբերել է հանրային ասպարեզում գործելու հավակնողներին ներկայացվող պահանջներին: Դարի առաջադրած հարցերին պատասխանելու համար պետք է ապավինել ոչ միայն գրական ծիրին, այլև մտավոր կարողություններին՝ իր մեջ միավորելով ժամանակի գաղափարները, զգացմունքները և կենսափորձը և դառնալով հայ գտարյուն գրագետ՝ եվրոպական մտքով, կեցության հիմքերի մեջ թափանցելու և

³ Հ. Պարոնյանը ժամանակակիցների հուշերում և վկայություններում, Ե., 2004, էջ 121:

⁴ Նույն տեղում, էջ 121:

ըստ այդմ գործելու կարողությամբ: Երիտասարդը դարի այս պահանջը բավարարելու, հայ և համաշխարհային մշակույթի ու գրականության դասականների բնագրերին ծանոթանալու մտադրությամբ հմտացել է լեզուների՝ հայերենի (աշխարհաբարի ու գրաբարի), հունարենի, թուրքերենի, ֆրանսերենի մեջ, գիտելիքներ ձեռք բերել նաև իտալերենից, անգլերենից և բուլղարերենից:

Մյուս դասը վերաբերել է գիտելիքների բնույթին: Նա գիտակցել է, որ պարտավոր է խորապես ուսումնասիրել ապրած դարաշրջանը, պետությունը և իր հայրենիքի՝ հայության «վերքը», որոնել բուժելու ուղիները: Ուստի, խորամուխ է եղել մարդկության պատմության դարաշրջանների և գործընթացների, սոցիալական խմբերի հոգեկերտվածքի մեջ, եվրոպական առաջադեմ մտքի լույսով իմաստավորել հայոց պատմությունը, մտովի վերականգնել անցյալի և ներկայի խնդիրների խորքային կապը:

Պարոնյանը գլխավոր դասերը քաղել է՝ ուսումնասիրելով դարաշրջանի եվրոպական աշխարհայեցության, մշակույթի և գրական գործընթացի մեջ տիրող վիճակը և Զարթոնքի շարժումը: XIX դարի առաջին տասնամյակներին եվրոպացի մարդու սոցիալական կյանքի պայմանների մեջ կատարված արմատական փոփոխությունների հետևանքն եղել է այն, որ փլուզվել է ժամանակների կապը: Ավարտվել է աշխարհայեցության իդեալական ուղղության պատմությունը, որը սկիզբ էր առել «առանցքային» ժամանակաշրջանում՝ մ.թ.ա. VIII-VI դդ., սկսվել է նոր պատմաշրջանը: Աշխարհի և մարդու դեմոկրիտյան աստվածակենտրոն հայեցակարգը փոխարինվել է էպիկուրյանով: Ի տարբերություն նախորդ պատմաշրջանի՝ մարդկությունն սկսել է պաշտպանել այն տեսակետը, թե կեցության տիեզերական օրենքը սխալ է ներկայացված: Մարդկանց համար կյանքի կանխասահմանված ուղի և նրանից շեղվելու վտանգ գոյություն չունի: Ինչպես տիեզերքում ատոմներն իրենք են որոշում իրենց ընթացքը, այնպես էլ մարդիկ ուղու ընտրության հարցում ազատ են: Նրա՛նք են իրավասու վճռելու, թե ինչպե՛ս ապրեն, դեպի ի՞նչ արժեքներ կողմնորոշվեն: Հոգու անմահություն, հանդերձյալ աշխարհի գոյություն չունի: Աստված չի խառնվում մարդկանց կյանքին և ընթացքին: Եթե անցյալում, երբ մարդիկ ապրում էին բնության մեջ և իրենց նրա մի մասնիկն էին համարում, պարտավոր էին կողմնորոշվել դեպի կատարյալ մարդկության տեսլականի չափորոշիչները, այժ՝ «երկրորդ բնության» մեջ, ավանդական աշխարհայեցությունը

և վարքականոնները բովանդակագրվել են: Մարդկության կյանքում ու գիտակցության մեջ ստեղծվել է նոր «սահմանագծային» իրավիճակ: Հոգևոր «ընդարձակված տիեզերքին» բնորոշ ամենաթողության պայմաններում հույժ անհրաժեշտություն է դարձել մարդկության ողջամիտ կեցության նոր դրվածք սահմանելը: Այս գործընթացը սկսվել էր XVIII դարում՝ եվրոպական լուսավորականության շարժման շնորհիվ: Շարժման գաղափարախոսները՝ Ջոն Բլոկը, Դանիել Դեֆոն, Վոլտերը, Շառլ Մոնտեսքյոն, Ժան-ժակ Ռուսոն, Դենի Դիդրոն և գիտության ու գրականության մյուս կարևոր ունեցողները (որոնք նաև փիլիսոփաներ էին), մերժելով նախորդ աշխարհայեցությունը, նոր պատմաշրջանում կարևորել են մարդու ինքնություն խելքի և բանականության դերը: Խոշորագույն փիլիսոփա Իմանուել Կանտը, շատ ուսանելի «Ի՞նչ է լուսավորությունը»⁵ հոդվածում պատասխանելով ժամանակակիցներին հուզող գլխավոր հարցին, բացատրել է, որ «լուսավորականությունը» «ելք» է փնտրում պատմության նախորդ դարերում արմատացած «դեռահասության» վիճակից, երբ մարդն «ուրիշի ղեկավարությամբ» էր օգտագործում «իր խելքն ու բանականությունը»: «Լուսավորականությունը» մարդկության պատմական ընթացքի նոր դարաշրջանի առաջին նվաճումն է, ընդգծել է նա: Եվրոպացի մարդը ինչպես Հին Աշխարհում, վերստին կանգնելով տիեզերքում իր տեղը և ինքնություն արժեքն ըմբռնելու հարցի առջև, սկսել է գիտակցել, որ նախորդ պատմաշրջանում ընտրած ուղին պայմանավորված է եղել իր «անչափահասության վիճակով»: «Փիլիսոփաները, մտածող մարդիկ, մարգարեները», առաջադիմության նպատակահարմարությունից ելնելով, իր համար վերընթացի որոշ ուղի են սահմանել: Այն ունեցել է առանձնահատկություններ. խաղացել է դրական դեր, բայց արդեն սպառել է հնարավորությունները: Մարդկությունը թևակոխել է պատմության նոր փուլ, երբ արդեն այնքան «հասուն» է դարձել, որ վստահություն է տաժում սեփական խելքի ու բանականության նկատմամբ, գիտակցում դրանց «անսահման հնարավորությունները»: Նա սկսել է առանց «կրոնավորների և նրանց գաղափարներին ծա-

⁵ *Ծանոթություն:* Ի. Կանտի աշխատության տեքստը գերմաներենից թարգմանել է Աշոտ Ոսկանյանը: Թարգմանությունն առաջին անգամ լույս է տեսել Ա. Ոսկանյանի խմբագրած «Հայաստանը Եվրոպայի ճանապարհին» գրքում, Ե., 2005, էջ 141-148: Արտերիայի այս հրատարակության համար թարգմանիչը տեքստը վերանայել է: Տեքստը թվայնացրել է Նարե Հովհաննիսյանը:

ռայող փիլիսոփաների» «խնամակալության», համարձակ օգտվել «սեփական խելքից ու բանականությունից» և ոչ միայն հաղթահարել հին աշխարհայեցության դրսևորումները, այլև ինքնուրույնաբար վճռել իր կեցության խնդիրները: Հասկանալի է, մարդը, թևակոխելով նոր պատմաշրջան, միանգամից ոչ թե «լուսավորյալ» է դարձել, այլ սկսել է ապրել «լուսավորականության դարաշրջանում»: Նա շատ հարցերի պատասխանը դեռևս չունի. կունենա հետագայում, երբ «սեփական խելքը վստահ և լավ օգտագործի»: Մարդու ապագայի հարցում լավատես պետք է լինել, քանի որ «այդ ուղղությամբ ինքնուրույն աշխատելու դաշտը գնալով բացվում» է, և ընդհանուր լուսավորականության արգելքները հետզհետե պակասում են. դրա «նշաններն ակնհայտ են»:

Զարթոնքի շարժումը Եվրոպայում սկզբնավորված լուսավորական շարժման հայկական տարբերակն էր: Հայ երիտասարդները Եվրոպա են գնացել ոչ միայն պարզապես գիտելիքներ ձեռք բերելու, այլև լուսավորականության դարաշրջանի ոգով ազգը վերականգնելու վերաբերյալ մարդկության կուտակած փորձին ծանոթանալու: Այդ ուղղությամբ առաջին վճռական քայլը, ըստ էության, արել էր Մ. Սեբաստացին՝ Վենետիկի Սուրբ Ղազար կղզում միաբանություն հիմնելով և ազգաշեն գործունեություն ծավալելով: Հետո, երբ հայության երկու հատվածում ստեղծվել են ազգային առաջադիմության նպաստավոր պայմաններ, նրա գործը շարունակել են Նոր գրական և Զարթոնքի շարժման գործիչները: Արևելահայության մեջ լուսավորական գաղափարների տարածման և ազգային վերածնության շարժման դրոշակակիրը դարձել, «բարոյական զարթոնմի» նոր «մեծ թվականը»⁶ նշանավորել են լայնախոհ գործիչներ Հ. Ալամդարյանը, Մ. Թադիսյանը, մասնավորապես Խ. Աբովյանը: Եթե Մխիթարյանները, գործելով հայրենիքից հեռու, վերածվել են «գրքի» մարդկանց, ուշադրությունը կենտրոնացնելով պատմական ազգի նկարագիրը վերականգնելու խնդիրների վրա, նոր գործիչները դարձել են զուտ հայկական արդիական «զգայնության» կրողը⁷: Խ. Աբովյանի գաղափարները շարունակել են Ստ. Նազարյանը, Մ. Նալբանդյանը, Պ. Պողոջյանը, Գ. Սունդուկյանը, Գր. Արծրունին, Րաֆֆին, Ղ. Աղայանը, Ռ. Պատկանյանը...

⁶ Նույն տեղում, էջ 382:

⁷ **Զոպանյան Ա.**, Երկեր, Ե., 1988, էջ 384:

Հայության արևմտյան հատվածում լուսավորականության տարածումը և ազգային շարժումն ունեցել են իրենց առանձնահատկությունները: Օսմանյան կայսրության ավատատիրական հետամնաց կյանքի դրվածքը սասանվել է 1839 թ., երբ կայսրությունը, լուսավորական գաղափարների ազդեցությամբ, սկսել է քայլեր կատարել դեպի զարգացման եվրոպական ուղին: Բ. Դռան հռչակած բարենորոգումներն արևմտահայության շահերից են բխել, բայց դրա ազդեցությունը երկրի տարբեր հատվածների վրա միևնույնը չի եղել: Օսմանյան կառավարիչները ոչ միայն խոչընդոտել են Արևմտյան Հայաստանի տնտեսական զարգացմանը, մշակութային օջախների հաստատմանը, այլև ուղղակի և կողմնակի ձեռնարկներով նպաստել են երկրի հայաթափմանը: Վիճակը տանելի է եղել օսմանյան մայրաքաղաքում և մերձակա գաղթօջախներում, որտեղ թույլատրվել է տպարան, դպրոց, ազգային-մշակութային ընկերություններ ունենալ, ինչը որոշ ազգային մթնոլորտ է ստեղծել: Դարակեսին օսմանյան մայրաքաղաքը Հայաստանի և հայաբնակ նահանգների հայությանը նաև հրապուրել է, քանի որ այնտեղ առկա էին առևտրի և արհեստների նկատմամբ բնական ձիրքերը դրսևորելու և հարստանալու հնարավորություններ: Զանգվածային հոսք է սկսվել դեպի Կ. Պոլիս և այլ քաղաքներ՝ ձևավորելով հայկական հոծ գաղթօջախներ: Հայերի ձեռներեցությունն ու ստեղծագործ ոգին մեծապես նպաստել են, որ օսմանյան մայրաքաղաքն արագ ծաղկի: Դա նկատելով, նաև նշանավոր հայ ամիրաների միջնորդությունը հաշվի առնելով, Բ. Դուռը որոշ «հայասեր» քաղաքականություն է վարել: Կ. Պոլսի և մյուս գաղթօջախների հայության ազգային գիտակցությունն սկզբնական շրջանում ցածր է եղել՝ քաղաքական ժամանակի հոգեբանությունը հեռացրել է ազգային սովորույթներից, բարքերից և լեզվից: Ընդունված է եղել, որ բոլորը կայսրության պաշտոնական լեզվով՝ թուրքերեն են խոսել, իսկ «հայ» լինելը պայմանավորել են կրոնական պատկանելությամբ: XIX դարի առաջին տասնամյակներին, սակայն, եվրոպական գաղափարների տարածման հետևանքով գաղթօջախներում սկսել է ձևավորվել «հայի նոր տիպարը» (Ա.Ա., 373), որը դարձել է արևմտահայության առաջադեմ մասը: Լուսավորական գաղափարներին հաղորդակցված մարդիկ հասկացել են, որ հայությունը նոր դարաշրջանում տեղ ունենալու և հաջողության հասնելու համար պետք է թոթափի «օսմանցիության» հոգեբանությունը և դարձ կատարի դեպի ազգային արմատներ: Լուսավորա-

կան գաղափարները տարածվել են Կ. Պոլսում, Ջմյուռնիայում, Ադրիանուպոլսում, մյուս գաղթօջախներում. բացվել են հայկական կրթական մշակութային հաստատություններ՝ դպրոց, թանգարան, գրադարան, թատրոն, տպարան. հիմնվել են մշակութային միություններ, հրատարակվել աշխարհիկ պարբերականներ, կազմակերպվել գեղարվեստական ցուցահանդեսներ: Ամիրաները և ուրիշներ, գիտակցելով բարձր ուսման կարևորությունը, իրենց որդիներին ուղարկել են եվրոպական լուսավորության կենտրոններ, նաև՝ Մխիթարյան միաբանություն:

Արևմուտքում կրթություն ստացած երիտասարդները՝ «խավարյալ» ամիրաների «լուսավորյալ» որդիները⁸, վերադառնալով Կ. Պոլիս, հակադրվել են հետահայաց մտածողություն կրող հայրերին՝ կազմավորելով գաղափարական «միևնույն ըմբոստացումին սպայակույտը» (Ա.Ա., 379): Այսպես սկզբնավորվել է հայ հանրության ամենից վճռական հեղաշրջումներից մեկը. բացվել է «թողարանը նոր մտքի». «ծաղկել» են գաղափարական «կռիվները» (Ա.Ա., 378): Հայ հանրության մեջ ձևավորվել է երկու՝ կղերապահապանողականների՝ «խավարյալների», և ազատական մտածողության կրողների՝ «լուսավորյալների» (Ա.Ա., 380) հոսանք, որոնք դարձել են աշխարհի, մարդու, հայության կյանքի ու ընթացքի մարտահրավերների վերաբերյալ հակադիր հայեցակարգերի կրող և իրար դեմ ելել: «Լուսավորյալները», արևմտյան հեղինակությունների գաղափարներով ներշնչված, «խավարյալներին» մեղադրել են ազատախոհ միտքը խեղդամահ անելու (Ա.Ա., 401): «Անոնք Հինդցի բրահմաններու նման ամեն ինչ իրենք մեկնիլ կուզեն»⁹, - հեգնել է Ն. Զորայանը: «Խավարյալներն» իրենց հերթին պնդել են, թե «լուսավորյալները» հեռանում են հայրենի ավանդույթներից՝ վերածվելով օտարասերների: Երկու հոսանքի միջև բանավեճ է ծագել (Ա.Ա., 371)՝ սկզբնավորելով ազգային Զարթոնքի շարժումը¹⁰: Շարժման գլխավոր դեմքերը դարձել են Ն. Ռուսինյանը, Գր. Օտյանը, Սերվիչենը, Գր. Աղաթոնը, Ն. Զորայանը, Հ. Սըվաճյանը, Ծերենցը և ուրիշներ, որոնց կրթության և աշխարհայացքի ձևավորման գործում կարևոր դեր են խաղացել Փարիզը (արդիական համամարդկային գաղափարներ ներշնչելով),

⁸ Հովհաննիսյան Աշ., Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք առաջին, Ե., 1955, էջ 365:

⁹ Զորայան Ն., Յայտարարություն, «Հայաստան», Կ. Պոլիս, 1849, փետրվար 28:

¹⁰ Զոպանյան Ա., էջ 380:

և Վենետիկն ու Պադուան (ազգային արժեքների նկատմամբ հավատարմության ոգով դաստիարակելով): «Զարթոնքի հղացման մեջ իմաստությունը հայ եվրոպականացած մտքի արդյունք էր»¹¹, - նշել է Մ. Աբեղյանը: Նաև՝ իրենց՝ գրագետների մտքի հասունության և իմաստության, կարող ենք ավելացնել մենք: Եվրոպական լուսավորիչների մտքի սխրանքը հայ գրագետների հոգում պարարտ հող է գտել՝ նրանց ներաշխարհում սեփական գործունեության համար անհրաժեշտ գաղափարական «հեղափոխություն-վերածնություն»¹² առաջացնելով: Նրանք գիտակցել են, որ Հայաստանի «վերքը» ճանաչելու մեթոդական ուղեցույցը Եվրոպայից վերցնելու հետ անհրաժեշտ է հայությունը վերականգնելու հարցերում խորաթափանց միտք, հետազոտական աշխատանքի հանճար դրսևորել: Այն հասարակությունը, որը հրաժարվում է նոր պատմաշրջանում իր կյանքի և ապագայի խնդիրները քննել և ընտրում է հավիտենական անշարժության ուղղությունը, դատապարտվում է դուրս մնալ ազգերի ընթացքից, Գր. Արծրունու նման¹³ համոզմունք են ունեցել Զարթոնքի գործիչները: Նրանք գիտակցել են նաև, որ հայության թերությունների համար պետք չէ մեղավոր փնտրել օտարների մեջ. ազգի գրագետների բարոյական պարտքն է «հայության հանրային կյանքը դանդաղ մահվան ճիրաններից» ազատելու ուղին գտնելը¹⁴:

Զարթոնքի գործիչներին գաղափարակից և հովանավոր են դարձել, մասնավորապես, Պալյան գերդաստանի նահապետի՝ Կարապետ ամիրայի երկու որդիները. սկզբում կրտսերը՝ Նիկողոս Պալյանը (1826-1858)՝ մեծատաղանդ ճարտարապետը, որը «լուսավորյալի» «կատարյալ տիպար» էր, իսկ նրա վաղաժամ մահից հետո՝ ավագը՝ Հակոբ պեյը (1837-1875), որը ևս ֆրանսիական կրթություն էր ստացել և հիշեցնում էր իտալացի ու գերմանացի այն իշխաններին, որոնք «իրենց շուրջը գրագետներ» ու ար-

¹¹ Աբեղյան Մ., Երկեր, Ե., 1970, հ. Դ, էջ 604:

¹² Նալբանդյան Մ., Երկերի լիակատար ժողովածու. վեց հատորով, Ե., 1980, հ. 2, էջ 76:

¹³ Զարթոնքի գործիչներն արևելահայ Նոր գրական շարժման գործիչների հետ շատ հարցերում համախոհ են եղել, սակայն գրաքննչական նկատառումներով սովորաբար լռելյայն են գործել, մինչդեռ արևելահայերը տեսական հոդվածների մեջ ավելի հաճախ են համարձակ շարադրել մտքերը և ծրագրերը: Ուստի սխալ չէ արևելյան հատվածի գրագետների տեսական արձարծումների միջոցով երբեմն մեկնաբանել նաև արևմտահայ գործիչների գաղափարախոսությունը:

¹⁴ Տե՛ս Լեո, Երկերի ժողովածու տասը հատորով, հ. 6, Ե., 1987, էջ 439:

վեստագետներ» արքունիք մը կստեղծեն և անոնց բարեկամ ու զորավիգ կը հանդիսանան» (Ա.Ա., 391): Գերդաստանի նահապետը, սերտ հարաբերության մեջ լինելով օսմանյան պալատականների, այդ թվում՝ սուլթան Մեհիտի հետ, խորապես ըմբռնել էր թուրքական ցեղի մտածողության և հայության նկատմամբ վերաբերմունքի նրբերանգներն ու վտանգները: Որդիները «եվրոպականացյալ» կրթությանը և աշխարհայեցությանը գումարել էին նաև Օսմանյան կայսրության մեջ հայության հեռանկարի մտահոգությունը, գիտակցել ազգային վերածնության ամբողջական ծրագիր մշակելու և դրանով առաջնորդվելու կարևորությունը: Նրանք, հավաքելով բազմահանճար մտավորականների ու արվեստագետների մի բույլ, գոտեպնդել են միասին աշխատելու: Սա պատմության այն եզակի դեպքերից է, երբ հայության կենսական խնդիրները դարձել են բարձրաշխարհիկ խավի և գրագետների սերուցքի միասնական հոգացողության առարկան:

Կ. Պոլսի Օրթագել թաղը երկար ժամանակ վերածվել է «տեսակ մը հայ ակադեմիայի» (Ա.Ա., 391-392), որտեղ հայրենասիրության գաղափարին «իսկական ընդարձակ իմաստով»¹⁵ նվիրված գրագետները և բարձրաշխարհիկ մարդիկ, հայացքը ներկային ու ապագային հառած, լծվել են հայոց նորագույն պատմության ցավոտ խնդիրները հետազոտելու, ազգի ապագան պատրաստող ծրագրեր կազմելու և գործնականում իրականացնելու գործին: Նրանք, եվրոպական լուսավորիչների գաղափարներով խանդավառված, ամենալուրջ ուսումնասիրություններ են կատարել, որ բացահայտեն Հայաստանի «վերքի» արմատը, գտնեն բուժելու միջոցները: Պատմաբանները քննել են նոր բացվող պատմաշրջանում աշխարհի վիճակը, համաշխարհային հիմնախնդիրները, դրանց հետ հայության կապը. լեզվագետներն աշխատել են հանուն հայ նոր գրական լեզվի դժվարին խնդիրը վճռելու. գրողները հետազոտել ու բացահայտել են ազգային գրականության զարգացման ուղիները. բանաստեղծները խանդավառ երգել են ազգային նոր փթթող զգացումները, իրավագետները՝ խորհել հայության աշխարհիկ կյանքը վերանորոգելու ուղիների մասին և մշակել դրանք կյանքի կոչելու եղանակները:

Պալյան «ակադեմիական գումարումների» «հոգին» դարձել է Նահապետ Ռուսինյանը (1819-1876)՝ զարմանալի անհատականություն, բանաստեղծի, գեղագետի շնորհով, թարգմանչի, հռետորի ձիրքերով, օրենսդրի,

¹⁵ Աբեղյան Մ., էջ 604:

տնտեսագետի, երեսփոխանի տաղանդով: «...Պատմությունը չպիտի մոռնա այս մարդն, որ անվանի է իր սկզբունքին ճշտության, հավաստի հանճարին, նորօրինակ ընթացքին, ազատաբան լեզվին կողմն» (Մ.Մ., 598-601), - նշել է Մ.Մամուրյանը¹⁶: «Ակադեմիական գումարումների» մյուս գլխավոր դեմքը՝ Գրիգոր Օտյանը (1834-1887), ևս նշանավոր գերդաստանի որդի էր, ոչ միայն բանաստեղծի, արձակագրի, քննադատի ձիրքերով օժտված, այլև «մտատիպար» էր «հայ պաշտոնեի», «հայ քաղաքագետի», «հայ ազգասերի», «հայ կրոնասերի», «հայ գրագետի» (Ա.Ա., 392), - նշել է Ա. Արփիարյանը: Սերվիլենը (1815-1897) ևս, որ «հնամենի և ազնիվ գերդաստանի զավակ» էր, «մեծ մտավոր կարողություններ և սլաքի պես սուր միտք ուներ», փայլուն կրթություն ստացած պալատական բժիշկ էր, «վերեն ժողովրդյան ծոցն ընկած Պրուդոս». «Մաքիավելիի, Թալեյրանի պես մարդ Թուրքիայում» (Մ.Մ., 644), որի «միակ փափագը» «ամեն բան փլելը»՝ «ազգի պաշտած կուռքերը տապալելն» էր՝ «ըստ Սահմանադրության՝ վերաշինելու համար» (Մ.Մ., 563): Նրանցից առանձնապես չեն տարբերվել Զարթոնքի շարժման մյուս առաջնորդները: Ժամանակակիցներն այս գործիչներին ամենաբարձր գնահատականների են արժանացրել ոչ թե գովաբանելու, այլ հայության ապրելու խնդիրը «հարատև և անմահ» կյանքի օրենքներով վճռելու հարցում նրանց խորիմացությունն ընդգծելու նպատակով:

«Ակադեմիական գումարումների» գրագետները, թափանցելով հայության «վերքի» մեջ, պարզել են նրա վերաբերյալ ամբողջ ճշմարտությունը: Ազգը ներկա դրությամբ նմանվում է «օտարի ոտերը կամ գիրկն ընկած» մարդու, որը «ցիր ու ցան» է եղել՝ տրոհվելով «գույնզգույն մասերի» (Մ.Մ., 581), գիտակցել են նրանք: Պարզ չէ, թե ո՞րն է «գլուխը», «սիրտը», «հոգին». բացակայում է դրանք միավորող այն «շնչերակը», որը «միևնույն կենսական շունչն» է արտադրում և «մասերը բարոյապես միևնույն նպատակին» դրդում: Հայությունը չունի ոչ միայն հարազատ հողի վրա բարձրացող, այլև առհասարակ ազգային «կոթնելու կեդրոն» (Մ.Մ., 411): Նրա առջև երկու ճանապարհ է բացվում՝ «կա՛մ սողալ ճգմվելու չափ, կա՛մ կանգնիլ պատվով՝ հարգվելու չափ» (Մ.Մ., 581): Անհրաժեշտ է ձեռնամուխ լինել «հայկա-

¹⁶ Մամուրյան Մ., Երկեր, Ե., 1966, էջ 417 (այսուհետև տեքստում մեջբերումներին կից կնշվեն հեղինակի անվան և ազգանվան սկզբնատառերը և էջը):

կան մարդեղենության» առողջացման գործին»¹⁷, - Մ. Նալբանդյանի նման գիտակցել են Զարթոնքի գործիչները: «Ազգը մի մեծ ընտանիք է, մի մեծ և հսկա անձնավորություն»: Անհրաժեշտ է վերականգնել այդ «անձնավորությունը», որ «ազգությունը» չքանա...¹⁸, և նպատակը դարձնել Շարժման առանցք:

Ընդհանուր մարդկության պատմության մեջ հարցերի դրվածքն այժմ այնպիսին է, որ «ազգության գաղափարը» դարձել է «մեր կյանքի գաղափարը». նա՛ է «տնօրինում և բարվոքում» «մեր բարոյական և նյութական դրությունը», «արտադրում» «մեր մեջ մարդկության իրավունքները»: «Ինչ մարդ որ չէ ճանաչում և չէ սիրում յուր ազգայնությունը, նա վերանում է մարդ լինելուց»¹⁹, - հայ գրագետների գաղափարախոսությունը մեկնաբանել է նաև Րաֆֆին: Ուստի, բնական է, որ հայ ազգը ևս նույն «եսականության» («բանական էգոիզմի») տեսությամբ առաջնորդվի. «...Բայց մինչև բոլոր ազգերը յուրյանց փորի համար են գործում և յուրյանց փառքի համար միայն մտածում, ապա հայե՞րը պիտի անտարբեր մնան յուրյանց վիճակի մեջ»²⁰: Խնդիրը վերաբերում է քաղաքական ծանր պայմաններում գտնվող ազգի «անձնապաշտպանության»²¹ տարրական ու բնական իրավունքին, իր հերթին ընդգծել է Ղ. Ալիշանը: Պետք է գիտենալ, որ գոյություն ունի «եսականության» երկու ըմբռնում: Դրանցից առաջինի կողմնակիցները (իբր հենվելով էպիկուրի կենսափիլիսոփայության վրա), գտնում են, թե «եսականությունը» մարդուն թելադրում է դեպի անձնական օգտապաշտությունը և հաճույքները կողմնորոշվել: «Եսականության» այս տեսակը ծայրահեղ դրսևորումներում հանգեցնում է ցինիզմի և նիհիլիզմի՝ բացատրել է նա: Իսկ երկրորդ՝ ճշմարիտ ըմբռնման համաձայն, «եսականության» բարոյականությունն անձը հանրությունից և ազգությունից ոչ միայն չի խորթացնում, այլև նրան պարտավորեցնում է արժանապատիվ կյանքով ապրել: «Բայց գիտնալու է», ընդգծել է Ղ. Ալիշանը, որ «եսականության» փիլիսոփայության խորհուրդը ոչ թե «ոյուրությամբ», այլ «մարդավայել» «ապրիլն» է²²:

¹⁷ Նալբանդյան Մ., հ. 2, էջ 310-323:

¹⁸ Նույն տեղում, էջ 198:

¹⁹ Րաֆֆի, Երկերի ժողովածու տասներկու հատորով, հ. 11, Ե., 1983, էջ 22:

²⁰ Նույն տեղում:

²¹ Ղևոնդ Ալիշան, Երկեր, Ե., 1981, էջ 191:

²² Նույն տեղում:

Զարթոնքի գրագետները, խորամուխ լինելով ազգերի երթի էության մեջ, գիտակցել են ևս մի շատ կարևոր ճշմարտություն: «Եսականության տեսությամբ» առաջնորդվելով՝ Ժողովուրդների պատմության ընթացքն իր «ժամանակագրական» ձևը փոխել է: Րաֆֆին և Մ. Մամուրյանն ընդգծել են, որ «եսականությունը սեփական է ազգերին», «բռնաբարությունը նոցա մեկ նպատակն է», «Նոցանից ամեն մին ցանկանում է ընդլայնել յուր երկրի սահմանները, բախտավորել յուրյան՝ աշխարհի բոլոր բարիքներով, և մինչև երկինք հասուցանել յուր դրոշի փառքը»²³: Պետք է գիտենալ նաև, Րաֆֆու միտքը շարունակել է Մ. Մամուրյանը, որ յուրաքանչյուր ազգ յուրովի է ըմբռնել «եսականության» գաղափարախոսությունը և, «արդի լուսավորության շավիղն մեջ» մտնելով, իր «ազգային սկզբանց համեմատե է այն իրականացնելու ուղի ընտրել: Ամերիկայի ինքնուրույն կյանքի «թվականը», օրինակ, հիմնվել է ազգային անկախության վրա, Ֆրանսիայինը՝ իր մեծ հեղաշրջման: «Վայրագ ազգերն» էլ առաջադիմության իրենց ուղին են ընտրել և դրանով են առաջնորդվում (Մ.Մ., 411): Նույն խնդիրը դրված է նաև հայության առջև, նշել են նրանք: Ուստի, որպեսզի ողջամիտ լինի հայության ընթացքը, գրագետները պարտավոր են ոչ թե մասնավոր հարցերով տարվել, այլ ազգային այնպիսի ողջամիտ ծրագիր մշակել, որը բխի նրա վերընթացի իրական հնարավորություններից և տրամաբանությունից:

Զարթոնքի գրագետներն առաջնորդվել են ռեալական «մարդասիրության ու հայրենասիրության» գաղափարներով: «Մարդասիրությունը ընդհանուր պատվեր է, ազգասիրությունը մասնավոր պատվեր, - նշել է Ղ. Ալիշանը: - Մարդասիրությունը կտրվորեցնե զամեն մարդիկ սիրել, վասնզի մեզի նման են, ազգասիրությունը՝ զազգայինները ավելի սիրել կտրվեցնե, վասնզի ավելի նման են մեզի: Ուրեմն, մարդասիրությունը ավելի կհաստատե զազգասիրությունը, քան թե՝ կվերցնե»²⁴: Ընդ որում, ընդգծել է նա. «Մարդասիրության պարտքը դնողը մեր փիլիսոփաները չեն, բնությունն է: Ազգասիրության պարտքն ալ իրմեն կուգա»²⁵: Հայրենիքի ծանր կացությունն է թելադրում, որ հայ գրագետի մարդասիրությունը ազգասիրության միջոցով դրսևորվի: Պետք է նկատի ունենալ, շարունակել է միտքը Ղ. Ալիշանը, որ «Ազգասիրությունը երկու բառ է, երկու բան է,

²³ Րաֆֆի, հ. 2, էջ 21:

²⁴ Ղևոնդ Ալիշան, էջ 178:

²⁵ Նույն տեղում:

կեսը՝ կավ, կեսը՝ կրակ»²⁶: Հայոց պատմության բախտորոշ պահին պետք է մի կողմ դնել կրակը՝ «սերը», որի խորհուրդը բուռն զգացմունքային վերաբերմունք բորբոքելն է (քանի որ, երբ այն «անխոհեմությամբ» է գործածվում, «զուրիշները տաքցնելու տեղ»՝ բորբոքողի ձեռքն է այրում) և ուշադրությունը կենտրոնացնել կավի՝ «ազգի» վրա: Մեր բոլորի պարտքն է ուսումնասիրել, ճանաչել «ազգի» կյանքը, վիճակը, հոգսերն ու կարիքները և լծվել գործին օգտակար լինելու: Դա մեր «մարդկային բնության»²⁷ պահանջն է (Ցավոք, պոլսեցուն ավելի հոգեհարազատ է «սերը»՝ զգացմունքների զեղելը, իսկ հայրենիքի կյանքի ու հոգսերի ճշմարիտ պատկերացումը նրա մեջ թույլ է: Գործնականում քչերն են աշխատում հանուն հայրենիքի դրության բարեշրջման):

Հայոց պատմության «հասունության» փուլ թևակոխած գրագետները գիտակցել են, որ հայ ազգը վերականգնելու, գործընթացները պատմաշրջանի տրամաբանությանը համապատասխանեցնելու համար անհրաժեշտ է, ապավինելով սեփական խելքի և բանականության հնարավորություններին, հայության կյանքի բոլոր պայմանները «միանգամայն հեղաշրջել»՝ հարմարեցնելով «նոր թվականի» տրամաբանությանը (Ա., Ա, 396): Այդպես են վարվել բոլոր ազգերը: Զարթոնքի շարժման բուն նպատակը պետք է լինի այնպիսի գործունեություն ծավալելը, որ վերջ դրվի թուրք-սելջուկների հաստատած անիժյալ «թվականին»: Նրանք գիտակցել են, որ հայության «նոր թվականը» պետք է սկսել «ազգության», իբրև «հավաքական անձնավորության», իբրև «ազգային անհատականության»²⁸ վերականգնումից, քանի որ նա՝ է «այն մեծ ուժը», որը մարդկանց «կենդանի կապակցությունը» բարձրացնում է «մի անպտուղ վերացականություն» լինելուց: Ինչպես մարդուն, որ լիարժեք լինի, պետք է բարձրացնել անձնավորության աստիճանի, այնպես էլ ժողովրդին, նույն օրինաչափությամբ, պետք է բարձրացնել ազգ լինելու մակարդակի²⁹:

«Ակադեմիական գումարումների» գրագետները, կյանքի են կոչել հայության մտավոր և հոգեկան ընթացքը դարաշրջանի տրամաբանությանը համապատասխանեցնող, ազգային հանրությունը «գիտակցական վերա-

²⁶ Նույն տեղում, էջ 177:

²⁷ Նույն տեղում:

²⁸ **Նալբանդյան Մ.**, հ. 2, էջ 199:

²⁹ Նույն տեղում, էջ 310-323:

փոխման պատրաստող» խորիմաստ ծրագիր՝ կենտրոնանալով ապագան կերտելուն ծառայող չորս բնագավառի՝ նոր գրական լեզվի, ազգային գրականության, Ազգային սահմանադրության, նաև՝ արդիական կրթության ու դաստիարակության խնդիրների վրա: Ընդ որում, դա արել են՝ խորապես գիտակցելով յուրաքանչյուր բնագավառի ներքին օրենքները: Ինչ վերաբերում է նպատակն իրականացնելու մեթոդին, նրանք, ֆրանսիական լուսավորականների նման, հանրությունը վերափոխելը պայմանավորել են ոչ թե հեղափոխություն, այլ աստիճանական բանիմաց բարեփոխումներ կատարելու կարողությամբ: Արևմտահայ գրագետները եվրոպական լուսավորչականներից յուրացրել են ևս մի ավանդույթ՝ հանրության վերափոխման ծրագրերին վերաբերել սրտացավորեն՝ դրսևորելով փոփոխություններին անձամբ մասնակցելու պատրաստակամություն: Ծրագիրն արտաքուստ պարզ է եղել, սակայն խորքի մեջ հանդիսացել է «մտքի և հոգու» մեծ «հայտնագործություն», քանի որ հաջող իրականացնելու դեպքում բացելու էր ազգի բարոյական վերքերը հիմնավոր բուժելու և հայոց պատմության մեջ ոչ միայն «նոր տարի», այլև «նոր դար» նշանավորելու ուղին (Մ.Մ., 417):

Պարոնյանի անհատականության և աշխարհայեցության վրա դարաշրջանի և միջավայրի ազդեցությունը, հասկանալի է, պարզունակ ձևով տեղի չի ունեցել: Ժամանակը և միջավայրը գրողի անհատականության և աշխարհայեցության ներքին կառուցվածքի վրա անմիջականորեն չեն ազդում. դրանք նրա անձի հետ փոխգործակցելով են մասնակցում հոգին և աշխարհի նկատմամբ դիրքորոշումները ձևավորելուն: Պարոնյանն ինքն է որոշել, թե իրեն մատուցված գաղափարներից և փորձից ի՞նչը վերցնի, ի՞նչը մերժի, ի՞նչ ուղղությամբ ընթանա: Նա մարդկության կեցության և ազգության վերքերը բուժելու վերաբերյալ գիտելիքները, բացահայտումները ձեռք է բերել մտավոր տքնանքի միջոցով, ինչ-որ կարևոր բան էլ՝ ապավինելով անհատական բնազդին: Պարոնյանը, հասարակական երևույթների և քաղաքական անցուդարձերի վերաբերյալ հայեցակարգային գիտելիքներ ձեռք բերելով, վերածվել է Օսյան-Ռուսիյան սերնդի ավանդույթները շարունակողի ու զարգացնողի, դարձել 1870-1880-ական թթ. արևմտահայ գրականության կենտրոնական դեմքը:

Պարոնյանը, իբրև ազգային գաղափարախոսության հավատավոր, գիտակցել է, որ իր կոչումը և ստեղծագործության առաքելությունը, նախ և առաջ, Օսյան-Պեշկեթաշյան սերնդի ստեղծագործական մեծ կարողությամբ

յուններով օժտված տաղանդների ավանդույթին հետևելն է՝ գրականությանն ազգակերտման խնդիրներին ծառայեցնելը: Նա, բնույթով ստեղծող հանճար լինելով և գիտակցելով, որ իր բուն կոչումը խոր արմատներով բարձր գրականություն հիմնադրելն է, դասեր է քաղել նաև դարաշրջանի եվրոպական փորձից, որն օգնել է լավագույնս մշակելու ազգային բանավեպի հիմունքները, ստեղծելու արևմտահայ գրականության առաջին նշանակալի նմուշները՝ ուղի հարթելով նոր սերնդի տաղանդների համար:

ՀԱԿՈՒ ՊԱՐՈՆՅԱՆԸ ԵՎ ԻՐ ԺԱՄԱՆԱԿԸ

ԳԼԶՅԱՆ Ա.Մ.

Ամփոփում

Պարոնյանի մեծությունը մեկնաբանելիս քննադատներն ընդգծել են միայն նրա երգիծական տաղանդը, իսկ միջավայրի դրական ազդեցությունը ստեղծագործական անհատականության վրա մերժել են: Մինչդեռ Պարոնյանը, ապրելով եվրոպական և հայ մշակույթի պատմության ամենանշանակալի դարաշրջաններից մեկում, կրել է ժամանակի և ազգային միջավայրի բարերար ազդեցությունը: Զարթոնքի շարժումը դարձել է այն դպրոցը, որը էական դեր է խաղացել աշխարհայեցության ձևավորման գործում: Գրողը յուրացրել և զարգացրել է ազգային գրականության ուղին բացող ավանդույթները, թրծել արվեստագետի կոչման, ստեղծագործության, արվեստագետների առաքելության ըմբռնումը, ճշտել իր տեղը հայրենի գրական գործընթացում:

Բանալի բառեր՝ Զարթոնք, ժամանակ, միջավայր, գեղագիտական, գրականություն, առաքելություն, կոչում:

АКОП ПАРОНИЯ И ЕГО ВРЕМЯ

ГЛДЖЯН А.М.

Резюме

Рассматривая знаковую личность и творчество Акопа Пароняна, критики фокусируют свое внимание лишь на его врожденном сатиричес-

ком таланте, не учитывая позитивное влияние среды на творческую индивидуальность писателя.

Между тем А. Паронян, будучи представителем одной из ярких эпох в истории европейской и армянской культуры, был подвержен благотворному влиянию времени и национальной среды. Период национального возрождения явился для него той школой, которая сыграла существенную роль в формировании его миропонимания. Писатель усвоил и развил традиции национальной литературы. В восприятии А. Пароняна творчество – это миссия, призвание, направленное на воспитание в человеке нравственных ценностей, играющих определенную роль в развитии общества.

Ключевые слова – возрождение, время, среда, эстетический, литература, миссия, призвание.

HAKOB PARONYAN AND HIS TIME

A. GLDJYAN

Abstract

Considering the significance of the personality and creativity of Hakob Paronyan, critics focus their attention only on his innate satirical talent, not taking into consideration positive influence of the environment on the writer's creative individuality. Meanwhile, H. Paronyan, being a representative of one of the bright eras in the history of European and Armenian culture, was subject to the beneficial influence of time and national environment. The period of national revival was the school for him, which played a significant role in shaping his world outlook. The writer learned and developed the traditions of national literature. Creativity is a mission, vocation in the perception of H. Paronyan, aimed at the nurturing moral values in a person, which play a certain role in the development of society.

Keywords – revival, time, environment, aesthetics, literature, mission, vocation.

ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԳՈՂԹԱՆ ԵՐԳԻՉՆԵՐ. ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏՆ ՈՒ ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ

ՍԱՀԱԿՅԱՆ Լ.Զ.*

Երբ 1935 թվականին Փարիզի Վիլ ժուիֆ հոգեբուժարանում դադարեց բաբախել հայ երաժշտության հանճար Կոմիտաս վարդապետի սիրտը, խորհրդային երկրի մայրաքաղաք Մոսկվայի կոնսերվատորիայի Մեծ դահլիճում հնչեց Արամ Խաչատրյանի սիմֆոնիան՝ նոր ժանր ու խոսք հայ դասական երաժշտության մեջ: Ա. Խաչատրյանի տաղանդը փայլատակեց, և հայկական նոր կոմպոզիտորական արվեստը շարունակեց զարգանալ այն բնուղիով, որ նախանշել էր Կոմիտաս վարդապետը:

Չնայած հայ երաժշտագետներից և կոմպոզիտորներից շատերն են արձանագրել Կոմիտաս-Խաչատրյան առնչությունները, այդուհանդերձ, հայ երաժշտագիտության մեջ տարիներ շարունակ միտում կար տարբեր տեսանկյուններով դիտարկել Կոմիտաս վարդապետի և Ա. Խաչատրյանի ժառանգական կապը¹: Մեր կարծիքով, Կոմիտաս-Խաչատրյան առնչոթ-

* Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի երաժշտության պատմության ամբիոնի վարիչ, արվեստագիտության թեկնածու, lusine_sahakyan72@mail.ru, հոդվածի ընդունման օրը՝ 17.12.2018, գրախոսման օրը՝ 2.12.2018:

¹ Այդ առնչությունների բացահայտման լավագույն օրինակներից են կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանի, երաժշտագետներ Գեորգի Տիգրանովի, Գեորգի Գյոդակյանի, Նիկոլոս Թահմիզյանի, Մարգարիտ Ռուսկյանի հոդվածներն ու ուսումնասիրությունները: Հատկապես ուշագրավ են Ալդա Գրիգորյանի, Գայանե Չեքոտարյանի դիտարկումները՝ կապված, մասնավորապես, Կոմիտասի և Խաչատրյանի առնչությունների, երաժշտության ազգային ակունքների բացահայտման շուրջ: Նշում են, օրինակ, ընդհանրությունները գեղարվեստական կերպարի հարցում կամ Ջութակի կոնցերտի երկրորդ մասի կապը միջնադարյան տաղերի, Կոմիտասի «Քելե, քելե» երգի կրկնադրի հետ և այլն: Տե՛ս **Арам Хачатурян**, составитель Г. Геодакян, ред. Г. Геодакян, Р. Степанян, изд. АН Арм. ССР, Е., 1972, с. 176. Տե՛ս նաև **Մանսուրյան Տ.**, Նրա հետ օրեր (խորհրդային Հայաստան, 21.11.1989, հ. 269, էջ 6): **Григорян А.** Живая плодотворная традиция (Советская музыка, 1981, N 2, с. 118). **Чеботарян Г.** Полифонический язык А. Хачатуряна, Арам Хачатурян, составитель Г. Геодакян, ред. Р. Степанян, изд. АН Арм. ССР, Е., 1972, с. 85-113. **Чеботарян Г.** Полифония в балете Арама Хачатуряна

յան նորովի ու համակողմանի դիտարկումը հայ երաժշտագիտության առանցքային հիմնահարցերից է: Մեր հոդվածի շրջանակները թույլ չեն տա հնարավոր ամբողջությամբ ներկայացնելու Կոմիտաս վարդապետ-Արամ Խաչատրյան ստեղծագործական առնչությունները, դիտարկելու նրանց գիտական կենսագրության մանրամասները կամ ընդհանրությունները: Կարելի է փաստել՝ երկուսն էլ կոմպոզիտոր, մանկավարժ, կատարող, երաժշտա-հասարակական գործիչ էին: Ե՛վ Կոմիտասի, և՛ Խաչատրյանի յուրաքանչյուր ստեղծագործություն իրադարձություն էր, երկուսն էլ ձգտեցին հայ երաժշտությունն արժանացնել (ինչո՞ւ չէ, նաև արժանացրին) համաշխարհային ճանաչման: Երկուսն էլ ունեին հստակ հայեցակարգ՝ կապված հայ մշակույթի, երաժշտության մեջ ազգային գիտակցության հետ... Այս մոտեցումները կարող են ստեղծել հանճարներին արհեստականորեն իրար կապելու միտում: Բայց նրանց կապն ավելի խորն է ու բազմաշերտ:

Հանճարը, նրա կյանքի ուղին և ստեղծագործությունը միշտ էլ անբացատրելի մի խորհուրդ են թաքցնում իրենց մեջ:

Որպես կարևոր առաքելություն ունեցող մեծություններ՝ Կոմիտասը և Ա. Խաչատրյանը կապված էին իրենց շրջապատող աշխարհին ու իրականությանը, սնվում էին ժողովրդական արմատներից, որոնք հասնում էին մինչև հայոց էպոս ու քնարերգություն, բնապատկերներ ու պատմություն, մինչև Հայաստան-դրախտավայր՝ Գողթան հարստագույն երգեր:

Նույնն էր արմատը, և տարբեր էին ճակատագրերը: Իրենց առաքելությունը կատարելապես իրագործելուն վարդապետին թերևս խոչընդոտում էր կղերականությունը, Ա. Խաչատրյանին՝ խորհրդային ամբողջատիրական գաղափարախոսությունը՝ ֆորմալիզմին առնչվելու անհեթեթ մեղադրանքներով:

Մեր կարծիքով, Կոմիտաս վարդապետի և Ա. Խաչատրյանի արվեստը կարելի է քննել՝ հիմնվելով միմիայն իրենց տեսակետների վրա՝ երաժշտության ակունքների խոր ուսումնասիրմամբ: Քանզի Կոմիտասի արվեստում ազգային հենքը միայն գեղջուկ երգը չէ, այլև իրեն հարազատ

«Спартак» («Известия» Академии наук Арм. ССР, N 6, 1959, с. 17-39). **Чеботарян Г.** Полифония в творчестве Арама Хачатуряна, Е., 1969). **Джагацпанян К.** Арам Хачатурян и вопрос национального (Арам Хачатурян и музыка XX века, Е., 2003, с. 41-46), **Саркисян С.** Арам Хачатурян. Научно-справочное издание, Е., 2004) **Саркисян С.** На рубеже веков. Музыка и ее сферы. Арам Хачатурян и его время, М., 2014, с. 357.

հոգևոր երգասացությունը. հայ երաժշտության այդ երկու ճյուղերը, իր իսկ բնորոշմամբ, «քույր ու եղբոր» ազգակցություն ունեն²:

Խաչատրյանի ազգայինի հիմքերում տեսնել միայն աշուղական երաժշտությունը, նույնպես միակողմանի է: Խաչատրյանական երաժշտության բազմաթիվ էջեր իրենց հարուստ մեղեդայնությամբ հասնում են մինչև հայ միջնադարյան մոնոդիա:

«Խաչատրյանի ստեղծագործությունը լիարժեք կերպով ժառանգեց հարազատ ժողովրդի մշակույթը, այդ թվում՝ երաժշտական... Այդ բնագավառում նա ուներ փառավոր նախորդներ՝ առաջին հերթին Կոմիտասը...», - գրում է Գ. Գյոդակյանը³: Անտարակույս, հայրենիքն ու ակունքները կարևոր են: Թերևս, համահավաք պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է հայ երաժշտության երկու հանճարների՝ Գողթան գավառի երկու երգիչների արվեստի արմատներն ու հարատևությունը հիմքերից բացահայտել, որտեղից ձևավորվում է ստեղծագործական սկզբունքների ամբողջությունը, գեղագիտական հայացքների համակարգը, հայ ժողովրդի պատմական անցյալով ձևավորված գենետիկ հիշողությունը:

Գողթան գավառի հարուստ մշակույթին հակիրճ անդրադարձել է երաժշտագետ Կարինե Խուդաբաշյանը⁴: Մեր դիտարկումը միտված է առավել հետևողականորեն բացահայտելու երկու կոմպոզիտորների ստեղծագործական կապը:

«Ամեն անգամ Կոմիտասի մասին մտածելիս ես տեսնում եմ հայրենիքս...», - գրում էր Արամ Խաչատրյանը⁵: Հավելենք նաև մեծն Գյոթեի խոսքը. «Պոետին հասկանալու համար պետք է տեսնել նրա հայրենիքը»:

Իր ու Կոմիտասի հայրենիքը... Հայոց լեռնաշխարհի Ուրարտու պետության տարածքի մեջ էր Գողթն գավառը՝ «Վիշապագունք» սերնդի հայ-

² Կոմիտաս Վարդապետ, Ուսումնասիրություններ և յօդաձևեր, գիրք Ա, Ե., 2005, էջ 93:

³ Գյոդակյան Գ., էջեր հայ երաժշտության պատմությունից, Ե., 2009, էջ 121:

⁴ Տե՛ս Худабашян К. Певцы страны Гохтан, Արամ Խաչատրյանը և XX դարի երաժշտությունը, Ե., 2003, էջ 47-55; նաև Худабашян К. Певцы страны Гохтан(Музыкальная Академия, 2005, N 1, с. 144-146):

⁵ Արամ Խաչատրյան՝ հայ երաժշտական դպրոցի հիմնադիրը (Սովետական արվեստ), 1969, հ. 10, էջ 1-2):

րենիքը⁶: Շնորհալի երաժիշտների, երաժշտական կրթության ու դաստիարակության դարավոր ավանդույթների, հայոց պատմության ու մշակույթի համար ականավոր գործիչների բնօրրան էր Գողթան գավառը: Այն աչքի էր ընկնում գուսանների ու վիպասանների բացառիկ արվեստով, որոնք մշակույթի և գիտության մարդիկ էին: Գավառի գուսաններն ու վարձակներն իրենց երգերով, պարերով, զրույցներով ներկայացրել ու սերնդեսերունդ փոխանցել են դիցաբանական-առասպելաբանական, թատերականացված պատմություններ՝ քնարով և բանաստեղծություններով անմահացնելով «Հայոց քաջերի և թագավորների արիության գործերը». դա վկայում են և՛ նյութական մշակույթի հուշարձանները, և՛ պատմագրական աղբյուրները⁷: Անգամ Գողթն բառի ստուգաբանությունը նշանակում է պատմություն, երգ, վիպասանություն, գեղգեղանք...

Հայոց պատմությունը գրելիս Մովսես Խորենացին օգտվել է Գողթնի ժողովրդական զրույցներից ու երգերից. դրա վառ օրինակն է դեռևս հեթանոսական շրջանից պահպանված Վահագնի ծնունդին նվիրված գեղեցիկ դյուցազներգությունը: Մեսրոպ Մաշտոցը դեռևս գրերի գյուտից առաջ հայրենի գիր ու գրականություն է ուսուցանել, դպրություն է ծավալել Գողթն գավառում, որտեղ դարեր ի վեր զարգացած է եղել ազգային մշակույթը՝ «կռապաշտական երգերն ու զրույցները»: Այս գավառի լեռնային մի գյուղում Մաշտոցը վանք է կառուցել, որն իր անվամբ կոչվել է Մասրեվան՝ Մեսրոպավան (Հ. Ղևոնդ Ալիշանը, Երվանդ Լալայանը, Հրաչյա Աճառյանը որպես ուխտատեղի այցելել են այդ վանքը)⁸: Եվ անգամ կարելի է ենթադրել, թե Գողթնում եղել է դիցաբանական կամ քրմական դպրոց, որ ակնարկում է Մ. Խորենացու հետևյալ խոսքը. «Երթալ/Մեսրոպալ/ ՚ի գաւառն Գողթան՝ որ ՚ի նմա դօղեալ աղանդն հեթանոսական յաւուրցն Տրդատայ մինչև ցայն ժամանակս, զայն երարծ օգնականութեամբ իշխանի գավառին. որում անուն էր Շաբիթ»⁹:

⁶ «Վիշապագունք» սերունդ: Տե՛ս **Աբեղյան Մ.**, Երկեր, հ. Ը, Ե., 1985, էջ 180: «Վիշապ ժողովրդի մեջ հին ժամանակներից ի վեր նշանակում է փոթորիկ կամ ամպրոպային ամպ»: Տե՛ս նաև **Աբեղյան Մ.**, Երկեր, հ. Է, Ե., 1975, էջ 117:

⁷ Տե՛ս **Հախնազարյան Յ.**, Գողթան գաւառ (Պատմագրութիւն եւ յուշագրութիւն), Թեհրան, 1991, էջ 18:

⁸ **Հախնազարյան Հ.**, Գողթան գավառ, Թեհրան, 1991, էջ 14:

⁹ Տե՛ս **Լալայեան Ե.**, Ազգագրական Հանդէս /կիսամեայ պատկերազարդ/ Առաջին տարի, Ա գիրք, Շուշի, տպարան Ա. Մահտեսի-Յակոբեանց, 1895, էջ 19:

Քրիստոնեությունից հետո Գողթնում երկար ժամանակ պահպանվել են հեթանոսական հնաբույր երգերն ու զրույցները: Իսկ քրիստոնեության շրջանում գավառն առանձնանում էր կանոնավոր և բարձր մակարդակով ուսուցանվող եկեղեցական երաժշտությամբ: Գողթնի նշանավոր դպրեվանքերում՝ Ագուլիսի, Զուղայի, Յղնայի, երաժշտությունն ուսումնասիրվում էր որպես գիտություն՝ երաժշտության պատմության և տեսության ուսուցմամբ, հատուկ երգարանների օգնությամբ: Գողթան Խոսրով Իշխանի որդին՝ Վահան Գողթնեցին, VIII դարի շարականագիրներից էր: Նրա տաղերն ու շարականները բանաստեղծական գեղարվեստականությամբ աչքի ընկնող երկույթ էին: Ըստ ավանդույթի՝ Վահան Գողթնեցու քույրը՝ Խոսրովիդուխտը, հայ առաջին կին բանաստեղծ-երաժիշտն էր: «Բամբիռը՝ Գողթան երգիչների գործիքն էր»՝ ըստ Հովհաննես կաթողիկոսի¹⁰:

Ժողովրդապրոֆեսիոնալ երաժշտության զարգացման համար կարևոր էր Գողթան գավառի աշուղների ու երգասացների գործունեությունը, որոնցից ամենատաղանդավորն էր Նաղաշ Հովնաթանը:

Պատահական չէ Արամ Խաչատրյանի հետևյալ դիտարկումը. «...հայերը, չնայած զանգվածային բնաջնջման, թշնամիների հալածանքներին, կարողացել են պահպանել ազգը, լեզուն, մշակույթը և կրոնը: Հարկ է ասել, որ հայկական մշակույթը դարերի խորքից է գալիս, ինքնատիպ է, և նրան բնորոշ են բացարձակապես ինքնօրինակ գծեր»¹¹:

Գողթնից էր սերում Կոմիտաս վարդապետը, որի պապերը XVII դարի վերջերին Յղնա ավանից գաղթել էին Կուտինա:

Կոմիտաս վարդապետն ինքնակենսագրության մի տարբերակում գրում է. «Սողոմոնեանները եւ Քիւթահիայի հայ հին ընտանիքները գաղթել են Գողթն գաւառի Յղնայ գիւղից Ժէ դարու վերջերում»¹²: Գողթն երգիչների պատվին Կոմիտաս վարդապետը Պոլսի իր 300-հոգանոց երգչախումբը կոչել էր «Գուսան»:

Վարդապետը գրում էր. «Խումբս, որի անունը «Գուսան» եմ դրել (հին Գողթան հայ երգիչների, ժողովրդական աշուղների անունով է, որ

¹⁰ Հայկական երաժշտութեան մասին. Գործիքներ, ԱՀ 3: **Փափագեան Վ.**, 1898, Գ գիրք, Թիֆլիս, էջ 350-358:

¹¹ **Խաչատրյան Ա.**, Նամակներ, Ե., 1983, էջ 160:

¹² **Կոմիտաս Վարդապետ**, Ուսումնասիրություններ եւ յօդուածներ, գիրք Բ, էջ 59:

Գուսան էին կոչվում)»¹³: Գողթան երգիչների դյուցազներգերն ու նրբահյուս շարականները վարդապետի երաժշտության մեջ իրենց նոր շնչառությունն ստացան: Գուսանների ու վիպասանների քաղցրահունչ, գունագեղ մեղեդիները վերաիմաստավորվեցին խաչատրյանական արվեստում: Արամ Խաչատրյանի ծնողները նույնպես հինավուրց Գողթան գավառից էին: Վերին Ազա գյուղից էր կոմպոզիտորի հայրը՝ Եղիա Խաչատրյանը, որն ամուսնացել էր նույն գավառի Ներքին Ազա գյուղում ծնված Ղումաշի հետ: Ազա գյուղը պատմական գավառի հայաբնակ շենքերից էր: Ենթադրվում է, որ նրանց տեղը նախկինում եղել է Ազատ անունով քաղաքը, որը կործանվել է թշնամիների ավերիչ հարձակումներից¹⁴: Ակամա վերհիշում ես անմահ «Սպարտակ» բալետը՝ իրապես ըմբռնելով այդ կոթողի ենթատեքստում թաքնված ազատասիրական վիթխարի ուժը, «խաչատրյանական երաժշտական աշխարհի ժողովրդա-ազգային տարերքը»¹⁵: «Ինչ վերաբերում է հայ ժողովրդին ծառայելուն՝ իմ ամբողջ ստեղծագործությունը, իմ ամբողջ կյանքը պատկանում է հայ ժողովրդին», - պնդում էր Ա. Խաչատրյանը¹⁶:

«Յայտնի է քեզ յերգս վիպասանց, զոր պահեցին ախորժելով, որպես լսեմ, մարդիկ կողմանն գիաւետ գաւառին Գողթան», - գրում էր Մովսես Խորենացին V դարում¹⁷:

XX դարում ևս չդադարեց հնչել Գողթան գավառի երգիչների քաղցրահունչ քնարը: Անհերքելի է, որ և՛ Կոմիտաս վարդապետը, և՛ Ա. Խաչատրյանը եկել են հանճարներ ծնող հողի նույն ակունքից, ասես ի վերուստ գրված մի ծրագրով: Նրանց համար ժողովրդական փիլիսոփայությունն ու երգը եղել են ստեղծագործության կենարար աղբյուր: Ժողովրդական երաժշտությունը՝ ֆոլկլորը, Կոմիտասի ստեղծագործության հիմքն է, Խաչատրյանի համար նույնպես մեծագույն գեղարվեստական արժեք է: «Ե՛վ Կոմիտասը, և՛ Խաչատրյանը ձգտել են զգալ, վերահասու լինել, իմաստավորել ժողովրդի գեղարվեստական պատկերացումների, երաժշտական մտածողության, երաժշտական լեզվի բովանդակ համակարգը այնպիսի խորությամբ, որ դրանք դառնան իր սեփական մտածողության ու լեզվի

¹³ Կոմիտաս Վարդապետ, Նամականի, Ե., 2009, էջ 209:

¹⁴ Տե՛ս Հախնազարյան Հ., Գողթան գավառ, Թեհրան, 1991, էջ 307:

¹⁵ Բնորոշումը՝ Նիկողոս Թահմիզյանի:

¹⁶ Խաչատրյան Ա., Նամակներ, Ե., 1983, էջ 115:

¹⁷ Աբեղյան Մ., Երկեր, հ. Ա, Ե., 1966, էջ 158:

բաղադրիչներ... ժողովրդական երաժշտությունը Խաչատրյանի համար մայրենի լեզու է», - գրում է Տիգրանովը¹⁸:

Ժողովրդական երգից էին բխում, եթե փորձենք ընդհանրացնել, երկու մեծերի ստեղծագործության առանձնահատկություններն ու առնչությունները՝ գեղարվեստական կերպարի հարցը, թեմատիկ զարգացման սկզբունքները, լադահարմոնիկ հարստությունը: Լադը հանդես է գալիս որպես ձևակազմական և կառուցողական գործոն: Ազգային լադամտածողությամբ են պայմանավորված ինտոնացիոն-հարմոնիկ նոր փոխհարաբերություններն ու ոչ ավանդական գործառությային կապերը:

Մեր կարծիքով, և՛ Կոմիտասի, և՛ Ա. Խաչատրյանի կոմպոզիտորական մտածողության մեջ կարևոր հատկանիշներից մեկը նաև բազմաձայնությունն է: Կոմիտասն իր ժողովրդից ժառանգություն ստացավ այնպիսի մոտոդիա, որը կարող էր ենթարկվել պոլիֆոնիկ զարգացման: Առանց բազմաձայնության անհնար էր տեսնել հայ պրոֆեսիոնալ երաժշտության հետագա զարգացումը:

Կոմիտասը հայ երաժշտության մեջ դարձավ պոլիֆոնիկ նոր մտածողության, Թահմիզյանի բնորոշմամբ՝ «մեղեդիակերտ բազմաձայնության» հիմնադիրը, կոմիտասյան պոլիֆոնիան նաև կարևորագույն արտահայտչամիջոց է, որը հիմնված է ժողովրդական ստեղծագործությունից եկած հնարանքների վրա: Պոլիֆոնիկ այդ հնարանքների շարունակողը գեղարվեստական նոր վերաիմաստավորմամբ Արամ Խաչատրյանն էր¹⁹:

Կոմիտասի դրած հիմքերով, կոմպոզիցիոն սկզբունքների արդիականացմամբ են պայմանավորված խաչատրյանական (և հետխաչատրյանական դարոցի բազմաթիվ ներկայացուցիչների) երաժշտական կտավների ազգային լադամտածողության վրա խարսխված հնչյունային ինքնատիպ հյուսվածքների գերակայությունը, ինտոնացիոն բարդ կառուցվածքները, ժողովրդական ավանդույթներից եկած դիմող ձայնի և ձայնառության կիրառման սկզբունքները, պոլիտոնալության ու պահված հիմնաձայնի

¹⁸ **Տիգրանով Գ.**, Հաստատելով սոցիալիստական ռեալիզմի արվեստը (Սովետական արվեստ, 1977, հ. 6, էջ 18):

¹⁹ **Чеботарян Г.** Полифония в балете Арама Хачатуряна «Спартак» («Известия» Академии наук Арм. ССР, 1959, N 6, с. 17-39).

առկայությունը: «Անահիտի» համարներից մեկում Կոմիտասը մանրամասն քննարկում է ծայնառության հարցը²⁰:

Ինչպես նշեցինք, կարևորագույն հատկանիշը, որ կապում է Գողթան երգիչներ Կոմիտասին ու Խաչատրյանին, ժողովրդական մեղեդու մշակման սկզբունքներն են՝ հիմնված հայ երաժշտության լադային (լադային կամ մոդալ բանաձևերի, ասես անցյալի՝ Գողթան երգիչների մտածողության մեջ հղկված) առանձնահատկությունների վրա: Դա կոմպոզիտորական վարպետություն է՝ խարսխված ազգային վառ նկարագրի ու բնորոշության վրա, դա մտածողության մի համակարգ է, որտեղ երաժշտական լեզվի բոլոր բաղադրիչները ենթարկված են հստակ օրինաչափությունների: Օրինակ, Ա. Խաչատրյանի Երգ-պոեմը՝ ջութակի և դաշնամուրի համար՝ «Աշուղների հիշատակին» (1929). մեղեդու հուզական ներգործությունը, թեմայի շարադրանքի իմպրովիզացիոն բնույթը, ժողովրդական գործիքների տեմբրերը վերստեղծելու կարողությունը, իմպրեսիոնիզմի աշխարհը տանող գունային-տեմբրային հնչերանգները, ռիթմիկ ճկունությունն ու բազմազանությունը, դաշնամուրի նվագակցության հյուսվածքը (սեկունդ, կվարտ, կվինտային հարմոնիաների գերակայությամբ) մոտ է Կոմիտասի պարերի ձևակառուցողական առանձնահատկություններին: Ավելին, այս գողտրիկ երկը Կոմիտասի գործիքային մտածողության շերտերը բացահայտելու առաջին գեղեցիկ օրինակն է (եթե նշենք, որ Կոմիտասի դաշնամուրային պարերն ամբողջապես հրապարակվել են միայն 1925 թվականին, իսկ լավագույն տպագրությունը Մոսկվայում էր 1939-ին):

Խաչատրյանը սիրում էր թառի հնչողությունը, Կոմիտասն իր դաշնամուրային «Ունաբի», «Շուշիկի», «Երանգի» պարերում առանձնահատուկ շեշտում է հենց «թառի ոճը»: Ա. Խաչատրյանն ինքն է խոստովանել, որ «թեման ստեղծել է ժողովրդական մեղեդու վերաիմաստավորման, նրա ընդլայնման և զարգացման ճանապարհով»²¹: Մենք այստեղ չենք անդրադառնա Կոմիտասի աշուղական երգերի գրառմանն ու հայ երաժշտա-պրոֆեսիոնալ արվեստի հանդեպ ունեցած նրա վերաբերմունքին²²:

²⁰ «Անահիտ», Է տարի, թիվ 1-2-3, Փարիզ, 1936, էջ 47, տե՛ս նաև **Կոմիտաս Վարդապետ**, Ուսումնասիրություններ եւ յօդաձևեր, գիրք Բ, էջ 237:

²¹ Սովետական Հայաստանի երաժշտությունը. Հոդվածների ժողովածու, Ե., 1973, էջ 146:

²² **Կոմիտաս**, Երկերի ժողովածու, հ. 5, Ե., 1979, էջ 52:

Կոմիտասը հայ երաժշտության զարգացումը տեսնում էր ոչ միայն ազգային, այլև եվրոպական փորձի յուրացման ճանապարհով: Կոմիտասի կոմպոզիտորական սկզբունքների շարունակող Արամ Խաչատրյանը՝ իր ժամանակին համաքայլ, ժողովրդական երգը միահյուսեց գործիքային-մեծակտավ՝ ասել է թե եվրոպական կոմպոզիտորական մտածողությանը: Դա զարգացման մի նոր աստիճան էր: Կոմիտասի ավանդույթների սիմֆոնիզացում. գաղափարական մեծ հայեցակարգի ստեղծում, որտեղ ժողովրդական մելոսը հնչում է կոնցերտի ձևակազմությամբ: Խաչատրյանը ստեղծեց այն ժանրերը, երաժշտարվեստի մեծամասշտաբ այն գործերը, որոնցում Կոմիտասը չհասցրեց գրել²³: Կոմիտասին անձամբ ճանաչած Միխայիլ Գնեսինը առանձնակի հետաքրքրություն ցուցաբերեց երիտասարդ Արամ Խաչատրյանի արվեստի ազգային ակունքներին:

Խաչատրյանը դեռ վաղ տարիքում յուրացրեց և որդեգրեց Կոմիտասի գեղարվեստական սկզբունքները: Պատահական չէր, որ 1932-ին Մաքսիմ Գորկու տանը՝ Գորկիում, երբ Ա. Խաչատրյանը հանդիպեց Նոբելյան մրցանակակիր, ֆրանսիացի գրող Ռոմեն Ռոլանին (որը ճանաչել ու հիացել էր Կոմիտասի արվեստով), նրան որպես բնիկ հայ երաժշտության անթուղիս նվիրեց Կոմիտասի Ազգագրական ժողովածուն²⁴:

Ա. Խաչատրյանը, որպես հայ ժողովրդի հոգևոր հարստության, կոմիտասյան ավանդույթների օրինական ժառանգորդ, աներկբայորեն ընդունում էր Կոմիտասի մեծությունը: Իր հեղինակած «Հայ երաժշտական դպրոցի հիմնադիրը» հոդվածում՝ նվիրված Կոմիտասի ծննդյան 100-ամյակին, նա գրում է. «Ես Կոմիտասի կյանքի գործը կնմանեցնեի հիմք գցելուն: Այդ հիմքը լուսեղեն է, ներդաշնակ և միաժամանակ ամուր խարսխված հարազատ հողին: Ես կարծում եմ, որ ամեն մի հայ երաժիշտ իր սրբագույն պարտքը պիտի համարի Կոմիտասի ավանդները զարգացնելը, ավանդներ, որ իր ստեղծագործությամբ է մեզ կտակել Կոմիտասը: Երբ լսում եմ Կոմիտասի երաժշտությունը, շոգից ծարաված ճամփորդ եմ դառնում, որ պապական շուրթերով խմում ու խմում է կարկաչահոս աղբյուրից: Կոմիտասի երաժշտությունն էլ հենց այդ աղբյուրի պես է. կենարար, մա-

²³ **Զուրաբյան ժ.**, Մոնոդիան հայ կոմպոզիտորների գործիքային ստեղծագործություններում, Ե., 2014, էջ 136:

²⁴ **Խաչատրյան Ա.**, Նամակներ, Ե., 1983, էջ 126, 203:

քուր ու բանաստեղծական... Կոմիտասը եղել է, կա ու կմնա իմ ամենամեծ ուսուցիչը»²⁵:

ԳՈՂԹԱՆ ԵՐԳԻՉՆԵՐ. ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏՆ ՈՒ ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ

ՍԱՀԱԿՅԱՆ Լ.Զ.

Ամփոփում

Գողթան գավառի հարուստ երգային-բանաստեղծական արվեստը թե՛ Կոմիտասի, և թե՛ Խաչատրյանի մոտ դարձել է ազգային կոմպոզիտորական մտածողության հիմք ու ավանդույթ: Ժողովրդի պատմական անցյալի վերաիմաստավորմամբ է ձևավորվել նրանց ստեղծագործական սկզբունքների ամբողջությունը, գեղագիտական հայացքների համակարգը: Մեր ուսումնասիրություն մեջ դիտարկվող Կոմիտաս վարդապետի ստեղծագործության կոմպոզիցիոն սկզբունքներն ու օրինաչափությունները գեղարվեստական նոր վերադրսևորումներ են ստացել Արամ Խաչատրյանի արվեստում:

Բանալի բառեր՝ Կոմիտաս վարդապետ, Արամ Խաչատրյան, Գողթան գավառ, կոմպոզիտորական դպրոց, ազգային մշակույթ, ժողովրդական երգ, ծայնակարգային համակարգ:

ПЕВЦЫ ГОХТАНА: КОМИТАС ВАРДАПЕТ (АРХИМАНДРИТ) И АРАМ ХАЧАТУРЯН

СААКЯН Л.З.

Резюме

Богатое музыкально-поэтическое искусство провинции Гохтан послужило основой национального композиторского мышления как у Комитаса, так и у Хачатуряна. Переосмысление исторического прошлого армянского

²⁵ Արամ Խաչատրյան՝ հայ երաժշտական դպրոցի հիմնադիրը (Սովետական արվեստ, 1969, հ. 10, էջ 1-2):

народа сформировало их творческие принципы и систему эстетических взглядов.

Рассматриваемые в нашем исследовании композиционные принципы и закономерности, присущие творчеству Комитаса, обрели новое воплощение в искусстве Арама Хачатуряна.

Ключевые слова – Комитас вардапет, Арам Хачатурян, провинция Гохтан, композиторская школа, национальная культура, народная песня, ладовая система.

SINGERS OF GOGHTN: KOMITAS VARDAPET (ARCHIMANDRITE) AND ARAM KHACHATURIAN

L. SAHAKYAN

Abstract

The rich musical and poetic art of Goghtn became the basis of national composer thinking both for Komitas and Khachaturian. Their creative principles and the system of aesthetic views were shaped by means of rethinking the historical past of the Armenian people. The article studies Komitas Vardapet's compositional principles and patterns, which gain a new artistic interpretation in Aram Khachaturian's art.

Key words – Komitas Vardapet, Aram Khachaturian, canton of Goghtn, composer school, national culture, a folk song, a modal system.

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԹԱԳ-ԽՈՒՅՐԻ ԽՈՐՀՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԽԱՉՄԱՆՅԱՆ Ս.Հ. (ԱՄՆ, Լոս Անջելես)*

Աշխարհի հին և նոր կրոնական համակարգերում, հոգևոր առաջնորդները կամ գլխավոր անձինք, որպես կարևոր խորհրդաբանական տարբերակիչ տարր, կրել և կրում են ծիսական թագ-գլխանոցներ: Հայ առաքելական եկեղեցու ավանդակարգում կաթողիկոսի այդ կարևոր գլխանոցը խույրն է: Խույրը բարձրադիր, շքեղ, ոսկեպաճույճ, կես մետր երկարությամբ թագ-գլխանոց է, որ Հայ առաքելական եկեղեցում կրում են միայն բարձրաստիճան հոգևորականները՝ եպիսկոպոսները և կաթողիկոսները՝ որպես հոգևոր արքաներ: Այն գործածվում է միայն եկեղեցական հանդիսավոր արարողությունների ժամանակ: Հատուկ թույլտվությամբ՝ խույր կարող են կրել նաև թեմակալ առաջնորդ ծայրագույն վարդապետները:

Այս կարևորագույն գլխանոցը կազմված է երկու հարթ մասերից, որոնք վերևում, դրսի կողմից անջատվում են իրարից: Այդ հարթ մասերի միջև դրված է իրար միացնող, բայց արտաքինից չերևացող կտոր, որը նպաստում է կրողի հարմարավետությանը: Երկու մասերն էլ կոնաձև են վերևում և սրածայր գագաթներին կրում են փոքրիկ խաչեր¹ (տե՛ս նկ. 8): **Խույր**-ը հայոց լեզվում նշանակում է **թագ, միթր², վարսակալ, արտա-**

* Սանտա Մոնիկա քաղաքային քոլեջ, Կալիֆոռնիա-Հոլիվուդի արվեստի ինստիտուտ, sofiakhachmanyam@aol.com, հոդվածի ընդունման օրը՝ 04.04.2018, տպագրության է երաշխավորել պատմ. գիտ. թեկնածու Ս. Պողոսյանը: Գիտական ղեկավար՝ արվեստագիտության դոկտոր Հ. Հակոբյան:

¹ **Ղազարյան Մ.**, Սուրբ Էջմիածին, Գանձատուն, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1984, Խույր, XVIII դար:

² Mitra-հունարեն բառ է, նշանակում է՝ կոնաձև գլխարկ կամ կլոր գդակ, որ կոչվել են pilos և petasos: Այս գլխանոցները հույների կողմից օգտագործվել են քրիստոնեության ընդունումից առաջ և ծագումով փոյուզիական են: Հետագայում դրանք անցել են հռոմեացիներին՝ phrygium կամ frigium, երբեմն էլ՝ tiara անվանմամբ: Այս կոնաձև գլխարկը խորհրդանշել է ազատություն՝ “cap of liberty”: Հռոմում I-II դդ., բարձր պաշտոն ունեցող քրմերը, հատուկ արարողությունների ժամանակ, կրում էին այս գլխանոցները, որ պատրաստվում էին ոսկեհյուս կտորից: Քրիստոնեության ընդունումից հետո

խուրակ, շարփուշ³: Առաջին երկու նշանակությունները հատկապես վերաբերում են եկեղեցական խույրին: Սակայն «խույր» եպիսկոպոսական-կաթողիկոսական թագի ճիշտ անվանումն է⁴: Այն, ընդհանուր առմամբ, ոսկեգույն արևապատկեր լուսապսակն է կամ՝ արքայական թագը, որն իր պայծառությամբ շրջափակում է արժանավոր կրողի դեմքը: Այն տվյալ անձի սրբության և աստվածային նվիրաբերության վկայությունն է: Խույրը նաև խորհրդանշում է հոգևոր գերբնական լուսավորության և ուժի, որ ճառագում են կրողի հոգուց և դուրս են նրա ֆիզիկական մարմնի սահմաններից⁵:

Անտիկ աշխարհում լուսապսակներով զարդարվել են հեթանոս աստվածները, թագավորները և կայսրերը: Լուսապսակների կիրառությունը որդեգրվեց քրիստոնեական ավանդույթի մեջ՝ զարդարելով Հիսուսի՝ «գառան», սրբերի գլուխը⁶: Հարկ է նշել նաև, որ քրիստոնեական ավանդության մեջ, խաչի վերին թևը խորհրդանշում է Քրիստոսի փրկագործության հաղթանակը և կոչվում է «թագ»⁷: Արքայական-քրմապետական իշխանությունը խորհրդանշող կարևոր գլխանոցը հեթանոսական հոգևոր հանդերձանքի համակարգում նույնպես թագն էր: Միիր-Արեգակին հին կրակապաշտ հայերը, Ղ. Ալիշանի կարծիքով, պատկերում էին «գլխի

առաջին անգամ վուշից պատրաստված միթրան օգտագործվել է VIII դ., Կոնստանտին պապի կողմից: Գլխանոցի այս տարատեսակը փոյուզիական գլխարկ էր, որը փափուկ էր և կոնաձև կառուցվածք ուներ: Ծայրը, որ լցնած էր զանազան մանրաթելերով, թեքվում և կախվում էր դեպի առաջ: Հռոմի պապերը, լինելով մեծ մասամբ տարեց մարդիկ, գլուխը տաք պահելու նպատակով, որդեգրեցին նաև այս գլխանոցը: Հետագայում, բազմաթիվ ձևերի փոխակերպվելով՝ այն ստացավ ներկայիս տեսքը (Norris H. Church Vestments, their origins & development, New York, LSC communications, 2002, p. 95-97):

³ Շարփուշ բառի հիմքը շարն է, որ նշանակում է շղարշ, քող, վարշամակ (**Սուքիասյան Ա.**, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Ե., 1967, էջ 500 և 504):

⁴ **Օրմանյան Մ.**, Ծիսական բառարան, Ե., 1991, էջ 87:

⁵ Քրիստոնեական ավանդության մեջ դրախտի Կենաց ծառը համարվում է «ողջ տիեզերքը կազմակերպող» խաչը և նրա վերին թևը, «որպես կանոն, կոչվում է «թագ» (**Պետրոսյան Հ.**, Խաչքար, ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Ե., 2008, էջ 42, 44, 60): Խորհրդաբանական համեմատությունը մարդու խաչաձև «կենաց ծառ» մարմնի և խաչի միջև ակնհայտ է, և երկու դեպքում էլ թագը «դրվում է» խաչի վերին թևի կամ գլխի վրա:

⁶ **Chevalier J., Gheerbrant A.** The Penguin Dictionary of Symbols, London and New York, Penguin Books, 1996, p. 464-465.

⁷ **Պետրոսյան Հ.**, նշվ. աշխ., էջ 44:

շուրջբոլորը տարածվող գուցե ճառագայթավոր պսակով»⁸ (հուր-բակ կամ արեգակի բակ), որը, հավանաբար, հիմնական պատճառ-ազդեցությունն էր հայոց թագավորների ճառագայթավոր թագերի⁹: Միիր աստծու՝ Նեմ-րուֆ լեռան սրբավայրում գտնված քանդակի վրա պատկերված թագը, ձևով և կառուցվածքով, դրա վառ ապացույցն է¹⁰:

Վ. Հացունին նշում է, որ սկզբնական շրջանում, ինչպես քահանաները, այնպես էլ եպիսկոպոսները պատարագում էին գլխաբաց¹¹: Հետագայում՝ IX դարում, հայ եպիսկոպոսները իրենց գլուխները ծածկում էին սպիտակ՝ «գլխոյ վարշամակով» կամ «ահարոնեան վարշամակով»¹², որը գլխին ամրացվում էր ամրակ-երիզով¹³: Նման վարշամակներ, մինևույն ժամանակ, կրում էին նաև արևմուտքի և Ալեքսանդրիայի հայրապետները¹⁴: Խույրը, ըստ Հացունու, առաջին անգամ կիրառվել է X դ., Հռոմում: Մինչև XII դ. այն դառնում է ընդհանուր եվրոպական եկեղեցիներում, որովհետև

⁸ Դ. Ալիշան, Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Ե., 2002, էջ 32:

⁹ Հետագայում էլ՝ քրիստոնեության շրջանում, Արեգակը նվիրաբերվեց Քրիստոսին (նույն տեղում, էջ 59): Հետևաբար, պատշաճ էր միայն կաթողիկոս-եպիսկոպոսի գլուխը արեգակ-ոսկով զարդարելը:

¹⁰ Այն բարձրադիր, ճառագայթավոր թագ է՝ կողքերից դեպի ներս սեղմված հարթ մակերեսներով, իսկ առջևից և հետևից կոնաձև է: Մինչդեռ կաթողիկոսական խույրի հարթ մակերեսները տեղադրված են առջևում և հետևում: Նմանատիպ թագ է կրում նաև Կոմագենեի արքա Անտիոքոս Երվանդունին: Երկու օրինակներն էլ պատկանում են մ.թ.ա. I դարին (Դենոյան Հ., Հայկական ազգային խորհրդանշաններ, զինանշաններ. դրոշներ. պարգևներ, Ե., 2012, էջ 41-42):

¹¹ Այս ավանդությունը նույնն էր նաև լատին եպիսկոպոսների համար (Norris H., նշվ. աշխ., plate IV):

¹² «Եւ ապա արկանեն զսպիտակ Հայրապետական Քօղն ոսկեթել ի գլուխ Նորա» (Արք. Բերբերյան Ա., Ինչպես են Հայ առաքելական եկեղեցում ընտրում և օծում եպիսկոպոս և Ամենայն Հայոց Կաթողիկոս, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1995, էջ 94): Հայրապետական այս սպիտակ քողը, որով ծածկվում է նորած կաթողիկոսի գլուխը, իր անմիջական խորհրդաբանական աղբյուրներով կապված է Ահարոնի վարշամակի հետ և հոգևոր արքայության խորհրդանիշն է:

¹³ Վարշամակը կամ քողը համարժեք էր թագին: Օրինակ՝ միջին դարերում նորընտիր կաթողիկոսը, որպես իր իրավունքի խորհրդանիշ, իր աթոռը ընդունում էր քողի հետ մեկտեղ (Վարդապետ Մագսուտյան Գ., Ընտրյալդ յԱստծոյ Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրությունը, Էջմիածին, 1995, էջ 77):

¹⁴ Հացունի Վ., Պատմութիւն հին հայ տարագին, Վենետիկ – Ս. Ղազար, 1924, էջ 378-379: Նույն ժամանակաշրջանում լատին եկեղեցականները որդեգրել էին սպիտակ, կլորավուն կառուցվածքով վերոհիշյալ գլխանոցը, որի ճակատամասն ամրացվում էր թանկարժեք քարերով զարդարուն ժապավենով կամ ոսկե օղակով (Norris H., նշվ. աշխ., էջ 97-98):

հռոմեական քահանայապետները այն նվիրում էին տարբեր երկրներում ծառայող եպիսկոպոսների¹⁵: Մ. Օրմանյանի կարծիքով, XII դ. առաջ եպիսկոպոսները «հունականին նման բոլորշի խոյր ունեին, որը մեր քահանաների այժմյան գործածած սաղավարտն է, և որ 1184-ին Հռոմի պապերի նվիրած հայրապետական զգեստի կիրառությամբ լատին եպիսկոպոսական խոյրը մեզ մոտ էլ ընդունվեց»¹⁶:

Խոյրից զատ՝ եպիսկոպոսները XIII դարում, իրենց ձեռնադրության ժամանակ, ընդունում էին նաև ճերմակ կնգուղ՝ ճակատին ոսկե խաչով¹⁷: Այս գլխանոցը գործածվում էր պաշտամունքի և ոչ թե պատարագի ժամանակ: Հացունին գտնում է, որ կնգուղը՝ Հայաստանում փոխարինեց «սպիտակագարդ սքողն»¹⁸ և վկայում է, որ կնգուղն էլ իր հերթին XV դ. դուրս է մղվում Հայոց եկեղեցու եպիսկոպոսական հանդերձանքի համալիրից, որին վերջնականապես փոխարինելու է գալիս խոյր-թագը¹⁹:

Խոյրը, ինչպես նախապես նշվեց, համարվում է լատինական ծագում ունեցող թագ-գլխանոց՝ իր «mitra» անվանմամբ, որովհետև հայոց եկեղեցի մուտք է գործել XII դ., երբ Լուկիոս կամ Ղուկիոս III պապը եկեղեցական շքեղ հանդերձներ է ուղարկել հայոց կաթողիկոսին²⁰: Նման նվիրատվություն է գրանցվել նաև 1234 թ. Գրիգոր Թ պապի կողմից: Եվս մեկ նվիրատվություն է կատարվել XIII դ. սկզբին, երբ Ինոկենտիոս III պապը տասնչորս խոյր է նվիրել Կիլիկիայի եպիսկոպոսներին: Նման նպատակամիտված նվիրատվությունները հանգեցրել են այն բանին, որ խոյրը «հաւանօրեն ԺԵ դարէն սկսեալ՝ կվտարէ կնգուղը սրբագան հանդերձից դասէն, թէ հայրապետին և թէ եպիսկոպոսաց վրայ, և ինք կը բռնէ անոր տեղը բոլոր պաշտամանց մէջ»²¹: Այս ընթացքում խոյրի հետ, խոյրին կից՝ հետևի կողմից ամրացվել է «վարշամակն նուրբ ի վայր խոնար-

¹⁵ Նույն տեղում, էջ 378: Այս ժամանակ լատին եկեղեցում խոյրը դեռ փոյուզիական գլխարկների տեսքով էր օգտագործվում և իր վերջնական տեսքը ստացավ միայն XIII դարում (Norris H., ֆիգ. 132, նշվ. աշխ., էջ 103):

¹⁶ Օրմանյան Մ., նշվ. աշխ., էջ 87:

¹⁷ Հետագայում՝ XIX դ. նման, սակայն ոչ ոսկե, այլ՝ ադամանդագարդ խաչ է երևում հայոց կաթողիկոսի վեղարի ճակատամասում. այն նվիրում էր ռուսաց թագավորը (տե՛ս Հացունի Վ., նշվ. աշխ., էջ 386-407):

¹⁸ Նույն տեղում, նշվ. աշխ., էջ 386:

¹⁹ Նույն տեղում, նշվ. աշխ., էջ 402:

²⁰ Հացունի Վ., նշվ. աշխ., էջ 402:

²¹ Հացունի Վ., նշվ. աշխ., նույն տեղում:

հեալ»²²: Այս պատճառով էլ՝ հետագայում ուսումնասիրողները հետևություն են արել, որ խույրը լատինական ծագում ունի:

Բացի խույրից, XV-XVIII դդ. հայտնի են եղել նաև արքայական պսակաձև թագին նմանվող թագեր, որոնք այս ժամանակաշրջանում մանրանկարիչները ներկայացրել են տարբեր ձևերով²³: Վ. Հացունին, իր ուսումնասիրության մեջ քննում է մի խումբ նման թագեր և եզրակացնում, որ դրանք բոլորն էլ «գծագրողաց երևակայութիւնն են»: Քիչ հավանական է, որ երեք հարյուր տարի շարունակ, հանդերձի՝ գոյություն չունեցող ամենակարևոր տարրերից մեկը շարունակաբար նկարվեր բազմաթիվ նկարիչների կողմից և հանկարծ անհետանար, մանավանդ որ նման թագեր նախկինում կրում էին հայոց թագավորները, որոնք նաև քրմերի կոչում և աստիճան ունեին²⁴:

Վ. Հացունին իր գրքում ներկայացրել է լատինաց կողմից օգտագործվող խույրի «աստիճանական զարգացման պատկերի» ընթացքը, որտեղ այս գլխանոցը բազմաթիվ տարբեր ձևեր՝ «կոնաձև սրածայր... գմբեթաձև²⁵...կը փոխնայ գագաթին վրայ... ապա կը գոգանայ՝ ճակատին կողմն ուղղած աղեղնաձև փոսը²⁶...», կրելուց հետո դառնում է մեզ հայտնի սրածայր խույր-թագը: Դա համոզիչ չէ, որովհետև ձևի և խորհրդաբանության շարունակականություն չի դիտվում, և նման կառուցվածքով գլխանոցներ հայտնի չեն «հռոմեացոց անցյալում»²⁷: Մինչև III դ. Հռոմի Արևի

²² Նույն տեղում, էջ 1407:

²³ **Բաղիշեցի Վ.**, Եկեղեցու հիմնարկեք, Ավետարան, 1577 [Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ Մատենադարան), ձեռ. N 961, 3 ք], **Հակոբյան Հ.**, Վասպուրական, Ե., 1978, նկ. 82:

²⁴ Օրինակ, ինչպես Տիգրան Մեծի կամ Արտավազդի թագերը, որ կոչվել են «Հայկական թագ», **Հացունի Վ.**, նշվ. աշխ., էջ 50-51:

²⁵ Ծոփքի հայ թագավորներից Զարեհը իր դրամի վրայի պատկերում կոնաձև թագ է կրում, իսկ գմբեթաձև թագը, որը ներկայացված է Զարեհի կողքին, կրում է Արշամ արքան (**Պատրիկ Ա.**, նշվ. աշխ., տախտակ 6, նկ. 1, 2, էջ 29):

²⁶ 1700 թ. Կեսարիայում պատրաստված Ավետարանի արծաթե կազմի վրա, Տյառն-ընդառաջի տեսարանում նման գլխանոց է կրում Սիմոն Ծերունին (Treasures in Heaven, The Pierpont Morgan Library, 1994):

²⁷ Օտար աղբյուրներում mitra-ի կամ mitre-ի ստեղծման մասին տեղեկությունները բացակայում են: Ոմանք գտնում են, որ խույրի պատմությունն սկսվել է դեռ «առաքյալների ժամանակներից», ոմանք՝ VIII-IX դդ., իսկ ուրիշներն էլ այն վերագրում են X-XI դդ.: Խույրի որդեգրումից առաջ հռոմեական եպիսկոպոսները կրում էին պսակաձև կամ՝ tiara կոչվող պարզ թագերը: Խույրի զարգացման նկարագրությունը համընկնում է Հացունու նկարագրությանը: Այն սկզբում կոնաձև է, հետո դառնում է կլոր (սաղավար-

տաճարում ծառայող քուրմը կրում էր թանկարժեք քարերով զարդարված ոսկե, ճառագայթաձև թագ, իսկ Յուպիտերի տաճարի քուրմը՝ Յուպիտերի պատկերով զարդարված թագ: Մեկ հարյուրամյակ հետո էլ հռոմեական քրմերն ու քրմուհիները կրում էին թագեր, որոնք բոլորն էլ ցածրադիր էին՝ դափնեպսակի, պարզ օղակ-վարսակալի կամ թիարայի տեսքով²⁸:

Քննենք նաև հռոմեական կայսրերի թագերից մեկը, որ կոչվում էր արքայական խույր (imperial diadem): Այս կարևոր գլխանոցը կայսերական միապետության խորհրդանշանն էր: Այն պարզ, ցածրադիր կիսաօղակ էր, որը կարճ թագակապերով կապվում էր հետևում, և ծայրերը կախվում էին թիկունքին: Հետագայում այս թագերը ճակատամասում զարդարվում էին թանկարժեք քարերով²⁹: Նշանակում է՝ քրիստոնեության ընդունումից հետո, երբ կաթոլիկ եկեղեցին կազմակերպվեց և որդեգրեց ծիսական հագուստի վերաբերյալ կարգը, խույրին առնչվող ավանդույթ նախապես գոյություն չուներ: Կաթոլիկ եկեղեցու բարձրաստիճան սպասավորի բարձրադիր խույրը, հավանաբար, հետագայում արևելյան մշակույթներից ներմուծված ավանդույթ էր:

Հետաքրքիր է, որ հայոց ժամանակակից եկեղեցու կաթողիկոսը, որպես հոգևոր արքա, չի կրում ճառագայթավոր թագ, այլ գործածում է խույր³⁰: Փորձենք պարզել, թե mitra-mitre-խույրը, որ հաստատապես մնացել է, և սիրով որդեգրել ու մինչ հիմա էլ հպարտությամբ կիրառում են հայոց եկեղեցու բարձրաստիճան հոգևորականները, որպես գլխի հարդա-

տաճկ), մեջտեղում գազաթը իջնում, դառնում է փոսորակ, ապա՝ եղջյուրաձև և հետո միայն XII դ. սկզբում ընդունում է այժմյան, սակայն բավականին ցածր ձևը: Պետք է նշել, որ այս՝ իրարից բավական տարբերվող խույրերը կոչվել են նույն անունով՝ mitre (**New Advent, Catholic Encyclopedia**, Franciscan University Steubenville, online, <http://www.newadvent.org/cathen/10404a.htm>).

²⁸ VIII դարում, Tiara կոչվում էր փոյուզիական ծագում ունեցող, ուղտի մազի թաղիքից պատրաստված կոնաձև camelascum կոչվող գլխանոցը, որի ճակատամասն ամրացվում էր ոսկե զարդարուն օղակով: Հետագայում այս գլխանոցի վրա ամրացվում էր երկրորդ, հետո նաև երրորդ շարք գլխանոցը, որը XIV-XV դդ. երբեմն չափից ավելի բարձրադիր տեսք ուներ (**Norris H.**, նշվ. աշխ., էջ 113-114):

²⁹ The World of Roman Costume, Edited by **Lynn Sebesta J. & Bonafante L.** The University of Wisconsin Press, USA, 2001, p. 82-90.

³⁰ Հայոց արքաների թագերը X դարում նույնպես կոչվում էին խույր, որոնք պատրաստվում էին ոսկուց և զարդարվում էին մարգարիտներով և այլ թանկարժեք քարերով (**Հովհաննես Դրասխանակերտցի**, Հայոց պատմություն, թարգմ. և ծանոթ.՝ Գ.Բ. Թոսունյանի, Ե., 1996, էջ 205:

րանքի կարևոր մաս, ի՞նչ ծագում ունի, ինչպե՞ս և որտեղից են այն որդեգրել հռոմեացիները:

Խոյրի մասին առաջին պատմական տեղեկություններից մեկը մեզ է հասել Սարգոնի նամակից, որում ասորական արքան նկարագրում է ուրարտական մեհյաններից մեկում գտած «արձան մ' Արգիշտա՝ արքային Ուրարտուի, որ գլխին դրած էր աստուածոց խոյրը, (նկ. 2, նկ. 3) և աջ ձեռքով կ'օրհներ»³¹: Սարգոնը նաև նշում է, որ խոյրը զարդարված էր աստղերով: Վ. Հացունին, պատմական այլ փաստ-ապացույցներ չունենալու պատճառով ենթադրել է, որ ուրարտական խոյրը պետք է, որ տարբերվեր ասորականից՝ չնայած վերջինի զգալի ազդեցություններին: Ուրարտական որմնանկարներում և բարձրաքանդակներում պատկերված քրմերի գլխանոցները համանման են Տիգրան Մեծի և Արտավազդ Երկրորդի թագերին» (նկ. 4): Վանի թագավորության և Արտաշեսյան հարստության արքաների թագ-խոյրերի միջև ընդհանրություններն առկա են. դրանք բոլորն էլ բարձրադիր կառուցվածք ունեն և աստղազարդ են: Տարբերությունն այն է, որ Արտաշեսյան արքաների թագերը ճառագայթաձև են, իսկ Վանի թագավորության թագերը զարդարված են վարդյակ-ցցունքով:

Մ. Բուսիլը վկայում է, որ Ալեքսանդր Մեծի՝ Միջագետք կատարած արշավանքների ժամանակ Բաբելոնում Բերոսոս անունով պատմաբանը, ինչպես Հերոդոտոսը նրանից առաջ, ուսումնասիրել էր մեհյանների պատերին արձանագրված թագավորական ցուցակները, որոնք այնուհետև պահվել են քրմական արխիվներում: Այդ արխիվներում պահպանվել էին նաև պատառիկներ, որոնք վկայում էին երկրի և երկնքի արարման ընդհանուր եղելությունների մասին: Բերոսոսը նկարագրում է, որ սկզբնական ժամանակներում, երբ երկիրը բնակեցված էր պարզունակ մարդկանցով, ծովից դուրս եկավ մի ձկնակերպ հրեշ՝ Օաննես անունով: Ձկան գլխի և մարմնի ծածկույթի տակ նա ուներ մարդկային գլուխ և մարմին՝ նա երկկենցաղ էր (նկ. 1): Օաննեսը նաև խոսում էր մարդկային ձայնով և լեզվով: Զ. Սիտչինը ձկնատիպ աստծուն անվանում է Էնկի³², իսկ որոշ հայ ուսում-

³¹ Հացունի Վ., նշվ. աշխ., էջ 20:

³² Sitchin Z. The 12th Planet, Book 1 of the Earth Chronicles, New York, 2007, p. 293-294.

նասիրողներ նրան անվանում են Հայա-Էնկի³³։ Բերոսուսը վկայում է, որ Օաննեսը մարդկանց ծանոթացրել է սերմերին և պտուղներին, ինչպես նաև գրերին, սովորեցրել է գիտություն և տարբեր արվեստներ, ինչպես, օրինակ, ճարտարապետություն, նաև՝ օրենք, երկրաչափություն։ Կան ուսումնասիրողներ էլ, որոնք կարծում են, թե Enki (Ea) կոչվող «կես-ծուկ, կես-մարդ» աստվածը տիեզերական կարգ ու կանոնի հաստատողն էր և աստվածային օրենքների պահապանը։ Էնկին էր, որ մարդկությանը փրկեց գալիք աշխարհակործան հեղեղից՝ Նոյին (Atrahasis) սովորեցնելով ինչպես փրկվել և փրկել իր ընտանիքը³⁴։ Մ. Բուֆըրը նշում է, որ մի շարք մշակույթներում նույնպես առկա են պատմություններ ձկնակերպ աստվածների մասին, որոնք ժամանակ առ ժամանակ այցելում էին մարդկանց ու նրանց սովորեցնում կարևոր գիտելիքներ և կարողություններ, ինչպես, օրինակ, Վիշնուն՝ հնդկական մշակույթում։ Մ. Բուֆըրը նաև գրում է, որ ըստ Պլուտարքոսի, Ջևսը՝ հունական դիցաբանություն մեջ, սկզբնական շրջանում պատկերվում էր ձկան պոչով³⁵։

Ժամանակ առ ժամանակ երկիր այցելող աստվածային ծուկ-մարդիկ վայրէջք էին կատարում Արաբական ծովում և այնտեղից անցնում Միջագետք³⁶։ 2. Սիտչինը նաև հավաստում է, որ Էնկին Երկիր է ժամանել, երբ արևը գարնանային գիշերահավասարին ծագում էր Ձկներ համաստեղությունում և մնացել է մեկ Մեծ տարվա տևողությամբ՝ 25,920 տարի, այսինքն՝ մինչև այն ժամանակ, երբ արևը գարնանային գիշերահավասար-

³³ Հայա-Էնկին համարվում էր «ստեղծող, արարիչ», որը նաև ստորերկրյա օվկիանոսի տիրակալն էր (**Մովսիսյան Ա.**, Սրբազան լեռնաշխարհը, Հայաստանը Առաջավոր Ասիայի հնագույն հոգևոր ընկալումներում, Ե., 2006, էջ 9)։

³⁴ **Davis C.K.** Don't Know Much About Mythology, USA, 2005, p. 146 & 158.

³⁵ Մի կարևոր հանգամանք, որ Մ. Բուֆըրը չի նշում, այն է, որ ասորական պատկերում ծուկ-աստվածը աջ ձեռքում բռնել է սրբազան կոնը, որը կոնաձև գեղձի՝ երրորդ աչքի խորհրդանիշն է, և որի միջոցով միայն մարդ արարածը ի գորու է կապվելու աստծո էությանը։ Ուրեմն Օաննեսը նաև մարդկանց հոգևոր էությունը ազնվացնող կարողություն և առաքելություն ուներ։ Այս հանգամանքը ավելի համոզիչ է դարձնում այն իրողությունը, որ ձկնակերպ աստծո խորհրդանիշը պետք է, որ կարևոր լիներ նրա հետնորդ թագավոր-աստվածների համար (**Booth M.** The Secret History of the World, The Overlook Press, New York, 2010, p. 99-101. **Sitchin Z.**, նշվ. աշխ., pg. 287)։

³⁶ 2. Սիտչինը, աքքադական թարգմանությամբ, շումերական գրություններից մեջբերումներ անելով, հայտնում է, որ «թագավորության իրավունքը իջեցվեց երկնքից, ազնվագույն թագից հետո թագավորական գահը նույնպես իջեցվեց երկիր» (նշվ. աշխ., էջ 289-290)։

րին ծագում էր Զրիոս համաստեղությունում³⁷: Աստվածաշնչում հայտնի են վաղ ժամանակներում տեղի ունեցած նման եղելությունների արձագանքները, որտեղ ասվում է, թե երբ մարդիկ բազմանում ու տարածվում էին երկրի վրա, աստծո զավակները իջնում էին երկիր և սերունդ էին ունենում մարդկանց աղջիկներից³⁸:

Ձուկ-աստծու պաշտամունքը անձանոթ չէր հայ հեթանոսական մշակույթին: Գեղամա լեռներում, Արագածի լանջերին և Հայաստանի այլ վայրերում գտնված ձկան պատկերով հսկա քարե արձանները, ամենայն հավանականությամբ, նվիրված են եղել ձուկ-աստծուն: Ժողովրդի կողմից «վիշապ» անվանվող այս արձանները, հավանաբար, ստեղծվել են մ.թ.ա. երրորդ հազարամյակից սկսած: Հին հեթանոսական դիցաբանության համալիրում այս աստծու պաշտամունքը աղերսվում էր ստորերկրյա ջրերի պաշտամունքին, որովհետև «վիշապները» մեծ մասամբ դրվել են ջրի ակունքների, աղբյուրների կամ ջրանցքների մոտ³⁹: Ուշագրավ է, որ հայկական մշակույթում պատահողմը «**Վիշապ** կամ **Ձկնամբ**» անուններն է կրել⁴⁰:

Հարկ է նշել մի հանգամանք ևս՝ հայ հեթանոսական գլխավոր՝ արևի աստված Միհրի խորհրդաբանական մետաղը եղել է ոսկին, իսկ կենդա-

³⁷ Ձ. Սիտչինը գտնում է, որ հին աշխարհի աստղագետները, համաստեղություններին նայելիս, դրանք անվանելիս կամ աստղատները որոշակի աստվածների վերագրելիս որևէ նմանություն չեն տեսել համաստեղությունների անվանական ձևերի հետ: Օրինակ, Ձկների համաստեղությունը ձկների նմանություն չունի կամ Առյուծը՝ առյուծի. այդ աստվածներն իրենց համաստեղություններին կապված են եղել ժամանակի, կամ՝ իրենց հանձնարարված աստվածային գործունեության առումով:

³⁸ **Աստվածաշունչ**, Մատենան Հին ու Նոր Կտակարանների, եբրայական եւ յունական բնագիրներից թարգմանված, 1896 թուին Կոստանդնուպոլսում լույս տեսած Աստուածաշնչի վերատպութիւն, էջ 6, N I-5:

³⁹ Մ. Աբեղյանը կարծում է, որ ձկնակերպ արձանները՝ «վիշապները», նվիրված են եղել Անահիտ կամ Աստղիկ աստվածուհիներին [**Աբեղյան Մ.**, «Վիշապներ» կոչված կոթողներն իբրև Աստղիկ-Դերկետո դիցուհու արձանները (Երկեր, հ. է, Ե., 1975, էջ 103-182):

⁴⁰ Զրերի հետ առնչվող պատահողմը Ս. Գրքում նաև *Թաթառ* է անվանվել: «Վիշապ-Ձկնամբը» ձկնակերպ պատկերացնելը բացատրվել է ջրերի վրա իջնելիս կամ բարձրանալիս ձկնակերպ գալարվելու պատճառով (տե՛ս **Բոդյան Վ.**, Հայ ազգագրություն, Համառոտ ուրվագիծ, Ե., 1974, էջ 203): Սակայն հասկանալի է, որ նման երևույթները նույն անվանումը ստանալու համար պետք է որ անպայման կապված լինեին հզոր դիցերի կարողությունների հետ և ոչ թե պարզապես նմանվեին որոշակի կենդանիների:

նակերպը համարվել է Ձկների համաստեղությունը⁴¹: Հետագայում ձկան խորհրդաբանությունն անցավ միաստվածության ոլորտ և վերագրվեց նաև Քրիստոսին⁴²: Առաջին քրիստոնյաները ձկան պատկերը գործածում էին որպես քրիստոնեության նշան-խորհրդանիշ, իսկ հունարեն «իխտիս» բառը, որ նշանակում էր «ծուկ» և, որպես աքրոստիկոս, կազմում էր «Հիսուս Քրիստոս Աստծո Որդի Փրկիչ» արտահայտությունը⁴³: Ձկան՝ Քրիստոսի խորհրդանշան դառնալը տարածվեց նաև նոր կտակարանային կարևոր անձերի վրա՝ առաքյալներից ոմանք ձկնորսներ էին, և հետագայում նրանց տրվեց մարդկային հոգիներ որսալու առաքելությունը⁴⁴, և, ըստ առաքյալների, խորհրդավոր ընթերցի ժամանակ սեղանի վրա հացի և գինու հետ կար նաև ձուկ⁴⁵: Ձկան խորհրդաբանությունը, քրիստոնեական խորհրդաբանական համալիրում նպատակին հարմարեցնելն այս պարագայում ակնհայտ է, որովհետև ոչ բոլոր առաքյալներն էին ձկնորսներ: Ինչու՞ հատկապես միայն որոշ առաքյալների մասնագիտությունները դարձան կարևոր միջոց մեկնաբանելու և ապա դառնալու քրիստոնեական պաշտամունքային կառույցի համար այդքան կարևոր խորհրդանիշներ:

Վերադառնանք ձուկ-աստվածներին: Մ. Բուֆերը ներկայացնում է Բրիտանական թանգարանում պահվող՝ Նինվեի պատերից արտանկարած ձուկ-աստծու պատկեր-փորագրությունը (նկ. 1)⁴⁶: Անհնար է անտեսել

⁴¹ **Շահնազարյան Ա.**, նշվ. աշխ., էջ 145:

⁴² Հունարեն «ծուկ» (ichthus) բառի հինգ հիմնական տառերը քրիստոնյաների կողմից որդեգրվել են որպես գաղափարագիր, որը նշանակում էր՝ Iesu Christos (**Chevalier and Gheerbant**, նշվ. աշխ., էջ 385).

⁴³ Խորհրդավոր ընթերցի ժամանակ սեղանին սովորաբար, հացի և գինու հետ, պատկերվել է նաև ձուկ՝ որպես Քրիստոսի խորհրդանշան: Գլածորի Ավետարանի՝ Խորհրդավոր ընթերցի պատկերում Հիսուսը նստած է ձկնակերպ գահավորակի վրա, և նրա ոտքերը հանգչում են ձկան գլխին (**Դևրիկյան Վ.**, Խորհրդավոր ընթերց, Հայկական ավանդույթից մինչև Լեոնարդո, Ե., 2008, էջ 109):

⁴⁴ Նույն տեղում, էջ 10:

⁴⁵ Միջնադարյան մանրանկարչության մեջ այս ձկնակերպ վիշապը երբեմն առկա է «Մկրտության» ու «Դժոխքի» տեսարաններում (**Հակոբյան Հ.**, Վասպուրականի մանրանկարչությունը, գիրք Բ, Ե., 1982, էջ 33): Նման վիշապապատկեր կա նաև Աղթամարի որմնանկարում՝ «Հովհաննու պատմության» տեսարանում: Մասնագետները հավաստում են, որ այս վիշապը հեթանոսական դիցաբանությունից է անցել քրիստոնեական պատկերագրություն (նույն տեղում, ծանոթագրություններ, էջ 130) և հանդես է գալիս չարի խորհրդաբանությամբ:

⁴⁶ **Booth M.**, նշվ. աշխ., էջ 100:

այս պատկերում «ձկան գլուխ» գլխանոցի և Առաքել Պատրիկի «Հայկական տարազ» գրքում բերված Ծովքի հայկական թագավորներից՝ Քսերքսեսի դրամի վրա ներկայացված արքայական՝ ճեղքված գագաթով թագ-գլխանոցի նմանությունը (նկ. 5): Քսերքսեսի գլխարկն անսովոր ձև ունի, որ հիշեցնում է ձկան կիսաբաց բերան⁴⁷, և այս գլխանոց-թագի խորհրդաբանությունը, հավանաբար, հնարավոր չէ այլ կերպ մեկնաբանել, քան որպես ասորական ծուկ-աստծու գլխանոցի արձագանք, որը նրա էության, կոչման և առաքելության անժխտելի ցուցիչն էր: Համեմատելով Տիգրան Մեծի կամ Արտավազդի թագերի կառուցվածքին⁴⁸, ակնհայտ է դառնում, որ Քսերքսեսի թագը կապող օղակ է ծուկ-աստծու և հայ թագավորների թագերի միջև:

Հետաքրքրական է, որ երբ Վ. Հացունին քննարկում է Քսերքսեսի երկփեղկված թագավորական գլխանոցը, որ «ճեղքուած, առաջակողմեն լայն ու բարձր, յետկողմէն նեղ ու ցած» ձև ուներ, այն անվանում է եզակի՝ իր ձևով և նշում, որ նման թագ հայտնի չէ այլ մշակույթներում՝ ավելացնելով, որ օտարազգի պատմիչ Բաբլոն այն «հայկական» է անվանել: Վ. Հացունին այս թագը նմանեցնում է եպիսկոպոսական խույրին և վերջում էլ հարց է տալիս՝ «Արդյոք բուն արքայական թագն էր այս, թե՞ քրմական ձև մը...»՝ միևնույն ժամանակ հաստատելով, որ հայոց հեթանոս թագավորները քրմեր էին նաև: Սակայն, քանի որ «հայ թագաւորք միանգամայն քրմապետ էին» և «Միհրի պաշտօնն ու տաճարն Հայոց ընտանի և անոնց մէջ ալ կար մինչև Լուսավորիչ»⁴⁹, Վ. Հացունին կարծում է, թե Տիգրանի թագը պետք է որ կրոնական խորհրդանիշ ունենար: Հետևաբար, անհավանական չէ այն ենթադրությունը, թե՛ ինչպես Տիգրան Մեծի և իր հետնորդների ճառագայթածն, «հայկական» կոչված թագերն, այնպես էլ կաթողիկոսական խույրը պետք է նույն ծագումը ունենային: Տեղին է նշել, որ դեռ V դարում Արշակունի քուրմ-թագավորները կրում էին խույրեր և թագեր, նաև՝ նրանց հանդերձանքի բոլոր պարագաները բանված էին «գեղեցկատեսիլ զարդերով» ու «ոսկեհուռ պաճուճանքներով»⁵⁰:

⁴⁷ Պատրիկ Ա., նշվ. աշխ., էջ 29, պատկեր 3:

⁴⁸ Նույն տեղում, պատկեր 4 և 5:

⁴⁹ Հացունի Վ., նշվ. աշխ., էջ 50-51:

⁵⁰ Հարկավոր է նկատել, որ պատմիչը՝ Ղ. Փարպեցին, տարբերում է խույրը թագից, չնայած երկուսն էլ համարյա նույն իմաստն ունեն՝ «...զպատուական քարինս. զոր ընկալեալ արուեստող ձեռաց զարդարեն զթագաւորս մեծատեսիլ զարդեօքն յօրինուա-

Նմանատիպ թագ-գլխանոց է հանդիպում Քսերքսեսից մոտ մեկ հազարամյակ անց: XIII դ. առաջին կեսին գրված Հադպատի Ավետարանի խորանապատկերի լուսանցքում նկարված կերպարը՝ Շերանիկը (նկ. 6), կրում է կաթողիկոսական խույրին հար և նման շքեղ գլխանոց, որի հետևի հարթ շերտի գագաթին ամրացված է փոքրիկ խաչ⁵¹: Շերանիկը ձեռքին բռնել է ձկնորսական կեռածայր փայտ, որի ծայրից կախված է մի մեծ ձուկ: Նա գունագեղ հագուստներ է կրում, գոտկատեղի ձախ կողմից կախված է ծոպերիզով զարդարուն, ծաղկանկար մի կտոր, որ բռնել է ձախ ձեռքով, որպես պատվանշան, իսկ կոշիկների հետնամասից փնջազարդեր կան կախված: «Ձկնորսի» կողքին առկա գրությունն ասում է՝ «Շերանիկ, քանի գաս, ձուկն բեր»⁵²: Ա. Պատրիկը Շերանիկին ձկնորս է անվանում, իսկ նրա գունագեղ հագուկապը, շքեղ գլխանոցի հետ, համարում է վրացական մշակութային ազդեցություն՝ պատճառաբանելով, որ Շերանիկի գլխանոցը նման է Հառիճի եկեղեցու արևելյան պատին պատկերված Զաքարե սպասալարի գլխանոցին⁵³:

Հառիճի եկեղեցու պատի պատկերը կտիտորական քանդակ է, որ ներկայացնում է Զաքարե և Իվանե եղբայրներին՝ ականածանքով եկեղեցուն սրբապատկեր նվիրելիս: Ա. Պատրիկը հայտնում է, որ եղբայրների կրած հագուստը՝ «XIII դարի հայ և վրաց իշխանական տարագի թագակիր մի նմուշ է»⁵⁴: Չի կարելի կասկածել, որ նման կարևոր իրադարձության առիթով եղբայրները հրաշափառ եկեղեցու պատին հավերժացվել են իրենց պատշաճ և պաշտոնական հագուկապով: Այս պատկերում (նկ. 7) Զաքարե Սպասալարի թագակապով գլխանոց-թագն⁵⁵ իր կառուցվածքով չափազանց նման է Քսերքսեսի թագին, միայն թե վերջինս քիչ ավելի բարձր է: Զաքարեի և Շերանիկի թագերը, որ նույն ժամանակաշրջանին և

ծովքն, զոր ի խոյրսն և ի թագսն և ի հանդերձսն յոսկէիուսս պաճուճեալս ընդելուզանեն» (**Ղազար Փարպեցի**, Հայոց պատմություն, էջ 22-23):

⁵¹ **Դուռնովո Լ., Դրամբյան Ռ.**, Հայկական մանրանկարչություն, Ե., 1967, նկ. 18: Այս նկարում պատկերված խորանը Հադպատի Ավետարանից է, ծաղկող՝ Մարգարե (Մատենադարան, Ավետարան, 1211, ձեռ., 6288):

⁵² **Պատրիկ Ա.**, նշվ. աշխ., էջ 123:

⁵³ Նույն տեղում, էջ 122:

⁵⁴ Նույն տեղում, էջ 67:

⁵⁵ Զաքարյան եղբայրները ոչ պաշտոնապես, սակայն արքայական կարգավիճակ ունեին, և, հավանաբար, պատկերված գլխանոցը ոչ թե իշխանական գլխարկ է այլ՝ թագի տեսակ:

մշակութային ոլորտին են պատկանում, քիչ են տարբերվում իրարից: Շերանիկի թագը փոքր-քիչ ավելի բարձր է և խաչազարդ, որ, հավանաբար, կրոնական ենթատեքստ ու խորհրդաբանություն ունի: Չաքարեի և Շերանիկի թագերն էլ, հետևաբար, իրենց հերթին, միայն փոքր տարբերություններով, որոշակիորեն կապող օղակ են Քսերքսեսի թագի և եպիսկոպոս-կաթողիկոսի խոյրի միջև (նկ. 8): Չաքարեի թագ-գլխանոցի գոյությունը գալիս է հաստատելու ևս մի իրողություն, որ խոյրանման թագերը օտար չէին հայկական արքայական կամ կրոնական տարազների միջավայրում: Դա նաև նշանակում է, որ Հռոմի պապի պատվավոր հանդերձների նվիրաբերումներից դեռ շատ առաջ հայ քրմերն ու արքաները խոյր-միթր թագեր են կրել⁵⁶:

Իմաստային և խորհրդաբանական առումով կապը ամբողջական կդառնա, եթե անդրադառնանք նմանատիպ թագեր կրող էակ-անձանց բնույթին ու նրանց գործունեության կարևորությանը, որոնք իրենց էության տեսանելի արտահայտությունը պետք է, որ դրսևորեին իրենց հագուստների և գլխի հարդարանքի, մանավանդ գլխազարդ-թագի միջոցով: Ըստ Մ. Բուֆիի՝ ձուկ-աստվածը, ինչպես նշվեց վերևում՝ կարևոր առաքելություն է իրականացրել մարդկության համար: Նա, իր աստվածային իմացությունը փոխանցելով մարդկությանը, ոչ միայն ազնվացրել է նրան, այլև իր այցը երկիր մի յուրօրինակ գործունեություն է եղել՝ իր բերած գիտելիքով մարդկությանը փրկելով կործանումից: Հիսուսն էլ՝ նման խորհրդաբանությամբ, ջրում մկրտվելով, Աստծու խոսքը իջեցրեց երկիր և իր արյամբ փրկության հնարավորություն ընծայեց մարդկությանը:

Թագավորը մարդկանց աշխարհիկ, իսկ կաթողիկոս-եպիսկոպոսը՝ հոգևոր կյանքի պահպաններն են: Նրանք աստվածային գիտելիքը կրող առաջնորդներ են և իրենց հոգևոր ու մտավոր զարգացումով ու կարողություններով պետք է ապահովեն իրենց խնամքին հանձնված մարդկանց հոգևոր և աշխարհիկ պահպանությունը: Հետևաբար, թագ-գլխանոցը, որը շնորհվում է ընտրյալ-կրողին, նրա՝ աստվածային խորհրդին հասու լինելու

⁵⁶ Ձուկը, լինելով կյանքի, բեղմնավորության, ծննդի և վերածննդի խորհրդանիշ և սրբազան գիտելիքը բացահայտող էություն, Վիշնուի ավաթարներից մեկն էր, որ Մանուին փրկեց ջրհեղեղից և նրան տվեց Վեդաները՝ հինդուիստական սրբազան օրենքները: Սուրբ ձուկը հայտնի է և կարևորագույն տեղ է զբաղեցնում եգիպտական, փյունիկյան, միջագետքյան և այլ մշակույթներում (**Chevalier and Gheerbrant**, նշվ. աշխ., էջ 383):

մտավոր և հոգևոր կարողության ցուցիչն է: Այն հանգամանքը, որ թագր-գլխանոցը դրվում է կրողի գլխից վեր, խորհրդանշում է վերջինիս ամենա-կարևորագույն դերն ու նպատակը իր առաքելությունն իրականացնելու ճանապարհին: Ավանդապահությունն այս կարևոր գլխանոցի պարագա-յում զարմանալի չէ, քանի որ դրա իմաստն ու կարևորությունը հույժ էական են եղել Առաջավոր Ասիայի, Միջագետքի մշակույթներում, և թագ-խույր կրող հեթանոս աստծու կամ ամենաբարձրյալի կամքը կատարող ընտրյալ պաշտոնյայի կյանքի հիմնական նպատակն էր ճանաչել Աստծուն և իր նման երկրավոր էակներին օգնել հետևելու իր օրինակին: Ավելին, պատասխանատու լինել հասարակ մահկանացուների՝ իրեն վստահված հոգիների փրկության համար⁵⁷:

Հին հայկական մշակույթի ժառանգության մեջ հայտնի չեն ճիշտ Օաննեսի նման հեթանոսական ձկնակերպ աստվածների պատկերներ, սակայն չի կարելի ենթադրել, որ նրանց ուղղակի նմանակների բացակա-յությունը ենթադրում է նաև նրանց բացակայություն: Հետևաբար, ինչո՞վ բացատրել այն հանգամանքը, որ հայ կաթողիկոսներն ու եպիսկոպոսնե-րը, որ տարբեր գլխանոցներ են կրել պատմության ընթացքում, հռոմեա-կան խիստ ազդեցության ժամանակաշրջանից հետո էլ հավատարիմ են մնացել այս ավանդությանը: Խույրի նախատիպը կաթոլիկ եկեղեցուն է անցել Միջագետքից, Առաջավոր Ասիայից և ժամանակի ընթացքում, որոշ փոփոխությունների ենթարկվելով, նվիրատվությունների միջոցով վերա-դարձել է իր սկզբնաղբյուրին, և Հայ առաքելական եկեղեցու առաջնորդ-ները մինչև հիմա էլ պատվով կրում են այդ թագ-խույրը:

Ակնհայտ է, որ ձկան խորհրդանշանի իմաստն ու էությունը հայտնի են եղել քրիստոնեության ընդունումից դեռ շատ առաջ և ներկայացրել են գլխավոր աստծուն՝ իր «ծուկ» խորհրդաբանությամբ, դրա համար էլ այն հեշտությամբ վերագրվել է Հիսուսին և դարձել նրա կարևոր ատրիբուտնե-րից մեկը: Որպես այդպիսին՝ միայն պատշաճ էր, որ այն օգտագործվեր զարդարելու հոգևոր արքայի գլուխը, այն էլ՝ միայն սուրբ պատարագի կամ հատուկ եկեղեցական արարողությունների ժամանակ:

⁵⁷ Կաթոլիկ եկեղեցու հայրապետի՝ Հռոմի պապի թագադրության ժամանակ թա-գադրող կարդինալը նրան ասում է, որ նա ընդունում է եռակի թագը, որ նշանակում է՝ կրելով այդ թագ-թիարան՝ «նորընծա պապը» դառնում է ոչ միայն «հայր», այլև «արքա, իշխան և տիրակալ Երկրի վրա», հետևաբար, նաև ընդունում է «Սուրբ Երրորդությանը» (նույն տեղում, նշվ. աշխ., էջ 1007):



Նկ. 1.



Նկ. 2.



Նկ. 3.



Նկ. 4.



Նկ. 5.



Նկ. 6.



Նկ. 7.



Նկ. 8.

Նկ. 1. Ձուկ-աստված Օաննես, մ.թ.ա. XIX դ., ռելիեֆային պատկեր Նինվեից, Բրիտանական թանգարան (M. Booth, The Secret History of the World, 2011, p. 100)

Նկ. 2. Թեշուբը ցլի վրա, Առաքել Պատրիկ (Հայկական տարագ, տախտ. 2, նկ. 1, էջ 21)

Նկ. 3. Թեշուբի արձանիկ, Կարմիր բլուր, ՀՊՊԹ (Առաքել Պատրիկ, նշվ. աշխ., տախտ. 3, նկ. 2, էջ 23)

Նկ. 4. Տիգրան Մեծի դրամը (Առաքել Պատրիկ, նշվ. աշխ., տախտ. 6, նկ. 4, էջ 29)

Նկ. 5. Քսերքսեսի դրամը (Առաքել Պատրիկ, նշվ. աշխ., տախտ. 6, նկ. 3, էջ 29)

Նկ. 6. Շերանիկ (H. Hakopian, E. Korkhmazian, Armenian Miniatures of the 13th and 14th Centuries, Haghbat Gospel, Matenadaran Collection, 1984, Khoran, f. 8v. ill. 12)

Նկ. 7. Ջաքարե սպասալար, Հադիճ, XIII դ. (Առաքել Պատրիկ, նշվ. աշխ., տախտ. 26, էջ 67)

Նկ. 8. Կաթողիկոսական խոյր, XVIII դ. (Մ. Ղազարյան, Սբ. Էջմիածին, Գանձատուն, Ս. Էջմիածին, 1984)

Ուրեմն՝ թագավոր-քուրմ Տիգրան Մեծի թագը, իր երեք հիմնական մասերով՝ ոսկե ատամնավոր կամ ճառագայթաձև թագ, ուսերին իջնող ապարոշ-արտախուրակ, թագի և արտախուրակի միացման հատվածում կապվող թագակապ, որոշակի ձևափոխումների ենթարկվելով՝ պահպանվել է կաթողիկոսի հանդերձանքի համալիրում՝ որպես հանդերձի ամենակարևոր, տարբերակիչ մաս: Խույրը՝ ձկան խորհրդաբանությամբ, փոխարինել է ճառագայթաձև ոսկե թագին: Ապարոշը թագից անջատվել և վերափոխվել է վակասի, իսկ թագակապին փոխարինել են արտախուրակները: Սա է հիմնական պատճառը, որ այս երեք մասերն էլ հայոց լեզվում ունեցել են թագի և խույրի իմաստ ու նշանակություն:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԹԱԳ-ԽՈՒՅՐԻ ԽՈՐՀՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԽԱՉՄԱՆՅԱՆ Ս.Հ. (ԱՄՆ, Լոս Անջելես)

Ամփոփում

Խույրը Հայոց առաքելական եկեղեցում կրում են միայն բարձրաստիճան հոգևորականները՝ եպիսկոպոսները և կաթողիկոսները՝ որպես հոգևոր արքաներ: Այն գործածվում է եկեղեցական հանդիսավոր արարողությունների ժամանակ միայն: Այս շքեղ, խաչազարդ թագ-գլխանոցը՝ իր «mitra» անվամբ, Հայոց եկեղեցու կողմից վերջնականապես որդեգրվել է XV դարում: Դա կաթոլիկ եկեղեցու ազդեցության հետևանք է, սակայն նրա գործառության և խորհրդաբանական նշանակությունը գալիս է նախաքրիստոնեական շրջանից: Այն աստիճանական զարգացման ընթացքում, փոփոխությունների ենթարկվելով, ստացել է իր վերջնական տեսքը:

Խույրի խորհրդաբանությունը վերագրվում է Հայա-Enki (Ea) անվամբ «կես-ծուկ, կես-մարդ» կոչվող հեթանոսական դիցին, որը միջագետքյան աղբյուրներում պատկերվում էր հենց ձկան տեսքով: Նա տիեզերական կարգ ու կանոնի հաստատողն էր և աստվածային օրենքների պահապանը: Հետագայում ձկան խորհրդաբանությունը վերագրվեց Հիսուսին և, որպես եկեղեցու արքայի սրբազան թագ-գլխանոց, իր խորհրդաբանական արտահայտությունը գտավ կաթողիկոսի հանդերձանքի համալիրում:

Բանալի բառեր՝ սրբազան հանդերձ, թագ-գլխանոց, ծես, ավանդույթ, խորհրդաբանություն, տարբերակիչ տարր, նշան-խորհրդանիշ:

СИМВОЛИКА МИТРЫ-КОРОНЫ КАТОЛИКОСА

ХАЧМАНЯН С.Г. (США, Лос-Анджелес)

Резюме

Митру в Армянской апостольской церкви носят только высокопоставленные представители духовенства – епископы и католикосы как духовные цари, и она используется лишь во время торжественных церковных обрядов (церемоний).

Эта великолепная, украшенная крестами корона – головной убор под названием «mitra» окончательно была принята армянской церковью в XV веке, что считалось результатом влияния католической церкви, но её функциональное и символическое значение восходит к дохристианскому периоду, и в процессе постепенного развития, подвергаясь изменениям, она получила свой окончательный вид.

Символика митры приписывается языческому божеству «полурыба, получеловек» под названием а – Enki (Ea), которое, согласно письменным источникам Междуречья, изображалось именно в виде рыбы. Божество это утверждало вселенские законы и порядки, охраняло божественный порядок. Впоследствии символика рыбы была приписана Иисусу, что и получило своё символическое отражение в комплексе убранства католикоса как священная корона – головной убор царя церкви.

Ключевые слова – священное убранство, корона-шапка, обряд, традиция, символика, отличительный элемент, знак-символ.

THE SYMBOLOGY OF THE MITER-CROWN OF THE CATHOLICOS

S. KHACHMANYAN (USA, Los Angeles)

Abstract

The Miter is worn by the religious heads: bishop and Catholicos, as religious kings in the Armenian Apostolic Church. This crown is used during holy liturgy or during religious ceremonial occasions only. Miter is a luxurious, golden crown-headdress, decorated with crosses, which was finally adopted by the Armenian Church in the 15th century. This crown was considered being an influence of the Western Catholic Church, however, its functional and symbolic meaning is age old and coming from the pre-Christian era. During its gradual historic development, the miter went through a variety of changes acquiring its final modern look.

The symbology of the the miter was attributed to the “half-fish half-man pagan god by the name of Haya-Enki (Ea). According to anient Mesopotamian sources, this god was portrayed as a fish. Haya-Enki was considered the founder of the universal order and the guardian of the divine law. Later in the history, the fish symbol was attributed to Jesus, therefore, It was only appropriate that this symbol found its expression in the regalia of the Catholicos’ vestments as the crown-headdress worn by the king of the church.

Key words – holy vestments, crown-head dress, ritual, tradition, symbol, distinguishing element, sign-symbol.

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԴՎԻՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ ԱՆՏԻԿ ՇԵՐՏԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ՔՈՉԱՐՅԱՆ Գ.Գ.*

Դեռևս անցյալ դարի 30-ական թվականներին Դվինի վաղմիջնադարյան հոգևոր կենտրոնում¹ կաթողիկե և միանավ եկեղեցիները, VII դ. կաթողիկոսական պալատը և սրանց միջև ընկած տարածքը պեղելիս՝ միջնադարյան նյութերի հետ մեկտեղ հայտնաբերվել են անտիկ ժամանակաշրջանին հատկանշական խեցեղեն² և կարասային թաղումներ³: Ավելի ուշ՝ 70-ականներին, երբ հատուկ հետազոտության առարկա դարձան տվյալ ժամանակաշրջանի նյութերը, հիշյալ տարածքում՝ մ.թ. IV-V դդ. և մ.թ.ա. X-VIII դդ. շերտերի միջև հայտնաբերվեց մ.թ.ա. II - մ.թ. I դարերով թվագրվող ընտիր գունազարդ խեցեղենով⁴ հագեցած 0,30:0,60 մ հզորությամբ մշակութային շերտ:

Շերտագրական դիտարկումները բացահայտեցին Դվինի վաղմիջնադարյան (IV-V դդ.) նոր ձևավորվող հոգևոր կենտրոնի ծավալուն կառուցապատման ժամանակ անտիկ շերտի հատվելն ու աղճատվելը: Ժամանակագրական տարբեր շերտերում հայտնաբերվել են անտիկ շրջանի

* ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմական գիտ. թեկնածու, vruyr2001@yahoo.com, հոդվածի ընդունման օրը՝ 26.12.2018, գրախոսման օրը՝ 01.03.2019:

¹ Դվինի վաղմիջնադարյան հոգևոր կենտրոնը գտնվում է միջնաբերդի բլրի հարավարևմտյան ստորոտին և պայմանականորեն կոչվում է **ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԹԱՂԱՄԱՍ**:

² Տե՛ս Հայաստանի պատմության թանգարանի՝ Դվինի պահոցի 1937, 1938 թթ. հավաքածուները (1543/122, 231, 240, 280, 281, 292, 418, 474-480, 512, 525, 1617/99, 134, 147, 190 և այլն):

³ Տե՛ս **Тер-Аветисян С.В.** Двин. Его история и раскопки в 1937-1938 гг. (**Տեր-Ավետիսյան Ս.Վ.**, Հայագիտական հետազոտություններ, Ե., 2010, էջ 210), **Ղաֆադարյան Կ.**, Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. 1, Ե., 1952, էջ 59:

⁴ Անտիկ ժամանակաշրջանի գունազարդ խեցեղենի հավաքածուն պարունակում է համակենտրոն շրջանազծերի, ծաղկաշղթաների, ներգծված կիսաշրջանների, ցանցկեն, զիգզագաձև զարդագույններով պարուրված տափաշների, կիսագնդաձև գավաթների, ըմպանակների, խաչազարդ ու բուսազարդ թասերի, պնակների բեկորներ:

նյութեր, իսկ վաղմիջնադարյան շինություններում՝ կրկնակի օգտագործված սրբատաշ քարեր և ճարտարապետական մանրամասներ:

Սպիտակ ավազաքարե, շիկավուն ու թխագույն տուֆե սրբատաշ քարերով են շարված Սուրբ Գրիգոր կաթողիկե եկեղեցու նախնական (IV դ.) եռանավ շինության՝

- կրաշաղախով ամրացված հիմնապատերը,
- ավագ խորանն ամբողջությամբ,
- հարավային պատի արևմտյան նախավերջին որմնասյան հիմքը,
- հարավային ու հյուսիսային թևերին զուգահեռ «նորահայտ պատերը» (ստորին շարքում առկա են նաև բազալտե սրբատաշ սալեր)⁵:

IV դ. կաթողիկեի եռանավ շինությունը կառուցելիս նման քանակությամբ սրբատաշ քարերի՝ զանգվածաբար կրկնակի օգտագործման իրողությունը վկայում է տվյալ թաղամասում մինչ այդ քանդված կառույցների առկայության մասին: Ընդ որում, հիշյալ քարերին ժամանակագրորեն առնչվում են նույն տեղում և հարակից տարածքում հայտնաբերված մ.թ.ա. II-մ.թ. III դդ. բնորոշ ճարտարապետական տարրեր.

- սպիտակ ավազաքարե տորածև սյունախարիսխներ,
- տուֆե «ատտիկական» սյունախարիսխներ, ձևավոր կողապատկերով, խորաքանդակ բուսազարդ գոտիով սյունախարիսխներ, սյան մատնեքավոր գլանի վերնամաս, ցլազլուխ խոյակ,
- բազալտե տանիքի ծածկասալ (նկ. 1, 2-8, նկ. 2, 1-2)⁶:

Վերը թվարկածից զատ, Դվինի վաղմիջնադարյան գրեթե բոլոր մոնումենտալ շենքերի (IV դ. «Արշակունիների գահադաիլիճ», V դ. կաթողիկոսական պալատ և այլն) հիմնապատերի մեջ առկա են մշակութային նախորդ շրջանի շինություններին պատկանող սրբատաշ քարեր, կամարի,

⁵ Մանրամասն տե՛ս **Քոչարյան Գ.**, Դվինի մայր տաճարի շերտագրության շուրջ (ըստ 1992-1993 թթ. պեղումների արդյունքների) (Բանբեր Երևանի համալսարանի. Հագիտություն, 2018, № 2, էջ 3-11):

⁶ Միջնադարյան Դվինի վերջնական անկումից հետո կենտրոնական թաղամասը դառնում է շինարարական նյութի հայթայթման վայր, որի հետևանքով քարակերտ հուշարձանները «խիստ կողոպտվում են ու աղճատվում» և ճարտարապետական մանրամասները հայտնվում են մերձակա գյուղերի տարածքում (տե՛ս **Тер-Аветисян С.В.**, նշվ. աշխ., էջ 254), տե՛ս օրինակ, սպիտակ ավազաքարից վարպետորեն կերտված անտիկ ժամանակաշրջանի **տորածև սյունախարիսխները** կրկնակի օգտագործված են Վերին Արտաշատի XIX դ. եկեղեցու եռանավ սրահում (նկ. 2, 1-2, գծ. 1):

քիվի տարրեր, որոնց մի մասը կրում է հին սվադի, ներկի, որմնանկարի հետքեր: Իսկ VII դ. կաթողիկոսական տուֆաշեն պալատում կրկնակի օգտագործված են բազալտե սյունախարիսխ⁷ և օձաքարից կերտված տորածն սյունախարիսխ (նկ. 1, 8): 1930-ականներին վկայված է նաև միջնաբերդի մուտքի ու միանավ բազիլիկ եկեղեցու միջև ընկած տարածքում բացված, XI-XII դդ. պատի շարվածքում վերստին օգտագործված խոշոր կոպտատաշ քար՝ վրան «խոռոչներ երկաթե ամրակների ու արճիճե լցվածքի համար»⁸:

կանի արևելյան ավազանի երկրների օրինակների միջև³²։ Յ. Պոտրատցը գտնում է, որ Միջերկրականի արևելյան և հարավային ավազանում անվակաձև այտաճանով սանձերը կարող էին հայտնվել ոչ ուշ, քան մ.թ.ա. XVII-XVI դդ., ընդ որում, դրանց նախահայրենիքը տեսնում էր Հարավային Կովկասում կամ Իրանի հյուսիս-արևմուտքում³³։ Հայաստանի անվակաձև այտաճանով սանձերի լավագույն զուգահեռները Միջերկրականի արևելյան ավազանում հայտնի են Թել Էլ-Ամառնա (nos 48, 15, 11 սենյակի պատի տակ, կառքի մասերի հետ չորսական սանձեր³⁴), Գազայի II շերտ (վաղ հիքսոսյան շրջան)³⁵, Թել Էլ-Հաբբադ (Իրաք)³⁶ և Ռաս-Շամրա (Ուգարիթ)³⁷ հնավայրերից (քարտեզ 1)։ Վերջիններս բացառիկ օրինակներ են ինչպես տվյալ տարածքների համար, այնպես էլ ժամանակաշրջանի։ Ի տարբերություն Միջերկրականի արևելյան ավազանից հայտնի սանձերի՝ մեր օրինակները փաստագրվել են գլխավորապես բրոնզեդարյան դամ-

³² **Nioradze G.** Der Verwahfund von Kvemo-Sasirethi (Georgien), Eurasia Septentrionalis Antiqua, VIII, Zeitschrift für Erforschung der Osteuropäischen und Nordasiatischen Archäologie und Ethnographie, Helsinki, 1932, S. 82-97; **Potratz J.** Die Pferdegebisse des zwischenstromländischen Raumes, Archiv für Orientalforschung, B., Heft 1/2, 1941, S. 10-13; **Եսայան Ս.**, Կառամարտիկ զորամասերը և հեծելազորը Հին Հայաստանում, Ե., 1994, էջ 39-44, **Penner S.** Schliemanns Schachtgräber und der europäische Nordosten. Studien zur Herkunft der frühmykenischen Streitwagenausstattung, Bonn, Habelt, 1998, S. 98-100.

³³ Potratz 1941, 12; Քննարկումը տե՛ս **Penner S.** Schliemanns Schachtgräber und der europäische Nordosten. Studien zur Herkunft der frühmykenischen Streitwagenausstattung, Bonn, Habelt, 1998, S. 98-100. Վերջինս կարծում է, որ առաջավորասիա-եգիպտա-հունական անվակաձև այտաճանով սանձերը ամենավաղ օրինակներն են, այնուհետև գալիս են Հյուսիսային և Հարավային Կովկասի, ապա նոր Լուրիստանի օրինակները։

³⁴ **Borchart L.** Ausgrabungen in Tell El-Amarna 1911, in MGOD 46, 1911, S. 25.

³⁵ **Potratz J.** Die Pferdegebisse, S. 11, Abb. 15. 1070 շերտից հայտնի է ևս մեկ անվակաձև այտաճանով սանձ։ **Penner S.** 1998, 95. Պեղումների արդյուքները տե՛ս ծնթ. 204։

³⁶ Գտնվել է 1980 թվականին։ Համատեքստը՝ անհայտ, ուղեկցող նյութը՝ կասսիտական ժամանակաշրջանի խեցեղեն (մ.թ.ա. 1580-1161)։ **Littauer M.A., Crouwel J.** Pair of Horse Bits of the Second Millennium B.C. from Iraq, Iraq, Vol. 50, 1988, pp. 169-171, 169, Abb. 1, Taf. 12a.

³⁷ Պոտրատցը 1966 թվականին արդեն էլ Ամարնայի, Ռաս Շամրայի օրինակները թվագրում էր մ.թ.ա. XV դարով։ **Potratz J.**, 1966, 116։

բանային համալիրներում³⁸: Ս. Եսայանի դասակարգմամբ՝ քննվող սանձերը ներկայացնում են Հայաստանից հայտնի սանձերի վաղ խումբը (տիպ I)³⁹, որոնք երբեմն նաև կոչում են «առաջավորասիական տիպի»⁴⁰: Վերջիններիս տարածման ժամանակաշրջանն ընդունված է համարել մ.թ.ա. XIV- XIII դդ.⁴¹:

Ավելին, Օ. Խնկիկյանը, ապա Լ. Պետրոսյանը Շիրակավանի nos 44 և 86ա դամբանների սանձերը չեն համարում թվագրող իրեր, քանի որ վերջիններս իբր հայտնի են նաև Լոռի Բերդի առաջին հազարամյակի դամբաններից⁴²: Սակայն, ըստ Ս. Դևեջյանի բանավոր ծանոթագրության, Լոռի Բերդի և ոչ մի դամբանում չեն գտնվել նմանատիպ իրեր⁴³, ուստի Շիրակավանի № 86ա դամբանի օրինակը ևս պետք է թվագրել մ.թ.ա. XIV-XIII դդ.⁴⁴: Անվակաձև այտաճանով սանձերի վաղագույն օրինակ ընդունում ենք մ.թ.ա XV դարի առաջին կեսով թվագրվող Լճաշենի nos 97, 10, 5 դամբանի օրինակը: № 97 օրինակը հայտնաբերվել է եռանկյունաձև առեղով երկանիվ սայլի, միտանիական կնիքի և այլ լվանտյան ծագման (համապատասխանաբար՝ ազդեցության) իրերի հետ⁴⁵: Այն երկմաս է, որի հանվածքում տեսանելի է չորս շրջան, իսկ դրանց միջակայքում եռանկյունաձև հանվածքներ են: Լճաշենի № 10 դամբանի օրինակը, որը փաստագրվել էր երկանիվ ռազմականոքի համատեքստում, սկավառակի

³⁸ St' u **Pizchelaury K.** Waffen der Bronzezeit aus Ost-Georgien in: Archäologie in Eurasien, Band 4, Espelkamp, 1997, S. 28, Taf. 91. Լճաշեն դամբ. nos 1, 2, 3, 5, 8, 9, 10, 95: **Պետրոսյան Լ.** 2018, 116:

³⁹ **Եսայան Ս.**, նշվ. աշխ., էջ 39:

⁴⁰ **Мартиросян А.** Армения в эпоху бронзы и раннего железа, Е., 1964, 100. Հ. Մարտիրոսյանը դասակարգել է Լճաշենից իրեն հայտնի 5 օրինակները երեք խմբի, որում լճաշենյան օրինակները մոտեցնում է քվեմոսասիրեթյան գանձի օրինակներին: **Хачатрян Т.** Материальная культура древнего Артика, Е., 1964, табл. 30; **Хачатрян Т.** Древняя культура Ширака, Е., 1975, 218.

⁴¹ **Picckelaury K.**, 1997, 28; **Султанишвили В.** Удила и псалии раннего этапа поздней бронзы (XV-XIII в. до н.э.) на территории Восточной Грузии (Археология, этнология, фольклористика Кавказа, Баку, 2005, с. 166); Penner 1998, 104, Taf. 62.

⁴² **Թորոսյան Ռ., Խնկիկյան Օ., Պետրոսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 102; տե՛ս նաև **Պետրոսյան Լ.**, էջ 116-117:

⁴³ Պ.գ.թ. Ս. Դևեջյանի բանավոր հաղորդումը (21.04.2018):

⁴⁴ **Թորոսյան Ռ., Խնկիկյան Օ., Պետրոսյան Լ.**, նշվ. աշխ. (սանձը կարող էր պահպանվել մինչև մ.թ.ա. IX-VIII դդ. երկարատև կիրառության շնորհիվ):

⁴⁵ **Ավետյան Վ.**, նշվ. աշխ., էջ 66-67, աղ. XXXI, 2, XXXII, 5, 14, XXXIII 2, Լ 3-4; **Պետրոսյան Լ.**, աղ. 161-164:

կողային հատվածներում ունի ուղղանկյունաձև երկու ելուս, որ արված են տաք մետաղը սուր գործիքով դեպի դուրս սեղմելու եղանակով: Դրա շնորհիվ առաջացած անցքով սանձը միանում էր ձիու գլխակապի հետ՝ դյուրացնելով կառավարումը (աղ. III, 1): Լճաշենի քննվող օրինակի թվագրությունը հաստատվում է նաև Գեղարոտի № 3 դամբանաբլուրի օրինակի մ.թ.ա. XV-XIV դդ. թվագրությամբ⁴⁶ (աղ. III, 2): Ուշագրավ է, որ Լճաշենի № 5 դամբանում փաստագրված երկու սանձերից մեկի երախճանը կրկնում էր նույն դամբանի անվակաձև այտաճանով սանձի երախճանին⁴⁷: Այսպիսով, կարող ենք նշել, որ անվակաձև այտաճանով սանձերը Կուրարաքսյան Միջագետքի ուշ բրոնզի դարաշրջանում օգտագործվել է միայն կառքերին և երկանիվ սայլերին լծված ձիերին լծելու ժամանակ: Կարծում ենք, առկա է որոշակի գաղափարական ծանրաբեռնվածություն անվակաձև սանձի (իմա՝ արևի նշան), ձիու և կառքի գաղափարների միջև⁴⁸:

Ս. Եսայանը նշում է, որ երկաթի դարաշրջանի թաղման ծեսում այլևս չեն փաստագրվում անվավոր փոխադրամիջոցներ (կամ վերջինիս փոխարինող մասեր)՝ պատճառաբանելով հնագիտացումով: Երկաթի դարում այն հանդես է գալիս միայն գոտիների, խեցեղեն առարկաների վրա և մանրակերտների տեսքով, սակայն փորձ չի արվում մեկնաբանել այս իրողությունը⁴⁹: Կարծում ենք՝ պատճառը թաղման ծեսում տեղի ունեցած

⁴⁶ Badalyan R., Smith A., 2017, Fig. 9.

⁴⁷ Պետրոսյան Լ., նշվ. աշխ., աղ. 143, 4: Նույն երախճանն ուներ նաև Օշականի միջին բրոնզի դարի վերջն ազդարարող և ուշ բրոնզի դարին բնորոշ գույքի համակազմով № 30 դամբանի օրինակը, որտեղ փաստագրված թաղման ծեսը, գույքը կասկած չեն թողնում փոխադրամիջոցի ուղեկցությամբ թաղման առկայության մասին: Калантарян и др., 2004, с. 69-71. Տիպաբանական նույն համակազմն է պարունակում նաև Արթիկի № 433 դամբանը: Хачатрян Т., 1979, с. 302.

⁴⁸ Ըստ խեթախաթական «արքայական» թաղման ծեսի՝ Պիրվային նվիրված արարողությունների ժամանակ զոհաբերվում էր ձի, ապա թագավորի կամ թագուհու մահվան դեպքում խուց էր դրվում միայն ձիու գանգը: Տե՛ս Иванов В. Использование этимологических исследований сочетаний однокоренных слов в поэзии на древнеиндоевропейских языках (Этимология, М., 1969, с. 40-55): Ուշագրավ է, որ Լճաշենի մի շարք դամբաններում կառքի մոտ փաստագրվել են միայն ձիերի գանգեր: Мнацаканян 1957, с. 146-148; Ավետյան Վ., էջ 58-66: Կառքի, արքայական իշխանության և այլ հարցերի համար տե՛ս Kristiansen K. Kontakte und Reisen im 2. Jahrtausend v. Chr. // Rad und Wagen, Der Ursprung einer Innovation Wagen im Vorderen Orient und Europa, Oldenburg, 2004, 443-454:

⁴⁹ Есаян С. Оружие и военное дело в Древней Армении (III-I тыс. до н.э.), Е., 1966, с. 140-143.

գաղափարական փոփոխություններն են, երբ հանրույթներն արդեն յուրացրել էին որոշակի տիրույթներ, բնական պաշարներ, տեխնիկատեխնոլոգիական հնարքներ՝ հանգեցնելով մշակույթի թռիչքային զարգացմանը: Տեղի է ունենում սոցիալական շերտավորման գործընթացի դանդաղեցում: Սկսում է նվազել իշխանությունը թաղման ծեսում ցուցադրելու անհրաժեշտությունը, և առանձնաշնորհ կարգավիճակ ենթադրող անձանց թաղումներում այլևս չի դրվում նյութական հարստության այնպիսի շքեղ տեսականի, ինչպիսին ընդունված էր նախորդ դարաշրջաններում: Սակայն հասարակությունը ոչ միայն պահպանում է փոխադրամիջոցների պատրաստման մասին գիտելիքները, այլև մեծ թափ է հաղորդում ձիաբուծությանը՝ սկսած մ.թ.ա. XII-XI դարերից⁵⁰:

Կարծում ենք, հասարակությունը շարունակում է պահպանել անվավոր փոխադրամիջոցների մասին ունեցած պատկերացումները, սակայն տնտեսական և մշակութային ներուժը կենտրոնացնում է արդեն ոչ թե ծիսական արարողությունների վրա, այլ ամրաշինության, մետաղագործության, խեցեղենի մեծ ծավալների հասնող արտադրության և այլ պրակտիկ գործողությունների վրա: Այդ պատճառով է, որ քննվող ժամանակաշրջանի անվավոր փոխադրամիջոցներ պարունակող դամբանների մեջ առանձնանում են *pars pro toto* սկզբունքով կատարված թաղումները, որտեղ ամբողջական սայլի կամ կառքի փոխարեն դրված է վերջինիս պատկանող մասերից (շտանդարտ, արձանիկ, ճ-աձև իրեր և այլն) կամ այն խորհրդանշող իրերից (անիվի կամ սայլի մանրակերտ, սանձ, փայտ և այլն): Ամբողջական փոխադրամիջոցին փոխարինում են հիմնականում բրոնզե արձանիկները՝ «բրոնզե շտանդարտներ»⁵¹: Ընդունված է, որ բրոնզե շտանդարտները կապված են սոցիալական հերալդիկայի կամ որևէ աստվածության պաշտամունքի հետ, որը համարվում է այս կամ այն ընտանիքի, խավի կամ տոհմի հովանավորը⁵²: Հայտնի հրատարակված շտանդարտներից միայն երեքն են հանդես գալիս *pars pro toto* սկզբունքով

⁵⁰ Փոխադրամիջոցների մասին վկայություններն սկսում են կրկին ի հայտ գալ մ.թ.ա. IX դարից: **Есаян С.**, նշվ. աշխ., էջ 140-142:

⁵¹ **Shanshashvili N., Narimanishvili G., Narimanishvili G.** Trade and Trade Roads between South Caucasus and Near East, Tbilisi, 2006, p. 135-138.

⁵² **Shanshashvili N.** et. all., p. 135.

կատարված թաղումներում (Արթիկ - 3, Վերին Նավեր - 14, Քուչակ - 31)⁵³: Արթիկի № 3 դամբանից հայտնի է խարսխաձև պատվանդանով մի իր, որը առաջավորասիական սրի և այլ իրերի հետ մեկտեղ հայտնաբերվել է աճյունի կրծքավանդակի մոտից⁵⁴: Այն խարսխաձև պատվանդանի տեսք ունի, որի կողային երկու ծողերի միացումով առաջացող բարձր վզի վերին հատվածում ավարտվում է երկու աչքեր հիշեցնող խողովակներով (աղ. III, 3):

Խցում փաստագրվել է արտեֆակտների հետաքրքիր համակազմ⁵⁵, որը հիշեցնում է Լճաշենում Հ. Մնացականյանի 1957 թ. պեղած № 5 դամբանաբլուրի նյութերը⁵⁶: Լճաշենի քննվող դամբանում գտնվել է երկանիվ կամարակապ, երկու ձիերով լծված մի սայլ, որի վրա նստած դիրքով թաղվել է մի տղամարդ⁵⁷: Սայլի առեղների երկարությունը հասնում էր 4.5 մետրի, իսկ անիվների տրամագիծը՝ 1.5մ: Խցում չի փաստագրվել լուծր, փոխարենը առկա էր լծին ամրացվող ծիսական շտանդարտը: Շտանդարտը, ինչպես և Արթիկի օրինակը, խարսխաձև պատվանդանի վրա է: Քննվող արձանիկը, ի տարբերություն Արթիկի օրինակի, ծողի կտրվածքում քառակուսի է (աղ. III, 4): Երկու օրինակների չափերը հասնում են 17-19սմ-ի: Գույքի կրկնվող համակազմով ներկայացված այս երկու համալիրները մեր կարծիքով ներկայացնում են կարգով իրար համարժեք թաղումներ, մի դեպքում, սակայն խուց դրվել է ամբողջական երկանիվ սայլը, մյուս դեպքում՝ վերջինիս փոխարինող (խորհրդանշող) մասը՝ շտանդարտը: Ի դեպ, պետք է նշել, որ ինչպես քննվող շտանդարտը, այնպես էլ Լճաշենի № 5 դամբանի սայլը տարբերվում են Լճաշենում հայտնի երկանիվ սայլերից: Քննվող օրինակն ունի կամարաձև ծածկ, որի թափքի շրջանակի կողքերից յուրաքանչյուրի վրա յոթ տեղով ամրացված են բարակ փայտեր: Սրանք, անցնելով կողային համապատասխան անցքերի միջով, առաջացրել են կամար: Այն երեսպատված է եղել գործվածքով

⁵³ **Хачатрян Т.**, 1979, с. 110; **Սիմոնյան Հ.**, 2006, 104; **Պետրոսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 134:

⁵⁴ **Хачатрян Т.**, 1963, с. 25-26: Նշվում է, որ, դատելով կոճակների դասավորությունից և պահպանված կաշվի մնացորդներից, այս աճյունի վրա եղել է զրահաշապիկ:

⁵⁵ **Хачатрян Т.**, 1979, с. 110.

⁵⁶ **Մնացականյան Հ.**, էջ 107-108; **Ավետյան Վ.**, նշվ. աշխ., էջ 60, աղ. XXXIII, 4:

⁵⁷ **Մնացականյան Հ.**, նույն տեղում:

կամ կաշվով (աղ. III, 6)⁵⁸: Թ. Խաչատրյանը այս դամբանը ժամանակագրում է ուշ բրոնզի իր թվագրությամբ վաղ փուլով՝ մ.թ.ա. XIV-XIII դարերով, իսկ Ա. Փիլիպոսյանը՝ մ.թ.ա. XV դարով⁵⁹:

Իրենց կառուցվածքով յուրահատուկ այս արձանիկները հեռավոր կերպով հիշեցում են ուբեյդյան դարաշրջանից Թել Բրաքի «Աչքի տաճարից» հայտնի «Աչքի կուռքերին», որոնք, ինչպես և մեր օրինակները, մարդակերպ են, ունեն հստակ արտահայտված խողովակաձև աչքեր⁶⁰: Աչք հիշեցնող քարեր, արձանիկներ և խեցանոթների վրա դրվագված կամ քանդակված պատկերները հայտնի են դամբանային համալիրներից եվրասիական ընդարձակ տարածքներում: Վերջիններիս կիրառության վերաբերյալ նշվում է, որ սրանք չար աչքը խափանող (պահպանիչ), պտղաբերությունը ապահովող հմայիլներ են, որոնք ներկայացնում են կամ Արևի կամ Լուսնի աստվածուհուն⁶¹ (աղ. III, 5):

Հայաստանից հայտնի քննվող առարկաները ոչ թե պետք է գենետիկորեն կապել Միջագետքից և այլ տարածքներից հայտնի նմանօրինակ զուգահեռների հետ, այլ պետք է ընդամենը համեմատության եզրեր գտնել զուտ կիրառության ոլորտում: Հետևաբար կարծում ենք, որ քննվող երկու շտանդարտները պտղաբերությունը խորհրդանշող, չարխափան ինչ-որ աստվածության խորհրդանիշ են⁶²: Այն, որ այս շտանդարտները պատրաստվել են աչքի խորհրդով, փաստում է նաև Հ. Մարտիրոսյանի՝ Արթիկի № 3 դամբանի շտանդարտի մասին կողային մի վկայություն, ըստ որի՝ վերջինիս աչքեր հիշեցնող խողովակները ինկրուստավորված են եղել կանաչ քարով⁶³:

Pars pro toto սկզբունքի հետաքրքիր օրինակ է Քուչակի № 31 դամբանը, որը չունի արտաքինից տարբերվող կառույց: Հիմնահողային խցի արևմտյան պատի դիմաց դրված էին տարատեսակ խեցանոթներ, իսկ

⁵⁸ Մնացականյան Հ., էջ 108:

⁵⁹ Хачатрян Т., 1975, с. 176-180; Փիլիպոսյան Ա., Հին Արևելքի շրջանակավոր դաստակով դաշույններն ու սրերը, Ե., 1999, էջ 18-19, աղ. 32, 6:


⁶⁰ Mallowan L. Excavations at Brak and Chagar Bazar // Iraq 8 (1947), p. 1-259.

⁶¹ Müller-Klieser J. Augensteine im 3. und frühen 2. Jahrtausend v. Chr.: Eine Funktionsanalyse // Materiality of Writing in Early Mesopotamia (Materiale Textkulturen), Book 13, de Gruyter, Berlin/Boston, 2016, p. 133-164.


⁶² Becker A. Uruk: Kleinfunde I (Stein), DAI, Abteilung Baghdad, Mainz am Rhein, 1993, Taf. 2, p. 9-12.

⁶³ Мартиросян А., 1964, 107, рис. 47, 5.


արևելյան կողմում արված էր գաղտնարան, որտեղ գտնվեց անվակաձև այտաճանով սանձ, նիզակի ծայր, երեք թռչունների՝ խարսխաձև պատվանդանի վրա դրված արձանիկ: Այս ամենը դրված էր փայտի փոքր



Քարտեզ 1



Աղյուսակ 2



Աղյուսակ 3

Քարտեզ 1. Մ.թ.ա. II հազարամյակում Եվրասիայում, Լեանտում և Հարավային Կովկասում կառքերի համատեքստում փաստագրվող ձիասանձերի երեք հիմնական տիպերը (քարտեզը՝ Kristiansen 2004, Abb. 3, վերամշակումը՝ Վ.Բ.)

Աղյուսակ 2. Անվավոր փոխադրամիջոցների ուղեկցությամբ դամբաններում զոհաբերված կենդանիների տեսականին

Աղյուսակ 3. 1. Լճաշեն-10 (ՀՊԹ ՀՆ 2049/89), 2. Գեղարուտ-3 (Badalyan, Smith 2017, Fig. 9), 3. Արթիկ-3 (Փիլիպոսյան 1999, աղ. 32, նկ. 6), 4. Լճաշեն-V (Պետրոսյան 2018, աղ. 144, նկ. 1), 5. Թել Բրակ (Mallowan 1947, Fig. 2-3), 6. Լճաշեն-V երկանկյուն (Ավետյան Վ. 2003, աղ. 32, նկ. 4)

կտորի և ձիու գանգի մոտ: Ինչպես նշում է Լ. Պետրոսյանը, այստեղ կիրառվել է մասն ամբողջով փոխարինելու սկզբունքը⁶⁴, այսինքն՝ այս դամբանում փայտի, ձիու և անվակաձև այտաճանով սանձի առկայությունը խորհրդանշում էր ձիով լծված երկանիվ սայլը:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, փոխադրամիջոցի *pars pro toto*-ի սկզբունքով փաստագրված դամբաններում բուն փոխադրամիջոցի բացակայությունը պայմանավորված պետք է լինի ոչ թե տվյալ համայնքի սոցիալական վերակարգությունում Լճաշենի, Լոռի Բերդի, Գեղարոտի կամ Վերին Նավերի I և II կարգի⁶⁵ դամբաններին համապատասխանող անձանց թաղումների բացակայությամբ, այլ թաղման խցի կառուցվածքով, ժամանակաշրջանով, ինչպես նաև հոգևոր պատկերացումներով:

ԱՆՎԱՎՈՐ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՈՒՇ ԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ԹԱՂՈՒՄՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ- ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԿՈՒՐԱՐԱՔՍՅԱՆ ՄԻՋԱԳԵՏՔՈՒՄ

ՎԱՐԴԱՆՅԱՆ Բ.Վ.

Ամփոփում

Ուշ բրոնզի վաղ փուլում կուրարաքսյան Միջագետքում անվավոր փոխադրամիջոցների կամ դրանց փոխարինող մասերի ուղեկցությամբ, սոցիալական որոշակի ծանրաբեռնվածություն ունեցող դամբաններում ($n=41$) փաստագրվել է տղամարդկանց 21, կանանց՝ 3, երեխաների՝ 3 աճյուն: Քառանիվ և երկանիվ սայլերը լծված են եղել խոշոր եղջերավոր անասուններով, իսկ երկանիվ կառքերը՝ ձիերով: Հայտնի է նաև եղջերուներով լծված քառանիվ սայլի օգտագործում: Երկանիվ կառքերի հետ փաստագրվել են նաև անվակաձև այտաճանով բրոնզե սանձեր, որոնք

⁶⁴ Պետրոսյան Լ., նշվ. աշխ., էջ 134: Արձանիկը պատկերը՝ Pizchelaury K., Die zentraltranskaukasische archäologische Kultur des 14-13. Jh. v. Chr. (Kulturwesen, Charaktermerkmale, Verbreitungsareale), die Georgische Akademie der Wissenschaften, Archäologisches Forschungszentrum, Tbilisi, Tab. CCXXXIII:

⁶⁵ Տե՛ս Վարդանյան Բ., Հին Հայաստանի ուշ բրոնզի դարաշրջանի դամբանային համալիրների սոցիալ-ժողովրդագրական և սեռատարիքային վերլուծությունների խնդիրներն ըստ Լճաշենի դամբանադաշտի» (ՀԱԻ աշխատություններ, Ե. (In Press):

իրենց զուգահեռներն ունեն համաժամանակյա արտատարածաշրջանային մի շարք հուշարձաններում: Ուշ բրոնզի երկրորդ փուլում և վաղ երկաթի դարաշրջանում այլևս չեն փաստագրվում ամբողջական անվավոր փոխադրամիջոցներ, փոխարենը խուց էին դրվում դրան խորհրդանշող մասերը (շտանդարտ, սանձ, ձի և այլն): Առանձնակի հիշատակելի են Լճաշենի № 5 և Արթիկի № 3 ՈԻԲԴ դամբաններից հայտնաբերված աչքաձև բրոնզե շտանդարտները, որոնք արտաքին կառուցվածքով հիշեցնում են չարխափան գործառույթ ենթադրող «Աչքի կուռքերին»:

Բանալի բաներ՝ ուշ բրոնզի դար, անվավոր փոխադրամիջոցներ, սոցիալական կառուցվածք, էլիտա, իշխանության խորհրդանիշ, շտանդարտ, սանձ:

ВОПРОСЫ СОЦИАЛЬНО-ДЕМОГРАФИЧЕСКОГО ИССЛЕДОВАНИЯ ПОЗДНЕБРОНЗОВЫХ КОЛЕСНИЧНЫХ ПОГРЕБЕНИЙ В КУРО-АРАКСКОМ МЕЖДУРЕЧЬЕ

ВАРДАНИЯН Б.В.

Резюме

В позднебронзовых погребениях Южного Кавказа были обнаружены образцы колесного транспорта, число которых доходит до 36 (табл. 1). В этих погребениях были найдены скелеты мужчин (67%) в возрасте от 18 до 50 лет, а число женских и детских погребений составляет всего 3(7%). В Южном Кавказе в эпоху поздней бронзы двух- и четырехколесные повозки запрягались крупным рогатым скотом, а колесницы – лошадьми (табл. 2): Имеются археологические данные о том, что ритуальные повозки запрягались также оленями (Ханлар, Гараджамирли). В начале позднебронзового века были распространены дисковидные удила, далекие аналогии которых известны из Леванта и Ближнего Востока. Экземпляры из Южного Кавказа являются образцами местного производства. В некоторых погребениях транспортные средства были заменены их символами (pars pro toto). Уникальные бронзовые штандарты из погребения Артик № 3 и Лчашен № 5, привязанные к колесницам, символизировали плодо-

родие и защиту от сглаза. Все гробницы с повозками принадлежали разным сословиям элиты этого периода (табл. 3, 3-5).

Ключевые слова – позднебронзовый век, колесный транспорт, социальная структура, элита, символ власти, штандарты, удила.

THE SOCIAL-DEMOGRAPHICAL RESEARCH OF CHARIOT-BURIALS IN THE SOUTH CAUCASUS DURING THE LATE BRONZE AGE

B. VARDANYAN

Abstract

During the early stages of the Late Bronze Age in the South Caucasus, tombs with vehicles' wheels have been found (chariots and wagons). In this tombs there are usually skeletons of 15-50 year old men. 18-30 age old female skeletons have been found only with skeletons of men or children. In these area two-wheeled and four-wheeled chariots were drawn by cattle and two-wheeled chariots were drawn by horses. There is some evidence about four-wheeled chariots, that were drawn by deer (Khanlar, Gharajamirli). In early stage of the Late Bronze Age some disk-shaped bits were found, which are similar to some bits from Southwestern Asia and are local products. In some thombs vehicles were replaced with their symbols (pars pro toto). Standards from Artik Tomb №3 and Lchashen Tomb № 5 were fixed to chariots and symbolized fertility and protection. All tombs with vehicles belonged to the elite of this period.

Key words – Late Bronze Age, wheeled vehicle, social structure, insignia, elite, symbol of power, standart, bits.

**ՍՏԵՓԱՆ ԿԱՄՍԱՐԱԿԱՆԻ ԿԱԶՄԱԾ՝
ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ
ԾՐԱԳԻՐԸ (1917 Թ.)**

Անդրկովկասի վարչատարածքային բաժանման հարցը 1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո առաջնահերթ պլան է մղվում: Հարցի լուծման համար բազմաթիվ քննարկումներ ու խորհրդակցություններ են տեղի ունենում Պետրոգրադում և Թիֆլիսում: Ժամանակավոր կառավարության Ներքին գործերի նախարարությանը կից կազմված հատուկ հանձնաժողովում ընդունվում է Անդրկովկասի վարչատարածքային բաժանման մի ծրագիր, որն անվանում են *նախարարական*¹: Այն ուղարկվում է Թիֆլիս՝ Անդրկովկասյան առանձին կոմիտեի հաստատմանը, որին կից ևս ստեղծվում է հանձնաժողով՝ հարցը քննարկելու համար: Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են անդրկովկասյան գլխավոր ազգություններից երեքական ներկայացուցիչներ²:

Անդրկովկասի վարչատարածքային բաժանման նախագծի հեղինակներից էր գյուղատնտես Ստեփան Իվանի Կամսարականը, որը 1917 թ. օգոստոսի 6-ին և 7-ին ընթացող հայ պատգամավորական միջկուսակցական ժողովի ժամանակ հանձնաժողովականներին ներկայացնում է իր կազմած նախագծի պատճենները և քարտեզը՝ մանրամասն ներկայացնելով դրանք³:

Հարցը քննարկվում է նաև 1917 թ. հոկտեմբերի 6-ին՝ համահայկական խորհրդակցության ժամանակ: Ստ. Կամսարականը դարձյալ ներկայացնում է նախագիծը՝ նախ, սահմանների ձևավորման վերաբերյալ պատմական ակնարկում նշելով, որ ցարական Ռուսաստանի վարած քաղաքականության հետևանքով հայկական շրջանները մի գավառից վերցվել և կցվել են մուսուլմանական գավառներին, որպեսզի հայերը մեծամասնություն չկազմեն. այդ պատճառով էլ 38 հայաբնակ գավառներից միայն

¹ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ) ֆ. 375, ց. 1, գ. 6, էջ 1-21:

² Кавказское слово, Тифлис, 29.VIII.1917.

³ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 144, թ. 78:

չորսում էին հայերը մեծամասնություն կազմում⁴: Այնուհետև անդրադառնալով իր ներկայացրած նախագծին՝ նշում է, որ ինքն այն կազմել է Անդրկովկասյան առանձին կոմիտեի անդամ Միքայել Պապաջանյանի առաջարկությամբ և կողմնակից է հայաբնակ շրջաններից ձևավորելու մեկ նահանգ: Դրան դեմ են արտահայտվում դաշնակցականներ Ավետիք Շահխաթունյանը և Գևորգ Խատիսյանը: Երկարատև քննարկումներից հետո նիստում համաձայնվում են Ստ. Կամսարականի գծած սահմաններին, սակայն ֆրակցիաների քվեարկության ժամանակ ընդունվում է Ստ. Կամսարականի նախագծի՝ վարչատարածքային ներքին բաժանման երեք նահանգների սկզբունքը⁵:

Սույն փաստաթուղթը ներկայացնում է Ստ. Կամսարականի կազմած նախագիծ-ծրագիրը՝ երկու տարբերակով, որոնք կարող էին հիմք դառնալ ապագա հայկական տարածքի սահմանների համար: Առաջին տարբերակով հայկական նահանգը պետք է բաղկացած լիներ 16 գավառից, երկրորդով՝ 15: Դրանց հիմնական տարբերությունն այն էր, որ քաղաքական պահանջներ ներկայացնող հայերը պետք է ունենային նվազագույն և առավելագույն ծրագրեր՝ դրանք առաջադրելու և անհրաժեշտության դեպքում մանևրելու համար: Փաստաթուղթը պահպանվում է ՀՀ Ազգային արխիվի՝ Վրաստանում Հայոց ազգային խորհրդի ֆոնդում, փաստաթուղթը կազմված է ռուսերենով և մեքենագրված է: Հրապարակվում է լեզվաոճական աննշան փոփոխություններով:

ՄԱՀՏԵՍՅԱՆ Հ.Շ.

⁴ **Վրացեան Ս.**, Կեանքի ուղիներով, Պեյրուֆ 1965 թ., Դէպքեր, դեմքեր ապրումներ, հ. Դ, էջ 26:

⁵ Համահայկական խորհրդակցություններ (1912-1920 թթ.), Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմողներ՝ Ամատունի Վիրաբյան, Գոհար Ավագյան, Ռոժենտ Գրիգորյան, Ալբերտ Կիրիմյան, Ե., 2004, էջ 199:

Города и уездные центры в пределах проектированной губернии

Города	всего	армяне	%	мусульмане	%	прочие	%
Г. Шуша	43869	23396	53.0	19121	44.0	1352	3.0
Герюсы	2201	1724	78.3	225	10.2	252	11.5
Эривань	51286	37223	72.6	12605	24.6	1458	2.8
Ордубат	5717	179	3.1	5449	95.3	89	1.6
Нахичевань	8934	2665	29.8	6026	67.5	243	2.7
Ново-Баязет	14748	14350	97.3	238	1.6	160	1.1
Александрополь	51874	45646	88.0	1074	2.0	5154	10.0
Итого:	178629	125183	70.1	44738	25.0	8708	4.9
Не вошедшие в таблицы проектированных уездов							
Ахалкалак	7055	6151	87.2	-	-	904	12.8
Карс	30515	25665	84.1	1509	4.9	3341	11.0
Кагызман	11116	8895	80.0	2129	19.2	92	0.8
Итого:	48686	40711	83.6	3638	7.5	4337	8.9
Всего:	227315	165894	73.0	48376	21.3	13045	5.7
Всего в территории							
Без городов	1902491	1093282	57.5	606777	31.9	202432	10.6
С городами	2081120	1218465	58.6	651515	31.3	211140	10.1

Проект-раздел

Составитель Р.А. Агабабов

Существующ. деление	всего	армян %	мусульман %	прочие %
Елис. губ.				
1.Нухинский с/гор.	185748	15.0	73.0	12.0
2.Арешский	99400	19.0	80.0	1.0
3.Дживанширский	75730	30.0	67.0	3.0
4.Елизаветпольский с/гор.	272477	25.0	65.0	10.0
5.Казахский	137049	44.0	50.0	6.0
6.Шушинский с/гор.	188745	52.0	45.0	3.0
7.Карягинский	89584	27.4	73.4	22.0
8.Зангезурский с/гор.	226398	44.0	55.0	1.0
9.Эрив. губ.				
10.Эриванский с/гор.	205617	52.0	45.0	3.0
11.Нахичеванский с/гор.	136859	39.9	59.8	0.3
12.Александропольский с/гор.	226080	96.0	4.0	6.0

13.Эчмиадзинский с/гор.	167786	69.0	30.0	1.0
14.Сурмалинский	104791	32.0	58.0	10.0
15.Ново-Баязетский с/гор.	188859	69.0	28.0	3.0
16.Шарур-Даралагязский	90250	31.0	68.0	1.0
Тифл. губ.				
1. Ахалкалак с/гор.	107173	77.9	5.9	16.9
2.Борчалинский	169351	37.5	30.4	32.1
Карс. обл.				
1.Карсский с/гор.	191970	43.0	32.0	25.0
2.Кагызманск. с/гор.	83208	42.0	32.0	26.0
Итого:	2947068	45.84	45.55	8.61

Вариант I - ый	всего	армяне %	мус. %	прочие %
Джраберт-Гюлист.-Гандзак	122503	58.8	30.4	10.8
Шушинский	131358	70.9	28.9	0.2
Зангезурский	136246	57.8	41.4	0.8
Шарурский	80596	10.7	80.3	9.0
Ново-Баязетский	98788	60.1	38.9	1.0
Араратский	188628	53.0	41.6	5.4
Абаран-Дарачичаг-Крбулагский	140960	70.5	25.2	4.3
Александрополь	143116	94.0	1.0	5.0
Аршарунский	85187	31.1	38.0	30.9
Лорийский	113197	69.0	15.0	16.0
Карвансарайск[ий]	87807	75.0	20.0	5.0
Ахалкалакский	140500	66.4	5.6	28.0
Карсский	191970	42.1	32.1	25.8
Кагызманский	58793	41.3	29.9	28.8
Нахичеванский	104872	44.7	55.0	0.3
Даралагязский	77970	41.5	57.2	1.3
В остальных городах	178629	70.3	25.2	4.5
Итого	2081120	58.6	31.3	10.1

Национальная территория Закавказья

Всего

Армян 1792600 /25.4%/. Мусульман 2406665 /34.2%/. Картвель 1783819 /25.4%/. Прочие 1035684 /15%/.
Итого 7018768

Преобладающие национальн.

I. Картвельская

Кутаисская губ., часть Тифл. губ. Батумская область, Закатальский, Сухумский, Ардаганский и Ольтинский округа

Армян 316547 /11.1%/, Мусульман 224467 /7.9%/, Картвель 1761539 /61.8%/

Прочие 540496 /19.2%/, всего 2843049

II. Мусульманская

Бакинская губ. и градоначальство, неизменная часть Елизаветпольской губернии

Армян 197904 /10.2%/, Мусульман 1437659 /73.5%/, Картвель 9307 /0.5%/, Прочие 309228 /15.8%/ Всего [1954098]

III. Армянская

Часть Борчалинского, Ахалкалакск. уезд. Карсский и Кагызманский округи, нессорная* часть Елизаветпольск. и Эриванск. губернии

Армян 1278149 /56%/, Мусульман 744539 /16%/, Картвель 12973 /0.5%/, Прочие 185960 /8.5%/. Всего 2221621

Проект раздела на уезд[ы] С.И. Камсаракана

Вариант II		армяне %	мусульман %	прочие %
Джраберт-Гюлис.-Гандзак.	123398	57.8	31.4	10.8
Шушинский	131358	70.9	28.9	0.2
Зангезурский	136246	57.8	41.3	0.9
Шаруро-Даралаг.	90250	32.3	66.9	0.8
Ново-Баязетский	162808	62.4	33.1	4.5
Эчмиадзинский	167786	68.6	30.4	1.0
Эриванский	205617	52.0	45.5	2.5
Александропольск.	226080	89.6	4.1	6.3
Сурмалинский	104791	31.2	57.8	11.0
Лорийский	81491	65.1	14.0	20.9
Карвансарай[ский]	87807	75.1	19.8	5.1
Ахалкалакский	107173	77.2	5.9	16.9
Карсский	191970	45.8	32.1	22.1
Кагызманский	83208	41.7	31.8	26.5
Нахичеванский	136859	39.6	59.7	0.7
Итого	2036842	59.1	32.7	8.2

* Так в тексте, имеется в виду неоспоримая.

По I-му варианту преобладающий на

Армяне	%	Мусульмане	%
Джраберт-Гюлист.-Гандзак.....	58.8	Шарурский.....	80.3
Шушинский.....	70.9	Аршарунский.....	38.0
Зангезурский.....	57.8	Нахичеванский.....	55.0
Ново-Баязетский.....	60.1	Даралагязский.....	57.2
Араратский.....	53.0		
Абаран-Дара. Крбул.....	70.5		
Александрополь.....	94.0		
Лорийский.....	69.0		
Карвансар.....	75.0		
Ахалкалакский.....	66.4		
Карсский.....	42.1		
Кагызманский.....	41.3		
В городах.....	70.3		
Всего армян.....	1218465 /58.6%/		
мусульман.....	651515 /31.3%/		

По II-му варианту

Джраберт-Гюлистан.-Гандзак..	57.8	Шарур-Даралагязский.....	66.9
Шушинский.....	70.9	Сурмалинский.....	57.8
Зангезурский.....	57.8	Нахичеванский.....	59.8
Ново-Баязетский.....	62.4		
Эчмиадзинский.....	68.6		
Эриванский.....	52.0		
Александропольский.....	89.6		
Лорийский.....	65.1		
Карвансарайский.....	75.1		
Ахалкалакский.....	77.2		
Карсский.....	45.8		
Кагызманский.....	41.7		
Всего армян	1202543 /59.1%/		
мусульман	666714 /32.7%/		

Всего армяне % мусульмане % прочие %

I. Джраберт
Гюлистан-Гандзакский

Казахский агрономический
район Елизаветпольской губ.
Карабахский агрономический
район без Гештагского казенного
общества, Джеванширского уезда
Сельское общество Эриванской
губернии IV пол. уч. Новобаязетского у.
(сел. Джиль. Кущи-дараси,
Бабаджан-дараси и Саданахач) 122503 72054 37243 13206
Итого: 122503 72054 58.8 37243 30.4 13206 10.8

Всего армяне % мусульмане % прочие %

II Шушинский

Шушинский агрономический район 131358 93097 70.9 37993 28.9 268 0.2
Всего армяне % мусульмане % прочие %

III Зангезурский

Зангезурский агрономический
район Елизаветпольской губер. 83206 53006 29114 1086
Капанский агрономический район
Елизаветпольской губ. 53040 25769 27271
Итого: 136246 78775 57.8 56385 41.4 1086 0.8

Всего армяне % мусульмане % прочие %

IV. Нахичеванский

3-пол. уч. Нахичеван. уезда
Эриван. губ. 27867 9059 18808 —
4-й 32961 13632 19329 —
2-й
без Дилин-Алмалин[ск.] сел. общ. 23853 9585 13946 322
I-ый пол. уч. Нахич. у. без
Кигранского с общ. с. Азнабюрт
Киврагского сельского общ. 20191 14557 5634
Итого: 104872 46833 44.7 57717 55.0 322 0.3

Всего армяне % мусульмане % прочие %

V. Даралагязский

1.2-й пол. уч. Шаруро-Дар. уезда 48828 20496 28051 281
2. Дилин-Алмалинск. сел. общ. 6653 4271 2382
Нахич. у. (2-ой пол. уч.)

3.с.ел. Азнабюрт Киврагск. с. общ.	1450	1270	180	
Нахич. уезда				
4. Из 4-ого уч. пол. Эриванск. уезда	21039	6350	13979	710
Армикское. Карахачское с. общ.,				
Из Ведичайск. Н. Карабеклар,				
Агалибеглу. Дагназ. В. Карабекларми Кешиш-даге				
Итого:	77970	32387	41.5	44592 57.2 991 1.3

	Всего	армяне %	мусульмане %	прочие %
VI. Шарурский				
1. I-ый пол. уч. Шаруро-Дар. уезда	41184	5601	34327	1256
2. Из 4-го пол. уч. Эрив. у. с. общ.	25696	3029	17384	5283
Бурукинское, Давалинское,				
Садаракское и из Ведичайского				
общ. сел. Б. Веди, Дашлу, Тайтан,				
Енгиджа и Горавап				
3. Кивракское с. общ. Нахич. уезда				
/II пол. уч./	8533	—	7820	71
4. Из с. Аралых-Башкендск. с. общ.	5183	—	5183	
Сурм. у. с. Аралых-Башкенд,				
Аралых Сурб-Оган, Аратан.				
Ахури, Джутлук, Карабаглу и Эминджа				
Итого:	80596	8630 10.7	64714 80.3	7252 9.0

	Всего	армяне %	мусульмане %	прочие %
VII.Новобаязетский				
1. 3-й пол. уч Новобаязетск. у.	37454	34556	2810	88
2. 4" " " " " " " " " " " " " "без	40250	14881	24400	969
Аочилского сел. общ.				
3. Агзибирское с. общ. 2 кол.	14553	9886	4667	—
уч. Новобаязетск. уезда				
4. Гештакское с.общ. Елизаветполь-	6531	—	6531	
ского г. Джеванширск. уезда				
Итого:	98788	59323 60.1	38408 38.9	1057 1.0

	Всего	армяне %	мусульмане %	прочие %
VIII. Абаран-Дарачи[чаг]-Крхбулаг				
1. I-ый пол. уч. Эрив. у.	26020	14489	10692	839
2. " " " " " " " " " " " " "Новобаязетск. у.	41232	28191	10436	2605

3. Из 2-го пол. уч. Новобаязетс. у.	13877	11698	—	217
Еленовское с. общ. без сел.				
Семеновки и Чирчильское с. общ. и без с. Чибухлы				
4. 2-й пол. уч. Эчмиадзинск. уезда	55514	43555	11883	76
5. Кошское с. общ. 4-пол. уч. Эчм. у.	4317	1474	2501	342
Итого:	140960	99407	70.5	35512 25.2 6041 4.3

Всего армяне % мусульмане % прочие %

IX. Араратский

1. 2-й пол. Эриванск. у.	30826	5890	24936	—
2. 3-й " " " " " " " " " " " "	33176	22370	8912	1894
3. 1-й " " " " " " Эчмиадзинск. у.	32281	23764	8517	—
4. 3-й " " " " " " " " " " " без сел.	35051	21810	10550	2691
Шагриарск. с. общ. (Хейриоского				
Гаджи байрам, Шахварут, Ассар,				
Ходжа Яралу/				
5. 1-й пол. уч. Сурмалинского у. без соб.				
Али-Кучачского	37466	22409	14997	—
6. Из 2-го пол. уч. Сурмалинск. у.	19888	3343	10883	5662
С общ. Дашбурунск. и Ридикинское				
и из Аралых-Башкендское сел. общ.				
сел. Али-Кизиль. Гедаклу. Рамазан.-				
Кенд. Сарачлу-Прчо, Сарачло-Аджиаго				
Итого:	188628	99586	53.0	78795 41.6 10247 5.4

Всего армяне % мусульмане % прочие %

X. Александр.

1. 2-й пол.уч. Александр. у.	45229	37140	1662	6427
2. 3 " " " " " " " " " " " "	36388	35607	—	781
3. Налбандское с. общ. I-го пол. уч.	16165	16165	—	—
Александр. у.				
4. 4-й пол. уч. Александр. у.	45334	45334	—	—
Итого:	143116	134246	94.0	1662 1.0 7208 5.0

Всего армяне % мусульмане % прочие %

XI. Аршаруни

1. 3-й пол. уч. Сурм. у	32581	7688	14695	13198
2. Аликучагское с. общ. I-ий пол. уч.	7898	—	1516	3382
Сурм. уезда				

3. 5 селен. Шагриернск. с. общ.	1488	501	987	—
4. 4-го пол. уч. Эчмиад. у. без Кошск. сел. общ.	13805	7842	6303	4660
5. Нахичеванск. уч. Кагызманск. ок.	24425	10434	8848	5133
Итого:	85187	26465	31.1	32349 38.0 26373 30.9

Всего армяне % мусульмане % прочие %

XII. Лорийский

1. Лорийский пол. уч. Борч. у				
2. Алахвердский пол. уч.	80436	53047	11387	16002
3. Борчалинск. пол. уч. без сел. общ. Геруарского				
4. I-ый пол. уч. Александр. у. без Налбандского сел. общ.	32761	25104	5547	2110
Итого:	113197	78151	69.0	16934 15 18112 16

Всего армяне % мусульмане % прочие %

XIII. Каравансарайский

1. Караван. агр. рай Елизаветпольск. губ.	80760	63648	13691	3421
2. Сел. Арданич Агбулаг Тохлуджа и Надеждино Джилского сел. общ.				
Новобаязетского участка /4-й пол.уч./	4169	—	3676	493
3. Сел. Семеновка и Чибухли	2878	2306	—	572
2-го пол. уч. Новобаязетского уч.				
Итого:	87807	65954	75.0%	17367 /20.0%/ 4486 /5.0%/
Всего				армяне % мусульмане % прочие %

XIV Ахалкалакский уезд	140500	93334	66.4%	7826	5.6%	39340	28%
Всего				армяне %	мусульмане %	прочие %	

XV. Карсский округ	191970	80752	42.1	61701	32.1	49517	25.8
Всего			армяне %		мусульмане %		прочие %

XVI. Кагызманский округ без

Нахичеванского уезда	58793	24287	41.3	17579	29.9	16927	28.8
				Всего армяне %	мусульмане %	прочие %	
Всего:	1902491	1093282	57.5	606777	31.9	202432	10.6

II вариант Составитель Р.А. Агабабов проекта С.И. Камсаракана

Уезды	Всего	Армяне %	Мусульмане %	Прочие %
1.Джраберт-Гюлистан-Гандзак	123398	71380 57.8	38812 31.4	13206 10.8
2.Шушинский	131358	93097 70.9	37993 28.9	268 0.2
3.Зангезурский	136246	78775 57.8	56385 41.3	1086 0.9
4.Шарур-Даралагязский	90250	29165 32.3	60354 66.9	731 0.8
5.Ново-Баязетский	162808	101518 62.4	53893 33.1	7397 4.5
6.Эчмиадзинский	167786	115026 68.6	50963 30.4	1797 1.0
7.Эриванский	205617	106933 52.0	93504 45.5	5180 2.5
8.Александропольский	226080	202505 89.6	9251 4.1	14324 6.3
9.Сурмалинский	104791	32686 31.2	60633 57.8	11472 11.0
10.Лорийский	81491	53047 65.1	11388 14.0	17056 20.9
11.Карвансарай	87807	65954 75.1	17367 19.8	4486 5.1
12.Ахалкалакский	107173	82775 77.2	6335 5.9	18063 16.9
13.Карсский	191970	87752 45.8	61701 32.1	42517 22.1
14.Кагызманский	83208	34721 41.7	26427 31.8	22060 26.5
15.Нахичеванский	136859	54209 39.6	81708 59.7	942 0.7
Итого	2036842	1202543 59.1	666714 32.7	167585 8.2

Проект единой губернии I вариант

Уезды	Всего	Армяне %	Мусульмане %	Прочие %
1.Джраберт-Гюлистан-Гандзак	122503	72055 58.8	37243 30.4	13205 10.8
2.Шушинский	131358	93097 70.9	37993 28.9	268 0.2
3.Зангезурский	136246	78775 57.8	56385 41.4	1086 0.8
4.Нахичеванский	104872	46833 44.7	57717 55.0	322 0.3
5.Даралагязский	77970	32387 41.5	44592 57.2	991 1.3
6.Шарурский	80596	8630 10.7	64714 80.3	7252 9.0
7.Ново-Баязетский	98788	59323 60.1	38408 38.9	1057 1.0
8.Абаран-Дарачи[чаг] Крхбулаг	140960	99407 70.5	35512 25.2	6041 4.3
9.Арааратский	188628	99586 53.0	78795 45.6	10247 5.4
10.Александропольский	143116	134246 94.0	1662 1.0	7208 5.0
11.Аршарунский	85187	26465 31.1	32349 38.0	26373 30.9
12.Лорийский	113197	78151 69.0	16934 15.0	18112 16.0
13.Каравансарайский	87807	65954 75.0	17367 20.0	4486 5.0
14.Ахалкалакский	140500	93334 66.4	7826 5.6	39340 28.0
15.Карсский	191970	80752 42.1	61701 32.1	49517 25.8
16.Кагызманский	58793	24287 41.3	17579 29.9	16927 28.8
Итого:	1902491	1093282 57.5	606777 31.9	202432 10.6

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԻՀՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ, ՌՈՒԲԵՆ ՕՀԱՆՋԱՆՅԱՆ, ԹԱՄԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ, ԳԱՅԱՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ. Արդի հայ ընտանիքը փոխակերպվող հասարակությունում, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2017, 328 էջ:



Հայ ընտանիքի վերաբերյալ համահեղինակային այս աշխատությունը մեծ ներդրում է ազգագրության և ընդհանրապես հայագիտության բնագավառում:

Այն բաղկացած է չորս մասից, որտեղ ներկայացված են հեղինակային առանձին մենագրություններ. «Ընտանիք և ամուսնություն» (հեղինակ՝ գիտաշխատող Թ. Զաքարյան), «Ընտանեկան արժեհամակարգը» (հեղինակ՝ պ.գ.թ. Ռ. Օհանջանյան), «Փոփոխությունները աշխատանքային միգրանտների ընտանիքի մոդելում» (հեղինակ՝ պ.գ.դ. Մ. Գալստյան), «Հայաստանում բնակվող սիրիահայ ընտանիքների էթնոմշակութային առանձնահատկությունները» (հեղինակ՝ գիտ-

աշխատող Գ. Հակոբյան):

Այս հետազոտության արժեքն այն է, որ սերտորեն փոխկապակցված հայոց ընտանեկան հիմնախնդիրներն ամենատարբեր տեսանկյուններով հանգամանալից վերլուծվել են արագ փոխակերպվող հասարակարգում: Ընդհանրապես, ժամանակակից աշխարհում այդ գործընթացներն այնպիսի ինտենսիվությամբ են ընթանում, որ մտավախություն կար, թե դժվար կլիներ խորությամբ կամ համակարգային ձևաչափով հետազոտել ընտանիքում կատարված փոփոխությունները և դրանք պայմանավորող առանցքային գործոններն ու զարգացման միտումները, առավել ևս, որ այդ երևույթներն ունեն համաշխարհային բնույթ: Սակայն, ի պատիվ հեղինակային այս խմբի, գրեթե ամբողջությամբ հաջողվել է վերլուծել հայ ընտանիքին առնչվող արդի հիմնախնդիրները:

Աշխատությունն ունի գիտական հստակ կառուցվածք, որը դրսևորվում է հետևյալ պարագաներում. առաջադրված նպատակների և խնդիրների ձևակերպում, տարաբնույթ մեթոդների կիրառում էթնոսոցիոլոգիականի որոշակի գերակայությամբ, տարածական ու ժամանակագրական համեմատական հետազոտություններ և այլն:

Գիրքն առանձնանում է հարուստ և հավաստի աղբյուրագիտական հենքով: Խոսքը վերաբերում է ոչ միայն արդի հետազոտություններով պայմանավորված էթնոսոցիոլոգիական տվյալներին, այլև պատմական աղբյուրներին: Այս առումով կուզենայի առանձնացնել *ընտանեկան ավանդույթների* բաժինը, որտեղ տարաբնույթ սկզբնաղբյուրների (պատմագիտական, կրոնական, ազգագրական, բանագիտական և այլն) հիման վրա հանգամանալից քննվել են հայոց ամուսնաընտանեկան ավանդույթների պատմական հիմքերը, որոնք առանցքային նշանակություն ունեն նմանատիպ ուսումնասիրությունների համար:

Արդի գործընթացների համալիրում պատմահամեմատական զուգահեռները հեղինակներին հնարավորություն են տվել առավել խորքային ընկալելու հայոց ընտանեկան արժեհամակարգում կատարված փոփոխությունները:

Գրքի գիտական արժեքի մասին հստակ պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է հատվածաբար քննել հեղինակներից յուրաքանչյուրի հետազոտությունը:

1. Թամար Զաքարյան, «Ընտանիք և ամուսնություն»

Թ. Զաքարյանն անդրադարձել է այնպիսի հարցերի, ինչպիսիք են հայ ընտանիքի պատմական առանձնահատկությունները, կառուցվածքը և ներընտանեկան հարաբերությունները: Կարևորվում են հատկապես այն վերլուծությունները, որոնք վերաբերում են ամուսնական ավանդույթների փոփոխություններին:

Վերջին շրջանում, կապված սոցիալական պայմանների վատթարացման հետ, հայ ընտանիքը որոշակի փոփոխությունների է ենթարկվել: Հենց այս տեսանկյունից էլ հեղինակն անդրադարձել է արդիական հնչեղություն ունեցող հետևյալ երևույթներին. ընտանիքի կառուցվածք, ամուսնության եկեղեցական կանոնների և ժողովրդական ավանդույթների համեմատական քննություն, այլազգիների հետ ամուսնություններ, տան գլխավորի կերպար, ծնող-զավակ փոխհարաբերություններ, ծնողների հետ համատեղ բնակություն, ազգակցական և դրացիական փոխհարաբերություններ, փոխօգնության համակարգ, ամուսնական զուգընկերոջ ընտրություն, ամուսնական տարիքի փոփոխություն, եկեղեցական և քաղաքացիական պսակադրություն, տոնածի-

սական ավանդույթներ, հարսանիքի ձևերի նախընտրելիություն, հետհարսանեկան արարողություններ, ամուսնալուծություն, ծնելիության անկում, ցանկալի երեխաների թիվ, ինտերնետային ծանոթություններ և ամուսնություններ:

Եթե ավանդական ընտանիքում ծնողներն էին որոշում, թե իրենց զավակները երբ և ում հետ ամուսնանան, ապա խորհրդային շրջանում, որոշակիորեն պահպանելով ավանդույթը, երիտասարդությունը հնարավորություն ուներ ամուսնանալու ընտրյալի հետ: Այսօր երիտասարդությունն այդ հարցում կարևորում է ծնողների համաձայնությունը, որն առավելագույնս ունի հարգանքի բնույթ:

Հեղինակը ներկայացրել է հայոց ամուսնահարսանեկան ծիսահամալիրը՝ գրեթե ողջ փոփոխություններով: Այդ համատեքստում նա անդրադարձել է, օրինակ, Տրնդեզին (այն նախընտրողները 73,4% են), եկեղեցական պսակադրությանը (1980 թ.՝ 7,1%, 2017թ.՝ 88%) և օժիտին (64,6%):

Բավականին մտահոգիչ են հայոց սոցիոնորմատիվ և հումանիտար մշակութային ոլորտում առկա բացասական ու վտանգավոր երևույթները. այն է՝ ամուսնությունների և ծնելիության նվազում, ամուսնալուծության աճ, ամուսնական տարիքի բարձրացում, ընտանիքում տան տղամարդու դերի նվազում և այլն:

2. Ռուբեն Օհանջանյան, «Ընդհանրական արժեհամակարգը»

Այս թեման, ըստ էության, նախորդի տրամաբանական շարունակությունն է, որտեղ ամուսնաընտանեկան հիմնախնդիրները հիմնականում քննարկվել են արդի գործընթացների և արտերկրի հետ որոշակի զուգահեռներ անցկացնելով:

Առաջին գլխում հայոց ընտանեկան արժեհամակարգը քննվել է այնպիսի կարևորագույն խնդիրների համալիրում, ինչպիսիք են ընտանիքի դերը սոցիալական արժեհամակարգի կառուցվածքում, հասարակության վերաբերմունքն ընտանիքի և ամուսնության վերաբերյալ, երեխաների մասնագիտական կողմնորոշումը և այլն: Երկրորդ գլխում վերլուծվել են ամուսինների կերպարներն ու նրանց դերերը: Երրորդ գլուխը վերաբերում է ընտանեկան կոնֆլիկտներին, երեխաների նկատմամբ կիրառված պատժաձևերին և ամուսնալուծություններին: Վերջինիս պատճառների շարքում կարևորվում է ամուսինների անհավատարմությունը: Սույն հարցի շուրջ կանանց և տղամարդկանց կարծիքները գրեթե համընկնում են: Սակայն տղամարդիկ ավելի շատ նշում են վատ բնավորությունը, իսկ կանայք՝ սիրո, հարգանքի բացակայությունը և ամուսնու անհավատարմությունը: Ամուսնալուծությունների հարցում երիտասարդները, տարեցների համեմատ, քիչ են կարևորում ֆինանսական

պատճառները և ավելի շատ՝ ամուսինների անհավատարմությունը: Իդեալական ամուսինների առումով տղամարդկանց և կանանց նկատմամբ պահանջներում կան որոշակի տարբերություններ: Շատ հարցեր քննարկվում են արտերկրի նմանատիպ երևույթների համատեքստում. օրինակ՝ ընտանիքը որպես առաջնային արժեք, կրոնական վարքագիծ և այլն:

Ընտանիքն առաջնային արժեք է ոչ միայն ՀՀ-ում, այլև արևմտյան շատ երկրներում, որոնց վերաբերյալ մինչև այժմ կան սխալ պատկերացումներ: Անգամ պաշտոնապես ամուսնացածների ամենացածր տոկոսն ունեցող Էստոնիայում այն կազմում է 69%, իսկ Լեհաստանում՝ 92%: Ճիշտ է, ըստ հեղինակի, դա առանձին հետազոտության թեմա է, սակայն բերված զուգահեռներն արդեն իսկ գնահատելի են:

Արժեքավոր են հեղինակի դիտարկումները հայոց կրոնական վարքագծի վերաբերյալ այլեթնիկ զուգահեռների համալիրում: Եվրոպական 22 երկրներում անցկացված հետազոտությունների տվյալներով իրեն խիստ հավատացյալ է համարել 5%-ը, իսկ անհավատ՝ 18%-ը: Սակայն եկեղեցու հետևորդների թիվը տատանվում է 91%-ից (Լեհաստան) մինչև 30% (Շվեդիա) և 16% (Չեխիա): Այս առումով հեղինակը որոշակի նմանություններ է տեսնում հայոց կրոնական վարքագծում: ՀՀ-ում 1980 թ. իրեն հավատացյալ էր համարում 41%-ը, տատանվում էր 20%-ը, չէր հավատում 34%-ը: Կրոնի նկատմամբ խիստ մերժողական դիրքորոշում ունեցողները կազմում էին 5%: XXI դարակազմին նկատվում է հավատքի վարքագծի կտրուկ աճ (81,6%):

Արժեքավոր են հեղինակի այս զուգահեռները կրոնական վարքագծի վերաբերյալ, սակայն ցանկալի է, որ նա հետագայում ուշադրություն դարձնի նաև կրոնական վարքագծին հատկապես ընտանեկան բախումների, ամուսնալուծությունների և կրոնական փոքրամասնությունների համատեքստում:

3. *Միհրան Գալստյան, «Փոփոխությունները աշխատանքային միգրանտների մոդելում»*

Առաջին մասում հեղինակն անդրադարձել է միգրանտների սոցիալ-ժողովրդագրական բնութագրերին, որտեղ քննարկվել է երկու հիմնական հարց. միգրանտների ընտանիքի ուսումնասիրության տեսական մոտեցումները և միգրանտների սեռատարիքային կազմն ու կրթական բնութագրերը:

Աշխատանքային միգրացիայի մասնակցության ցուցանիշները բարձր են գյուղական ընտանիքներում (56,7%)՝ դառնալով նրանց եկամուտների ձևավորման կարևոր աղբյուրներից մեկը: Միգրացիոն այդ հոսքերի ձևավորման մյուս կարևոր աղբյուրը ՀՀ քաղաքային բնակավայրերն են (Երևանում՝ 9,8%, մյուս քաղաքներում՝ 33,5%):

Մ. Գալստյանը նկատել է, որ խորհրդային տարիներին քիչ թվով կանայք նույնպես արտագնա աշխատանքի են մեկնել, սակայն հիմնականում ամուսինների հետ՝ զբաղվելով կենցաղի և ուտեստի (այդ թվում՝ ազգային) կազմակերպման խնդիրներով: Հետխորհրդային փուլում ավելացել է արտագնա աշխատանքի մեկնող կանանց թիվը: Երկրորդ գլուխը վերաբերում է աշխատանքային միգրացիայի պատճառներին. այստեղ հատուկ ուշադրություն է դարձվել սոցիալ-տնտեսական գործոնին և հետևանքներին: Որպես միգրացիայի գլխավոր պատճառ 52,1%-ը նշել է ընդհանուր աշխատանքի, իսկ 3,7%-ը՝ մասնագիտական զբաղվածության բացակայությունը: Այդ վիճակի իրական հիմքը ՀՀ-ում գոյություն ունեցող գործազրկության բարձր մակարդակն է, որը 2016 թ. դրությամբ կազմել է 243,7 հազ. մարդ: Երրորդ գլուխը վերաբերում է ընտանիքի հիմնախնդիրներին՝ մասնավորապես աշխատանքային միգրացիային: Անդրադարձ է կատարվել միգրանտների ընտանիքի ձևավորման փուլերի առանձնահատկություններին:

Հեղինակն անդրադարձել է նաև միջէթնիկ ամուսնություններին: Միգրանտ ունեցող ընտանիքների երիտասարդները տղաների միջէթնիկ ամուսնությունների հարցում ավելի հանդուրժող են: Հայ հասարակությունն օտարների հետ տղաների ամուսնության հարցում ավելի հանդուրժող է, քան աղջիկների պարագայում:

Ըստ հեղինակի՝ արտագնա աշխատանքով լուծվում են ընտանիքի հիմնական կարիքները: Այն նպաստում է ոչ միայն դրսից ուղարկված ֆինանսական հոսքերի ավելացմանը, որը 2016թ. կազմել 1,532,883 ԱՄՆ դոլար (որից 896 916-ը՝ ՌԴ-ից), այլև նրանց ընտանիքների կենսամակարդակի ապահովմանը: Այդուհանդերձ, ընտանիքի անդամների ժամանակավոր բաժանումը բարձրացնում է ամուսնալուծվելու ռիսկայնության աստիճանը:

4. Գայանե Հակոբյան, «Հայաստանում բնակվող սիրիահայ ընտանիքների էթնոմշակութային առանձնահատկությունները»

Այստեղ հեղինակն անդրադարձել է այնպիսի երևույթների, ինչպիսիք են սիրիահայերի ժողովրդագրությունը, բնակավայրերը, լեզվական վարքագիծը, հայրենադարձությունը և այլն: Վերջին շրջանում այդ համայնքում էթնիկ ինքնության պահպանումը բախվել է բազմաթիվ խոչընդոտների՝ պայմանավորված հետևյալ գործոններով՝ խառնամուսնություններ, համայնքի ծերացում, համայնքի վրա արաբական մշակույթի ազդեցություն, արաբախոս հայերի՝ հայկական միջավայրում չմտալու ցանկություն, Սիրիայում տնտեսական վիճակի վատթարացում:

2014 թ. փետրվարի դրությամբ ՀՀ-ում բնակվում է շուրջ 11 000 սիրիահայ՝ մոտ 2800 ընտանիք: 2017 թ. տվյալներով սիրիական պատերազմի հետևանքով մոտ 22 000 սիրիահայ է գաղթել Հայաստան: ՀՀ տեղափոխված սիրիահայերի հիմնական զանգվածը հալեպցիներն ու դամասկոսցիներն են, ինչպես նաև Սիրիայի այլ բնակավայրերից (Քեսաբ, Ղամիշլի, Ռաքքա, Դեր Զոր և այլն) գաղթածները: Այստեղ վերլուծվել են սիրիահայ ընտանիքի սոցիալ-մշակութային առանձնահատկությունները հետևյալ երևույթների համատեքստում. ընտանիքի կառուցվածք, ամուսնական ծիսահամալիր, ազգամիջյան ամուսնություն, ընտանեկան կոնֆլիկտ:

Հեղինակը հատուկ ուշադրություն է դարձրել սիրիահայերի ընտանիքի կառուցվածքին: Նրանք հիմնականում երկսերունդ ընտանիքներ են: Այդ համայնքում տարածված է երիտասարդ ընտանիքների՝ ծնողներից առանձին ապրելու երևույթը: Ընտանիքում գլխավոր է համարվում տան ավագ տղամարդը, իսկ նրա բացակայության դեպքում՝ կինը: Եթե այսօր հայաստանյան ընտանիքներում նշված սովորույթից որոշակի շեղում կա, ապա սիրիահայերի եռասերունդ ընտանիքում գլխավորն ավագ սերնդի տղամարդն է:

Երկրորդ գլուխը վերաբերում է սիրիահայերի ամուսնական ծիսահամալիրին: Այդ համայնքում հարսանեկան հանդիսությունը կրում է ավանդական տարրեր, սակայն ազդված է այլ մշակույթներից (առավելապես՝ արաբական):


Երրորդ գլուխը վերաբերում է սիրիահայերի ընտանեկան արժեհամակարգին: Այստեղ հատուկ ուշադրություն է դարձվել միջէթնիկ ամուսնություններին, որոնց նկատմամբ անհանդուրժողականությունը բավական բարձր է:

Վերը նշված էթնոսոցիոլոգիական և դաշտային ազգագրական հետազոտությունների շնորհիվ սույն գրքում առկա են 123 աղյուսակ ու 33 գծապատկեր, որոնց մեծ մասն առաջին անգամ է մտնում գիտական շրջանառության մեջ:

ՄԿՐՏՁՅԱՆ Ս.Ս.

Պատմական գիտությունների դոկտոր

ՌԱՖԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ, Հունական և հռոմեական անտիկ սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին, Ե., ԵՊՀ հրատ., 2018, 240 էջ:



Հայաստանի և հայերի վաղ շրջանի պատմության և ազգային նկարագրի մասին պատկերացում կազմելու համար անփոխարինելի արժեք ունեն օտարալեզու սկզբնաղբյուրները: Մասնավորապես, շատ մեծ է հունական և հռոմեական աղբյուրների դերը, որոնք շատ ուշագրավ և եզակի փաստեր են հաղորդում Հայաստանի բնակչության էթնիկ կազմի և մշակութային նկարագրի վերաբերյալ: Այս առումով, հայ պատմագրության մեջ հունական և հռոմեական սկզբնաղբյուրների նկատմամբ հետաքրքրությունը առանցքային է եղել, քանի որ դրանք շատ դեպքերում հնարավորություն են տալիս վերականգնել հայերի ու Հայաստանի այդ ժամանակաշրջանի պատմությունը, էթնիկական քարտեզն ու ազգային բնութագիրը: Ռաֆիկ Նահապետյանի «Հունական և հռոմեական անտիկ սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին» աշխատության մեջ ի մի են բերված հայերին ու Հայաստանին վերաբերող տվյալները՝ ազգագրական շեշտադրումով: Եթե պատմաբանի համար այդ աղբյուրները ավելի կարևոր են պատմական փաստերը ներկայացնելու և տվյալ դարաշրջանի պատմական իրողությունը վերականգնելու տեսանկյունից, ապա ազգագրագետների համար արժևորվում է էթնիկական և մշակութային պատկերի վերականգնումը: Ուսումնասիրությունը գրված է վերոնշյալ սկզբնաղբյուրների վերաբերյալ մինչ այժմ իրականացված հետազոտությունների հիմքի վրա, և դրանում արտացոլվում է ոչ միայն այդ սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունների համակարգված պատկերը, այլև կարելի է գտնել դրանց մասին առկա վերլուծություններում արտահայտված կարծիքներն ու մոտեցումները:

Ռ. Նահապետյանն իմի է բերել տարբեր աղբյուրներում պատմական Հայաստանին և հատկապես նրա բնակչության նիստ ու կացին, սովորույթներին, նյութական մշակույթին և այլ ազգագրական բնույթի իրողություններին

վերաբերող նյութերը: Այս աշխատության խնդիրը գերազանցապես հենց հունական և հռոմեական աղբյուրներում Հայաստանի վերաբերյալ պատմագագագրական նյութերը մեկ տեղում ներկայացնելն էր, և ոչ թե դրանց մասին նոր տեսանկյուններ կամ վարկածներ առաջ քաշելը: Անշուշտ, հեղինակին հաջողվել է լուծել իր առջև դրված խնդիրը և ընթերցողի սեղանին է դրել աղբյուրագիտական մի ընտրանի՝ մինչ այդ գրված այլ հետազոտությունների ու սկզբնաղբյուրներին նվիրված վերլուծությունների հիման վրա: Այս առումով, գիրքը բավական օգտակար է հատկապես ուսանողների համար: Փաստացիորեն, նրանց մատուցվում է կարևոր մի աշխատություն, որ հնարավորություն է ընձեռում իրենց հետաքրքրող բազմաթիվ հարցերի քննությունը գտնել մեկ գրքում:

Աշխատանքի առաջին գլուխը նվիրված է հունական աղբյուրներում հայերի ու Հայաստանի մասին ներկայացված տեղեկություններին: Այդ աղբյուրներն ընդգրկում են մի հսկայական ժամանակաշրջան՝ Ք.ա. V դ. սկսած՝ վերջացրած Ք.հ. II դարով: Ներառված են Հերոդոտոսի, Քսենոֆոնի, Դիոդորոս Սիկիլիացու, Ստրաբոնի, Պլուտարքոսի աշխատությունները: Երկրորդ գլուխն ամփոփում է հռոմեական սկզբնաղբյուրներում հայերի ու Հայաստանի վերաբերյալ տեղեկությունները: Ներկայացված են Գայոս Պլինիոս (Ավագ) Սեկունդոսի, Ապիանոսի, Դիոս Կասիոսի, Գայոս Կոռնելիոս Տակիտոսի՝ Հայաստանի մասին հաղորդումները:

Նշենք նաև, որ մեկ գրքում ամփոփված վկայությունները պարունակում են մեր պատմության հնագույն շրջանին վերաբերող ազգագրական այնպիսի կարևոր տեղեկություններ, որոնք պատմում են կյանքի ամենատարբեր ոլորտների մասին (կենցաղ, արհեստներ, մշակույթ և այլն): Պատմական բնույթի փաստերից բացի, կարևոր նշանակություն ունեն նաև Ք.ա. V դ. սկսած՝ հունահռոմեական աղբյուրներում Հայաստանի տարածքում և հարևանությամբ ապրող ցեղերի ու ժողովուրդների, հայերի էթնոգենեզի, տնտեսական զբաղմունքների, արհեստների, ընտանեկան սովորույթների, ուտեստի ու ըմպելիքների և ազգագրական արժեք ներկայացնող այլ ոլորտների վերաբերյալ հաղորդումները: Աշխատությունում կարելի է գտնել հարուստ տեղեկություններ Հայաստանում զարգացած գինեգործության, գինիների տարբեր տեսակների, ոչ միայն դրանց պատրաստման, այլև՝ պահպանման ու գործածության, որակական ու համային հատկանիշների, այլ ժողովուրդների հետ գինեգործական առնչություններին վերաբերող ուշագրավ տվյալներ: Գինեգործության համատեքստում կարելի է գտնել նաև խաղողագործությանը և ընդհանրապես այգեգործությանն ու երկրագործության մասին արժեքավոր տեղեկություններ: Ազգագրագետների համար կարևոր են հատկապես ուտեստի և դրա հետ կապ-

ված սովորույթների՝ խնջույքի, հանդիսության և հյուրընկալության մասին հաղորդումներ: Բավականին հարուստ տեղեկություններ կան նաև տնտեսվարման եղանակների, երկրագործության ու անասնապահության, ազգակցական ու ընտանեկան հարաբերությունների, ամուսնական ավանդույթների, տոների ու ծեսերի և հավատալիքների վերաբերյալ: Խիստ ուշագրավ են մանավանդ փոխադրամիջոցներին, չափման միավորներին, փոխանակությանն ու առևտրին վերաբերող նյութերը, որոնք հայերին ներկայացնում են ոչ միայն սեփական, այլև տարածաշրջանային մշակույթի համատեքստում, ինչպես նաև աշխույժ հարաբերությունների ոլորտում:

Աշխատության գնահատելի առանձնահատկություններից է նաև այն, որ հիշյալ պատմական ժամանակաշրջանի ընդգրկումը հնարավորություն է տալիս ոչ միայն պարզապես ծանոթանալ առանձին ժամանակահատվածներում հայերին վերաբերող տեղեկություններին ու փաստերին, այլև տարբեր ժամանակաշրջանների ազգագրական նյութերը համեմատել իրար հետ և տեսնել, թե դրանցում ի՞նչ փոփոխություններ ու զարգացումներ են տեղի ունեցել: Իսկ նույն կամ մոտ ժամանակաշրջաններ ներկայացնող աղբյուրների առկայությունը թույլ է տալիս համեմատություններ, ճշգրտումներ և ընդհանրացումներ անել այս կամ այն ազգագրական փաստին առնչվող նյութերի միջև:


Այսպիսով, այս արժեքավոր ուսումնասիրությունը, գրված հունական ու հռոմեական սկզբնաղբյուրներում հայերին ու Հայաստանին վերաբերող պատմական, աշխարհագրական ու ազգագրական տեղեկությունների հիման վրա և ի մի բերելով այդ սկզբնաղբյուրների վերաբերյալ իրականացված հետազոտություններում արտահայտված տեսակետները, արտացոլում է դրանց ամբողջական պատկերը՝ դառնալով բավական օգտակար գործոն հունական ու հռոմեական սկզբնաղբյուրների վերաբերյալ վերլուծական մոտեցումները, դրանցում առկա ընդհանրություններն ու տարբերությունները ներկայացնելու առումով:

Ռաֆիկ Նահապետյանի աշխատությունը կարևոր է, առաջին հերթին, ազգագրագետների ու պատմաբանների համար, սակայն ընդգրկած ուշագրավ աղբյուրների, դրանցից քաղված տեղեկությունների ու պատմությունների, ինչպես նաև պարզ ու ընկալելի շարադրանքի շնորհիվ կարող է գրավիչ լինել նաև հայ ժողովրդի ծագման, պատմության ու վաղ շրջանում հայերի ու հարևան ժողովուրդների մշակույթով ու կենցաղով հետաքրքրվող ընթերցողի համար:

ԹԱԴԵՎՈՍԱՆ Ա.Զ.

Պատմական գիտությունների թեկնածու

ԱՐԱՐԱՏ ՀԱՎՈՐՅԱՆ, 1937 թվականը Հայաստանում, Ե., «Զանգակ» հրատ., 2017, 96 էջ:



Հայ (և ոչ միայն հայ) պատմագրության և հրապարակագրության մեջ մշտապես արդիական են այն թեմաները, որոնք առնչվում են 1930-ական թթ. ԽՍՀՄ-ի ողջ տարածքում տեղի ունեցած զանգվածային բռնաճնշումներին, քաղաքական հետապնդումներին և հալածանքներին: Այդ ժամանակաշրջանը հետխորհրդային երկրների պատմության և գրականության էջերում կրում է «1937 թվականը» խորհրդանշական անվանումը:

Այդ սարսափելի դեպքերի ու իրողությունների մասին շատ է գրվել ու խոսվել, բազմաթիվ ստեղծագործություններ են հրապարակվել: Ի լրումն այս ամենին օրերս լույս տեսավ ևս մեկ հետազոտություն: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ հրատարակվեց պատմագիտության դոկտոր, պրոֆ. Արարատ Հակոբյանի «1937 թվականը Հայաստանում» խորագրով ուշագրավ աշխատությունը (գրախոսող՝ պատմ. գիտ. դոկտոր Ամատունի Վիրաբյան):

Առաջադրելով «Ո՛վ էր մեղավոր» հիմնահարցը՝ հեղինակը քննության է առնում իշխող տարրի՝ ռուսների, նաև ռուսական պետության ու պետականության դարավոր առանձնահատկություններն ու տիպական գծերը:

Ա. Հակոբյանը դիտարկում է այն հանգամանքը, որ ռուսական պետականությունը հարյուրամյակներ շարունակ հանգամանքների բերումով ունեցել է բռնատիրական բնույթ: Դաժանությունն ու բռնությունը խիստ բնորոշ են եղել ռուսական պետական համակարգին: Անգամ XVIII դ. հայտնի փիլիսոփա Շ. Մոնտեսքյուն ռուսական ինքնակալության առաջացման գործում ընդգծում էր աշխարհագրական դետերմինիզմի՝ ռուսական ցուրտ կլիմայի և հսկայածավալ տարածքների խիստ կենտրոնացված կառավարման անհրաժեշտության հանգամանքը:

Ա. Հակոբյանը պատմական փաստերի և բուն պատմության ընթացքի համոզիչ քննությամբ ռուսաց պետականության նախորդ դարերում առկա գործընթացները օրգանապես կապում է XX դարում Ռուսաստանում հաս-

տատված ամբողջատիրական, միակուսակցական վարչակարգի հետ: Այն-քան համոզիչ և փաստարկված է նա ներկայացնում այդ իրողությունը, որ ընթերցողը չի տարակուսում ցարական ու բոլշևիկյան վարչակարգերի միջև գոյություն ունեցող ներքին ընդհանուր օրինաչափությունների հոգեհարա-զատության մասին:

Պատմաբանը իրավամբ նշում է, որ ինքնակալական համակարգը հար-յուրամյակներ շարունակ ներկայացվել է որպես Ռուսաստանի կառավարմանը բնորոշ միակ ձև ու քաղաքական արժեք, իսկ ռուս հասարակության տարբեր ու խավերն ու խմբերը հարմարվել ու ընտելացել են այդ համակարգին՝ այն ըն-դունելով իբրև բնական վիճակ: Ինչպես ցարերն են այդ հսկայական երկրին տիրել ու իշխել որպես ժառանգական ուղեկային կալվածքի, այնպես էլ XX դա-րում հողը, արտադրության մյուս միջոցները, ազգային հարստությունները պետականացնելու, տիրելու և յուրօրինակ «ուղեկային կալվածքի» վերածե-լու ավանդույթը հեշտությամբ են ընդօրինակել խորհրդային շրջանի բոլշևիկ առաջնորդները: Երկու դեպքում էլ՝ ինչպես ցարիզմի, այնպես էլ կոմունիս-տական ամբողջատիրության ժամանակաշրջանում, իշխանությանը թույլա-տրվում էր ամեն ինչ, պետական բռնաճնշիչ մեքենան կոպտորեն միջամտում էր մարդկանց անձնական ու հասարակական կյանքի ամենատարբեր ոլորտնե-րին: Ե՛վ ցարական, և՛ բոլշևիկյան Ռուսաստանում ապրող մարդը ընդամենը եղել է պետական մեքենայի մի պտուտակը:

Ըստ Ա. Հակոբյանի, 1930-ական թթ. Խորհրդային Միությունում ստեղծ-ված վախի մթնոլորտն ու մատնությունների մեխանիզմի ձևավորումը պայ-մանավորված էին խորհրդային կուսակցական-պետական համակարգի բնույ-թով, ուստի դրանք բնավ էլ պատահական երևույթներ չէին: Հիմնավոր կեր-պով փաստարկվում է այն հանգամանքը, որ խորհրդային այդ տերմիդորին ավել կամ պակաս չափով մասնակից են եղել կուսակցական-պետական ընտ-րախավը, բյուրոկրատական-նոմենկլատուրային ողջ ապարատը, շարքային բազմաթիվ կուսակցականներ: Վերևից ուղղորդված ու պարտադրված հանգա-մանքներում խորհրդային հասարակությունը ապրել ու գործել է վախի, կեղ-ծիքի, մատնությունների ու կասկածամտության ամենօրյա մթնոլորտում:

Պատմաբանը համոզիչ տրամաբանությամբ փաստարկում է. «Մարդիկ, դրդված սպառնալիքից, վախից, թելադրված ինքնապաշտպանության բնագ-րով և այլն, դիմում էին մատնությունների՝ միմյանց դեմ մատնագրեր գրե-լով, կեղծ ու ստահող լուրեր տարածելով՝ իրարից հաշիվ մաքրելու, շատ դեպքերում իրարից անձնական վրեժ լուծելու, պաշտոն ու արտոնություն ստանալու, վերադասին շողոքորթելու և այլ նկատառումներով: Եվ այդ

բռնությունների ու կեղտոտ, մարդասպան հասարակական-քաղաքական մթնոլորտի պատճառը պետք է փնտրել ոչ թե մատնիչ հարևանի կամ վերադասին ստորաքարշող պաշտոնամոլի, այսինչ ծառայողի, չեկիստի, այլ խորհրդային երկրում ձևավորված միակուսակցական ամբողջատիրական ավտորիտար համակարգի մեջ» (էջ 32):

Շեղինակը, ընդհանրացնելով վերլուծական-քննական դիտարկումները, ի ցույց է դնում այն մեթոդները, որոնցով գործել են պետական մարմինները հարյուր հազարավոր և միլիոնավոր մարդկանց ձերբակալելու և մեղադրանք ներկայացնելու տևական գործընթացներում: Սահմուկեցուցիչ փաստերով ներկայացված է դաժանության այն ողջ ներկայանակը, որը հատուկ է եղել դահիճներին ու այդ ահավոր ժամանակաշրջանին: «Ձերբակալությունների և մեղադրանք ներկայացնելու «հիմքերը» և մեթոդաբանությունը», «Հատվածականության գործոնը բռնաճնշումներում», «Հարցաքննությունների շարժընթացը և արձանագրությունների նմանությունը», «Ցուցմունքներ կորզելու եղանակները», «Դատավարություն անցկացնող դատական ատյանների և մի քանի բնորոշ դատավարությունների մասին», «Բռնաճնշումների ենթակա մարդկանց ձերբակալությունների խմբաքանակների (լիմիտ) պլանավորման մասին» բաժիններում բացահայտվում են ստալինյան դահճային քաղաքականության ողջ զինանոցի էությունը, դրա աննախադեպ դաժանությունն ու ստորությունը:

Գրքում փաստարկված կերպով ներկայացված են ԽՍՀՄ-ում (նաև Հայաստանում) բռնաճնշումների տարբեր փուլերը, բռնաճնշումների կազմակերպված ու պլանավորված ընթացքն ու բնույթը: Ա. Հակոբյանի սույն ուսումնասիրությունը ևս մեկ անգամ հիմնավոր կերպով փաստում է, որ ԽՍՀՄ-ում 1920-30-ական թթ. իրագործված զանգվածային բռնաճնշումների կիզակետում է եղել նաև Խորհրդային Հայաստանը: Նրա դիտարկումներով, 1920-1953 թթ. Հայաստանում բռնադատվածների ընդհանուր թիվը կազմել է մոտ 42 հազար մարդ, որոնց մի զգալի մասը դատապարտվել է 1-ին կատեգորիայով՝ գնդակահարության, մյուսները՝ 2-րդ կատեգորիայով՝ բանտի և աքսորի: Հայաստանում մեղադրյալներին ներկայացված ամենատարածված քաղաքական մեղադրանքներն էին՝ հակախորհրդային, թշնամական վնասակար տարր, նախկին դաշնակցական լինելը, նրա՝ ընդհատակյա կազմակերպություններին և ժողովներին մասնակցելը կամ դրանց հետ կապ ունենալը, 1921 թ. փետրվարյան ապստամբությանը (ավանտյուրային) մասնակցելը, ինչպես նաև կուլակային տարր, նախկին խմբապետ, ավազակային (բանդիտական) խմբի ղեկավար կամ անդամ, տրոցկիստ-ահաբեկիչ լինելը և այլն:

Սակայն դրանք կեղծ մեղադրանքներ էին, և ինչպես ճշմարտացիորեն նշում է աշխատության հեղինակը, մեզանում պարզապես եղել են ազգային նկարագիր ունեցող առանձին մտավորականներ ու գործիչներ, որոնք նեղ շրջանակներում խոսել են Հայաստանին ու հայ ժողովրդին հուզող ազգային խնդիրներից և ցանկություն են հայտնել, որ Հայաստանին վերադարձվեն նրանից անարդարացիորեն բռնազավթված հողերը՝ Լեռնային Ղարաբաղը, Սուրմալուն, Կարսը, Նախիջևանը, Ախալքալաքը (էջ 87):


Արարատ Հակոբյանի սույն աշխատությունը ոչ միայն գիտական հավաստի պարզաբանումներով ներկայացնում է մեր երկրի պատմությանն ու արդիականությանն առնչվող մի շարք հարցեր, այլև արժեքավոր ներդրում է իր այն առաքելությամբ, որ գալիք սերունդներին հորդորում է չմոռանալ ժողովուրդների ապրած մեծ ողբերգության և ընդհանրապես պատմության դասերը, քանզի նրանք, ովքեր մոռանում են այդ ողբերգական իրադարձությունները, դատապարտված են նորից անցնելու կրած կորուստների, հալածանքների ու բռնաճնշումների թոհուրոհով:

1937 թվականի մեծ ողբերգությունը երբեք չպետք է մոռացվի. միայն այդ հանգամանքը կարող է բացառվել դրա կրկնությունը:

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Ա.Հ.

Պատմական գիտությունների թեկնածու

ՆԱՐԻՆԵ ԱՐԳԱՐՅԱՆ, Երկնքից երեք խնձոր ընկավ, թարգմ. ռուսերենից՝ Նաիրա Խաչատրյանի, Ե., «Օրակուլ հրատ.» ՍՊԸ, 2017, 240 էջ:



Նարինե Արգարյանի արձակը ինքնատիպ է, ճշմարտապատում: Ստեղծագործական ուշագրավ մտքի շնորհիվ նա արդեն հարթել է իր ուղին գրական ասպարեզում: Ն. Արգարյանը ապրում է Մոսկվայում և ստեղծագործում է ռուսերենով: Չնայած հայերեն չի գրում, սակայն պատկերում է հայ իրականությունը, ժողովրդի վարքուբարքը, հոգեբանությունը, ուստի նրան իրավամբ կարելի է համարել հայ կյանքի, հայ մարդու, հայկականության դեսպան արտերկրում: Թեպետ նոր, բայց արդեն միջազգային ճանաչում ունեցող անուն է: Արժանացել է ծանրակշիռ մրցանակների, ինչպես՝ *Ռուսաստանի ազգային-գրական՝ «Տարվա ձեռագիր»* և *«BABY-HOC»* (Նոր ռուսական բանասիրություն) մրցանակները: Նրա ստեղծագործությունները թարգմանվել են տասնյակ լեզուներով, նաև հայերեն: Ն. Արգարյանի *«Երկնքից երեք խնձոր ընկավ»* վեպը լույս է տեսել 2015 թ., հայերեն թարգմանվել է 2017 թ.:

Վեպը հեռավոր մի փոքրիկ գյուղի՝ Մառանի ու նրա բնակիչների մասին է, որոնք տեսել են հարյուրավոր կյանքեր խլած երկրաշարժ, պատերազմ, սով, երաշտ: Գյուղում մնացել են միայն ծերերը, որոնց կարծես աշխարհը մոռացել է, և նրանք՝ ապրում են միմյանց ուժ տալով:

Վեպը հեռավոր մի փոքրիկ գյուղի՝ Մառանի ու նրա բնակիչների մասին է, որոնք տեսել են հարյուրավոր կյանքեր խլած երկրաշարժ, պատերազմ, սով, երաշտ: Գյուղում մնացել են միայն ծերերը, որոնց կարծես աշխարհը մոռացել է, և նրանք՝ ապրում են միմյանց ուժ տալով:

«Երկնքից երեք խնձոր ընկավ» վեպը բաղկացած է երեք մասից: Առաջինը՝ «Նրան, ով տեսել է», սկսվում է գրական լավագույն հնարանքով: Հեղինակը ընթերցողին մասնակից է դարձնում անսպասելի գործողությունների՝ առանց նկարագրական նախաբանի: Նրա առաջ «բացում է վարագույրը», և Անատոլիայի կերպարի ձևավորման աստիճանական ընթացքը դառնում է պատումի գլխավոր գեղարվեստական խնդիրը, և այդ խնդրի միջոցով էլ հեղինակը «բեմահարթակ է բերում» մյուս հերոսներին՝ գյուղի՝ իրար հոգսերով ապրող մարդկանց: Ն. Արգարյանը ասես շղթայի՝ որպես իրար հաջորդող օղակներ, ներկայացնում է գյուղի ապրած արհամիրքների ծանրությունը,

որոնք վաղեմի շեն Մառանից թողել են քսաներեք տուն: Հեղինակը հաջորդաբար պատմում է դեպքերը՝ իրականը անիրականին հյուսած:

Վեպի հերոսներն ապրում են իրենց փոքրիկ աշխարհում. այնտեղ հրաշալի նկատվում է գյուղական կոլորիտը: Ամեն ինչ հազար թելերով կապված է ավանդական կենցաղին, ապրելակերպին: Պատումը սկզբից մինչև վերջ շնչում է սիրով. գյուղացիները պատրաստ են իրար օգնել ու աջակցել, ապրում են միմյանց ցավերով ու հոգսերով, սիրով ու հարգանքով են վերաբերվում միմյանց նկատմամբ: Եվ այդ ամենը բնական է ու անկեղծ: Աբգարյանի հերոսները հոգեբանական բարդ անհատականություններ չեն, նրանք մարդկային իրական հարաբերությունների կրողներ են՝ գյուղական հուզաշխարհով ու հոգու մաքրությամբ, իրենց աշխարհընկալմամբ ու փիլիսոփայությամբ: Ահա, օրինակ, հերոսներից մեկը մտորում է. «Անգործությունից ավելի կործանարար բան չկա, անգործությունն ու պարապությունը կյանքն իմաստագրկում են», - և սրտի ցավով է մտածում, որ դարբնոցը, կարևորությունը կորցրած, «ծերանում է ու մեռնում» (77):

Հեղինակը աշխարհի շարժիչ ուժը համարում է սերը, բարությունը, նվիրվածությունը, արարումը: Վեպում չկա ոչ մի կոնֆլիկտ, ինչը հաճախ գրական ստեղծագործություններում անխուսափելի է, կա կյանք՝ անմոռնչ, անտրտուն, բարությամբ շաղախված, իսկ հերոսը պարզասիրտ, բարեպաշտ, հյուրասեր ու հյուրընկալ հայ գյուղացին է: Ժողովրդի կենսափիլիսոփայությունը դրսևորվում է գյուղի առօրյայում՝ հագեցած, հետաքրքիր, գունավոր գյուղական կոլորիտով, արտահայտված գյուղի մարդու պարզ, անմիջական հոգեբանությամբ: Այդ ամենը Ն. Աբգարյանը մատուցում է վառ պատկերամտածողությամբ, գյուղական կյանքի ու բնության երևույթների ժողովրդական իմաստավորմամբ և մեկնաբանմամբ:

Գրքի երկրորդ՝ «Նրան, ով պատմել է», մասում հեղինակը Մառան գյուղի անցուղարձին մասնակից է դարձնում Վալինկայի ու Վանոյի՝ Ռուսաստանից եկած տղայի ընտանիքին: Խորհրդանշական է նրանց ռուս հարսի՝ Նաստասյայի կերպարը: Նա կարծես մեծ աշխարհի ներկայացուցիչը լինի՝ հայտնված այդ փոքրիկ գյուղաշխարհում, որը Նաստասյայի համար բացահայտումների մի ամբողջ մոլորակ է դառնում: Հետաքրքրական է նրա՝ այդ աշխարհի ընկալումը: Նա տեսնում է այդ բնաշխարհի գեղեցկությունն ու այդտեղ ապրող մարդու դժվարությունները և նկատում վերջինիս բնավորության էական գծերը, որոնք դարձել են պայքարելու, կյանքը կառուցելու ուժ ու դիմակայություն: Արդարև, գրեթե ամեն մի տողում արտացոլվում է հայ գյուղացու ցավը, տառապանքը և, միաժամանակ, նրա հոգու վեհությունը, կամքի ուժը, ամեն-ամեն ինչ՝

իրականության բազմերանգ ու բազմաբնույթ ճշմարտությունը՝ մաքառումը հանուն ժողովրդի հոգևոր ու բարոյական արժեքների պահպանության, հանուն գյուղական մաքուր ու գեղեցիկ կյանքի գոյության, հանուն **սիրո ու բարության**: Կյանքի այդ մաքրությունն ու բարությունը վերհանելու առաքելության համար էլ Նարինե Աբգարյանի «Երկնքից երեք խնձոր ընկավ» վեպը 2016 թ. արժանացել է «Յասնայա պոլյանա» ամենամյա գրական մրցանակի՝ «21-րդ դար» անվանակարգում:

Վեպի առանցքը այդ գյուղի մարդն է՝ իր վեհությամբ, նվիրվածությամբ, մերձավորին սատար կանգնելու, իր ամենանվիրականը մարդկանց տալու մեծագույն կարողությամբ: **Սեր և բարություն**, որը տալիս ու վաստակում է մարդն իր ապրած կյանքով: Հենց այս գաղափարն է, որ ամփոփված է գրքի երրորդ՝ «Նրան, ով լսել է» մասում: Վաթսունութ տարեկան Վասիլի և հիսունութ տարեկան Անատոլիայի ապրած կյանքի, սիրո ու բարության արտացոլանքը հրաշքով ծնված իրենց աղջիկն է: Հեղինակը «Եզրափակիչ գլխում» ամբողջացնում է գրքի բովանդակությունը՝ «....ուղիղ մեկ տարի ու մեկ ամիս առաջՍևոյանց Անատոլիան պառկեց մեռնելու՝ չիմանալով, թե ինչ հրաշքներ են իրեն սպասում, ու ահա այդ հրաշքն իրականություն է դարձել....» (238):

Նարինե Աբգարյանը վեպի սկզբից մինչև վերջ ասես մտովի շրջում է իր հայրենի բնօրրանով, շփվում անառիկ լեռների, կուսական անտառների, խոր-խոր ձորերի և այդ բնությունից ծնված անվեհեր մարդու հետ, որն իր հոգու նվիրական զգացողություններով մնացել է անխառն, մաքրամաքուր: Այդ ամենը մատուցված է հմուտ գրչով, երևույթների խոր ընկալմամբ և հայկականի շնչով ու լիցքով: Ռուսական “Eksmo” ամսագրի այն հարցին, թե որպես գրող ո՞ր հաճոյախոսությունն է իր համար արժեքավոր, նա նշում է. «Քննադատներից մեկն ասել էր, որ ես գրում եմ հայերեն՝ պարզապես ռուսերեն բառերով: Դա անսպասելի էր և շատ հաճելի»¹:

Տարեթվերի առումով ժամանակը գրքում պայմանական է, ու դա հասկանալու քիչ հուշումներ է տալիս հեղինակը: Ժամանակի ֆիզիկական դրսևորումներն ընդամենը կանգառներ են կյանքի ցիկլիկ թոհոփոհի ընթացքում՝ մեկը մյուսի նման, մեկը մյուսից բխող՝ մեկը նախապայման ու, ցավոք, կրկնվող մարմնավորումներով՝ պատերազմ, սով... Այդ ամենի փոխարեն վեպում մանրադիտակային ճշգրտությամբ արտացոլված են կարևորագույն ճշմարտությունները՝ մարդու, հասարակության, կյանքի, գոյության հիմնասյու-

¹ <https://eksmo.ru/interview/narine-abgaryan-kto-to-iz-kritikov-skazal-chto-ya-pishu-na-armyanskom-prosto-russkimi-slovami-ID5493583/>.

ները: Պարադոքս. մի կողմից՝ իրականությունից կտրված մի միկրոաշխարհ, մյուս կողմից, իրականություն՝ անատոմիկական մանրամասներով, կենցաղի, գյուղի ամեն մի օրը ներկայացնելու բոլոր նրբերանգներով:

Քննադատները Ն. Աբգարյանի «Երկնքից երեք խնձոր ընկավ» վեպը դասում են մոգական ռեալիզմի ժանրին ու զուգահեռներ տանում Մառան գյուղի և Գաբրիել Գարսիա Մարկեսի Մակոնդոյի միջև (հմմտ. <http://m.natsbest.ru/award/2016>): Մոգակա՞ն է արդյոք Ն. Աբգարյանի աշխարհը: Անշուշտ, Մառանը մոգական աշխարհ է՝ կորած սարերի բարձունքում, մեծ աշխարհից ու նրա թոհուրոհից կտրված հերոսներով: Հերոսներ, որոնց մարդասիրությունը, բարոյությունը, կյանքը սիրելու ունակությունը առօրյա իրականություն են և թերևս մարդկային ամենահզոր ուժը՝ արարման հետ միասին:

Ն. Աբգարյանի լեզուն պարզ է, միաժամանակ խորիմաստ: Ինչպես ինքն է նշել՝ «Որքան պարզ են բառերը, այնքան խորն է դրանց իմաստը» (էջ 184): Վեպի հերոսների նիստուկացը, սովորույթները նա պատկերում է հետաքրքիր շարադրանքով, ուրույն ոճով, երկխոսությունները կենդանի շունչ են հաղորդում պատումին: Լինելով հայի կենցաղի, ապրելակերպի, ազգային ոգու ճշմարտացի արտացոլում՝ Ն. Աբգարյանի վեպը իր ուրույն տեղն է գրավել արդի հայ գրականության մեջ:

ԽԱՉԱՏՐՅԱՆ Ա.Ս.

ОВАНЕС ТУМАНЯН И РУССКАЯ ЛИТЕРАТУРА (К 150-ЛЕТИЮ СО ДНЯ РОЖДЕНИЯ ПОЭТА)

Патриарх армянской поэзии Ованес Туманян – органичное, многогранное, знаковое явление мировой литературы XX века – был довольно последовательным сторонником российской ориентации Армении. Большой и прозорливый патриот не слепо поклонялся мощной северной державе, под сенью которой находилась часть его родины, а в первую очередь глубоко осознавал великое духовное наследие русского народа, которое обогащало и армян. Любовь Туманяна к России и, в частности, к русской литературе была неразрывно связана с историческим решением судеб армянского народа.

Постепенное присоединение различных областей Восточной Армении к Российской империи явилось тем поворотным рубежом, за которым исчезла угроза физического истребления нации на собственной земле. Ованес Туманян еще в 1912 г. писал, что если армянский народ и видел поддержку и помощь в своих многовековых страданиях, то только от России. Разумеется, писатель прекрасно осознавал разницу между официальной, самодержавной Россией, преследующей собственные, не всегда совпадающие с интересами армян, цели на Кавказе, и самим русским народом. Подчеркивая органичность связей с прогрессивными деятелями русской культуры, Туманян признавался: “Мы пришли и идем к великой России, к великому русскому народу, мы полюбили его и примкнули к нему... потому, что мы от нее видели все блага, с ней мы и связывали наши надежды, ей и служили, как родные, во всех областях”.

Эти строки были написаны в 1913 г., в канун Первой мировой войны, в преддверии неслыханной в новейшей истории трагедии, которая вскоре должна была разыгаться в Османской империи. К счастью для восточных армян, под скипетром русского царя их обошла ужасная участь задуманного турками широкомасштабного истребления соотечественников за Араком.

В России Туманян видел не только страну, которой суждено было освободить часть армянского народа, – с Россией поэт связывал и развитие армянской литературы и культуры. Весь ход исторического и культурного развития армянского народа после вхождения восточных областей Армении в состав Российского государства позволил Туманяну заявить: “В России мы находимся среди одного из лучших народов мира и под влиянием одной из лучших литератур”.

Заметим, и во времена Туманяна, и ныне находились и находятся люди, считающие, что Россия покровительствовала армянам лишь во имя собственных геополитических, военно-стратегических и экономических интересов на Кавказе и Ближнем Востоке в целом. Подобным деятелям великий поэт еще в 1912-м отвечал: “Тем лучше, если интересы могучей России совпадают с интересами армянского народа. Это и есть причина русской помощи армянскому народу, причина ее последовательности. Вот почему и вот каким образом мои надежды и симпатии связываются с Россией”. Сказано лаконично, метко и искренне. Но тогда Туманян был почти твердо уверен, что только постоянный защитник армян – Россия – сумеет мирно разрешить “кровавый Армянский вопрос”. К этому убеждению поэт пришел, извлекая уроки из вековой истории Армении, не чувствуя недостатка в фактах, доказывающих, что попытки обращения армян и на Запад, и на Восток оказывались тщетными. Как показала дальнейшая история, “разрешения” Армянского вопроса, к сожалению, не произошло, и по вине не столько России, сколько западных держав, не желавших усиления русских за счет далеко не бескорыстного, на их взгляд, “покровительства” армянскому народу. Ведь Запад был абсолютно уверен, что декларируемая русскими защита интересов “многострадающего христианского народа, изнывающего под гнетом мусульман” – лишь благовидный предлог для продвижения “северного медведя” к Средиземноморью через Армению, что, собственно, и не особо скрывалось царскими стратегами.

О роли России в судьбах Армении Туманян писал в целом ряде статей – “Вот почему”, “Армянский вопрос и его решение”, “Испытатель”, “С непоколебимой верой” и др., доказывая в них на конкретных примерах из древней и новой истории, что единственно реальной является российская ориентация родного народа. Действительно, богатая и цивилизованная

Европа, а позднее и Америка все больше кормили армян пышными декларациями с трибун парламентов, страстными статьями на страницах прессы, благотворительными акциями, порой шумными митингами в защиту “истерзанного” христианского народа. Россия и русский народ были ближе и роднее армянам, и в первую очередь ее передовой интеллигенции в лице известных поэтов, художников, музыкантов, ученых.

Россия и Армения веками были связаны не только историческими судьбами, но и христианской культурой. На традициях русской литературы воспитывались целые поколения армянских поэтов и прозаиков, художественной интеллигенции в целом. И хотя сам поэт был знатоком европейской и восточной поэзии и культуры, русская литература, бесспорно, занимала особое место в его жизни и творчестве. На протяжении всей творческой жизни Туманян писал статьи, посвященные русской литературе, следил за литературными течениями в ней. Как председатель Кавказского общества армянских писателей он организовывал литературные вечера, посвященные русским поэтам и писателям. Туманян боготворил Пушкина, Лермонтова, Льва Толстого. Так, лирикой Пушкина он, по собственному признанию, восхищался с детских лет, она сыграла огромную роль в формировании литературных воззрений начинающего поэта, а в зрелые годы Туманян подчеркивал, что Пушкин – великий поэт, которому нет равного в Европе. Переводы его из русской поэзии (Жуковский, Пушкин, Лермонтов, Некрасов, Кольцов, Надсон, Блок и др.) отличаются мастерством и тонкостью восприятия первоисточника. Переводы Туманяна раскрыли армянскому читателю роскошный мир русской поэзии, расширили рамки национальной литературы, обогатив ее замечательными образцами, ставшими неотъемлемой частью родной литературы.

Ованес Туманян был лично знаком со многими русскими поэтами и писателями, посещавшими Закавказье. В его доме гостили В. Брюсов, С. Городецкий, К. Бальмонт и др. Армянский поэт высоко оценил работу В. Брюсова над антологией “Поэзия Армении” (1916) и с чувством благодарности отмечал: “В дни, когда мы, изнемогая от бремени национального бедствия, чувствуем себя беспомощными и слабыми, в эти дни приезжает к нам с далекого севера знаменитый русский поэт Валерий Брюсов и говорит о нашем величии, о моральной, духовной силе армянского народа – о

его поэзии”. Имея в виду также серию лекций русского литератора об армянской поэзии и исторических судьбах армян, прочитанных в январе 1916 года в крупнейших городах Закавказья, Туманян благодарит Брюсова за “высокое и прекрасное начинание” и вновь подтверждает: “Мы... с любовью и благоговением склоняемся перед прекрасной литературой великого русского народа – перед литературой Пушкина, Лермонтова, Гоголя, Достоевского, Тургенева, Толстого, литературой, под влиянием которой воспитывались очень и очень многие наши писатели и интеллигенты. Сами мы давно уже связаны с русской литературой, а теперь очень рады, что связь эта становится взаимной. И утверждаете ее Вы. Дай бог, чтоб Вы были не единственным высоким представителем русской интеллигенции, идущим к нам от имени русской литературы со словами любви и уважения”.

Туманян подчеркивал: чтобы иметь настоящую литературу, необходима свобода культурной жизни в рамках российской державы, благодаря чему армянский народ может стать “цельным народом с самобытной культурой”. Литература, утверждал поэт, делает народ нацией, именно литература “является духом народа, его честью и славой”. Туманян неоднократно говорил о глубоко гуманистическом духе русской литературы и ее общечеловеческом значении. Этими мыслями великий поэт делился как с В. Брюсовым, так и с другими находившимися в то время на Кавказе русскими художниками слова. Брюсов в своем историко-литературном очерке “Поэзия Армении и ее единство на протяжении веков”, предваряющем упомянутую выше антологию 1916 года, уделил много места и Туманяну, заметив, что его поэзия “есть сама Армения, древняя и новая, воскрешенная и запечатленная в стихах большим мастером”, а переводы армянского поэта с русского “пленают изумительным проникновением в дух оригинала, способностью угадать самую сущность переводимого произведения”. Сам Брюсов, будучи известным и прекрасным переводчиком, также обращался к поэзии Туманяна (“Армянское горе”, “Лампада Просветителя” и др.). Взаимоотношения и сотрудничество армянского поэта и В. Брюсова – блестящее подтверждение плодотворности армяно-русского культурно-творческого единения в начале XX века.

Трогательной была дружба Ованеса Туманяна с Сергеем Городецким, прибывшим на Кавказ в лихую для армян годину – весной 1916 года, когда

еще не стихли отзвуки резни в Османской империи. В Тифлисе корреспондент газеты “Русское слово”, отправляющийся на Кавказский фронт, получает назначение в Западную Армению – в Ван и посещает в эти дни армянского поэта по его приглашению. Беседы и встречи с Туманяном произвели на Городецкого неизгладимое впечатление, положив начало их искренней дружбе. Русский поэт впоследствии признавался, что Туманян был так горяч, так искренен, что беседа с ним была подлинно “художественным наслаждением”. Обаяние Туманяна как личности и как поэта было столь велико (недаром все вокруг называли его достопримечательностью Тифлиса), что молодой Городецкий решает перевести на русский ряд его произведений (“Парвана”, “Проклятая невестка”, “Странники” и др.). Примечательны строки С. Городецкого в статье к 50-летию со дня рождения армянского поэта: “...Ованес Туманян всей своей песней, всей своей работой проповедовал верховенство всечеловеческих идеалов над национальными. Понять Ованеса Туманяна – значит понять Армению в ее исконных идеалах...”. Городецкий был одним из тех благородных представителей русской литературы, кто близко к сердцу воспринял трагедию армянского народа и помог ему не только пером (известны его великолепные “армянские” стихи, страстная публицистика о страданиях Армении), но и делом – спасая и вывозя в пределы России, в Восточную Армению сотни армянских детей и женщин, беженцев из западноармянских областей. Немалый заряд энергии сообщил русскому поэту именно Ованес Туманян. Так, когда Городецкий высказал свою озабоченность тем, какие же творческие импульсы можно почерпнуть из картин разоренного и опустошенного турками Вана, Туманян посоветовал ему: “Вы – поэт. Поэзия – это и есть познание жизни. Иначе она не нужна. Вы увидите жизнь страшную, жизнь народа на краю смерти. Напишите про то, что увидите, – это и будет поэзия”. Искренностью, задушевностью, открытостью и великодушием Туманян покориł Городецкого, отныне ставшего преданнейшим другом армянского народа. Впрочем, этими чертами он покорял всех, кто общался с ним, кто оказывался рядом.

Лиру великого армянина высоко ценили во многих уголках света, но в России поэт пользовался особой любовью и популярностью. Писатель Николай Тихонов, знакомый с творчеством Туманяна по русским перево-


дам, никогда не видевший армянского поэта в жизни, глубоко проникнув в суть его произведений, спустя десятилетия писал о нем: “Народ Армении в лице Ованеса Туманяна явил нам высшее проявление своих творческих возможностей. Ни один из поэтов предшествующего поколения не обладал таким поэтическим даром, таким творческим воображением, таким проникновением в духовную силу народа, в его жизнь и судьбы... Туманян явился как завещание лучших поэтов прошлого, как соединение всех лучших черт национального характера, стал голосом, совестью, духовной силой армянского народа”.

В юбилейный год великого поэта Армении более лестной оценки, пожалуй, и не может быть.

БАГДАСАРЯН Р.А.

Доктор филологических наук

**ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԾ ՆՎԻՐՅԱԼԸ.
ՍԱՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**



Հայագիտական միտքը ծանր կորուստ կրեց: Սույն թվականի հունվարի 28-ին կյանքից հեռացավ ականավոր գիտնական, հայագիտական մտքի խոշորագույն ներկայացուցիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող և Բանահյուսության տեսության և պատմության բաժնի երկարամյա վարիչ Սարգիս Բարդուղիմեոսի Հարությունյանը: Արդեն կյանքի օրոք գիտական շրջանակներում ստացել էր հայ բանագիտության նահապետի արժանի կոչումը և կենդանի դասական էր համարվում, որի հետ շփումը

մեծ դաս էր և հաճույք՝ ոչ միայն մասնագետների համար: Ս. Հարությունյանն իր ողջ կյանքը անմնացորդ նվիրել էր գիտությանը՝ դառնալով հայագիտության խոշոր հենասյուներից մեկը: Կես դարից ավելի նրա բազմաթիվ գրքերն ու աշխատությունները սնել ու զարգացրել են հայագիտական միտքը՝ ուսումնասիրողների առաջ բացելով նոր ուղիներ ու հորիզոններ, ուղղորդել նոր հետազոտողների:

Սարգիս Հարությունյանը ծնվել է 1928 թ. սեպտեմբերի 22-ին ՀՀ Աշոցքի (նախկին Ղուկասյան) շրջանի Ղազանչի գյուղում, Ալաշկերտից և Մուշից սերած ծնողների ընտանիքում: 1940 թ. ընտանիքի հետ տեղափոխվել է Թբիլիսի, որտեղ և 1947-ին ավարտելով քաղաքի արական դպրոցը՝ նույն թվին ընդունվել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի արևելյան լեզուների և գրականության բաժինը (պարսից լեզու և գրականություն մասնագիտությամբ): 1956 թ. Ս. Հարությունյանը իր ուսումնառությունը շարունակել է Հայաստանի ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ասպիրանտուրայում՝

«Հայ ժողովրդական բանահյուսություն» մասնագիտությամբ: 1959 թ. ավարտելով ասպիրանտուրան՝ պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Հայ ժողովրդական հանելուկներ» թեմայով և կրտսեր գիտաշխատողի պաշտոնով աշխատանքի անցել Գրականության ինստիտուտում: 1960 թ. Ս. Հարությունյանը տեղափոխվել է նորաստեղծ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, որտեղ աշխատում էր մինչև կյանքի վերջը: Եղել է նախ կրտսեր, այնուհետև՝ ավագ, ապա՝ գլխավոր գիտաշխատող: 1972-ից ղեկավարել է Բանահյուսական սկզբնաղբյուրների վավերագրման բաժինը (հետագայում՝ Բանահյուսության տեսության և պատմության բաժին): 1992-2007 թթ. տնօրենի գիտական գծով տեղակալն էր: 2000 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

Սարգիս Հարությունյանի գիտական հետաքրքրություններն ընդգրկում էին հայ բանահյուսության գրեթե բոլոր բնագավառները՝ փոքրածավալ բանաձևային ժանրերից սկսած մինչև ծավալուն վիպական տեսակները: Նա մեծ եռանդով ձեռնամուխ էր լինում հատկապես այն ժանրերին, որոնք մինչ այդ անտեսված են եղել, իսկ այդպիսիք այդ ժամանակ դեռ շատ կային: 1960-ականներին, երբ իր գիտական գործունեությունը սկսեց Ս. Հարությունյանը, արդեն իսկ կուտակված կար հայ բանահյուսության բնագրային հարուստ պաշար, որի մի մասը XIX դ. վերջից սկսած՝ տպագրվել էր մամուլում ու տարբեր ժողովածուներում, մի մասն էլ դեռ ձեռագիր վիճակում էր: Կարիք կար կուտակված հսկայական բանահյուսական նյութը համակարգելու և ուսումնասիրելու՝ ըստ առանձին ժանրերի: Այս գործը սկսել էին նախորդ հետազոտողները, և Ս. Հարությունյանն այս առումով եղավ Մ. Աբեղյանի, Կ. Մելիք-Օհանջանյանի և իր անմիջական ուսուցչի՝ Ա. Ղանալանյանի արժանի ժառանգորդը, շարունակեց ու խոշոր քայլերով առաջ տարավ բանագիտական միտքը՝ քննության ենթարկելով բանահյուսական մի շարք ժանրեր, որոշ դեպքերում (հանելուկներ, անեծք-օրհնանքներ, հմայական աղոթքներ) հանդես գալով որպես տվյալ տեսակի ուսումնասիրության սկզբնավորողը հայ բանագիտության մեջ:

Հարությունյանը մտքի մեծ թռիչքի գիտնական էր: Նրա ուսումնասիրությունները ընդգրկում էին խոշոր բնագավառներ, նրա գրքերից յուրաքանչյուրը տվյալ թեմայի ամենահարուստ շերտերի քննությունն ընդգրկող հիմնավոր և ծավալուն խոսք է: Այսպիսի մեծարժեք աշխատություններ են հանելուկների («Հայ ժողովրդական հանելուկներ», 1960, բնագրերի գիտական հրատարակությունը՝ 1965), անեծք-օրհնանքների («Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ», 1975), հայ հմայական աղոթքների («Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ», 2006) քննությանը նվիրված ուսումնասի-

րությունները, հանելուկների և աղոթքների դեպքում՝ նաև համահավաք գիտական բնագրերի ժողովածուները:

Հասարակական մեծ սեր և ճանաչում է վայելում Ս. Հարությունյանի «Հայ հին վիպաշխարհը» (1987) գիրքը, որը հայ հին և միջնադարյան աղբյուրներից քաղված՝ վիպական բանահյուսության հանրամատչելի շարադրանք է՝ նախատեսված դպրոցական միջին և բարձր տարիքի երեխաների համար: Արդեն քանի տասնամյակ է՝ այս գրքի միջոցով են դպրոցահասակ մանուկները ծանոթանում հայոց նախնիների հերոսական վիպական պատմությանը: Մեծ պահանջարկ ունենալով՝ այն հետագայում վերահրատարակվել է, թարգմանվել ռուսերեն:

Ս. Հարությունյանը չափազանց բարձր էր գնահատում Մ. Աբեղյանի դերը հայագիտական մտքի զարգացման մեջ և յուրահատուկ պաշտամունք ուներ Մ.Աբեղյան գիտնականի նկատմամբ: Թեև անձամբ տեսնելու բախտը չէր ունեցել, սակայն նրան համարում էր իր ուսուցիչը: Դոկտորական ատենախոսությունը, նվիրված Մ. Աբեղյանի կյանքի ու գործի ուսումնասիրությանը, Ս. Հարությունյանը պաշտպանել է 1971 թ.՝ հիմնովին քննելով Աբեղյանի գիտական հարուստ և բազմաշերտ ժառանգությունը («Մանուկ Աբեղյան. Կյանքն ու գործը», 1970): 1975 և 1985 թվերին կազմել, ծանոթագրել և խմբագրել է Աբեղյանի երկերի Ը և Է հատորները: Բանագիտական գործունեությանը զուգահեռ՝ Ս. Հարությունյանը հսկայական դերակատարում է ունեցել բանահավաքչության, հատկապես՝ «Սասնա ծռերի» նոր պատումների հայտնաբերման ու գրառման գործում: 1971-1973 թթ. նրա գլխավորած գիտական արշավախումբը ՀԽՍՀ 205 բնակավայրից գրառել է վեպի 81 նոր պատումներ, որոնց մի մասը հրատարակվել է «Սասնա ծռերի» Գ (1979) և Դ (1999) հատորներում՝ Սարգիս Հարությունյանի և Արուսյակ Սահակյանի համատեղ աշխատակցությամբ: Այս և հետագա տարիներին ևս «Սասնա ծռեր» հերոսավեպը միշտ եղել է նրա գիտական հետաքրքրությունների կենտրոնում. բազմաթիվ հոդվածներ ու ուսումնասիրություններ ուներ վեպի տարբեր խնդիրներին նվիրված, որոնք հետագայում գուցե ի մի կրեթվեն՝ որպես մեկ ամբողջական հետազոտություն: Գործուն դերակատարում է ունեցել նաև «Սասնա ծռերը» և միջազգային էպիկական ժառանգությունը՝ միջազգային գիտաժողովների կազմակերպման, հոդվածների ժողովածուների տպագրության մեջ:

Գիտնականի կոթողային աշխատությունը նվիրված է հայ առասպելների ուսումնասիրությանը: Դեռ 1980-ականներին Մոսկվայում լույս տեսած "Мифы народов мира" երկհատոր հանրագիտարանում (1981, 1982) ռուսերենով լույս էին տեսել հայ առասպելաբանության առանցքային խնդիրներին վե-

րաբերող նրա հեղինակած հոդվածները: Այս հանրագիտարանը և դրա գերմաներեն ու հունագարերեն թարգմանությունները Ս. Հարությունյանին համաշխարհային ճանաչում էին բերել և հայ բանահյուսությունը մատչելի դարձրել նաև օտարալեզու ընթերցողներին: Թեմային առնչվող նրա հիմնարար աշխատությունը՝ «Հայ առասպելաբանությունը», 1994 թ. արժանացավ Համագային հայ կրթական և մշակութային միության մրցանակին և 2000 թ. հրատարակվեց Բեյրութում: Նա տարիների ջանադիր աշխատանքով հնարավոր բոլոր աղբյուրներից առանձնացրել էր հայ առասպելաբանության ամենատարբեր սյուժեներ, դասակարգել ու համաշխարհային մտքի նորագույն տեսությունների կիրառմամբ՝ դրանք ենթարկել խորագնին ուսումնասիրության: Այսօր և այսուհետև անհնար է անդրադառնալ հայ առասպելներին՝ չհիմնվելով այս ուսումնասիրության վրա: Փոքր-ինչ ավելի ուշ նա հրատարակեց նաև «Հին հայոց հավատալիքները, պաշտամունքը, կրոնն ու դիցարանը» փոքրածավալ, բայց շատ արժեքավոր գրքույկը (2001):

Ս. Հարությունյանը նաև հմուտ խմբագիր էր: Նրա խմբագրությամբ լույս են տեսել բազմաթիվ գիտական հետազոտություններ և ժողովածուներ, 2006-2018 թթ. եղել է «Պատմաբանասիրական հանդեսի» գլխավոր խմբագիրը

Մեծ է Ս. Հարությունյանի վաստակը նաև մասնագիտական կադրերի պատրաստման գործում: Նա երկար տարիներ «Հայ բանահյուսություն», «Հայ բանագիտություն», «Հայ հին գրականության պատմություն» առարկաներ է դասավանդել ԵՊՀ-ում և ՀՀ մի շարք այլ բուհերում, ղեկավարել է բազմաթիվ թեկնածուական ատենախոսություններ: Այժմ նրա սաներն են հանրապետության տարբեր բուհերում դասավանդում «Հայ բանահյուսություն», նրա կազմած «Բանագիտական ակնարկներ» (2010) ուսումնական ձեռնարկը այսօր լայնորեն կիրառվում է առարկան դասավանդելիս՝ որպես հայ և ընդհանուր բանագիտության պատմության և տեսության անփոխարինելի դասագիրք:

Լինելով տաղանդաշատ գիտնական՝ Սարգիս Հարությունյանը նաև առինքնող մարդ էր: Նրա հետ շփումը իսկապես վայելք էր: Անսահման հումոր, կենսասիրություն և մի անհուն բարություն ուներ նա: Մինչև կյանքի վերջն էլ միշտ փորձեց օգնել բոլորին՝ ինչով որ կարողանում էր: Նրա մոտ շատերն էին գալիս զանազան հարցերով գիտական խորհրդատվություն ստանալու, և իր պատասխանները սպառիչ էին, բացատրությունները՝ համոզիչ: Չտեսնված հիշողության շնորհիվ բանագիտական ցանկացած հարցի հետ կապված դիպուկ տվյալներով հիմնավորում էր իր ասածը: Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բոլոր երիտասարդ աշխատակիցներին էր ուղղորդում, քաջալերում:

Բոլոր տեսակի հարաբերություններում էր պարզ, անմիջական և ուղղամիտ: Չտեսնված հետաքրքիր գրուցակից էր, զանազան հետաքրքիր դեպքեր էր պատմում իր հարուստ կենսագրությունից. մեծությունների հետ շփումներ, զավեշտալի դեպքեր ու իրադարձություններ, և այդ ամենը՝ միշտ համեմված ժողովրդական հյուսիս ասոյթաբանությամբ: Բանասաց էր, բանահավաք և բանագետ միաժամանակ: Ինքը բանահյուսության կրողն ու փոխանցողն էր և լավագույն արժևորողը:

Զարմանալի կենսասեր էր և իր կենսասիրությամբ վարակում էր նաև շրջապատին: Շարունակ ծրագրեր էր կազմում, նոր հետազոտություններ նախաձեռնում: Չէր հանձնվում անգամ այն ժամանակ, երբ արդեն տեսողության, լսողության լուրջ խնդիրներ ուներ, հավատում էր, որ կյանքի է կոչելու իր բոլոր մտահղացումները: Նախանձելի եռանդով էր ղեկավարում Կարսի և Մոկսի բանահյուսական նյութերի ժողովածուները կազմելու աշխատանքները («Կարս. Հայոց բանահյուսական մշակույթը», 2013, «Մոկս. Հայոց բանահյուսական մշակույթը», 2015): Վերջին տարիների նախաձեռնություններից էր նաև հայիրանական «Ռոստամ Զալ» վեպի հայկական պատումների լիակատար ժողովածուի կազմումն ու ուսումնասիրությունը: Այս թեմայով հրատարակած որոշ հոդվածներ ուներ արդեն, սակայն շատ ու շատ գաղափարներ դեռ թղթին չէր հանձնել: Տասնամյակների ընթացքում իր գլխավորած բանահավաքչական արշավախմբի դաշտային աշխատանքների ժամանակ հաջողվել էր գտնել վեպի նոր պատումներ (պատումներից երեքը հասցրել էր իր ձեռագրով վերծանել ձայնագրություններից): Եվ առանձնահատուկ ոգևորությամբ էր խոսում հայ-իրանական այս վեպի ու դրա ուսումնասիրության անհրաժեշտության մասին: Իր նախաձեռնությամբ սկսված հետազոտական թեման այժմ շարունակում են կյանքի կոչել նրա աշակերտներն ու հետևորդները:

Ծանր է նման մարդու կորուստը, ծանր և անփոխարինելի: Սակայն մահը միշտ չէ, որ ավարտ է. Սարգիս Հարությունյանը մի մարդ էր, որ հաղթել է մահին: Նրա լույսն ու ջերմությունը դեռ երկար կշարունակեն ապրել իրեն ճանաչող և սիրող մարդկանց սրտերում, իսկ թողած հարուստ գիտական ժառանգությունը կշարունակի սնել հայագիտական միտքը: Ապագա ուսումնասիրողները դեռ բազմիցս կանդրադառնան այդ ժառանգության համակարգմանն ու արժևորմանը, և նա հավերժ կապրի հայ մտքի պատմության մեջ՝ որպես հայագիտության մեծ նվիրյալ:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Ն.Խ.

Բանասիրական գիտությունների թեկնածու

Հայերեն բաժնի խմբագիրներ՝ **Մելանիա Միքայելյան**
Սեդա Քուփեյան
Ռուսերեն բաժնի խմբագիր՝ **Գայանե Հարությունյան**

Редакторы армянского отдела – **Меланья Микаелян**
Седа Купелян
Редактор русского отдела – **Гаянэ Арутюнян**

Editors of Armenian part **Melania Mikaelyan**
Seda Kupelyan
Editor of Russian part **Gayane Harutyunyan**

Համակարգչային ձևավորումը և էջադրումը՝ **Արմինե Պետրոսյանի**
Компьютерный дизайн и пагинация – **Армине Петросян**
Computer design and pagination **Armine Petrosyan**

Հրատ. պատվեր N 946
Ստորագրված է տպագրության 25.04.2019 թ.:
Տպագրական 24.5 մամուլ: Տպաքանակը՝ 200:
ՀՀ ԳԱԱ տպարան, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:
Խմբագրության հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24 գ:
Հեռ.՝ 581902:

Подписано к печати 25.04.2019 г.
24.5 печ. л. Тираж – 180. Типография НАН РА,
Ереван, пр. Маршала Баграмяна 24.
Адрес редакции: 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24г
Тел. 581902

Signed for printing 25.04.2019
24.5 print. sheets. Printed copies – 180. NAS RA Press,
Yerevan, Marshal Baghramyan av. 24.
Editorial office address: 0019, Yerevan, Marshal Baghramyan av. 24c
Tel. 581902

Հանդեսի պաշտոնական կայքէջը՝ <http://Iraber.sci.am>
Հանդեսի էլեկտրոնային հասցեն՝ Iraber@sci.am
Официальный сайт журнала: <http://Iraber.sci.am>
Электронная почта журнала: Iraber@sci.am
Official site of the Journal: <http://Iraber.sci.am>
E.mail of the Journal: Iraber@sci.am